ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Լեոնիկ Մկրտումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Լ. Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Ուսումնական ձեռնարկ

Նվիրվում է
ԵՊՀ ապրվածաբանության ֆակուլտետի 30-ամյակին:

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

ՀՏԴ 93/94(07)
ԳՄԴ 63g7
Մ 807

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ գիտական խորհուրդը:

Մասնագիտական խմբագիրներ՝
պ.գ.դ., պրոֆեսոր Է. Գ. Մինասյան
պ.գ.թ., դոցենտ Ա. Է. Հովհաննիսյան
պ. գ. թ., Ա. Վ. Մաղալյան

Մկրտումյան Լ.
Մ 807 Հայաստանի հարևան երկրների պատմության հիմնահարցեր: Ուսումնական ձեռնարկ / Լ. Ա. Մկրտումյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2025.- 262 էջ:

Ուսումնական ձեռնարկը ներառում է Հայաստանի Հանրապետությանը հարևան երկրների պատմության ու մշակույթի բոլոր հիմնական իրադարձությունները: Որպեսզի ուսանողի համար դյուրըմբռնելի լինի այդ իրադարձությունների ճիշտ գնահատումը, յուրաքանչյուր թեմայից հետո զետեղված են ինքնաստուգման հնարավորություն ընձեռող հարցեր: Ձեռնարկում տեղ գտած նյութի յուրացումը նպաստում է նաև հայոց պատմության համակողմանի ընկալմանը:

«Հայաստանի հարևան երկրների պատմության հիմնահարցեր» ուսումնական ձեռնարկը կազմված է բուհական դասընթացի շրջանակներում: Այն կարող է օգտակար լինել նաև պատմությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 93/94(07)
ԳՄԴ 63g7

ISBN 978-5-8084-2726-6
https://doi.org/10.46991/YSUPH/9785808427266

© ԵՊՀ հրատ., 2025
© Մկրտումյան Լ., 2025

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Մերձավոր Արևելքի հյուսիսում, տարածաշրջան, որը համարվում է աշխարհի հնագույն քաղաքակրթությունների օրրանը: Այդ քաղաքակրթությունները ձևավորել են քաղաքական, կրոնական, մշակութային այնպիսի հայեցակարգեր, որոնք անջնջելի հետք են թողել մարդկային հասարակության պատմական զարգացման վրա:

XXI դարում Մերձավոր Արևելքում ընթացող համաշխարհային խոշոր ուժերի շահերի բախման համատեքստում զգալի տեղ է գրավում արժեքների և գաղափարախոսությունների բախումը: Հետևաբար, պատմությունը հաճախ դառնում է ժամանակակից քաղաքական վեճերի դաշտ: Հակամարտող աշխարհաքաղաքական ուժերն օգտագործում են պատմական փաստարկներն իրենց դիրքորոշումները պաշտպանելու համար: Պատմական հիշողության վրա հենվող քաղաքականությունը առանցքային տեղ է գրավում հակամարտության երկու կողմերում հայտնված ժամանակակից պետություններում ձևավորվող ազգային ինքնագիտակցության համար:

Ոչ մի ազգ կամ ժողովուրդ չի կարող մեկուսացած զարգանալ: Ազգային շահերի պաշտպանության նպատակով ձևավորված պետությունները գտնվում են հարափոփոխ մրցակցության մեջ. ձևավորվում և վերանում են տնտեսական ու ռազմաքաղաքական բազմաբնույթ դաշինքներ:

Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելքում գտնվող մեր պետության առջև ծառացել են գոյաբանական (էքզիստենցիալ) սպառնալիքներ, որոնց դիմագրավելու, սեփական ազգային պետականությունն ու ինքնությունը պահպանելու համար հրամայական է դարձել Հայաստանի Հանրապետության հարևան երկրների պատմությանը հասու լինելը: Ուստի անհրաժեշտ է ունենալ մեր հարևան պետությունների և ժողովուրդների պատմու-

թյանն ու մշակույթին իրազեկ մտավորականներ, որոնք իրենց գիտելիքներն ի սպաս կդնեն հարևան երկրների հետ մեր հայրենիքի շահերից բխող քաղաքական, տնտեսական և մշակութային կապերի զարգացմանը:

Ուսումնական ձեռնարկը բաղկացած է յոթ գլխից: Առաջին գլուխը նվիրված է հին ժամանակաշրջանին, հաջորդ երեք գլուխները՝ վաղ, զարգացած և ուշ միջնադարին, և վեցերորդ գլուխնեը՝ նոր ու նորագույն ժամանակաշրջաններին, վերջին՝ յոթերորդ գլուխը՝ Հայաստանի Հանրապետության հարևան երկրների մշակույթին:

ԳԼՈՒԽ I
ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

ԹԵՄԱ I
Հին Իրան

Հայաստանի Հանրապետության հարավային հարևան Իրանը աշխարհի հնագույն քաղաքակրթական կենտրոններից է: Իրանի պետականության պատմությունը հասնում է վաղնջական ժամանակներ. գրավոր աղբյուրների համաձայն՝ այն ընդգրկում է գրեթե 5 հազար տարի: Երկրի անվանումը կապվում է Ավեստայի լեզվով[1]՝ «Աիրիանամ դահիուանամ» («Արիների երկիր») բառակապակցության հետ: Իրանական առաջին ազդեցիկ պետությունը Մարաստանն էր կամ Մեդիան, որ ձևավորվել էր Իրանական բարձրավանդակի հյուսիս-արևմուտքում:

Հին պարսկական աղբյուրներում Մարաստանը կոչվում է Մադա, իսկ ասորեստանյան և բաբելոնյան աղբյուրներում՝ Մադայա: Հին հույները Մարաստանը կոչում էին Մեդիա: Անվանումը հստակ ստուգաբանված չէ: Ոմանք այն կապում են հնդեվրոպական «med(h)» արմատի հետ (հայերեն՝ «մեջ», լատիներեն՝ «medius»)՝ «մեջտեղ, մեջտեղում տեղակայված, կենտրոնական» իմաստներով:

Մարական ցեղերը հետագա Մարաստանի տարածքում հաստատվել են Ք.ա. երկրորդ հազարամյակի վերջերին: Մինչ այդ այնտեղ գոյություն են ունեցել պետական տարբեր կազմավորումներ և ցեղեր: Մարաստանն առաջին անգամ հիշատակվում է Ք.ա. X դ. երկրորդ կեսի ասորեստանյան արձանագրություններում: Ք.ա. մոտ IX դ. մարերի և Հայկական լեռնաշխարհի ցեղերի

---

[1] Ք.ա. 1500-600 թթ.գործածված իրանական հնագույն լեզու, որով գրի է առնվել զրադաշտականության կրոնական տեքստերի ժողովածուն՝ Ավեստան:

միջև շփումներ են ձևավորվել Ուրմիա լճի արևելյան և հարավ-արևելյան շրջաններում: Ասորեստանի դեմ (որը զավթել էր Մարաստանի հողերի մի մասը) պայքարը և Արարատյան թագավորության հետ շփումը որոշակի ազդեցություն են ունեցել մարերի ցեղային միությունների և առաջին պետական կազմավորումների առաջացման վրա:

Ըստ Հերոդոտոսի՝ Մարաստանի թագավորությունը և նրա մայրաքաղաք Էկբատանը (ժամանակակից Համադան քաղաքի տեղում) հիմնել է Դեովկես թագավորը (Ք.ա. մոտ 727–675, այլ տվյալներով՝ 709–656): Մարաստանն իր հզորության գագաթնակետին է հասել Կիաքսար թագավորի (Ք.ա. մոտ 625–585) օրոք: Ք.ա. 612 թ. մարերը գրավել են Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն: Ըստ Մովսես Խորենացու՝ Նինվեի գրավման ժամանակ Կիաքսարին օգնել է Պարույր Սկայորդին, որին Կիաքսարը ճանաչել է Հայոց թագավոր: Մարաստանն ընդհարվել է նաև Լիդիայի հետ: Մարերին է վերագրվում Արարատյան թագավորության վերացումը Ք.ա.VII դ. վերջերին: Դրանից հետո Հայկական լեռնաշխարհում կազմավորված Երվանդունիների թագավորությունն ընդունել է Մարաստանի գերիշխանությունը: Կիաքսարի արշավանքների շնորհիվ Մարաստանի սահմաններն արևմուտքում հասել են մինչև Հալիս գետը, արևելքում՝ Միջին Ասիա (նաև այժմյան Աֆղանստանի տարածք):

Կիաքսարին հաջորդած նրա որդին՝ Աստիագեսը, որին Խորենացին անվանում է Աժդահակ (Ք.ա. մոտ 585–550), փորձել է թուլացնել մարական ավագանու ազդեցությունը, ինչի հետևանքով բարդացել է Մարաստանի ներքին քաղաքական իրավիճակը: Քսենոփոնի «Կյուրոպեդիայի» տվյալներով՝ Աստիագեսի ժամանակ Հայաստանը Մարաստանին տարեկան վճարել է 50 տաղանդ արծաթ, տրամադրել 20 հազարանոց հետևազոր և 4 հազարանոց հեծելազոր: Օգտվելով Մարաստանի և Բաբելոնի միջև ծագած պատերազմից (Ք.ա. VI դ. առաջին կես)՝ Հայոց թագա-

վոր Երվանդ I Սակավակյացը (Ք.ա. մոտ 570-560) ապստամբել է Աստիագեսի դեմ, դադարել տուրք վճարելուց և զորք տրամադրելուց: Սակայն մարերին հաջողվել է վերականգնել իրենց գերիշխանությունը: Մարերից ազատագրվելու նոր փորձ է կատարել Տիգրան Երվանդյանը՝ Երվանդ I Սակավակյացի որդին: Նա դաշնակցել է Աստիագեսի դեմ ապստամբած Պարսք (Պերսիս, Պարսուա) և Անշան երկրների թագավոր Կյուրոս II Մեծի հետ: Այս իրադարձությունները տեղ են գտել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանված «Տիգրան և Աժդահակ» ավանդազրույցում: Կյուրոս II Մեծը (Ք.ա. 550-530), տապալելով Աստիագեսին, գրավել է Մարաստանը և հիմնել Աքեմենյան պետությունը[2] (հին պարսկերեն՝ Քշաչա) (Ք.ա. 550 - 330), որի գերիշխանության տակ, ի թիվս այլ երկրների, ընկել են Մարաստանն ու Հայաստանը: Մինչև Ք.ա. 539 թ. Կյուրոսը նվաճեց Փոքր և Միջին Ասիայի երկրները, Ք.ա. 538 թ.՝ Բաբելոնը, Միջագետքը, Ասորիքը, Փյունիկիան, Հրեաստանը: Ըստ Քսենոփոնի՝ հայկական բանակը Տիգրան թագավորի և Էմբաս զորավարի առաջնորդությամբ մասնակցել է Բաբելոնի գրավմանը:

Աքեմենյան պետությունը համարվում է Հին աշխարհի առաջին հսկայածավալ կայսրությունը: Նրա տարածքն ընդգրկում էր երեք աշխարհամասերի՝ Ասիայի, մասամբ Եվրոպայի և Աֆրիկայի մի շարք երկրներ: Արևելքում նրա սահմանների մեջ էին մտնում արևմտյան Հնդկաստանը՝ Ինդոս գետի հովիտը, և Միջին Ասիան՝ հասնելով Հիմալայան լեռներ, արևմուտքում՝ Փոքր Ասիան և Եգիպտոսը՝ սահմանակցելով Միջերկրական ծովին: Հյուսիսում Աքեմենյան տերության սահմանները հասնում էին Կովկասյան լեռներին, հարավում՝ Իրանական բարձրավանդա-

---

[2] Պետության անվանումը ծագել է Աքեմենյան տոհմի անվանումից (հին պարսկերեն՝ *Հախամանիշ*):

կին և Միջագետքի դաշտավայրին՝ ընդհուպ Արաբական թերակղզի և Հնդկական օվկիանոս:

Կյուրոսին հաջորդում է որդին՝ Կամբյուսեսը (Ք.ա. 530-522), որը Ք.ա. 526 թ. մեծ բանակով արշավում է Եգիպտոս և նվաճում այն: Եգիպտոսում լուր ստանալով, որ պարսիկ մոգ Գաումատան ապստամբել և իրեն հռչակել է թագավոր, Կամբյուսեսը շտապում է Իրան, սակայն ճանապարհին մահանում է: Գաումատայի դեմ է դուրս գալիս Աքեմենյան տան ներկայացուցիչ, Պարթևաստանի կուսակալ Վշտասպի որդի Դարեհ I Մեծը (Ք.ա. 522-486), սպանում է Գաումատային և Ք.ա. 522 թ. գահ բարձրանում: Օգտվելով Աքեմենյան պետությունում տեղի ունեցող գահակալական պայքարից՝ Դարեհի դեմ ապստամբում և անկախություն են հռչակում Պարսքը, Էլամը, Մարաստանը, Պարթևաստանը, Ասորեստանը, Բաբելոնը, Հայաստանը, Եգիպտոսը: Ըստ Բեհիսթունի արձանագրության՝ մինչև Ք.ա. 520 թ. Դարեհը զբաղված էր ապստամբ երկրների դիմադրությունը ճնշելով: Դարեհի զորքերի դեմ համառորեն կռվել են հատկապես հայերը: Դարեհի զորավարները հինգ անգամ ճակատամարտել են ապստամբ հայերի դեմ: Ք.ա. 521 թ. վերջին ապստամբությունները հիմնականում ճնշվեցին, Աքեմենյան պետության նախկին սահմանները վերականգնվեցին: Դարեհը Ք.ա. 519 թ. վերանվաճեց Եգիպտոսը:

Դարեհի թագավորությունը՝ Աքեմենյան պետությունը, եղել է զարգացման տարբեր մակարդակ ունեցող ցեղերի ու ժողովուրդների միավորում՝ զենքի ուժով ստեղծված: Դարեհ I-ը կատարեց վարչատնտեսական բարեկարգումներ: Նա պետությունը բաժանեց սատրապությունների, որոնք թվարկված են Բեհիսթունի արձանագրությունում: Հերոդոտոսը հիշատակում է Աքեմենյան պետության 20 սատրապությունների ցանկը, այնտեղ ապրող ժողովուրդների անվանումները և նրանց վճարած հարկերի չափը:

Սատրապության գլուխ կանգնած էր հատուկ աստիճանավոր, որը հին պարսկերեն կոչվում էր խշաթրապավան (սատրապ):

Սատրապներին նշանակում էր արքան: Նրանք սովորաբար արքայի հարազատները կամ բարձր խավի ներկայացուցիչներ էին: Վերջիններիս ձեռքում կենտրոնացած էր ռազմական, տնտեսական և դատական իշխանությունը: Սատրապությունների սահմանները հիմնականում համընկնում էին նվաճված, բայց իրենց օրենքներն ու լեզուն պահպանած երկրների հետ: Այդպիսիք էին, օրինակ, Հայաստանը, Բաբելոնիան, Եգիպտոսը, Մարաստանը և այլն: Աքեմենյան պետության մեջ իրենց գոյությունը պահպանում էին որոշ վասալ թագավորություններ և կիսանկախ ցեղեր: Սատրապություններից գանձվող հարկերի գումարը կազմում էր 14560 տաղանդ արծաթ[3], ընդ որում, Բաբելոնի, Պաղեստինի, Ասորիքի, Հայաստանի և Փոքր Ասիայի ժողովուրդները երկու անգամ ավելի էին վճարում, քան մյուս սատրապությունները: Հայաստանը, ըստ Հերոդոտոսի, ընդգրկված է եղել երկու՝ XIII և XVIII սատրապությունների կազմում, որոնցից առաջինը վճարել է 400 տաղանդ արծաթ, իսկ երկրորդը՝ 200:

Պարսիկները եղել են արտոնյալ, հարկերից ազատ: Դարեհ I-ը շրջանառության մեջ է դրել դրամական միասնական միավոր՝ ոսկե դարիկը և արծաթե սիկղը[4]: Արծաթե դրամ հատելու իրավունք է վերապահվել նաև սատրապներին:

Դարեհը զբաղվել է Աքեմենյան պետության տնտեսական և վարչական կարևոր կենտրոնները միացնող ճանապարհների շինարարությամբ, նորոգել հին առևտրական ճանապարհները, իջևանատները: Դարեհի ճանապարհաշինության պսակը եղել է Արքայական ճանապարհը, որը Իրանի հարավ-արևմուտքում գտնվող Շոշը կապել է Փոքր Ասիայի արևմուտքում գտնվող Սարդեսի հետ:

---

[3] Կշռի միավոր Հին աշխարհում, պարսկական 1 արծաթե տաղանդը կշռել է 33,65 կգ, ոսկե տաղանդը՝ 25,2 կգ:

[4] Դարիկ – բարձր հարգի 8,5 գր. կշռող ոսկե մետաղադրամ; սիկղ-5,6 գր. կշռող արծաթե մետաղադրամ:

Դարեհ արքան վերակառուցել է բանակը, որի կորիզը կազմում էր 10 հազար անպարտելիների կամ անմահների հետևակ զորագունդը:

Ք.ա. 490 թ. Մարաթոնի ճակատամարտում Դարեհի պարտվելուց հետո նրա որդի Քսերքսես I-ը (Ք.ա. 486-465) նոր արշավանք է ձեռնարկում Հունաստանի դեմ: Ք.ա. 480 թ. պարսկական բանակը Քսերքսեսի առաջնորդությամբ անցնում է Դարդանելի նեղուցը և ներխուժում Թրակիա: Ք.ա. 480 թ. Սալամինի և Ք.ա. 479 թ. Պլատեայի ճակատամարտերում պարտությունը ստիպեց պարսիկներին իրենց զորքերը դուրս բերել Հունաստանից:

Ք.ա. V դ. վերջին Աքեմենյան պետությունն սկսում է անկում ապրել: Ք.ա. 401 թ. Դարեհ II թագավորի (Ք.ա. 423-404) մահից հետո գահակալական կռիվները բորբոքվում են Կյուրոս Կրտսերի և Արտաքսերքսես II-ի (Ք.ա. 404-359) միջև: Նույն թվականին տեղի ունեցած Կունաքսայի ճակատամարտում Կյուրոսը պարտվում է և սպանվում: Նրան օգնության եկած 10 հազար սպարտացիները հարկադրաբար նահանջում են Հայաստանի տարածքով:

Հույների հետ շարունակվող պատերազմը ավարտվում է Ք.ա. 386 թ.՝ Անտալկիդեսի հաշտությամբ, ըստ որի՝ Փոքր Ասիան և հունական մի քանի կղզիներ դարձյալ անցնում են Աքեմենյան պետությանը:

Արտաքսերքսես III-ը (Ք.ա. 359-338) փորձեց վերականգնել Աքեմենյան պետության ամբողջականությունն ու հզորությունը: Նա ճնշեց ապստամբական շարժումները Փոքր Ասիայում, Փյունիկիայում և Կիպրոսում, Ք.ա. 341 թ. վերանվաճեց Եգիպտոսը, սատրապներին արգելեց վարձու զորք պահել: Սակայն այդ միջոցառումները Աքեմենյան պետությանը չփրկեցին վերահաս անկումից: Ք. ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտում Աքեմենյան վերջին՝ Դարեհ III Կոդոմանոս (Ք.ա. 336-330) արքան պարտվեց մակեդոնացիներից և սպանվեց ներկայիս Իրանի հյուսիսարևելյան Սեմնան նահանգի Դամղան քաղաքի մոտ: Նրա

մահից հետո Ալեքսանդր Մակեդոնացին իրեն հռչակեց Աքեմենյանների օրինական ժառանգորդ, որով դադարեց գոյություն ունենալ Աքեմենյան պետությունը:

ՀԱՐՑԵՐ

1. Մարաստանի պատմության մեջ ինչո՞վ է առանձնանում Կիաքսար արքայի կառավարման շրջանը:

2. Ինչո՞ւ է Աստիագես արքայի օրոք բարդանում Մարաստանի ներքին քաղաքական իրադրությունը:

3. Ի՞նչն է ստիպում Աքեմենյան Կամբյուսես արքային Եգիպտոսը նվաճելուց հետո շտապ վերադառնալ Իրան:

4. Ի՞նչ իրադարձությունների մասին է պատմում Բեհիսթունյան արձանագրությունը:

5. Վարչական ի՞նչ բարեփոխում է իրականացվում Դարեհ I-ի օրոք:

6. Ինչո՞ւ է Ք.ա. 479 թ. պարսկական բանակը հեռանում Հունաստանի տարածքից:

7. Որո՞նք էին այն պատճառները, որ հանգեցրին Ք.ա. 401 թ. Կունաքսայի ճակատամարտին:

ԹԵՄԱ II
Պարթևական տերություն

Պարթևական տերության հիմնադիր են համարվում իրանալեզու պարները, ժողովուրդ, որը Միջին Ասիայի քոչվոր դահերի համադաշնության կազմի մեջ էր: Այս ժողովրդի անվանումն առաջին անգամ Դարեհ I-ի Բեհիսթունյան արձանագրության մեջ նշվում է «պարթավա»:

Քոչվոր պարները Միջին Ասիայից տեղափոխվել են Կասպից ծովի հարավ-արևելքում գտնվող Պարթևաստան և միաձուլվել տեղաբնիկ պարթևների հետ Սելևկյան տերության հիմնադիր Սելևկոս I Նիկատորի (Ք.ա. 312–281) և նրա որդու՝ Անտիոքոս I Սոտերի (Ք.ա. 281–261) օրոք:

Պարթևների առաջին մայրաքաղաք Նիսայի ավերակները գտնվում են Աշխաբադի մերձակայքում: Հետագայում պարթև արքաները իրենց գահանիստը տեղափոխում են Հեկատոմպիլոս՝ ժամանակակից իրանական Սեմնան նահանգի Դամղան քաղաքի մոտ, ապա՝ Տիգրիսի վրա ընկած Սելևկիա: Պարթևները վերահսկում էին Ասիայի և հունահռոմեական աշխարհի միջև առևտրային ուղիների մեծ մասը: Այս վերահսկողությունը նրանց մեծ շահույթ էր ապահովում, ինչով նրանք հիմնականում լայնածավալ շինարարական գործունեություն էին իրականացնում:

Ըստ հունահռոմեական պատմիչների՝ պարթևների առաջին տիրակալը և Պարթևական կայսրության հիմնադիրը Արշակ I-ն էր (Ք.ա. 247–211), որը Հունաբակտրիական պետության Դիոդոտոս արքայի (Ք.ա. մոտ 250-236) դեմ անհաջող ապստամբությունից հետո փախավ արևմուտք և հաստատվեց Սելևկյան տերությանը ենթակա տարածքներում: Ք.ա. 200 թ. հետո Արշակի ժառանգներն ամուր հաստատվեցին Կասպից ծովի հարավարևելյան ափին: Հետագայում Միհրդատ I-ի (Ք.ա. 171–138) և Արտավան II-ի (Ք.ա.128–124) նվաճումների շնորհիվ ամբողջ Իրանա-

կան բարձրավանդակը և Միջագետքը հայտնվում են Պարթևաստանի վերահսկողության տակ: Պարթևական նվաճումները արևմուտքում դանդաղ և երկար դադարներով էին ընթանում, քանի որ Պարթևական տերության հյուսիսարևելյան սահմաններին զգալի էր քոչվորների, առանձնապես սկյութների ճնշումը: Միհրդատ II Մեծը (Ք.ա. 123–88), հաղթելով սկյութներին, կանխում է իր տերության վերոհիշյալ սահմանների նկատմամբ ոտնձգությունները և իր ուշադրությունը բևեռում Արևմուտքի վրա: Նվաճելով հարավային Միջագետքում գտնվող Քարակենե պետությունը՝ Միհրդատ II-ն իր հաջորդ հարվածն ուղղում է Մերձավոր Արևելքում ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Մեծ Հայքի դեմ, որի պարտված Արտավազդ I (Ք.ա. մոտ 160-115) արքան, մի շարք տարածքային զիջումներից բացի, ստիպված էր թագաժառանգ Տիգրանին պատանդ տալ պարթևներին: Թիկունքը հյուսիսից ապահովելով՝ Ք.ա. 92 թ. Միհրդատ II-ի զորքերը ներխուժում են Սիրիա, որի Սելևկյան գահակալները դառնում են պարթև արքայի խամաճիկները: Նույն թվականին Պարթևաստանի և Հռոմի միջև կնքվում է առաջին պայմանագիրը: Չնայած ապստամբություններին և սահմանային չընդհատվող պատերազմներին՝ Միհրդատ II-ը մինչև իր կյանքի վերջը պահպանեց իշխանությունը Իրանի և Հյուսիսային Միջագետքի նկատմամբ: Նրա մահից հետո Պարթևական տերությունում գահակալական պայքար ծավալվեց: Այն ավարտվեց, երբ Հրահատ III (Ք.ա. 70–58/57) արքան բազմեց պարթևական գահին և վերականգնեց տերության կայունությունը:

Պարթևական տերության ապակենտրոնացված կառուցվածքը Միհրդատ II-ի մահից հետո հնարավորություն չէր տալիս լայնածավալ նվաճողական պատերազմներ մղելու: Արևմուտքում Պարթևաստանը Հռոմի հետ պատերազմներում հիմնականում ստիպված էր պաշտպանվել: Պարթևաստանի և Հռոմի միջև այս պատերազմների նախաձեռնությունը գերազանցապես պատկա-

նում էր Հռոմին, որն իրեն համարում էր Ալեքսանդր Մակեդոնացու տերության իրավահաջորդը: Պոմպեոսի ժամանակներից ի վեր Հռոմն անընդհատ փորձում էր նվաճել մինչև Եփրատ գետն ընկած հելլենիստական երկրները և նույնիսկ նպատակադրվել էր նվաճել այդ գետից է՛լ ավելի արևելք ընկած տարածքներ: Այդ նպատակով հռոմեական եռապետ Մարկոս Կրասոսը Ք.ա. 54 թ. Պարթևաստանի դեմ ռազմական գործողություն ձեռնարկեց, սակայն նրա բանակը հաջորդ տարի գլխովին ջախջախվեց Խառանի ճակատամարտում, որից հետո Միջագետքը վերադարձվեց պարթևներին: Բայց նրանց այդպես էլ չհաջողվեց ընդարձակվել՝ ի հաշիվ Հռոմեական կայսրության: Հռոմն իր հերթին ավելի քան երկու դար շարունակ ռազմաքաղաքական ճնշում էր գործադրում պարթևների վրա: Ռազմական գործողություններն ուղեկցվում էին պարթևական գահի այս կամ այն հավակնորդին սատարելով: Վաղարշ I-ի (51–78) գահակալությունից հետո Պարթևական տերությունը անկում ապրեց, և այդ ընթացքում շատ հաճախ միաժամանակ իշխում էին միմյանց հակամարտ երկու կամ ավելի արքաներ:

Հռոմեական կայսրեր Տրայանոսի (98-117) 115–117 թթ. և Սեպտիմիուս Սևերոսի (193-211) 198 թ. արշավանքներով հռոմեական լեգեոններին հաջողվեց ներթափանցել Պարթևաստանի խորքերը, ինչը կործանարար եղավ այս պետության համար: Ի վերջո հարավիրանական Պարսքի արքայիկ Արտաշիր I Սասանյանին (226–241) հաջողվեց 224 թ. ապրիլի 28-ին տեղի ունեցած Որմիզդականի ճակատամարտում հաղթել պարթև վերջին գահակալ Արտավան V-ին (216-224) և վերջ տալ Պարթևական տերության գոյությանը:

Պարթևական տերության փոքրաքանակ իշխող վերնախավը երկիրը կառավարում էր դեռևս Սելևկյանների օրոք ձևավորված հելլենիստական պետական վարչաձևերով և եղանակներով: Եթե Սելևկյան տերության տարածքը բաժանվում էր սատրապություն-

ների և հյուպարքոսությունների, ապա Պարթևաստանը՝ սատրապությունների և դիզպատությունների: Պարթև արքաները հանդուրժում էին ենթակա թագավորությունների ինքնավար կարգավիճակը: Այդպիսի թագավորություններ էին Վիրքը, Մեծ Հայքը, Ատրպատականը, Աղիաբենեն, Օսրոենեն, Հաթրան, Պարսքը: Այս առումով Պարթևաստանը քիչ էր տարբերվում Աքեմենյան կայսրությունից և ներառում էր մի քանի քաղաք-պետություններ և ծայրամասային կիսանկախ սատրապություններ, որոնք ճանաչում էին արքայից արքայի գերակայությունը, հարկ էին տալիս և ռազմական աջակցություն ցուցաբերում:

Պարթևական իշխանական վերնախավը գլխավորում էր արքայից արքան: Արտավան II-ի կողմից գրված հունարեն նամակից պարզվել է, որ գոյություն ունեին նախընտրելի ընկերոջ, թիկնապահի և գանձապահի պետական պաշտոններ: Ու թեև գործում էին պաշտոնավարման հատուկ ընթացակարգեր, սակայն արքաներն իրավասու էին սեփական հայեցողությամբ պետական պաշտոնյաներ նշանակելու և պաշտոնազրկելու:

Սասանյան առաջին գահակալ Արտաշիր I-ի օրոք ամրագրված բարձր ազնվականության ժառանգական կոչումներն ամենայն հավանականությամբ կրկնօրինակել են պարթևական դարաշրջանի տիտղոսները: Գոյություն ուներ ազնվականության աստիճանակարգման երեք մակարդակ. ամենաբարձրը արքայից արքաներին անմիջապես ենթակա առանձին երկրամասերի թագավորներն էին, երկրորդը՝ ազնվական վերնախավի այն ներկայացուցիչները, որոնք դինաստիական ամուսնությունների միջոցով ազգակցական կապի մեջ էին արքայից արքաների հետ: Այդպիսիք էին Սուրենի, Կարենի, Միհրանի հզոր տոհմերի տանուտերերը, իսկ ամենացածր աստիճանի վրա գտնվում էր տեղական տոհմերի ավագանին:

I դարում պարթև ազնվականությունն այնպիսի ուժ և ազդեցություն էր ձեռք բերել, որ վճռորոշ դերակատարում ուներ Արշա-

կունի թագավորների գահակալման և գահազրկման ժամանակ: Բարձր ազնվականության որոշ ներկայացուցիչներ թագավորի խորհրդատուներ էին կամ քրմապետեր: Հայտնի է, որ Սուրենի տոհմի տանուտերերն ունեին Արշակունի արքայից արքաներին թագադրելու իրավունք:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ր ժողովուրդն է համարվում Պարթևական տերության հիմնադիրը:
2. Ո՞րն էր պարթևների առաջին մայրաքաղաքը:
3. Ո՞վ էր պարթևական պետության հիմնադիրը:
4. Ինչո՞ւ էին պարթևների նվաճումներն արևմուտքում դանդաղ ընթանում:
5. Հռոմի և Պարթևաստանի միջև ե՞րբ է կնքվում առաջին պայմանագիրը:
6. Ի՞նչ բնութագիր կարելի է տալ Հռոմի և Պարթևաստանի միջև տեղի ունեցած պատերազմներին:
7. Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում Պարթևական տերությունում Վաղարշ I-ի մահից հետո:
8. Ի՞նչ բնութագիր կարելի է տալ Պարթևական տերության վարչաքաղաքական համակարգին:

ԹԵՄԱ III
Կոլխիդայի և Քարթլիի (Իբերիայի) վաղ վրացական թագավորությունները

Հայաստանի Հանրապետության հյուսիսային հարևան Վրաստանի Հանրապետության ինքնանվանումը (էնդոնիմ)՝ *Սաքարթվելո*, թարգմանաբար նշանակում է Վրաստանի կենտրոնական տարածքում՝ Քարթլիում, բնակվող: *Քարթլի* տեղանունը, մասնագետների մեծ մասի կարծիքով, նշանակում է ցանկապատված տարածք՝ բակ: Օտար լեզուներով Վրաստանի անվանումները (հայերեն՝ Վիրք-Վրաստան, ռուսերեն՝ Գրուզիա, անգլերեն՝ Ջորջիա, ֆրանսերեն՝ Ժեորժի, թուրքերեն՝ Գյուրջիստան) ծագում են հին պարսկերեն *Վարկան* «գայլերի երկիր» անվանումից: Անտիկ աղբյուրներում հանդիպող Վրաստանի *Իբերիա* անվանումն իր հերթին ծագում է հայերեն *Վիրք* տեղանունից:

Վրացական առաջին պետությունը Կոլխիդայի թագավորությունն է (ներկայիս Վրաստանի արևմտյան, Սև ծովին հարող տարածաշրջան), որը գոյություն է ունեցել Ք. ա. VI-I դարերում: *Կոլխեր* անվանումն օգտագործվել է որպես հավաքական տերմին՝ վաղ վրաց-քարթվելական այն ցեղերին բնորոշելու, որոնցից սերել են Սև ծովի արևելյան ափին բնակվող մեգրելներն ու լազերը:

Հին հույները գիտեին Կոլխիդայի մասին: Դա է վկայում արգոնավորդների մասին հունական լեգենդը, ըստ որի՝ նրանք Կոլխիդայում էին փնտրում ոսկե գեղմը: Հույները Ք.ա. VII-VI դդ. Սև ծովի արևելյան ափամերձ տարածքում հիմնեցին բնակավայրեր, այդ թվում՝ ժամանակակից Փոթին (Ֆասիս), Թուրքիայում՝ ժամանակակից Ռիզեն (Ռիզոս):

Ք.ա. 550-ից 333 թթ. և՛ Կոլխիդան, և՛ Քարթլի-Իբերիան (ներկայիս Վրաստանի կենտրոնական տարածաշրջան) ենթարկվեցին Մարական տերության, ապա՝ Աքեմենյան Իրանի ազդեցու-

թյանը: Համաձայն Հերոդոտոսի՝ Աքեմենյան կայսրության կազմի մեջ մտնում էր մինչև Կովկասյան լեռներն ընկած տարածքը: Սակայն կոլխերը ներառված չէին որևիցե սատրապության կազմում: Դրանք չեն հիշատակվում նաև Դարեհի և նրա հաջորդների արձանագրություններում առկա Աքեմենյաններին ենթակա տարածքների (*դահյավա*) կազմում: Չնայած Արևելյան Պոնտոսի ցեղերը Քսենոփոնի Անաբասիսում նշվում են որպես անկախ, սակայն Հերոդոտոսը հիշատակում է ինչպես կոլխերին, այնպես էլ Պոնտական տարբեր ցեղերի այն հիսունյոթ ժողովուրդների թվում, որոնք մասնակցել են Հունաստան Քսերքսեսի Ք.ա. 481-480 թթ. արշավանքին: Հավանական է, որ Աքեմենյանները երբեք չեն կարողացել արդյունավետ կառավարում հաստատել Կոլխիդայի նկատմամբ, թեև տեղի ցեղերի առաջնորդները կարծես ընդունել են պարսկական գերիշխանությունը: Մինչդեռ տասնիններորդ սատրապության հարևան քարթվելական ցեղերը և տասներեքերորդ սատրապության մեջ մտնող հայերը հիշատակվում են որպես Պարսկաստանին տուրք վճարողներ: Համաձայն Հերոդոտոսի՝ կոլխերը յուրաքանչյուր հինգ տարին մեկ պարտավոր էին նվերներ ուղարկել (100 տղա և 100 աղջիկ):

Ք.ա. IV դ. վերջերին Աքեմենյան Պարսկաստանի փլատակների վրա ձևավորված Ալեքսանդր Մակեդոնացու տերության կազմում ո՛չ Քարթլին, ո՛չ Կոլխիդան ներառված չեն: Այս երկրները ներառված չեն եղել նաև Ալեքսանդրի կայսրության ժառանգորդ հելլենիստական պետություններից որևէ մեկի կազմում: Այնուամենայնիվ, հին Հունաստանի մշակույթը զգալի ազդեցություն ուներ տարածաշրջանի վրա, և հունարենը լայնորեն տարածված էր Կոլխիդայի քաղաքներում: Քարթլիում հունական ազդեցությունն ավելի քիչ նկատելի էր, այստեղ որպես գրագրության լեզու օգտագործվում էր հիմնականում արամեերենը:

Վրաստանի արևելյան մասում Ք.ա. VI-IV դդ. առաջնորդության համար պայքար էր ընթանում վրացական տարբեր ցեղային

միավորումների միջև, որն ի վերջո ավարտվեց Մցխեթի շրջանի քարթվելական ցեղերի հաղթանակով:

Ենթադրվում է, որ վրացական ավանդությունը միավորել է Քարթլի-Իբերիան նվաճած Ազոյին վերաբերող երկու իրադարձություն՝ Աքեմենյան Պարսկաստանին ենթակա փոքրասիական տարածքներից (Արիան Քարթլիից) սասպեյրների ցեղերի ներթափանցումը Արևելյան Վրաստանի տարածք և Ալեքսանդր Մակեդոնացու զորավար Մենոնի անհաջող արշավանքը ոսկու հանքերով հարուստ Սպերի գավառ: Ըստ ավանդույթի՝ այս արշավանքի մասնակից Ազոյին հաջողվել է գրավել Մցխեթը, սպանել այնտեղ իշխող Սամարին, իրեն հռչակել Քարթլիի տիրակալ և ներդնել Գացի ու Գաիմ աստվածների պաշտամունքը: Սամարի եղբորորդի Փառնավազը Կոլխիդայի *էրիսթավ* (վրաց. էրի- ժողովուրդ և թավի-առաջնորդ բառերից) Քուջիի օգնությամբ տապալել է Ազոյին և Ք.ա. III դ. առաջին կեսին հիմնել Փառնավազյանների դինաստիան: Փառնավազն իրականացրել է մի շարք բարեփոխումներ: Քարթլիում տարածելով Լուսնի աստված Արմազիի պաշտամունքը՝ նա Մցխեթի մոտ կառուցել է Արմազցիխեի ամրոցը, որտեղ գտնվում էր այս աստծո կուռքը: Նա Քարթլին բաժանել է յոթ վարչական միավորների՝ էրիսթավությունների, ձևավորել է երկրի կառավարման համակարգը, որտեղ թագավորից հետո երկրորդ անձը սպասպետն էր՝ Շիդա Քարթլիի (ներկայիս Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի և Հարավային Օսեթիայի միջև ընկած տարածաշրջան) կառավարիչը:

Փառնավազի որդուն՝ Ք.ա. III դ. երկրորդ կեսին իշխած Սաուրմագին, հաջողվում է, հնազանդեցնելով ցեղային առաջնորդներին, ձևավորել իրեն նվիրված մանր ազնվականների նոր խավ:

Ք.ա. II դարի սկզբից մինչև Ք.հ. II դարի վերջը Կոլխիդան և Իբերիան դառնում են Հռոմի, Մեծ Հայքի, Պոնտական թագավորության միջև երկար ու կործանարար հակամարտությունների

թատերաբեմ: Ք.ա. II դ. սկզբին իշխած Փառնավազյան դինաստիայի ներկայացուցիչ Փարանջոմը փորձում է Քարթլիում զրադաշտականություն տարածել, ինչն էլ նրա դեմ ապստամբության պատճառ է դառնում: Ապստամբները օգնություն են խնդրում հայոց Արտաշես I (Ք.ա.189-160) արքայից, որը, հաղթելով Փարանջոմին, Քարթլիի գահին է բազմեցնում Փարանջոմի աղջկա հետ ամուսնացած իր որդուն: Քարթլին ստիպված է լինում Մեծ Հայքին զիջել Երվանդ IV-ի (Ք.ա.212-200) պարտությունից հետո գրաված Գուգարքն ու Կղարջքը: Նույն ժամանակահատվածում Կոլխիդան ներառվում է Պոնտական թագավորության կազմի մեջ:

Ք.ա. 66–65-թթ. Պոմպեոսի արշավանքի ընթացքում հռոմեացիները Մեծ Հայքից ուղղվեցին դեպի հյուսիս և Ք.ա. 65 թ. գարնանը Պալոր գետի ափին պարտության մատնեցին Ք.ա. 70-60-ական թվականներին իշխած Արտաշեսյան արքայատոհմի վրացական ճյուղին պատկանող Քարթլիի արքա Արտակին՝ ստիպելով նրան ընդունել Հռոմի գերիշխանությունը: Նույն ժամանակահատվածում հռոմեացիները վերացրին Պոնտական թագավորությունը, իսկ նրա ողջ տարածքը՝ ներառյալ Կոլխիդան, որը հռոմեացիները Լազիկա անվանեցին, ներառվեց Հռոմեական կայսրության կազմում:

Ինչ վերաբերում է Քարթլիին, ապա նրա նկատմամբ հռոմեական գերիշխանությունն անկայուն էր: Ք.ա. 36 թ. լեգատ Պուբլիուս Կանիդիուս Կրասոսի գլխավորած հռոմեական զորքը արշավեց Քարթլի՝ ստիպելով նրա թագավոր Փառնավազ II-ին նոր դաշինք կնքել Հռոմի հետ: Սակայն ո՛չ Փառնավազը, ո՛չ Հռոմի հետ ունեցած նրա հարաբերությունները չեն հիշատակվում վրացական տարեգրություններում: Այնտեղ խոսվում է միայն Արտակի որդի Բարտոմի թագավորի և Փառնավազյանների դինաստիայի իշխանությունը վերականգնած արքայազն Միրիան II-ի դեմ պայքարում նրա զոհվելու մասին: Ժամանակակից պատմագրությու-

նը հիմնականում հակված է հռոմեական աղբյուրների հիշատակած Փառնավազին նույնականացնելու վրացական տարեգրությունից հայտնի Բարտոմի հետ:

I դ. ծավալված հռոմեա-պարթևական հակամարտության ընթացքում Քարթլին, որպես Հռոմի դաշնակից, 37 թ. հռոմեա-պարթևական պայմանագրով տիրանում է Գուգարք նահանգի մի մասին և վերահսկողություն հաստատում Մեծ Հայքի նկատմամբ, որտեղ 43 թ. գահ է բարձրանում Քարթլիի Փարսման I (35-74) արքայի եղբայր Միհրդատը (43-51): Առաջնորդվելով «Բաժանիր, որ տիրես» սկզբունքով՝ Հռոմը թշնամություն է հրահրում Փարսման I-ի և Մեծ Հայքում գահ բարձրացած Միհրդատի միջև: Այդ նույն ժամանակ Մցխեթի արքունիքում պայքար էր գնում Փարսման I-ի կանանց՝ Համազասպուհի և Դադանա թագուհիների միջև, որոնցից յուրաքանչյուրը փորձում էր գահաժառանգ դարձնել սեփական որդուն: Դադանա թագուհին, Քարթլիի գահին տիրելու գրավական համարելով Մեծ Հայքի նկատմամբ վերահսկողությունը, դրդեց Փարսման I-ին գահընկեց անել Միհրդատին և վերջինիս փոխարինել իր որդի Հռադամիզդով: Այս իրադարձությունն էլ դարձավ 54-64 թթ. հռոմեա-պարթևական պատերազմի պատճառներից մեկը:

Փարսման I-ին հաջորդում է նրա որդին՝ Միհրդատ I-ը: Նա հիշատակվում է Մցխեթում հայտնաբերված քարե արձանագրությունում, որտեղ ներկայացվում է որպես «կեսարների ընկեր» և «հռոմեասեր իբերների» թագավոր:

II դարում Քարթլին ամրապնդում է իր դիրքերը տարածաշրջանում, հատկապես Փարսման II (մոտ 116-132) թագավորի օրոք: Այդ արքան Հռոմից անկախ քաղաքականություն էր վարում: 129 թ. նա մերժում է Ադրիանոս (117-138) կայսեր՝ Հռոմ ներկանալու պահանջը: Քարթլիի թագավորին հարուստ ընծաներով գրավելու կայսեր փորձը ձախողվում է: Փարսման II-ի դրդմամբ

ալաններն ասպատակում են Մեծ Հայքն ու հռոմեական արևելյան պրովինցիաները:

Անտոնիոս Պիոս (138-161) կայսերը հաջողվում է վերականգնել Քարթլիի հետ դաշինքը: Այցելելով Հռոմ՝ Փարսման II-ը պատիվներով է ընդունվում Անտոնիոս Պիոսի կողմից: Կայսրը վերադարձնում է Արևմտյան Վրաստանի այն տարածքները, որոնք Հռոմը գրավել էր Ադրիանոսի օրոք: Վրացական աղբյուրների համաձայն՝ Փարսման II-ը թունավորվել է պարթևների կողմից կաշառված խոհարարի կողմից: Նրան հաջորդած Դադամին իշխում է ընդամենը երեք տարի: Դադամիի մահից հետո գահն անցնում է նրա մանկահասակ որդուն՝ Փարսման III-ին (մոտ 135-185): Մինչև չափահաս դառնալը Փարսման III-ի խնամակալը նրա տատն էր՝ հայոց Վաղարշ I Արշակունի (117-140) արքայի դուստր Դադանա թագուհին:

II դ. 80-ականների վերջում իշխած Փառնավազյանների դինաստիայի վերջին ներկայացուցիչ Փարսման III-ի որդի Համազասպը հրաժարվում է Հռոմի հետ դաշինքից և հարում է պարթևներին: Համազասպի իրականացրած արտաքին քաղաքականության կտրուկ շրջադարձը հանգեցնում է Քարթլիի հռոմեամետ ավագանու ապստամբության: Հռոմի դրդմամբ հյուսիսից Քարթլի են ներխուժում ալանները, իսկ հարավից՝ հայոց Վաղարշ II Արշակունու (186-198) բանակը: Ներկայիս Դմանիսի քաղաքից դեպի արևելք տեղի ունեցած ճակատամարտում Համազասպը սպանվում է, իսկ նրա բանակը պարտություն է կրում: Վրաց ավագանու համաձայնությամբ Քարթլիում գահ է բարձրանում Վաղարշ II-ի որդի Ռևը՝ հիմնադրելով հայ Արշակունիների վրացական ճյուղի իշխանությունը:

Ռև արքային հաջորդած Վաչե, Բակուր, Միհրդատ թագավորների կառավարման մասին ոչինչ հայտնի չէ: Վրաց Արշակունիների այս դինաստիայի վերջին ներկայացուցիչ Ասպագուրի օրոք Իրանում պարթևական դինաստիան տապալվում է: Ասպա-

գուրը, դաշնակցելով հայոց Տրդատ II Արշակունու (217-252) հետ, ռազմական գործողություններ է վարում Արտաշիր I Սասանյանի դեմ: Պարտություն կրելով՝ Ասպագուրը փախչում է ալանների մոտ, որտեղ էլ կնքում է իր մահկանացուն՝ մոտ 284 թ.: Վրացական աղբյուրների համաձայն՝ Ասպագուր թագավորի դուստր Աբեշուրան ամուսնացած էր պարթևական Միհրան տոհմի ներկայացուցիչ Միրիանի հետ, որն էլ օրինականացրեց վերջինիս գահակալումը Քարթլիում:

ՀԱՐՑԵՐ

1. Համաձայն հին հունական աղբյուրների՝ ինչպիսի՞ն էին Կոլխիդայի և Աբեմենյան Իրանի փոխհարաբերությունները:
2. Ի՞նչ է հայտնի Ք.ա. IV դ. վերջում Մցխեթում գահակալած Ազոյի մասին:
3. Ի՞նչ է իրականացրել Քարթլիի Փառնավազ I-ը:
4. Ո՞րն էր Քարթլիի Փարանջոմ թագավորի գահազրկման պատճառը:
5. Ք.ա. I դարում ի՞նչ իրադարձությունների արդյունքում է Կոլխիդան հայտնվում Հռոմի տիրապետության տակ:
6. I դարում ի՞նչ իրադարձություններ են հանգեցնում նրան, որ Գուգարք նահանգի մի մասն անցնում է Քարթլիի տիրապետության տակ:
7. Հռոմի նկատմամբ ինչպիսի՞ քաղաքականություն էր վարում Քարթլիի Փարսման II արքան:
8. Ո՞րն էր Փառնավազյան դինաստիայի վերջին ներկայացուցիչ Համազասպի դեմ ապստամբության և նրա տապալման պատճառը:
9. Ո՞ր դինաստիան է հաջորդում Փառնավազյաններին Քարթլիի գահին:

ԳԼՈՒԽ II
ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐ

ԹԵՄԱ I
Սասանյան Իրան

III դ. սկզբում Հռոմի դեմ պայքարում թուլացած և ներքին հակասություններից ուժասպառ դարձած Պարթևական տերությունն ընկնում է Պարսքից սերող նոր քաղաքական ուժի՝ Սասանյանների հարվածից: Պարսքը, որ գտնվում է Իրանական բարձրավանդակի հարավ-արևմուտքում, նախկինում այն առանցքն էր, որի շուրջը ձևավորվել էր Աքեմենյան տերությունը:

Սասանյանների տոհմին պատկանող Արտաշիրը կարողանում է իրեն ենթարկել ոչ միայն Պարսքը, այլև հարևան Ջեյը (ներկայիս Սպահան), Կրմանը, Պարսքից արևմուտք ընկած Խուզեստանը՝ այդպիսով մարտահրավեր նետելով Պարթևական պետության գահակալ Արտավան V-ին (216-224): Վերջինիս բանակը 224 թ. Որմիզդականի ճակատամարտում գլխովին ջախջախվում է: Արդյունքում Իրանի գահն անցնում է Արտաշիր I-ին (226-241), որը երկու տարի անց թագադրվում է Ստահրի Անահիտի տաճարում:

Պարթևաստանի փլատակների վրա ձևավորված Սասանյան տերությունը պարթևների վարչաքաղաքական ավանդույթների շարունակողն էր: Արտաշիր I-ը, գրավելով պարթևներին ենթակա համարյա բոլոր տարածքները, անհաջողություն է կրում Հայաստանում, Մարաստանում և Ատրպատականում: Նա ստիպված էր իր հայացքն ուղղել արևելք՝ իր նվաճումների թիրախ դարձնելով թուլացող Քուշանական պետությունը: Արտաշիրին հաջողվում է իրեն ենթարկել հյուսիս-արևելքում մինչև Խորեզմ, հարավ-արևելքում մինչև Քաբուլի հովիտն ընկած բոլոր տարածքները, ամուր հաստատվել Խորասանում ու Մերվի օազիսում այնպես, որ շուրջ

երեք դար դրանք դառնում են Սասանյանների իշխանության հենարանն արևելքում:

Արտաշիր I-ին հաջորդած նրա որդու՝ Շապուհ I-ի (241-272) օրոք Իրանում Մանին սկսում է քարոզել կրոնական մի ուսմունք, որն իր հիմնադրի անունով կոչվում է մանիքեյություն: Այս կրոնը տարածվում է նաև Իրանի սահմաններից դուրս. արևմուտքում՝ Հռոմեական կայսրությունում, արևելքում՝ Քուշանական պետությունում և Հնդկաստանում: Սկզբում մանիքեյությունը Իրանում չէր հետապնդվում: Սակայն երբ պարզ է դառնում, որ այս կրոնական ուսմունքի տակ թաքնված է ստորին խավերի բողոքը աճող շահագործման դեմ, սկսվում են դաժան հալածանքներ այդ կրոնի հետևորդների նկատմամբ, իսկ Մանը մահապատժի է ենթարկվում:

Շապուհ I-ը շարունակում է Մերձավոր Արևելքի նկատմամբ գերակայության համար Հռոմի դեմ մղվող համառ պայքարը, որը դեռ պարթևների օրոք էր սկիզբ առել: Երկու տերությունների միջև պատերազմի առաջին փուլն ավարտվում է 260 թ. հռոմեացիների ջախջախմամբ և Վալերիանոս կայսեր (253-260) գերեվարությամբ: Այս հաղթանակից և Հայաստանում պարսիկների դիրքերի ամրապնդումից բացի, Շապուհ I-ը զգալի հաջողությունների է հասնում նաև արևելքում. այստեղ Սասանյան Իրանի սահմանները հասնում են Հերաթից արևելք գտնվող Սիահկոհ և Սաֆեդկոհ լեռնաշղթաներին:

Շապուհ I-ի մահից հետո քսան տարվա ընթացքում Սասանյանների գահին չորս թագավոր է բազմում, ինչը վկայում է Իրանում անկայուն քաղաքական իրավիճակի մասին: Այս ժամանակահատվածում էլ տեղի է ունենում հռոմեական կայսր Քարուսի (282-283) արշավանքը Միջագետք, որն ավարտվում է 283 թ. հաշտության պայմանագրով: Ըստ այդ պայմանագրի՝ պարսիկները կորցնում են Մեծ Հայքի նկատմամբ վերահսկողությունը: Այս անհաջողություններն ուղեկցվում են խոշոր ապստամբությամբ, որի կազմակերպիչը արևելքում միջինասիական ցեղերի աջակցությունը վայելող Սասանյան արքայազններից մեկն էր: III դ. ամենա-

վերջում հռոմեացիները հաղթանակ են տանում Սասանյան Ներսեհ (293-302) արքայից արքայի նկատմամբ՝ ստիպելով նրան 298 թ. Հռոմին ձեռնտու պայմանագիր ստորագրել Մծբինում:

Սասանյան Իրանի նոր հզորացումը համընկնում է Շապուհ II-ի (309-379) գահակալման տարիների հետ: Նրա օրոք Հռոմի հետ հակամարտությունը նոր փուլ է մտնում՝ պայմանավորված այնպիսի կարևորագույն գործոնի ի հայտ գալով, ինչպիսին քրիստոնեությունն էր: Շապուհ II-ի կառավարման սկիզբը համընկնում է Հռոմեական կայսրությունում քրիստոնեության՝ պետական կրոնի վերածվելու գործընթացի հետ, որից հետո փոխվեց Սասանյանների վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ: Երբ Հռոմեական կայսրությունում քրիստոնյաները ենթարկվում էին հալածանքների, Սասանյան արքաները, հույս ունենալով, որ, ի դեմս քրիստոնյաների, Հռոմի դեմ պայքարում դաշնակիցներ ձեռք կբերեն, պատրաստակամ ապաստան էին տրամադրում նրանց: Սակայն Հռոմեական կայսրությունում քրիստոնեության դիրքերի ամրապնդմանը զուգահեռ, Իրանում սկսեցին հալածել պաշտոնական քրիստոնեական դավանանքին պատկանողներին՝ ի հակադրություն պաշտոնական եկեղեցու դավանաբանությանն ընդդիմացող զանազան աղանդավորական հայացքներ ունեցողների, որոնք օժանդակություն էին ստանում Սասանյանների կողմից:

Հռոմի հետ նոր բախումն իրեն երկար սպասեցնել չտվեց: Մեծ Հայքում, ուր բախվում էին երկու տերությունների շահերը, այդ տերությունների միջև բարդ պայքար էր ընթանում: Երկու կողմերն էլ ձգտում էին իրենց կողմը գրավել հայ ավագանուն: Հակամարտ կողմերը 359 թ. դիվանագիտական խարդավանքներից անցան ռազմական գործողությունների, որոնք ընթանում էին Հայաստանում և Հյուսիսային Միջագետքում: Պարսիկների համար պատերազմը հաջող ընթացք ունեցավ: Նրանք գրավեցին ռազմավարական նշանակության մի շարք ամրոցներ, իսկ Հուլիանոս Ուրացող (361-363) կայսեր զոհվելուց հետո հռոմեացիները 363 թ. ստիպված էին պարսիկներին զիջել անդրտիգրիսյան

հինգ նահանգները և պարտավորվել չօժանդակել իրենց դաշնակից Մեծ Հայքի Արշակ II (350-368) արքային: Այնուամենայնիվ, հայ ժողովրդի համառ պայքարի շնորհիվ Մեծ Հայքի վերահսկողության համար պայքարը դեռ երկար շարունակվեց, սակայն 387 թ. ավարտվեց Հռոմի ու Իրանի միջև այդ պետության բաժանմամբ:

V դ. սկզբում սրվում է չընդհատվող պայքարը, որն ընթանում էր մի կողմից արքայից արքայի և նրա կենտրոնաձիգ քաղաքականությունը սատարողների, մյուս կողմից՝ կենտրոնախույս ձկրտումներ դրսևորող խոշոր ավատատիրական հզոր տոհմերի միջև: Նույն դարի կեսի զարգացումներն Իրանում ընթանում են իշխող վերնախավի շահատակություններից լայն զանգվածների դժգոհության, իշխող վերնախավի առանձին խմբավորումների միջև պայքարի և Միջին Ասիայի քոչվորների հաճախակի դարձած արշավանքների պայմաններում:

Հեփթաղները Միջին Ասիայում հիմնում են կիսաքոչվորական հզոր մի պետություն, որն իրեն է ենթարկում բոլոր օազիսներն ու քաղաքները: Հեփթաղների դեմ Պերոզ I-ի (462-484) երկու արշավանքներն էլ ձախողվում են: Գերի ընկնելով՝ Պերոզ I-ը ստիպված էր վճարել խոշոր ռազմատուգանք և մինչև դրա ամբողջական վճարումը իր թագաժառանգին պատանդ տալ հեփթաղներին: Երկրորդ արշավանքի ժամանակ Իրանի բանակը ջախջախվում է, արքան՝ անհետ կորչում: Արդյունքում հեփթաղները նվաճում են Սասանյան Իրանի արևելյան մի շարք նահանգներ և ստիպում Սասանյաններին ծանր հարկ վճարել:

Պատերազմներում պարտությունները ու երկիրը հյուծող սովը հանգեցնում են խոշոր ապստամբությունների Իրանում: Պերոզ I-ին հաջորդած Վաղարշը (484-488), չկարողանալով ճնշել Վիրքում և Հայաստանում 481-484 թթ. տեղի ունեցած ապստամբությունը, ստիպված էր զիջումների գնալ: Վաղարշին հաջորդած Կավադ I-ը (488-498; 501-531), ժառանգելով անկում ապրող կայսրություն, ուր Սասանյան թագավորների իշխանությունը

խիստ թուլացել էր, նախաձեռնում է լայնածավալ բարեփոխումներ, որոնց իրականացումն ավարտվում է նրա որդու՝ Խոսրով I Անուշիրվանի (531-579) օրոք: Աշխարհիկ և հոգևոր վերնախավի դիրքերի թուլացմամբ շահագրգիռ Կավադ I-ն իր առաջին գահակալման ժամանակ սատարեց մազդակյանների շարժումը: Այն ցնցեց Սասանյան տերության հիմքերը և հանգեցրեց ազնվականության ու հոգևորականության իշխանությունը թուլացրած սոցիալական հեղափոխության:

563 թ. Թուրքական խաքանաթի և Իրանի միջև հեփթաղների դեմ դաշինք է հաստատվում: Հաջորդ թվականին Խոսրով Անուշիրվանի զորքերը գրավում են ռազմավարական նշանակություն ունեցող Բակտրիան (ժամանակակից Աֆղանստանի հյուսիսային, ինչպես նաև Ուզբեկստանի ու Տաջիկստանի հարավային տարածքները): 567 թ. հեփթաղների պետության կործանումից հետո, Բյուզանդիայի հրահրմամբ, նախկին դաշնակիցների միջև պատերազմ է ծագում: Պարտված Իրանը ստիպված էր տարեկան 40 հազար ոսկե դինար (մոտ 170 կգ) վճարել խաքանաթին:

VI դ. ընթացքում Սասանյանները, ջանալով նվաճել Սև և Միջերկրական ծովերի ափամերձ երկրները և ամբողջականորեն վերահսկել Չինաստանն ու Հնդկաստանը, միջերկրածովյան երկրներին կապող տարանցիկ առևտրային ճանապարհները, պատերազմում են Բյուզանդիայի հետ: Երկու տերությունների միջև հակամարտությունն ընթանում է նաև ռազմավարական նշանակություն ունեցող Հայկական լեռնաշխարհին տիրելու համար: Չնայած առանձին ռազմական հաջողություններին՝ Իրանին այդպես էլ չի հաջողվում Բյուզանդիայի նկատմամբ երկարաժամկետ առավելություններ ունենալ: Դրա փոխարեն Սասանյաններին հաջողվում է Բյուզանդիայի դաշնակից Եթովպիայից 572 թ. նվաճել Եմենը: Դրանով Սասանյանները վերահսկողություն են հաստատում արևելյան Միջերկրականը Հնդկաստանին կապող քարավանային ճանապարհի նկատմամբ, որը սկսում է Սիրիայից, ապա անցնում Հեջազով ու Եմենով:

Որմիզդ IV-ի (579-590) օրոք աշխարհիկ ու հոգևոր վերնախավի ներկայացուցիչները, ուշքի գալով մազդակյանների շարժման կողմից իրենց հասցված հարվածներից, նորից փորձում են հնազանդեցնել արքայից արքային: Այդ պայքարն ավարտվում է պալատական հեղաշրջմամբ և Որմիզդ IV-ի սպանությամբ: Վերջինիս որդին՝ Խոսրով II Ափարվեզը (590-628), փաստացի դառնում է իշխանությունը զավթած վերնախավի գերին, իսկ այդ վերնախավի ընդդիմադիր մասի ներկայացուցիչ Վահրամ Չուբինն իրեն արքայից արքա է հռչակում: Խոսրով II Ափարվեզը կարողանում է իր իշխանությունը վերականգնել միայն բյուզանդական կայսր Մավրիկիոսի (582-602) օժանդակությամբ՝ 591 թ. Բյուզանդիային զիջելով Հայկական մարզպանության զգալի տարածքներ: Երբ Բյուզանդիայում տեղի ունեցած հեղաշրջման արդյունքում Մավրիկիոսը սպանվում է, Խոսրով II Ափարվեզը, նրա սպանության համար վրեժխնդիր լինելու պատրվակով, նոր պատերազմ է սանձազերծում: Օգտվելով Բյուզանդիայում ծագած ներքին պառակտումներից՝ պարսիկները տաղանդավոր զորավար Շահրվարազի հաղթանակների շնորհիվ 609-619 թթ. գրավում են Սիրիան, Պաղեստինն ու Եգիպտոսը և երիցս մոտենում են Բոսֆորի նեղուցին: Ուժերի գերագույն լարումով և Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսից Իրան ներխուժած խազարների օժանդակությամբ կայսրությանը հաջողվում է պարսկական բանակներին հետ շպրտել բյուզանդական տարածքներից և, հակահարձակման անցնելով, ներխուժել Իրան: Ռազմական կարիքների համար հաստատված արտակարգ հարկերը տնտեսապես քայքայում են Իրանը՝ առաջացնելով ոչ միայն ստորին խավերի, այլև ռազմավարի բացակայությունից դժգոհ վերին խավերի վրդովմունքը: Զինվորական վերնախավի մի մասն ու նեստորականություն դավանող խոշոր վաճառականները պալատական հեղաշրջում են իրականացնում և սպանում են Խոսրով II Ափարվեզին: Իրանը 628 թ. ստիպված է լինում հաշտություն կնքել և Բյուզանդիային վերադարձնել նախկինում նվաճած բոլոր տարածքները:

Քաղաքական և տնտեսական առումով խիստ թուլացած Իրանում տարբեր խմբավորումներ սկսում են պայքարել իշխանության համար՝ հաջորդաբար գահին բազմեցնելով և տապալելով իրենց դրածո Սասանյան արքաներին: Հաշտության կնքումից հետո չորս տարվա ընթացքում գահակալում է ութ թագավոր և թագուհի: Հազկերտ III (632-651) Սասանյան վերջին արքայի օրոք Իրանը ենթարկվում է իսլամի դրոշի ներքո միավորված արաբական բանակների ներխուժմանը, որը վերջ է դնում Սասանյան պետության գոյությանը:

ՀԱՐՑԵՐ

1. Որտե՞ղ և ե՞րբ է տեղի ունենում Սասանյան Արտաշիրի և պարթև Արտավան V-ի բանակների միջև վճռական ճակատամարտը:
2. Ինչո՞ւ էին Իրանում մանիքեյականության հետևորդները դաժան հալածանքների ենթարկվում:
3. Ռազմաքաղաքական ի՞նչ հաջողությունների է հասնում Սասանյան Շապուհ I արքան:
4. Ինչո՞ւ է Շապուհ II արքան բացասական դիրքորոշում որդեգրում քրիստոնյաների նկատմամբ:
5. Ի՞նչ ավարտ է ունենում Պերոզ I-ի և հեփթաղների միջև հակամարտությունը:
6. Ինչո՞ւ էր Կավատ I-ը սատարում մազդակյան շարժումը:
7. Ինչո՞ւ է 567 թ. խախտվում Թուրքական խաքանաթի և Սասանյան Իրանի միջև դաշինքը:
8. Ո՞րն էր VI դ. Սասանյան Իրանի և Բյուզանդիայի միջև պատերազմների գլխավոր պատճառը:
9. Ո՞րն էր Խոսրով II Ափարվեզ արքայից արքայի դավադրության պատճառը:

ԹԵՄԱ II
Սասանյան Իրանի վարչաքաղաքական համակարգը

Ի տարբերություն Պարթևական պետության՝ Սասանյանների պետության հիմքը կենտրոնացված կառավարման համակարգն էր: Սասանյան տերության կայունության պահպանման նախապայմանը ուժեղ միապետն էր՝ շահնշահը (արքայից արքան): Արքայի առողջությունն ու բարեկեցությունը մեծ դեր ունեին պետության կայունությունն ապահովելու հարցում, ուստի նրան դիմում էին «անմահ լեր»[5] արտահայտությամբ: Իսլամի այժմյան խորհրդանիշ կիսալուսինն ու արևը VI դարից հայտնվել են Սասանյան մետաղադրամների վրա, ինչը, ըստ իրանցի պատմաբանների, ընդունված հայեցակարգ էր: Ըստ այդ հայեցակարգի՝ Սասանյան արքայից արքան մարմնավորում էր տիեզերքի կենտրոնը, իսկ արևն ու լուսինը պտտվում էին նրա շուրջը: Արքայից արքան կրում էր վառ զգեստ, ծանր թագ, իսկ մորուքը ոսկեզոծ էր: Վաղ Սասանյան թագավորներն իրենց աստվածային ծագում էին վերագրում, որի արտահայտությունն էր նրանց առջև ծնրադրելու կարգը:

Սասանյան արքաները, սկսած Շապուհ I-ից, կրում էին «արքայից արքա Երանի և Աներանի» տիտղոսը: Սասանյան քաղաքական հայեցակարգով աշխարհը բաժանվում էր երկու մասի՝ «Երանի կամ ընտրյալների երկիր» և «Աներանի կամ թշնամիների երկիր»: Վերջինս ներառում էր ոչ միայն Ռումը (Հռոմեական կայսրություն), այլ նաև Թուրանը (հյուսիս-արևելքում՝ Ամուդարիայից այն կողմ, գտնվող թշնամական երկիրը, որտեղ հերթագայում էին քուշանները, խիոնիտները, հեփթաղները): Սա նշանակում էր, որ պարսից արքաների առջև խնդիր էր դրված Երանշահի քաղաքակրթությունը պահպանել արտաքին աշխարհից բխող

[5] Անմահ լեր (գրաբար)-եղիր անմահ

սպառնալիքից: Այս համատեքստում ուշագրավ է այն տեղեկությունը, որ Խոսրով Անուշիրվանի գահադահիճում՝ թագավորական գահի կողքին, կային երեք ավելի ցածր գահավորակներ՝ նախատեսված Հռոմի և Չինաստանի կայսրերի ու թուրքերի խաքանի համար, այն դեպքում, եթե նրանք ճանաչեն Սասանյան արքայից արքայի գերիշխանությունը:

Սասանյանների այս հայեցակարգի արտացոլումը Իրանի հետ Հռոմեական կայսրության հարաբերություններում էական փոփոխությունն էր. հռոմեական կայսրերը ստիպված էին Սասանյաններին ընդունել որպես իրենց հավասար գահակալների: Նրանց համար Սասանյան Իրանն այլևս բարբարոսների երկիր չէր (ինչպես գերմանական ցեղերով բնակեցված անդրհռենոսյան տարածքները), այլ քաղաքակիրթ և նույնքան հզոր տերություն: Հռոմեացիներն այդպիսի վերաբերմունք երբեք չեն ունեցել պարթևների նկատմամբ, թեև Օգոստոսի ժամանակներից ի վեր Պարթևական տերությունը համարվում էր երկրորդ ինքնիշխան մեծ երկիրը:

VI դ. մշակվել էր դիվանագիտական բարդ արարողակարգ, որին հետևում էին թե՛ կայսերական, թե՛ Սասանյան արքունիքներում: Կայսրերն ու արքայից արքաներն ուղերձներում միմյանց եղբայր էին անվանում: Բացի այդ, գահակալների փոփոխության մասին կողմերը միմյանց տեղյակ էին պահում նույնիսկ այն դեպքում, երբ նրանց միջև ռազմական գործողություններ էին ընթանում: Այս առումով Սասանյան Պարսկաստանը ոչ թե Հռոմի բարբարոս հարևանն էր, այլ սկզբունքորեն հավասար տերություն:

Սասանյան արքաները, կենտրոնացված պետության աշխարհիկ տիրակալներ դառնալով, նաև ազգային կրոնի՝ զրադաշտականության խորհրդանիշ սուրբ կրակի պաշտպաններն էին համարվում: Զրադաշտականության խորհրդանիշը հստակ երևում է Սասանյան մետաղադրամների վրա, որտեղ դիմերեսին պատկերված է բարձրագույն իշխանության խորհրդանիշներ

կրող միապետը, իսկ դարձերեսին՝ զրադաշտական կրոնի խորհրդանիշ ատրուշանը:

Որպես կանոն, միապետական իշխանությունը ժառանգական էր, արքան իրավասու էր իշխանությունն իր հայեցողությամբ փոխանցելու նաև կրտսեր որդուն:

Սասանյան գահակալի թիկնազորը հայտնի էր *փուշտիգբան* (մարմնի, բառացի՝ որովայնի պաշտպան) անունով[6]: Արքայական պալատը պահպանում էր առանձին զորամաս, որը հայտնի էր դարիգան անունով: Այս երկու զորախմբերը հավաքագրվում էին Սասանյան տերության բարձր ազնվականության ներկայացուցիչներից և գտնվում էին հազարապետի վերահսկողության ներքո: Հազարապետը պատասխանատու էր նաև թագավորի անվտանգության համար, վերահսկում էր պալատը, ուներ բանակը ղեկավարելու իրավունք: Սասանյան դասային համակարգի կենտրոնում շահնշահն էր, որը գլխավորում էր ազնվականությանը և համարվում էր ողջ պետության միահեծան տերը: Արքայական տոհմի իշխանները, առանձին երկրամասերի կառավարիչները, խոշոր հողատերերը և քրմերը միասին արտոնյալ խավ էին, որը կոչվում էր *նամդարան*:

Արքայից արքայի անմիջական վասալները, որոնք շահրդարի տիտղոս էին կրում, երկրամասերի կառավարիչներ էին: Սասանյան ազնվականությունը հին պարթևական տոհմերից, պարսից ազնվական ընտանիքներից և ենթակա տարածքներից սերող ազնվական ընտանիքների միասնություն էր: Երբեմնի գերիշխող յոթ պարթևական տոհմերից մի քանիսը պահպանել են իրենց դիրքը. Սասանյան արքունիքում պատվավոր պաշտոններ են զբաղեցրել Կարենի, Սուրենի, Միհրանի տոհմերի ներկայացուցիչնե-

---

[6] Համաձայն Ղազար Փարպեցու՝ Ներսեհապատի ճակատամարտում հայերի համար հաղթական ելքը որոշվել է նաև Սասանյան արքայի թիկնազորի հրամանատարի՝ փուշտիգպան սալարի և տանուտեր Սահակ Բագրատունու մենամարտում առաջինի սպանվելով:

ը, որոնք հայտնի են *վասպուհրներ* (սանսկրիտից թարգմանած՝ տոհմի որդի, դրանից էլ՝ *Վասպուրական* տեղանունը) անունով:

Սասանյան բարձր ազնվականության հաջորդ դասը՝ *վուզուրգանները*, տերության վարչակազմում, այդ թվում՝ սահմանամերձ տարածքների մարզպանություններում կառավարիչների կարևոր պաշտոններ էին զբաղեցնում: Այս պաշտոններից շատերը ժառանգական էին և մի քանի սերունդ շարունակ փոխանցվում էին նույն տոհմի անդամներին:

Սասանյան հասարակությունը սոցիալական չափազանց բարդ կառուցվածք ուներ և բաղկացած էր չորս սոցիալական խավերից՝ *ասրոնան* (հոգևորականներ), *արտեշտարան* (ռազմիկներ). *վասուրարյոշան* (ռամիկներ), *խութուխշան* (արհեստավորներ): Սասանյան տերությանը բնորոշ էր կենտրոնացված իշխանությունը: Արքայի անմիջական ենթակայության տակ գտնվող հզոր կառավարչական ապարատը, որը գլխավորում էր *վուզուրգ ֆրամադարը*, օժտված էր պետական կառավարման գործառույթներով: Կառավարչական ապարատի շրջանակներում զրադաշտական հոգևորականությունը հսկայական իշխանություն ուներ: Մոգերի հոգևոր դասի ղեկավարը *մուբեդան մուբեդն* էր, բանակի գլխավոր հրամանատարը *սպահբեդն* էր, իսկ գյուղատնտեսական ոլորտը վերահսկում էր *վասուրարյոշան-սալարը*:

Խոսրով I Անուշիրվանի բարեփոխումներով Սասանյան Պարսկաստանը բաժանվեց չորս խոշոր վարչական միավորների՝ *քուստակների* (մարզպանական Հայաստանը գտնվում էր դրանցից հյուսիսայինի՝ Քուստի Կապկոհի կազմում):

Սասանյանները, ինչպես պարթևները, մշտական պատերազմների մեջ էին Հռոմեական կայսրության հետ: Պարթևներին հաջորդած Սասանյան արքաները, որոնք ավելի քան 400 տարի գլխավորում էին աշխարհի հզոր տերություններից մեկը, իրենց գլխավոր մրցակից էին համարում Արևելահռոմեական կայսրությունը, ապա՝ Բյուզանդիան: Սասանյանները, ինչպես և Արևե-

լահռոմեական կայսրությունը, մշտական բախման մեջ էին հարևան թագավորությունների և քոչվորների հորդաների հետ, որոնցից բխող վտանգը այդպես էլ չհաղթահարվեց: Բյուզանդիայի և Սասանյան Իրանի բազմաթիվ ու հաճախակի պատերազմները սպառեցին երկու հակառակորդ պետությունների մարդկային և նյութական ռեսուրսները, ինչն էլ դրանց խիստ խոցելի դարձրեց իսլամի դրոշի ներքո միավորված արաբական բանակների առջև, որոնք արագորեն գրավեցին ողջ Սասանյան Իրանը:

Դարեր շարունակ արևմուտքում Սասանյանների տերության սահմանը հարում էր մեծ և կայուն Արևելահռոմեական կայսրությանը, իսկ արևելքում նրա ամենամոտ հարևանները քուշանների, ապա հեփթաղների ու թյուրքերի պետական կազմավորումներն էին, որոնց ավարառու արշավանքներին դիմագրավելու նպատակով Սասանյանները մի շարք ամրացված քաղաքներ էին հիմնել, այդ թվում՝ Թուսն ու Նիշապուրը ներկայիս Խորասանում:

Հարավում Սասանյանների հակառակորդն արաբական ցեղերն էին, որոնց արշավանքների դեմ պատվար էր ծառայում Իրանի կողմից վերահսկվող Ալ-Հիրայի թագավորությունը:

Հյուսիսում խազարները և Թյուրքական խաքանաթը հաճախակի հարձակվում էին Այսրկովկասում Սասանյաններին ենթակա տարածքների վրա: 634 թ. նրանց նույնիսկ հաջողվեց ներխուժել Ատրպատական, ինչն էլ ստիպեց Սասանյաններին բազմաթիվ ամրություններ կառուցել այս տարածաշրջանում: Դրանց թվում է Դերբենտի (ներկայիս ՌԴ Դաղստանի Ինքնավար Հանրապետություն) տպավորիչ ամրությունների շարքը, որի մի մասը մինչ օրս պահպանվել է:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն էր Սասանյան տերության կայունության պահպանման նախապայմանը:

2. Ի՞նչ էր խորհրդանշում Սասանյան արքաների «Արքայից արքա Երանի և Աներանի» տիտղոսը:

3. Ո՞ւմ համար էին նախատեսված Խոսրով Անուշիրվանի թագավորական գահի կողքին առկա երեք ավելի ցածր գահավորակները:

4. Ի՞նչ փոփոխություն է տեղի ունենում Հռոմի դիվանագիտական արարողակարգում, երբ Պարթևական պետությանը հաջորդեց Սասանյան տերությունը:

5. Ի՞նչ գործառույթներ ուներ հազարապետը Սասանյան արքունիքում:

6. Ո՞րն էր Սասանյան Իրանի՝ արաբներից կրած պարտության գլխավոր պատճառը:

ԹԵՄԱ III
Վիրքը IV-VII դարերում

Ինչպես Մեծ Հայքում, այնպես էլ Արևելավրացական թագավորությունում՝ Քարթլիում, քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու հանգամանքը հեղաշրջող դեր ունեցավ այս երկրի ճակատագրի վրա: Արևելահռոմեական կայսրության և Սասանյան Իրանի միջև մրցապայքարի կարևոր գործոն հանդիսացող Քարթլիի թագավորությունում սկսեց թուլանալ իրանական ազդեցությունը, որի Սասանյան արքաները վարում էին համաձուլման քաղաքականություն: Քրիստոնեության ընդունմամբ Քարթլին բռնեց մի քանի դար տևած այնպիսի կարևորագույն գործընթացների ուղի, որը պետք է հանգեցներ վրաց ժողովրդի ինքնաճանաչողության, ինքնագիտակցության ձևավորմանը:

Քրիստոնեությունը Քարթլիում պետական կրոն հռչակելուն անդրադարձած բոլոր աղբյուրները այն կապում են Հռիփսիմյան կույսերից Նինոյի (հայկական աղբյուրներում՝ Նունե) անվան հետ: Համաձայն այս աղբյուրների՝ մինչ Տրդատ III-ի (287-330) կողմից իր ընկերակից կույսերի նահատակությունը Նինոն, հեռանալով նրանցից, որոշ ժամանակ մնում է Զավախքում: Նինոյի խնդրանքով տեղի հայ հովիվները ցույց են տալիս մայրաքաղաք Մցխեթի ճանապարհը: Այնտեղ կույսը ժամանում է վրաց հեթանոսական գլխավոր աստծուն՝ Արմազիին, նվիրված տոնակատարության օրը: Նինոյի աղոթքից հետո սաստիկ քամին խորտակում է Արմազիի կուռքը: Դրանից հետո Նինոն բուժում է Նանա թագուհուն, որից հետո վերջինս և նրա նաժիշտները քրիստոնեություն են ընդունում: Վրաց արքա Միրիան III-ի (318-360) դարձին նախորդում է որսորդության ժամանակ վրա հասած խավարչտին մառախուղը: Սակայն արքայի աղոթքներով հեթանոսական աստվածները չեն ցրում մառախուղը, և միայն թագավորի՝ Նինոյի աստծուն դիմելուց հետո է խավարն անհետանում:

Նինոն Կուրի ջրերում մկրտում է Միրիանին, արքունիքը և ժողովրդին: Քրիստոսի թիկնոցով թաղված Սիդոնիայի գերեզմանի վրա Նինոյի կարգադրությամբ կառուցվում է Սվետիցխովելի տաճարը: Կոստանդինոս Մեծ կայսրը (306-337), բավարարելով Միրիան արքայի խնդրանքը, Քարթլի է ուղարկում քրիստոնյա հոգևորականների:

Քարթլիի՝ քրիստոնեություն ընդունելու տարեթիվը տարակարծությունների տեղիք է տվել: Պատմաբանները[7] հավանական են համարել 313-ից 337 թթ. ընկած ժամանակահատվածը: Այս հարցին անդրադարձել են նաև աստղագետները, որոնք Միրիան արքայի որսի ժամանակ տեղի ունեցած խավարչտին մառախուղը համարել են արևի խավարում, ինչը, ըստ աստղագետների, տեղի է ունեցել 319 թ. մայիսի 6-ին:

361 թ. Միրիան III-ին հաջորդեց նրա թոռը՝ Սաուրմագ II-ը, որի մայրը՝ Սալոմե թագուհին, հայոց Տրդատ III արքայի դուստրն էր: Սաուրմագ II-ի հռոմեամետ քաղաքականությունը առաջացնում է պարսից Շապուհ II (309-379) արքայից արքայի դժգոհությունը: Իրանական բանակի ներխուժման հետևանքով Սաուրմագ II-ը տապալվում է: Քարթլիում գահ է բարձրանում Շապուհ II-ի դրածո Վարազ-Բակուրը: Շապուհ II-ի հրամանով Հայոց Արշակ II (350-368) արքայի մահապատժից հետո իր դիրքերը Մեծ Հայքում և Վիրքում կորցնելու սպառնալիքի տակ հայտնված Հռոմեական կայսրությունը պատասխանում է զենքի ուժով. 370-371 թթ. Մեծ Հայքում սատարում է Պապ Արշակունուն (370-374), Քարթլիում՝ Սաուրմագին: 371 թ. Ցիրավի ճակատամարտում պարտություն կրելուց հետո Շապուհ II-ը ստիպված էր Սաուրմագ II-ին ճանաչել Քարթլիի թագավոր: 378 թ. Ադրիանապոլսի ճակատամարտում հռոմեական բանակի՝ գոթերից կրած ջախջախիչ

---

[7] Sauter J., Simonia I., Stephenson R., Orchiston W, The legendary fourth-Sentury total solar eclipse in Georgia: Fact or fantasy?, New insights from recent studies in historical Astronomy NY, 2014.

պարտությունից և Վաղես կայսեր զոհվելուց հետո Մեծ Հայքում և Վիրքում նախաձեռնությունը վերստին անցնում է Իրանին, ինչի հետևանքով Վարազդատ Արշակունին (374-378) հեռացվում է Մեծ Հայքի գահից, իսկ Սաումագ II-ը՝ զրկվում Քարթլիի գահից: 387 թ. Ակիլիսենեի (Բարձր Հայքի Եկեղյաց գավառ) հաշտության պայմանագրով Մեծ Հայքի տարածքի մեծ մասը և Քարթլիի թագավորությունն անցնում են Իրանի գերիշխանության տակ:

Վրաց ժողովուրդը, չհամակերպվելով Սասանյան Իրանի վարած բիրտ քաղաքականությանը, Քարթլի թագավորների գլխավորությամբ ազատագրական պայքար է ծավալում նվաճողների դեմ: Այդ պայքարի և Վրաստանի վաղ միջնադարյան պատմության ամենահայտնի գործիչներից Վախթանգ Գորգասարի գահակալության թվագրումը վիճելի է: Մասնագետների մի մասը հակված է Վախթանգի գահակալության տարիները համարելու 449–502 թթ., մյուս մասը՝ 447–522 թթ.[8]:

Վախթանգի վերաբերյալ աղբյուրներում իրականությունը միահյուսված է լեգենդի և էպիկական պատմումի հետ: Այս արքային սկզբնապես կոչել են Վարազխոսրովթանգ իրանական անունով, որը վրացերեն տառադարձմամբ վերածվել է Վախթանգի: Գորգասար թագավորական մականունը Վախթանգին տրվել է իր սաղավարտի վրա պատկերված գայլի գլխի համար:

Վախթանգը յոթ տարեկանում դառնում է հոր՝ Միրդատ թագավորի իրավահաջորդը, իսկ մայրը՝ քրիստոնեացած պարսկուհի Սագդուխտը, թագավորության ժամանակավոր կառավարիչ է կարգվում այն ժամանակ, երբ Քարթլին խիստ ծանր վիճակում էր. հարավից սպառնում էր Սասանյան Իրանի կողմից ձուլման վտանգը, հյուսիսից՝ ալանների ավերիչ ասպատակությունները: Չափահաս դառնալով՝ Վախթանգը ոչ միայն հետ է մղում ալան-

---

[8] Manana Sanadze, The issue of dating the reigh of king Vakhtang Gorgasali, International Journal of Arts, Humanities and Social Sciences, Volume 05; Issue no 04: April, 2024.

ներին, այլև ներխուժում է Հյուսիսային Կովկաս, վերդարձնում գերության քշված հայրենակիցներին: Նա մասնակցում է հեփթաղների դեմ Պերոզ I արքայից արքայի՝ 460-ական թվականների ձախողված արշավանքին, ապա՝ Հռոմեական կայսրության դեմ 472 թ. ռազմական գործողություններին, ինչի արդյունքում նա Քարթլիին է միացնում Արևմտյան Կղարջքը և հիմնում Արդանուջ քաղաքը:

Վերադառնալով Քարթլի՝ Վախթանգը ձեռնարկում է թագավորական իշխանության ամրապնդմանը միտված մի շարք միջոցառումներ: Քարթլիի անկախության դեմ Իրանի ոտնձգություններից անհանգստացած՝ Վախթանգը փոխում է իր քաղաքական կողմնորոշումը, ամուսնալուծվում Սասանյան արքայից արքա Որմիզդ III-ի (458-462) դուստր Բալենդուխտից և մտերմանում Զենոն կայսեր (474-475; 476-491) հետ՝ ամուսնանալով վերջինիս ազգականուհի Ելենայի հետ:

Թագավորական իշխանության ամրապնդման ճանապարհին արգելք էր նաև եկեղեցին: Ժամանակի ընթացքում վերածվելով ավատատիրական խոշոր կառույցի՝ այն հանուն առաջնության մրցում էր աշխարհիկ իշխանության հետ: Դեռ V դ. 30-40-ական թվականներին պարսիկները, որպես թագավորական իշխանությանը հակակշիռ, Մցխեթի արքեպիսկոպոս Գլոնկորին հաստատեցին Քարթլիի և Ալազան գետի միջին հոսանքում գտնվող Հերեթի էրիսթավ: Այս համատեքստում պետք է դիտարկել Վախթանգի և Մցխեթի արքեպիսկոպոս Միքայելի առճակատումը: Վերջինիս կարգալույծ անելուց հետո Վախթանգին հաջողվում է վրաց եկեղեցու նոր առաջնորդի համար Կ. Պոլսի պատրիարքից ստանալ կաթողիկոսական աստիճան:

Որդեգրելով հռոմեամետ քաղաքականություն՝ Վախթանգը էլ ավելի սրեց իր հարաբերությունները Քարթլիի խոշոր ազնվականների հետ, որոնց պարսկամետ կեցվածքը պայմանավորված էր Քարթլիում Սասանյան արքունիքի կողմից կենտրոնախույս ուժերի աջակցությամբ: 481 թ. Վախթանգը մահապատժի է ենթար-

կում իր ամենահզոր վասալին՝ Գուգարքի բդեշխ Վազգենին, որը, զրաղաշտականություն ընդունելով և ամուսնանալով պարսից Պերոզ արքայից արքայի քրոջ հետ, սպանել էր իր առաջին կնոջը՝ Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկին: Վազգենի մահապատժով Վախթանգը բացահայտ առճակատման է գնում պարսից տիրակալին: Վախթանգի նախաձեռնությամբ 481թ. Սասանյան Իրանի դեմ հայ-վրացական ապստամբություն է սկսվում: 482 թ. ամռանը Ճարմանայի դաշտում դաշնակիցների բանակը պարտություն է կրում: Քարթլին 483 թ. ավերածության է ենթարկվում: Պարտությունը ստիպում է Վախթանգին փախչել Հռոմի վերահսկողության տակ գտնվող Լազիկա (ժամանակակից արևմտյան Վրաստան): 484 թ. հեփթաղների հետ պատերազմում Պերոզ Ի-ի մահից հետո նրան հաջորդած Վաղարշը վերականգնում է խաղաղությունը Կովկասում: Վախթանգին հաջողվում է վերահաստատվել Քարթլիի գահին՝ չփոխելով իր հռոմեամետ քաղաքական ուղղությունը:

491 թ. Պարսկաստանի և Արևելահռոմեական կայսրության միջև նոր պատերազմի պայմաններում պարսից Կավադ Ի արքան Վախթանգից պահանջում է միանալ Կայսրության դեմ ձեռնարկվող արշավանքին: Վախթանգի մերժումը պարսիկների ներխուժման տեղիք է տալիս: Վախթանգը ստիպված էր կյանքի վերջին տարիներին անհաջող պատերազմ վարել պարսիկների դեմ: Վրացիների պարտությունից հետո Վախթանգի կողմից հիմնադրված Թիֆլիսում 518 թ. պարսիկ կառավարիչ է նշանակվում: Ըստ ավանդույթի՝ Վախթանգը մահացու վիրավորում է ստանում իր ծառայի կողմից զրահի թևատակի բացվածքին հասցված դաշույնի հարվածից: Վիրավոր թագավորին տեղափոխում են Ուջարմայի իր ամրոցը, որտեղ նա վախճանվում է:

Վախթանգի մահից հետո գահի համար պայքար է ծավալվում նրա պարսկամետ որդու՝ Դաչիի և Հուստինոս Ի-ի (518-527) հովանավորյալ Գուրգենի միջև: 523 թ., չկարողանալով դիմագրավել Քարթլի ներխուժած պարսկական բանակին, Գուրգենը

սկզբում ապաստանում է լազերի արքա Ծաթեի մոտ, ապա հեռանում է Կ. Պոլիս: Այս իրադարձությունները հանգեցնում են 526-531 թթ. Սասանյան Պարսկաստանի և Արևելահռոմեական կայսրության միջև, այսպես կոչված, Իբերական պատերազմին, որն ավարտվում է «Հավերժական խաղաղություն» անվամբ հայտնի պայմանագրով, ըստ որի՝ Արևելահռոմեական կայսրությունը Կովկասյան լեռնանցքները քոչվորներից պաշտպանելու պատրվակով Պարսկաստանին վճարելու էր 110 կենտինար (մոտ 5 տոննա) ոսկի: Տարածքային փոփոխություններ տեղի չունեցան՝ status quo ante bellum-[9]ը պահպանվեց. Լազիկան, որտեղ իշխում էր Ծաթե արքան, մնում է Կայսրության ներքո, իսկ Քարթլին, որտեղ մարզպանի կարգավիճակով կառավարիչը Դաչին էր, Սասանյան Պարսկաստանի գերիշխանության: Քարթլիից Կայսրություն փախած վրացիները ներում են ստանում և կարող էին վերադառնալ հայրենիք:

Քարթլիի թագավորները պահպանում են մարզպանի պաշտոնը մինչև 540 թ., երբ մարզպան է նշանակվում պարսիկ Փիրան Գուշնասպը: Քարթլիում Խոսրովյանների դինաստիայի ներկայացուցիչներն անվանապես պահպանում են թագավորական տիտղոսը մինչև 580 թ., երբ Որմիզդ IV-ը վերացնում է Քարթլիի թագավորությունը: Վրաց ազնվականությունը դիմադրություն ցույց չի տալիս, իսկ թագավորական դինաստիայի ներկայացուցիչներն ապաստանում են Կախեթում, Կղարջքում և Ջավախքում:

Պարսիկների ծանր հարկային քաղաքականությունն ու զրադաշտականության պարտադրանքը Հայաստանում ու Քարթլիում 572 թ. ապստամբության պատճառ են դառնում, ինչն էլ հանգեցնում է պարսկա-բյուզանդական հերթական պատերազմի: Կայսր

---

[9] Լատիներեն տերմին, որը դիվանագիտության մեջ նշանակում է մինչ պատերազմը եղած իրավիճակի վերականգնում:

Մավրիկիոսը (582-602) Քարթլիի թագավորական դինաստիայի ներկայացուցիչ Գուարամին 588 թ. կյուրոպաղատի (լատ. cura palatii-պալատի վերատեսուչ) տիտղոս է շնորհում և ուղարկում է Քարթլի: Գուարամը վրաց բարձր ազնվականության ճնշման տակ հրաժարվում է արքայական տիտղոսից՝ ստանալով մեծ իշխանի՝ *էրիսմթավարի* (բառացի՝ էրիսթավների գլխավոր) աստիճան: 591 թ. իրանա-բյուզանդական պայմանագրով Քարթլին բաժանվում է երկու տերությունների միջև, ընդ որում, Թբիլիսին մնում է Իրանի տիրապետության տակ, իսկ Մցխեթը, որը դառնում է էրիսմթավարիի նստավայրը, հայտնվում է բյուզանդական վերահսկողության ներքո:

Էրիսմթավարի իշխանապետության ձևավորումը նշանավորում էր տոհմիկ բարձր ազնվականության գերիշխանության հաստատումը Քարթլիում և այս երկրի համար Կայսրության ու Սասանյան Իրանի պայքարում փոխզիջումային լուծում էր: Էրիսմթավարիներն ունեին սահմանափակ լիազորություններ, նրանք չէին կարող պաշտոնանկ անել ձևականորեն իրենց ենթակա էրիսթավներին: Վերջիններս իրենց տիրույթներում իշխում էին կայսեր կամ արքայից արքայի հաստատմամբ:

Էրիսմթավարներին իրենց վերահսկողության տակ պահելով՝ բյուզանդական կայսրերը ջանում էին սահմանափակել Սասանյան, իսկ հետո իսլամական ազդեցությունը Կովկասում, սակայն Քարթլիի այս իշխանապետները, իրենց երկրի քաղաքական շահերից ելնելով, հաճախ անցնում էին Բյուզանդիայի հակառակորդ ուժերի կողմը:

Այսպես, Գուարամ I-ի որդի Ստեփանոսը (590-627) իր իշխանապետության երկրորդ տասնամյակի սկզբին հրաժարվում է հոր բյուզանդամետ քաղաքականությունից և, իր ծառայություններն առաջարկելով Սասանյան Խոսրով II Ափարվեզ (591-628) արքայից արքային, պարսկական բանակի օգնությամբ ամրապնդում է իր իշխանությունը Քարթլիում՝ սանձելով էրիսթավների անջատողական նկրտումները: 626 թ. բյուզանդական բանակի կողմից

Թբիլիսիի գրավումից հետո Հերակլ կայսեր (618-641) հրամանով Ստեփանոսը մաշկազերծ է արվում:

Ստեփանոսի իշխանության շրջանը համընկնում է Վրաստանի պատմության մեկ այլ կարևորագույն իրադարձության՝ վրաց եկեղեցու քաղկեդոնական դառնալու հետ: 608 թ. Կյուրիոն կաթողիկոսը, հենվելով Քարթլիի խոշոր ազնվականության աջակցության վրա և ձգտելով դուրս գալ Հայոց եկեղեցու և նրա կաթողիկոսի ենթակայությունից, խզում է կապերը Հայոց եկեղեցու հետ: Սասանյան Իրանի դեմ պատերազմում 628 թ. Բյուզանդիայի հաղթանակն ապահովում է Վրաց եկեղեցու դավանական նոր ուղղության անշրջելիությունը:

Լազիկայի թագավորությունը (վրացական աղբյուրներում՝ Էգրիսի, հայկական աղբյուրներում՝ Եգեր) կազմավորվել է 131 թ. Կոլխիդայի թագավորության փլուզման և դրա մեջ մտնող ցեղային-տարածքային միավորների նոր պետական կազմավորման շուրջ համախմբման արդյունքում: Սկզբում դրա տարածքն ընդգրկում էր միայն Ռիոն գետի ավազանը:

III դ. երկրորդ կեսին գոթերի, ապա սարմատների ներխուժման հետևանքով Հռոմը կորցրեց Լազիկայի նկատմամբ վերահսկողությունը: IV դ. Լազիկայի թագավորությունը հզորանալով միավորեց ամբողջ Արևմտյան Վրաստանը: Հարավում նրա սահմանները հասնում էին Ճորոխ գետի ստորին հոսանքին, իսկ հյուսիսում՝ ներկայիս Աբխազիա՝ ներառելով ապշիլների, աբազգների իշխանությունները: Լազիկայի թագավորների կախվածությունը Արևելահռոմեական կայսրությունից դարձավ անվանական: Կայսրերը արքայական իշխանության խորհրդանիշներ էին ուղարկում Լազիկայի գահին նստող թագավորներին, որոնց պարտականությունը երկրի հյուսիսային սահմանները քոչվորներից պաշտպանելն էր:

Ինչպես Քարթլիում, Լազիկայում նույնպես քրիստոնեությունը IV դ. առաջին կեսին պետական կրոն հռչակվեց, իսկ Լազիկայի եկեղեցին ենթարկվեց Կ.Պոլսի պատրիարքին: VI-IX դդ.

Լազիկայի եկեղեցին գլխավորում էր մետրոպոլիտը, որի նստավայրը Ֆասիսում էր: Նրան էին ենթարկվում չորս եպիսկոպոս՝ Պետրայի (Ցիխիսձիրի), Զիգանեիի (Գուդավա), Ցայիշի և Ռոդոպոլիսի (Վարդցիխե): V դ. կեսերին Գուբազ I թագավորը (մոտ 456-468) Արևելահռոմեական կայսրության վերահսկողությունից դուրս գալու անհաջող փորձ է կատարում: Կայսրությունից կրած պարտությունը V դ. 70-ականներին հանգեցնում է սվանների ու սանիգների իշխանությունների անջատմանը: Նրանք օգտվում են Բյուզանդիայի հետ բախումից և անկախություն են ձեռք բերում:

VI դ. Լազիկայի թագավորությունը դառնում է Բյուզանդիայի և Իրանի միջև անընդմեջ պատերազմների թատերաբեմ: Այն բանից հետո, երբ Իրանն իր դիրքերն ամրապնդում է Հայաստանում, Քարթլիում և Աղվանքում, հակամարտող տերությունների համար Լազիկան ռազմավարական կարևոր նշանակություն է ստանում: 528 թ. իրանական բանակը գրավում է Արևմտյան Վրաստանի Շորապանի և Սկանդե բերդաքաղաքները: 532 թ. «Հավերժական խաղաղությունը» պահպանվում է ընդամենը տասը տարի: Անհանգստացած Լազիկայում նոր բերդերի կառուցմամբ՝ Խոսրով Անուշիրվան արքայից արքան 542 թ. վերսկսում է պատերազմը: Կողմերի միջև ռազմական գործողություններն ավարտվում են 562 թ.: Դարայում (գտնվել է ներկայիս Թուրքիայի Մարդինի իլի տարածքում) կնքվում է «Հիսնամյա խաղաղություն», որով Խոսրով Անուշիրվանը ճանաչում է Լազիկայի՝ Բյուզանդիային պատկանելը՝ տարեկան 30 հազար ոսկի նոմիսմա[10] վճարելու պայմանով: Սվանեթիայի պատկանելության շուրջ կողմերը համաձայնության չեն գալիս:

VII դ. 20-ական թվականներին լազերը աբազգների հետ ակտիվորեն մասնակցում էին Իրանի դեմ Հերակլ կայսեր (610-641) արշավանքներին: Նույն դարի վերջին Լազիկայի թագավորու-

[10] Մեկ ոսկե նոմիսման կշռում էր 4,5 գ.:

թյունը վերացվում է: Աբազգիան (Աբխազիա) դառնում է անկախ իշխանություն և ուղղակի ենթարկվում է Բյուզանդիային: Բյուզանդա-պարսկական հակամարտությունը ծայրահեղորեն թուլացնում է հակամարտ կողմերին, ինչի հետևանքով իսլամի դրոշի ներքո արտաքին լայնամասշտաբ նվաճումների դիմած արաբները, կործանելով Սասանյան տերությունը, իրենց գերիշխանությունն են հաստատում ինչպես Հայաստանի, այնպես էլ Արևելյան Վրաստանի նկատմամբ:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞վ է կարևորվում Նինոյի գործունեությունը վրաց պատմության մեջ:
2. Ո՞ր հաշտության պայմանագրով է 387 թ. Քարթլին անցնում Իրանի գերիշխանության տակ:
3. Ինչպիսի՞ն էր իրավիճակը Քարթլիում Վախթանգ Գորգասարի գահակալման առաջին տարիներին:
4. Ինչո՞վ էր պայմանավորված Վախթանգ Գորգասարի և արքեպիսկոպոս Գլոնկորի հակամարտությունը:
5. Ի՞նչ իրադարձություններ են սկիզբ առնում Վախթանգ Գորգասարի հրամանով Գուգարաց բդեշխին մահապատժի ենթարկելուց հետո:
6. Որո՞նք էին իրանա-բյուզանդական «Հավերժական խաղաղության» պայմանները:
7. Ինչո՞ւ է Խոսրով Անուշիրվան արքայից արքան խախտում «Հավերժական խաղաղության» պայմանագիրը:
8. Ե՞րբ է Քարթլիում վերացվում թագավորական իշխանությունը:
9. Ինչո՞ւ է Գուարամ Ի-ը արքայական տիտղոսի փոխարեն էրիսմթավրիի աստիճան ստանում:

ԳԼՈՒԽ III
ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐ

ԹԵՄԱ I
Վրաստանի հզորացումը 1089-1156 թթ.

1089-1125 թթ. Վրաստանի գահակալն էր այս երկրի պատմության մեջ ամենամեծ և ամենահաջողակ տիրակալը, որին պատմագրությունը միանգամայն արդարացիորեն համարում է «վրացական ոսկեդարի» հիմնադիրն ու ճարտարապետը՝ Դավիթ IV Շինարարը:

Դավիթ IV-ի հոր՝ Գեորգի II-ի (1072-1089) իշխանության օրոք Վրացական թագավորությունը լուրջ վտանգի առաջ էր կանգնած. 1071 թ.՝ Մանազկերտի ճակատամարտից հետո, Վրաստանը պարբերաբար ենթարկվում էր թուրք-սելջուկների ավերիչ արշավանքներին: 1080 թ. սկիզբ է առնում շատ ավելի վտանգավոր գործընթաց՝ «Դիղի թուրքոբան», այսինքն՝ մեծ թրքացումը: Ժամանակակից վրաց մատենագրությունը այդպես է անվանել թուրքական ցեղերի զանգվածային բնակեցումը Վրաստանի հովտային բարեբեր տարածքներում, որտեղից տեղական բնակչությունը դուրս էր մղվում դեպի լեռնային շրջաններ: Այլ ելք չգտնելով՝ Գեորգի II-ը ստիպված 1083 թ. մեկնում է հզորության գագաթնակետին գտնվող Սելջուկյան տերության գահանիստ՝ Սպահան, և հպատակվելով Մելիք-շահին (1072-1092)՝ դառնում է սելջուկների հարկատուն:

Վրաստանին սպառնացող ներքին և արտաքին մարտահրավերները հաղթահարել չկարողացած Գեորգի II-ի նկատմամբ դժգոհությունը 1089 թ. հանգեցնում է պալատական հեղաշրջման: Գեորգի II-ը հօգուտ որդու՝ թագաժառանգ Դավթի հրաժարվում է գահից և վանք է մտնում:

Տասնվեցամյա Դավիթ IV-ի առաջ ծառացած խնդիրները բարդ ու բազմաբնույթ էին. անհրաժեշտ էր վերականգնել ուժեղ կենտրոնական իշխանությունը և վերստին միավորել երկիրը: Այս արքայի գահակալման ժամանակաշրջանը կարելի է բաժանել երեք փուլի՝ ներքին բարեփոխումների (1089-1103), կորցրած տարածքների վերադարձի (1107-1118) և արտաքին անվտանգության ապահովման (1120-1125):

Չնայած երիտասարդ տարիքին՝ Դավիթ IV-ը ակտիվորեն լծվում է Վրաստանի առջև ծառացած այս բարդագույն խնդիրների լուծմանը: Հենվելով իր դաստիարակ, Չխոնդիդիի ազդեցիկ եպիսկոպոս Գեորգիի աջակցության վրա՝ Դավիթ IV-ը առանց հապճեպ քայլերի, նպատակաուղղված քաղաքականություն էր վարում: Այն ուղղված էր երկրում կարգուկանոն հաստատելուն, անհնազանդ աշխարհիկ և եկեղեցական ավատատերերին սանձելուն, իշխանությունը կենտրոնացնելուն, նոր տիպի բանակ ձևավորելուն, որը ոչ միայն կկանգնեցներ սելջուկ թուրքերի հարձակումները, այլև, անցնելով հարձակման, կվտարեր սելջուկներին նախ Վրաստանից, ապա՝ ողջ Այսրկովկասից: 1089-1100 թթ. Դավիթ IV թագավորը ձևավորում է իրեն հավատարիմ զինված փոքր խմբեր՝ կարգուկանոնը վերականգնելու և թշնամու մեկուսացված զորքերը ոչնչացնելու համար: Նա սկսում է վերաբնակեցնել ավերված շրջանները և նպաստում է խոշոր քաղաքների վերականգնմանը: Օգտվելով Առաջին խաչակրաց արշավանքի հաջողությունից՝ Դավիթ IV-ը 1099 թ. դադարեցնում է տարեկան հարկի վճարումը սելջուկներին և վերջ է դնում նրանց գաղթին դեպի Վրաստան: Միաժամանակ նա հրաժարվում է բյուզանդական *պանհիպերսեբաստոսի* կոչումից՝ դրանով ցույց տալով, որ Վրաստանը Բյուզանդական կայսրության հետ կհարաբերվի որպես հավասարը հավասարի: 1101 թ. Դավիթ IV-ը գրավում է Ջեղազենի ամրոցը, որը ռազմավարական նշանակություն ուներ Կախեթը և Հերեթը վերամիավորելու նպատակով նրա պայքարում: Արևել-

յան Վրաստանի այս երկրամասերը ազատագրվում են հաջորդ երեք տարիների ընթացքում:

1093 թ. ձերբակալվում է վրաց թագի վաղեմի թշնամի Թռեղքի տեր Լիպարիտ Բաղվաշին, որը վտարվում է Վրաստանից, իսկ Լիպարիտի որդի Ռաթիի մահից հետո Դավիթը 1103 թ. հարքունիս է գրավում[11] Բաղվաշիների տոհմական Կլդեկարի ամրոցը:

1103 թ. Ռուիսի և Ուրբնիսի վանքերում տեղի է ունենում եկեղեցական մեծ ժողով, որը պատմությանը հայտնի է *Ռուիս-Ուրբնիսի սինոդ* անվամբ: Դավիթ IV-ին հաջողվում է հեռացնել ընդդիմադիր եպիսկոպոսներին, որոնք, լինելով իշխանական խոշոր տոհմերի անդամներ, սատարում էին իրենց աշխարհիկ ազգականների անջատողական ձգտումները: Ժողովի որոշմամբ վրաց եկեղեցին հարկատու դարձավ թագավորին: Որպեսզի էլ ավելի թուլացնի եկեղեցու դիրքերը, Դավիթ IV-ը միավորեց պետական քարտուղարի՝ *մծիգնոբարթուխուցեսիի* պաշտոնը և դատական իշխանությունը կրող ու կաթողիկոսից հետո վրաց եկեղեցում ազդեցիկությամբ երկրորդ՝ Չխոնդիդիի եպիսկոպոսի նվիրապետական աստիճանը: Նոր պաշտոնը Դավիթ IV-ի օրոք հաջորդաբար վարում էին նրա մերձավոր գործընկերները՝ Գեորգի և Սիմեոն եպիսկոպոսները:

Կախեթի թագավորությունը իր պետությանը միացնելուց հետո՝ 1105 թ., Դավիթը Էրցուխի ճակատամարտում ջախջախում է Գանձակի սելջուկ էմիրի զորքերը, ինչը նպաստում է 1110-1118 թթ. Սամշվիլդեի, Ռուսթավիի, Գիշիի և Լոռեի ռազմավարական ամրոցների գրավմանը:

Վրաստանի այս հաջողությունները սկսում են անհանգստացնել նրա մուսուլման հարևաններին, որոնց հետ վճռական բախումը բախտորոշ դեր էր ունենալու Վրաստանի համար: Վրաց արքան բանակի կարողությունները հզորացնելու նպատա-

---

[11] Բռնագրավել և արքունիքի սեփականությունը դարձնել:

կով ռազմական բարեփոխումներ է կատարում: Բանակը դառնում է մշտական և բաժանվում է երեք մասի՝ հինգ հազարի հասնող թագավորական գվարդիա՝ ծանրազեն գրոհային հեծելազոր (մոնասպա), քաղաքները պաշտպանող կայազորային զորքեր և մշտապես զենքի տակ գտնվող ծանրազեն հետևակ: Սակայն ռազմական ներուժը բավարար չէր սելջուկներին պարտության մատնելու համար, քանի որ սելջուկների բանակը գերազանցապես բաղկացած էր թեթևազեն արագաշարժ հեծելազորից, որը խուսափում էր մերձամարտից, որտեղ վրացական բանակը առավելություն ուներ: Բացի դրանից, վրացական բանակը մինչ Դավիթ IV-ի ռազմական բարեփոխումները հիմնականում բաղկացած էր ավատատերերի տրամադրած զորամասերից: Եվ քանի որ դրանք անմիջականորեն ենթարկվում էին ոչ թե վրաց արքային, այլ իրենց ավատատիրոջը, ապա չէին կարող հուսալի լինել: Անհրաժեշտ էր ունենալ միայն թագավորին ենթակա զինված ուժեր: Այս հանգամանքներից ելնելով՝ 1118–1120 թթ. Դավիթ IV-ը Հյուսիսային Կովկասից ղփչաղների է բնակեցնում Վրաստանում:

Սկզբնաղբյուրները հայտնում են, որ Վրաստան է տեղափոխվել 40 հազար ընտանիք, և դրանցից յուրաքանչյուրը պարտավոր էր վրացական բանակին մեկ զինվոր տրամադրել: Սակայն իրականում այս թիվը խիստ ուռճացված է և կարելի համարել չափազանցություն: 40 հազարը վրաց մատենագիրները նշում են նաև 1068 թ. Գանձակի Շադդադյան Փատլուն ամիրի (1067-1073) դեմ արշավանքում վրացիներին օժանդակած ալանների զորաբանակի համար: Նույն թիվն է նշվում 1205 թ. Ադրիանապոլսի ճակատամարտում խաչակիրների դեմ բուլղարական բանակի կազմում կռվող ղփչաղների համար, երբ իրականում նրանք 10 հազարից ավելի չէին: Կիևյան Ռուսիայի դեմ X-XI դդ. արշավանքներում ղփչաղները մարտադաշտ են հանում հինգից տասը հազար զինվոր, իսկ ղփչաղների առանձին խոշոր ցեղերի զինա-

կան ուժը չէր գերազանցում երկու հազարը: Այսպիսով, անհրաժեշտ է փաստել, որ Այսրկովկաս տեղափոխված ղփչաղների ընդհանուր թվաքանակը 15-ից 20 հազար էր, իսկ մարտիկների թվաքանակը՝ ենթադրաբար 3-4 հազար:

Վրաց թագավորի այս եռանդուն գործունեությունը հանգեցնում է իսլամական աշխարհի լուրջ հակաքայլերին: Մահմեդական տերությունները գնալով ավելի էին անհանգստանում Այսրկովկասում քրիստոնեական պետության արագ վերելքով: 1121 թ. սուլթան Մահմուդ իբն Մուհամմադը (1118–1131) սրբազան պատերազմ՝ ջիհադ է հայտարարում Վրաստանին: Ձևավորվում է մահմեդական պետությունների մեծ կոալիցիա, որի բանակը գլխավորում էր Իլ-դազի Արթուկյանը: 1121 թ. օգոստոսի 12-ին Դավիթ IV թագավորը Դիդգորիի դաշտում ջախջախում է մահմեդականների բանակը: Այս ճակատամարտը Վրաստանի պատմության մեջ համարվում է ռազմական մեծագույն հաջողություն: Դիդգորիում տարած հաղթանակը Վրաստանը դարձնում է մեծ ռազմական տերություն և փոխում է տարածաշրջանային հավասարակշռությունը՝ հօգուտ Վրաստանի: Հաջորդ՝ 1122 թ. Դավիթ IV-ը գրավում է Թիֆլիսը, որը մուսուլմանների վերջին հենակետն էր Վրաստանում, և որոշ ժամանակ անց իր գահանիստը Քութայիսից տեղափոխում է Թիֆլիս: 1124 թ. նա վերջնականապես նվաճում է Շիրվանը և մահմեդական Շաղդաղյան էմիրներից խլում է տարածաշրջանի խոշորագույն քաղաք Անին:

Դավիթ Շինարարը որդուն՝ Դեմետրե I-ին (1125-1155), ժառանգություն է թողնում հզոր մի տերություն, որը տարածվում էր Կովկասյան լեռներից մինչև Շիրակ և Կասպից ծովից մինչև Սև ծով: Թեպետ Դեմետրե I-ի ջանքերն ուղղված էին այդ սահմաններում տերության ամբողջականությունը պահպանելուն, Դավիթ IV-ի մահը քաջալերում է Վրաստանի հարևան մահմեդական տիրակալներին. 1130 թ. Շահարմեն Սոքման II-ի (1128-1185) հետ բախման հետևանքով Անին վերստին անցնում է Շաղդաղյաններ-

րին: Թեպետ 1139 թ. Դեմետրեին հաջողվում է գրավել Գանձակը և քաղաքի դարպասները, որպես հաղթանակի նշան, պահ տալ Գելաթի վանքում, սակայն 1143 թ. քաղաքը վերստին անցնում է Ելտկուզյաններին:

Տարածքային այս կորուստները պայմանավորված էին Վրաստանի ներքաղաքական զարգացումներով: Դավիթ IV-ը երկաթե ձեռքով սանձահարել էր վրաց խոշոր ավատատերերի անջատողական ձգտումները, սակայն չէր ոչնչացրել անջատողականության սոցիալ-տնտեսական հիմքերը: Վրացական բանակի հիմքը հանդիսացող զինվոր-մդաբիուրները[12] դառնում էին խոշոր ավատատերերից կախյալ գյուղացիներ: Այս հզոր ավատատիրական տոհմերը, թագավորից խոշոր ավատներ՝ դիդեբաներ ստանալով, վասալական կախման էին ենթարկում մանր ազնաուրներին, թագավորին խամաճիկ դարձնելով՝ ձգտում էին տիրանալ պետական կառավարման լծակներին: Դրան նպաստում էր առճակատումը արքայական ընտանիքի ներսում: Դեմետրե I-ի ավագ որդին՝ Դավիթը, մտավախություն ունենալով, որ հայրը գահը կհանձնի կրտսեր որդի Գեորգիին, 1130 թ. այն զավթելու անհաջող փորձ է անում: 1154 թ. երկրորդ փորձը հաջողություն է ունենում: Բայց Դավիթ V-ի գահակալումը կարճ է տևում: Նրա մահվան հանգամանքները պարզված չեն և պատված են խորհրդավորության քողով: Վարդան Բարձրաբերդցու հաղորդմամբ, Դավիթ V-ին նրա կրտսեր եղբայր Գեորգիի դրդումով սպանել են Օրբելիները, մինչդեռ Ստեփանոս Օրբելյանը պնդում է, որ թագավորը մահվան մահճում իր անչափահաս որդու՝ Դեմնայի խնամակալ է նշանակել Գեորգիին, որը երդվել էր Դեմնայի՝ չափահաս դառնալուց հետո իշխանությունը վերադարձնել նրան:

---

[12] Ազատ գյուղացիներ:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ վտանգի առաջ է հայտնվում Վրաստանը Գեորգի II թագավորի օրոք:

2. Ի՞նչ հանգամանքներում է գահին բազմում Դավիթ IV-ը:

3. Քանի՞ փուլի կարելի է բաժանել Դավիթ IV-ի գահակալումը:

4. Ինչպե՞ս է նպաստում Վրաստանի հզորացմանը Խաչակրաց առաջին արշավանքը:

5. Ինչո՞ւ է Դավիթ IV-ը հրաժարվում բյուզանդական բարձր կոչումից:

6. Ի՞նչ նպատակ էր հետապնդում Դավիթ IV-ը Ռուիս-Ուրբնիսիի եկեղեցական ժողովում:

7. Ինչո՞ւ է Դավիթ IV-ը կազմակերպում ղփչաղների բնակեցումը Վրաստանում:

8. Ի՞նչ խոշոր քաղաքական փոփոխություններ են տեղի ունենում Վրաստանում Դիդգորիի ճակատամարտից հետո:

9. Ինչո՞ւ Դավիթ IV-ին հաջորդած Դեմետրե I-ին չի հաջողվում զարգացնել իր հոր հաջողությունները:

ԹԵՄԱ II

Վրաստանը Գեորգի III-ի և Թամար թագուհու օրոք (1156-1213)

1156 թ. գահակալած Գեորգի III-ը վարում էր ներքին ու արտաքին ակտիվ քաղաքականություն: Նրա գլխավորությամբ վրացիները շարունակեցին ճնշումը թուրք-սելջուկների էմիրությունների վրա: Գեորգի III-ի գահակալման սկզբում Վրաստանի հիմնական ախոյանը Խլաթում նստող Շահարմենեներն էին, որոնք XII դ. 30-60 թթ. մշտապես մասնակցում էին Վրաստանի դեմ պատերազմներին: Ավելին, Շահարմենները սատարում էին կենտրոնական իշխանության դեմ վրաց ավատատերերի խռովությունները և նրանց ապաստան տալիս իրենց տարածքում: Գեորգի III-ի առաջին՝ հավանաբար 1160 թ. ռազմարշավն ուղղված էր դեպի Կաղզվան, որը նա խլեց Շահարմենեներից: Այդ արշավանքը Կարսը և Անին հարավից շրջափակելու նպատակով էր: Շահարմեն Սուքման II-ը դա թույլ չտալու համար 1160 թ. հոկտեմբերին իր բանակը շարժում է վրացիներին ընդառաջ: Օլթիի մոտ տեղի ունեցած ճակատամարտում վրացիների հաղթանակը ոգևորում է Անիի ազատատենչ հայ բնակչությանը, որը, ապստամբելով քաղաքի Շադդադյան էմիրի դեմ, առաջարկում է վրաց արքային տիրել Անիին: Գեորգի III-ը 1161 թ. գրավում է Անին, ապա՝ 1162 թ.՝ Դվինը, որի կառավարիչ է դառնում քաղաքի հայկական վերնախավի ներկայացուցիչ Անանիան:

Այս խոշոր ռազմաքաղաքական հաջողությունը ստիպում է մահմեդական էմիրներին միացյալ ուժերով հանդես գալ Վրաստանի դեմ: Ատրպատականի աթաբեկ Ելտկուզի (1136-1175) գլխավորած ռազմական խմբավորումը, որի մեջ մտնում էին Խլաթի, Դիարբեքիրի, Էրզրումի և Մարաղայի էմիրների հիսուն հազարանոց միացյալ բանակը, 1163 թ. ձմռանը պարտության է մատնում վրացիներին և գրավում ներկայիս Վրաստանի Մարնեուլի շրջանում գտնվող Գագ ամրոցը: Հակահարձակման անցած վրա-

ցիները 1166 թ. սկզբին թալանում են Գանձակի էմիրության տարածքը: Անընդմեջ շարունակվող պատերազմը վճռական հաղթանակ չէր բերում հակամարտող կողմերին, ինչն էլ ստիպում է նրանց դադարեցնել ռազմական գործողությունները: Գեորգի III-ն ընդունում է Ելտկուզի զինադադարի առաջարկը, և Անին վերստին անցնում է Շադդադյաններին, որոնք, որպես Վրաստանի վասալներ, իշխում են մինչև ռազմական գործողությունների նոր փուլի սկիզբը: 1174 թ. վրացիները կրկին տիրում են Անիին, որի կառավարիչ է նշանակվում վրացական բանակի հրամանատար-ամիրսպասալար Իվանե Օրբելին: Անջատողական ձգտումներ ունեցող խոշոր և ազդեցիկ քաղաքական այս գործիչը պատրաստ էր Անիի նկատմամբ իր իրավունքների ընդլայնման պայմանով ճանաչել սելջուկների գերիշխանությունը, սակայն քաղաքի հոգևոր առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսի գլխավորած հայ բնակչության ընդդիմությունն ի դերև է հանում Օրբելու դավաճանական մտադրությունը: Երախտագետ վրաց արքան գերությունից փրկագնում է Բարսեղի եղբորը՝ Ապիրատ Պահլավունուն՝ Կարսի էմիրին վճարելով 17 հազար դահեկան[13]: Այս անգամ ևս վրացիներին չի հաջողվում պահել Անին. քաղաքը 1175 թ. վերստին անցնում է Շադդադյաններին:

Գեորգի III-ի՝ խիստ կենտրոնացման քաղաքականությունը դժգոհություն է առաջացնում խոշոր ավատատերերի շրջանում, որոնք հաճախ ապստամբում էին կամ դավաճանելով անցնում թշնամու կողմը: 1177 թ. այս դասի ներկայացուցիչները փորձում են Գեորգի III-ին փոխարինել իր եղբորորդի Դեմնայով: Լինելով թագավորի հանգուցյալ ավագ եղբոր՝ Դավիթ V-ի որդին՝ Դեմնան շատերի կողմից համարվում էր վրացական գահի օրինական հավակնորդ: Դեմնայի աներոջ՝ Իվանե Օրբելու հրամանատարու-

[13] Մեկ դահեկանը կամ դինարը կշռում էր մոտ չորս գրամ ոսկի, սակայն XII դ. հատում էին արծաթե դինարներ, որոնց քաշը կազմում էր տասնութ գրամ արծաթ:

թյամբ մոտ 30 հազար ապստամբներ ամրանում են Լոռե բերդում: Իվանեն օգնություն է խնդրում Շահարմենների և Ելտկուզյանների, բայց այն չի ստանում: Գեորգի III-ը, որի կողմն ապստամբության սկզբում անցան Իվանե Օրբելուն հարած Զաքարյանները, կարողանում է ճնշել ապստամբությունը և խստորեն պատժել ապստամբության ղեկավարներին: Դեմնային կուրացնում են և ամորձատում, և նա բանտում կնքում է իր մահկանացուն: Իվանե Օրբելին մահապատժի է ենթարկվում, նրա ընտանիքի մի մասը սպանվում է, մյուսները վտարվում են Վրաստանից: Անիի կառավարիչ է նշանակվում Սարգիս Զաքարյանը:

Արու զավակ չունեցող Գեորգի III-ը, ցանկանալով դստերը՝ Թամարին, դարձնել գահաժառանգ, ստիպված զիջումներ է անում եկեղեցուն: Դավիթ IV Շինարարի օրոք հարկատու դարձած եկեղեցին վերականգնում է հարկային իմունիտետը:

Գեորգի III-ը իր մահից հետո գահի փոխանցումն անխոչընդոտ իրականացնելու մտադրությամբ 1178 թ. Թամարին գահակից է օծում:

1184 թ. Գեորգի III-ի մահից հետո Թամարի միահեծան գահակալումը սկսվում է Գելաթի վանքում երկրորդ անգամ օծվելով: Թամարը բախվում է ավատատիրական վերնախավի կենտրոնախույս ձգտումներին. վերնախավը հույս ուներ թույլ թվացող կնոջը ենթարկել իր կամքին: Թամարը ստիպված էր խնդրել եկեղեցու օժանդակությունը: Աջակցության դիմաց Կաթողիկոս Միքայել IV-ը (1178-1186) ձեռք է բերում *մծիգնորարթուխուցեսի* լիազորությունները՝ դառնալով վրաց թագավորությունում եզակի ազդեցություն ունեցող գործիչ: Խոշոր ավատատերերի ճնշման տակ Թամարը պաշտոնանկ է անում հոր կողմից առաջ քաշված ցածր ծագում ունեցող անձանց, այդ թվում՝ Իվանե Օրբելու մահապատժից հետո բանակի հրամանատար դարձած Ղուբասարին, ինչի հետևանքը լինում է այդ խավի խռովությունը 1191 թ.: Գանձապետ Ղութլու Արսլանի ղեկավարությամբ մի խումբ մանր ազնվական-

ներ և հարուստ վաճառականներ պահանջում են սահմանափակել թագավորական իշխանությունը, ստեղծել լայն ներկայացուցչականություն ունեցող մարմին՝ կարավի (թարգմանաբար՝ վրան), առանց որի համաձայնության չէր կարող կյանքի կոչվել պետական նշանակություն ունեցող ոչ մի որոշում: Այդ խռովությունը ձախողվում է, երբ Թամարը ձերբակալում է Ղութլու Արսլանին, իսկ նրա կողմնակիցները ստիպված են լինում ենթարկվել:

Թամարի՝ ավատատիրական վերնախավի իշխանությունը թուլացնելու ջանքերը ձախողվում են: Հոգևոր ժողովը մերժում է կարգալույծ անել Միքայել կաթողիկոսին, իսկ Դարբազի[14] թագավորական խորհուրդը պահպանում է թագավորի հրամանագրերը հաստատելու իր իրավունքը: Նույնիսկ Թամարի ամուսնությունը Վլադիմիր-Սուզդալյան իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու որդի Յուրիի հետ պարտադրված էր վերնախավի կողմից:

Թագուհու ամուսնությունը պետական կարևոր նշանակություն ուներ: Անհրաժեշտ էր ունենալ բանակը առաջնորդող զորահրամանատար և ապահովել վրաց Բագրատունիների գահաժառանգման ավանդույթը: Արքունիքում այս հիմնահարցի շուրջ բախվում էին ազդեցիկ երկու խմբավորումների՝ Զաքարյանների և Թիֆլիսի քաղաքագլուխ Աբուլասանի ու նրա թիկունքում կանգնած խոշոր վաճառականների շահերը: Ղփչաղների մոտ ապաստանած Յուրիի թեկնածության հաստատմամբ ամրագրվում է Աբուլասանի գլխավորած խմբավորման հաղթանակը ազդեցության համար պայքարում: 1185 թ. Թամարի և Յուրիի ամուսնությունը չի նվազեցնում վրաց վերնախավի ներսում առկա լարվածությունը: Դրա մեջ ներքաշվում է նաև Յուրին, որը դժգոհ էր կոնսորտի՝ իրական իշխանությունից զուրկ իր կարգավիճակից: Թամարի միահեծան իշխանության ամրապնդումն արգելակող Միքայել կաթողիկոսի մահը շրջադարձային նշանակություն է ունե-

[14] Գահակալին կից խորհուրդ:

նում: Թամարը աստիճանաբար ամրացնում է իր դիրքերը՝ բարձր պաշտոնների նշանակելով իր կողմնակիցներին: *Մծիգնորարթուխուցես-չխոնդիդելի* պաշտոնը տալիս է իր հավատարիմ Անտոնին, ամիրսպասալար Սարգիս Զաքարյանի որդիներ Զաքարեն և Իվանեն դառնում են Դարբազի անդամներ: 1189 թ. Թամար թագուհին երկրորդ անգամ է ամուսնանում իր հորաքույր Ռուսուդանի դաստիարակ, ալանների թագավորական ընտանիքի ներկայացուցիչ Դավիթ Սոսլանի հետ:

Յուրիի՝ իշխանությունը զավթելու 1191 թ. երկրորդ փորձի ձախողումից հետո Զաքարյան եղբայրներից Զաքարեն դառնում է ամիրսպասալար, իսկ Իվանեն՝ պալատի և գանձարանի վերատեսուչ:

Վրաստանում ներքին կայունություն հաստատելուց և իր միահեծան իշխանությունը ամրապնդելուց հետո Թամարն իր գահակալման երկրորդ տասնամյակում՝ XII դ. վերջին տասնամյակի սկզբին, հրահրելով ներքին խռովություններ, սկսում է ակտիվորեն միջամտել Շիրվանշահների պետության գործերին՝ Շիրվանը վերածելով հարկատու պետության: Ելտկուզյան աթաբեգ Զահան Փահլավանը (1175–1186) փորձում է կասեցնել վրացիների առաջխաղացումը, սակայն 1195 թ. Շամքորի ճակատամարտում պարտություն է կրում: Ելտկուզյանների պետությունն այս պարտությունից հետո սկսում է անկասելիորեն քայքայվել, իսկ Վրաստանի արտաքին քաղաքականության մեջ առաջնային է դառնում Հայաստանի միացման հարցը: Հայ-վրացական բանակը Զաքարյան եղբայրների գլխավորությամբ մահմեդականներից հետ է խլում Անին (1199), որը տրվում է Զաքարեին՝ որպես սեփական կալվածք: 1201 թ. նվաճում են Արարատյան դաշտը հյուսիսից և արևելքից փակող բերդերը՝ Բջնին ու Ամբերդը, իսկ 1203 թ.՝ Դվինը, որին տիրանում է Իվանեն:

1203 թ. Բասենի Ճակատամարտում Ռումի սուլթան Ռուքն էդ-Դինի (1196-1204) բանակի պարտությունն ազդարարում է Հա-

յաստանի հյուսիսային և կենտրոնական տարածքներում ձևավորված մահմեդական էմիրությունների վերացման սկիզբը: Հայաստանի արևմտյան շրջանների՝ Երզնկայի, Էրզրումի և Կարսի (Կարսը գրավվել է 1206 թ.) էմիրները ճանաչում են իրենց վասալական կախվածությունը Վրաստանից:

Հարավային Հայաստանի նկատմամբ Վրաստանի հավակնությունները բախվում են Խլաթը նվաճած Այուբյանների դիմադրությանը: Խլաթի մատույցներում գերված Իվանեին ազատելու դիմաց Թամարը 1210 թ. ստիպված է լինում հրաժարվել այս ուղղությամբ նվաճումներ կատարելու մտքից:

Մահմեդականներին ահաբեկելու և խոշոր ավար ձեռք բերելու նպատակով Զաքարյան եղբայրները 1210-1211 թթ. արշավանք են իրականացնում դեպի Պարսկաստան: Հայ-վրացական բանակը հասնում է Ղազվին:

1204 թ. Խաչակրաց IV արշավանքի հետևանքով կործանման եզրին հայտնված Բյուզանդական կայսրության բեկորների վրա Վրացական թագավորությունը ձևավորում է Սև ծովի հարավային ափերին ընկած Տրապիզոնի կայսրությունը, որի գահակալներ Ալեքսիոս և Դավիդ Կոմնենոսները, լինելով վրաց Բագրատունիների ազգականները, ապաստանել էին Թամարի արքունիքում:

Վերոհիշյալ հաղթանակները Վրաստանը հասցրին իր հզորության և փառքի գագաթնակետին՝ ստեղծելով այսրկովկասյան կայսրություն, որը ձգվում էր Սև ծովից մինչև Կասպից ծով և Կովկասյան լեռներից մինչև Վանա լիճ:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ վտանգ էին ներկայանում Վրաստանի համար Շահարմենները:

2. Ինչո՞ւ է ձախողվում Իվանե Օրբելու՝ Անին սելջուկներին հանձնելու դավաճանական մտադրությունը:

3. Ո՞ւմ օգնությամբ է Գեորգի III-ը ճնշում Իվանե Օրբելու ապստամբությունը:

4. Ի՞նչ զիջումներ է կատարում Գեորգի III-ը եկեղեցուն և ինչո՞ւ:

5. Թամար թագուհու կառավարման սկզբում ի՞նչն էր արքունիքում ցածր ծագում ունեցող անձանց դժգոհության պատճառը:

6. Ինչո՞ւ Թամար թագուհու ամուսնությունը կարևոր պետական նշանակություն ուներ:

7. Ի՞նչն է հնարավորություն տալիս վրացական արքունիքին սելջուկներին վտարելու Հայաստանից:

8. Ինչո՞ւ է 1210 թ. Թամար թագուհին ստիպված լինում հրաժարվել Հարավային Հայաստանը ազատագրելուց:

ԹԵՄԱ III
Օսմանյան պետության ձևավորումը

Թյուրքական ժողովուրդների նախահայրենիքը Կենտրոնական Ասիայից մինչև Սիբիր ձգվող տարածաշրջանն է: Մասնագետների մեծ մասի կարծիքով՝ թուրք-թյուրք անվանումը (էթնոնիմ) նշակում է ամուր, հզոր[15]: Ամենավաղ տեղեկությունը թյուրքերի մասին վերաբերում է Ք. ա. մոտ 200 թ., երբ Հան դինաստիայի կառավարման ընթացքում Չինաստանը բախվում է *հունների* կոչվող ցեղային միավորումների հետ, որոնք, ըստ մասնագետների, թյուրքալեզու են եղել: Աթիլլայի առաջնորդած հոնական հորդաները, որոնք V դ. ներխուժում են Եվրոպա, մեծ հավանականությամբ, նույն հունների հետնորդներն էին:

Առաջին պետությունը, որի անվան մեջ ի հայտ է գալիս թուրք բառը, VI դ. Արևելյան Սիբիրում՝ Չինաստանի հյուսիսային սահմաններին ձևավորված Գյոքթուրքերի խաքանաթն էր:

Թյուրքերի՝ դեպի արևմուտք գաղթի ալիքները IV դ. սկսած ներթափանցում են Մերձավոր Արևելք՝ Իրանական սարահարթ, Հայկական բարձրավանդակ, Փոքր Ասիա: Սակայն դրանք տարրալուծվում են տեղացի ժողովուրդների մեջ: X դ. Վերջին՝ սելջուկյան արշավանքների ընթացքում, թյուրքական ցեղերը սկսում են բնակություն հաստատել տարածաշրջանում՝ փոխելով դրա էթնիկ դիմագիծը: Այդ գործընթացն ընդարձակվում է 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո, որն Անատոլիայի դռները լայնորեն բացում է թյուրքերի առջև: 1092 թ. Սելջուկյան միասնական պետության քայքայման պայմաններում սկսում են ձևավորվել բազմաթիվ թյուրքական պետություններ, որոնցից ուժեղագույնը Ռումի կամ Իկոնիայի սուլթանությունն էր: Ռումի սուլթանները

---

[15] В. В. Бартольд, «Сочинения», т. V. Издательство «Наука». Главная редакция Восточной литературы, Москва, 1968). С. 23; Кононов А. Опыт анализа термина тӱрк, Советская этнография. Москва, 1949. № 1. С. 40-47.

սահմանամերձ (հատկապես Բյուզանդիային հարող) տարածքներում ուջեր էին (թյուրք.՝ եզերքին ընկած) հատկացնում զանազան թյուրք ցեղապետերի, որոնցից էր *քընըք* ցեղային խմբավորումներից մեկի առաջնորդ Էրթողրուլը: Նա Ռումի Ալաէդդին Քեյ-Քուբադ սուլթանից (1220-1237) ստանում է Սյոգութ ավանն ու նրա հարակից տարածքը: Էրթողրուլի ուջը սահմանակից էր Նիկեայի կայսրությանը, ինչը հնարավորություն էր ընձեռում ավարառու արշավանքներ իրականացնելու քրիստոնյաներին պատկանող տարածքներում: 1243 թ. Քյոսեդաղի ճակատամարտում Ռումի սուլթանության՝ մոնղոլներից կրած պարտությունը խիստ թուլացնում է Ռումի սուլթաններից սահմանամերձ ուջբեյերի կախվածությունը, նրանք սկսում են հարկ վճարել մոնղոլներին:

Ավանդույթը Էրթողրուլի որդի Օսմանին է համարում 1299 թ. իր բեյլիկը Ռումի սուլթանությունից անկախ հռչակած կառավարիչ: Դրա ապացույցն է սիկկայի՝ Օսմանի դրամահատման իրավունքի ձեռքբերումը:

Օսմանի իշխանության հենարանը հավատի համար մարտնչելու անվան տակ ավարի և փառքի ծարավ տարբեր էթնիկական ծագում ունեցող մարտիկների՝ *ղազիների* ջոկատներն էին: Նրանք նաև իսլամ ընդունած նորահավատներ կարող էին լինել, ինչպիսիք էին ծագումով հույն Քյոսե Միխալը և բուլղար Հրանիսլավը:

1302 թ. Իզնիկի ծովածոցի մոտ բյուզանդացիների նկատմամբ տեղի ունեցած Բաֆեայի ճակատամարտում Օսմանի հաղթանակը նրա զորքն ապահովում է ղազիների մեծ ներհոսքով և ի ցույց դնում Օսմանի պետության առաջնությունը հարևան մրցակից բեյլիկների նկատմամբ:

Օսմանի մահից հետո՝ 1323 թ., Օսմանյան բեյլիկն առաջնորդում է նրա որդին՝ Օրհանը (1323-1362): Նա նվաճում է Բյութինիայի խոշոր քաղաքները՝ 1326 թ. Բուրսան (Պրուսա), որը դառնում է Օրհանի նստավայրը, 1331 թ.՝ Նիկեան, որը վերանվանում է Իզնիկ, 1337 թ.՝ Նիկոմեդիան, որն էլ վերանվանվում է Իզմիտ:

1345-1346 թթ. Կարեսի բեյլիկի նվաճումը օսմանցիների համար Եվրոպա ներթափանցելու ուղի է հարթում: Բյուզանդիայի գահի համար պայքարում Հովհաննես VI Կանտակուզենոսին (1347-1354) Օրհանի աջակցության դիմաց 1352 թ. օսմանցիները ստանում են Գալիպոլի թերակղզին, իսկ 1354 թ.՝ իրենց առաջին մշտական հենակետը Եվրոպայում՝ Չիմպե ամրոցը Գալիպոլի թերակղզում: Օրհանն այն դարձնում է ցատկահարթակ՝ Թրակիայում բյուզանդացիների և բուլղարների դեմ ռազմական գործողությունների համար: Արևելյան Թրակիայի մեծ մասը մեկ տասնամյակի ընթացքում օսմանցիները գրավում են և բնակեցնում Անատոլիայից գաղթած թուրքերով: Թրակիայի նվաճմամբ Կ. Պոլիսը ցամաքից հայտնվում է ամբողջական շրջափակման մեջ:

Օրհանին հաջորդած Մուրադ I-ի (1362-1389) առաջին խոշոր հաջողությունը կառավարման առաջին տարում Ադրիանապոլսի գրավումն էր: Այն վերանվանվում է Էդիրնե և դառնում օսմանների մայրաքաղաքը: Դրանով Մուրադը հստակ հայտարարում է Հարավարևելյան Եվրոպայում նվաճումները շարունակելու իր մտադրության մասին: Բալկանյան պետությունների՝ Բյուզանդիայի, Բուլղարիայի և Սերբիայի համար Թրակիայում օսմանյան նվաճումներն իրենց կործանման սկիզբն էին կանխորոշում: Այսպես՝ Բյուզանդիայի տարածքը խիստ կրճատվում է. այն բաղկացած էր հիմնականում մայրաքաղաք Կ. Պոլսից ու քաղաքամերձ տարածքներից, Սալոնիկից և Պելոպոնեսում գտնվող Մորեայի դեսպոտությունից: Բյուզանդիայի այս բեկորների միջև կապը հնարավոր էր միայն Դարդանելի միջով անցնող նեղ ծովային ճանապարհով, որը չէր դադարում գործել միայն Վենետիկի և Ջենովայի նավատորմերի վերահսկողության շնորհիվ:

Բուլղարիայի միասնությունը XIV դ. կեսին խաթարվել էր գահակալական պայքարի պատճառով: Բացի ներքին խնդիրներից, Բուլղարիան խիստ տուժում է հունգարների ներխուժումներից:

1355 թ.՝ Ստեֆան Դուշանի (1331-1355) մահից հետո, անընդմեջ քաղաքացիական պատերազմների պատճառով Սերբիան խոցելի է դառնում օսմանյան աճող սպառնալիքիների առջև:

1371 թ. Մարիցայի, ապա 1389 թ. Կոսովոյի ճակատամարտերում տարած հաղթանակը հաստատում է թուրքերի տիրապետությունը Բալկանյան թերակղզու զգալի մասի նկատմամբ: Սերբերը, Բուլղարիայի ցարն ու Բյուզանդիայի կայսրը ստիպված էին ճանաչել իրենց վասալական կախումը թուրքերից:

Կոսովոյի դաշտում Միլոշ Օբիլիչի կողմից Մուրադի սպանվելուց հետո վերջինիս որդին՝ Բայազիդ I-ը (1389-1402), օսմանյան բանակը շրջում է արևելք և ձեռնամուխ լինում Անատոլիայի բեյլիկները իրեն ենթարկելու գործին: 1390-1393 թթ. արշավանքների ժամանակ Բայազիդը, կասկածելով իր թուրք մահմեդական հպատակների հավատարմությանը, ապավինում է սերբական և բյուզանդական վասալների զորքերին:

1390 թվականի ամռանը և աշնանը Բայազիդը նվաճում է Այդինի, Սարուխանի և Մենթեշեի բեյլիկները: 1391 թ. Կարամանի կառավարիչն իր մայրաքաղաք Քոնիայի կորստից հետո հաշտություն է խնդրում: Նույն թվականին նվաճվում են Համիդ, Թեքե և Գերմիան բեյլիկները: 1192 թ. սուլթանը գրավում է Կաստամոնուն և Սինոպը:

Այս հաղթանակներից հետո Բայազիդն իր զենքը վերստին ուղղում է դեպի Եվրոպա: Տեղեկանալով հունգարների և վալախների հետ իր վասալ բուլղարների ցար Շիշմանի (1371-1395) գաղտնի բանակցությունների մասին՝ Բայազիդը I-ը 1393-1395 թթ. գրավում է Բուլղարիան և մահապատժի ենթարկում Շիշմանին: 1394 թ. նա Պելոպոննեսի իր վասալների տարածքային վեճերը լուծելու պատրվակով ժողով է հրավիրում և տիրանում վիճելի այդ տարածքներին:

Իր հարվածի ուղղությունը արագ փոփոխելու կարողության և արագընթաց արշավանքների համար Բայազիդը I-ը ստանում է *Յըլդըրըմ՝ Կայծակնային* մականունը:

1395 թ. թուրքերը պաշարում են Կ. Պոլիսը: Մանուիլ II Պալեոլոգի (1391-1425) կոչով և թուրքերի առաջխաղացումից անհանգստացած՝ Սրբազան հռոմեական կայսրության Հունգարիայի և Չեխիայի գահակալ Սիգիզմունդի (1368-1437) նախաձեռնությամբ կազմակերպվում է խաչակրաց արշավանք, որին մասնակցում են Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի ամենահայտնի ասպետները: 1396 թ. սեպտեմբերի 25-ին Նիկոպոլի ճակատամարտում խաչակիրների ղեկավարների չհամաձայնեցված գործողությունների հետևանքով ասպետների բանակը ջախջախիչ պարտություն է կրում: Թուրքերը հաղթանակից հետո շարունակում են ճնշում գործադրել Կ. Պոլսի վրա, խստացնում են իրենց վերահսկողությունը Բալկաններում և ավելի մեծ սպառնալիք դառնում Կենտրոնական Եվրոպայի համար:

Կ. Պոլսի պաշարումը տևում է մինչև 1402 թ.: Քաղաքի գրավումը և Բյուզանդիայի կործանումը հետաձգվում է 50 տարով, երբ Լենկ-Թեմուրի (1370-1405) հորդաները ներխուժում են Փոքր Ասիա: Պատերազմի առիթ է ծառայում Բայազիդ I-ի կողմից Թեմուրին ենթակա էմիրին ուղղված հարկ վճարելու պահանջը: 1401-02 թթ. օսմանցիներից Սեբաստիան խլելուց հետո Թեմուրը շարժվում է դեպի Անատոլիայի խորքերը: 1402 թ. հուլիսի 20-ին Անգորայի (ներկայիս Անկարա) մոտ տեղի ունեցած ճակատամարտում բախվում են 85 հազարանոց օսմանյան և 125 հազարանոց միջինասիական բանակները: Ամռան տապին Կ. Պոլսի պատերից մինչև Անկարա ձգվող արշավից հոգնած օսմանյան բանակը ջախջախվում է, իսկ Բայազիդ I-ը գերի է ընկնում և գերության մեջ կնքում իր մահկանացուն:

Ճակատամարտը Օսմանյան պետությանը հասցնում է կործանման եզրին: Պարտությունից հետո Բայազիդի որդիների միջև գահի համար պատերազմ է սկսվում, ինչը շարունակվում է 11 տարի:

Շուրջ մեկ դար տևած Օսմանյան պետության արագ հզորացումը մեծապես պայմանավորված էր նրանով, որ 1347 թ. սկսված ժանտախտի հետևանքով խիստ կրճատվել էր Անատոլիայի և Բալկանների քաղաքային կենտրոնների ու խիտ բնակեցված շրջանների բնակչությունը: Մինչդեռ քոչվորներն ավելի քիչ էին տուժել ժանտախտից: Այսպիսով, ժանտախտը և դրա թողած հետևանքները, անկասկած, կարևոր գործոն էին վաղ օսմանյան նվաճողական քաղաքականության հաջողության գործում: Համաճարակից անմիջապես հետո սկսվում են օսմանյան առաջին արշավանքները Բալկաններ:

Օսմանյան պետության գոյության վաղ շրջանում՝ XIII դ. վերջին, երկիրը, ըստ էության, առանց բարդ վարչական ապարատի, ցեղային կազմակերպություն էր: Օսմանյան պետության գոյության սկզբում նրա կառավարիչները վարում էին խիստ չափավոր հարկային քաղաքականություն՝ դրանով իսկ իրենց կողմը գրավելով բյուզանդական ծանր հարկային բեռից դժգոհ տեղական բնակչությանը, որի մի մասը, իսլամ ընդունելով, ձուլվում էր թուրքերի հետ:

Օսմանյան պետության գոյատևման կարևոր գործոն էր գահի կայունության պահպանումը: Թյուրքական այլ բեյլիկների տիրույթները հաճախ մասնատվում էին մահացած տիրակալի որդիների կողմից: Օսմանցիները հետևողականորեն պահպանում էին կայսրության միասնությունը մեկ ժառանգորդի իշխանության ներքո:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն է 1299 թ. Օսմանի անկախ կառավարիչ դառնալու ապացույցը:
2. Ի՞նչ ազդեցություն է ունենում Օսմանի հաղթանակը 1302 թ. Բաֆեայի ճակատամարտում:
3. Ո՞րն էր Օրխանի նստավայրը:

4. Օսմանցիներն ինչպե՞ս են կարողանում հաստատվել Գալիպոլի թերակղզում:

5. Բյուզանդիայի համար ի՞նչ հետևանք է ունենում օսմանցիների կողմից Թրակիայի նվաճումը:

6. Ի՞նչն է ստիպում սերբերին, բուլղարներին և բյուզանդացիներին ճանաչել իրենց վասալական կախումը Մուրադ I-ից:

7. Ինչո՞ւ 1402 թ. օսմանցիներին չի հաջողվում գրավել Կ.Պոլիսը:

8. Ո՞րն էր Բայազիդ I Յըլդըրըմի մահից հետո Օսմանյան պետությունում սկիզբ առած քաղաքացիական պատերազմի պատճառը:

ԳԼՈՒԽ IV
ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐ

ԹԵՄԱ I
Օսմանյան կայսրությունը հզորության գագաթնակետին

1402 թվականի հուլիսի 20-ին Անկարայի ճակատամարտում Բայազիդ I-ի պարտությունից հետո նրա որդիներն օսմանյան գահի համար պատերազմ են սկսում: Այն տևում է 11 տարի՝ մինչև 1413 թվականի հուլիսի 5-ը, երբ Չամուրլուի ճակատամարտում հաղթանակ տանելով՝ սուլթան Մեհմեդ I-ը (1413-1421) վերականգնում է Օսմանյան պետության միասնականությունը:

Հաջորդ սուլթան Մուրադ II-ին (1421-1444; 1446-1451) հաջողվում է հաղթանակ տանել 1444 թ. Վարնայի և 1446 թ. Կոսովոյի երկրորդ ճակատամարտերում: Այս հաղթանակները թուրքերի համար ճանապարհ են բացում Սերբիան վերջնականապես նվաճելու համար, ինչպես նաև վերջ են դնում Կ. Պոլիսը օսմանյան նվաճումից փրկելու բոլոր հույսերին: Հունգարիայի թագավորությունն այլևս չուներ ռազմական և ֆինանսական միջոցներ օսմանցիների դեմ պատերազմելու համար: Եվրոպական սահմաններին խաչակիրների կեսդարյա վտանգի չեզոքացումից հետո Մուրադի որդի Մեհմեդ II-ը (1451-1481) հնարավորություն է ստանում 1453 թ. պաշարելու Կ. Պոլիսը:

Մեհմեդ Ֆաթիհը (օսմաներեն՝ նվաճող) 1451 թ. գահ է բարձրանում և իր ողջ ուշադրությունը կենտրոնացնում է Կ. Պոլիսը նվաճելու գործի վրա: Առաջին հերթին ստեղծում է ուժեղ նավատորմ, ապա Բոսֆորի եվրոպական ափին կառուցում է Ռումելիհիսար ամրոցը, որն ասիական ափին Բայազիդ I-ի հիմնած Անադոլուհիսար ամրոցի հետ թուրքերի ամբողջական վերահսկողության տակ էր դնում Բոսֆորով նավարկությունը:

1453 թ.ապրիլի սկզբին Մեհմեդը սկսում է Կ. Պոլսի պաշարումը շուրջ 80 հազար զինվորից բաղկացած բանակով, ավելի քան 70 խոշոր հրանոթներով և 300 նավից բաղկացած նավատորմով: Քաղաքը շրջապատված էր և՛ ծովից, և՛ ցամաքից: Սկզբում գրոհները թուրքերի մեծ կորուստներով հետ են մղվում՝ չնայած այն հանգամանքին, որ պաշարողները հունգար ճարտարագետ Օրբանի մեծ տրամաչափի հսկա թնդանոթից ռմբակոծում էին քաղաքի պարիսպները: Պաշարման ընթացքում բեկում է տեղի ունենում, երբ թուրքերը հարթակի միջոցով իրենց նավատորմի մի մասը Գալաթայից տեղափոխում են Ոսկեղջյուր: Մայիսի 29-ին հիսունյոթօրյա պաշարումից հետո Կ. Պոլիսն ընկնում է: Մեհմեդ II Ֆաթիհն իր մայրաքաղաքն Էդիրնեից տեղափոխում է Կ. Պոլիս: Անհրաժեշտ է նշել, որ Մեհմեդ II-ը Օսմանյան պետությունը դիտում էր որպես Հռոմեական կայսրության շարունակություն և իր ողջ կյանքի ընթացքում իրեն համարում էր կայսրերի իրավահաջորդ: Հույն ուղղափառ եկեղեցու պատրիարք Գենադիոսը ճանաչել էր նրա՝ «կայսար-ի Ռում» (Հռոմի կայսր) տիտղոսը:

1459 թ. Մեհմեդ II-ը վերջ է դնում սերբերի վերջին պետական կազմավորմանը՝ Սերբական դեսպոտությանը: Բյուզանդական կայսրության վերջին բեկորները՝ Մորեայի դեսպոտությունը Պելոպոնեսում և Տրապիզոնի կայսրությունը Սև ծովի հարավ-արևելյան ափին, օսմանցիները գրավում են 1461 թ.:

1464-1473 թթ. Մեհմեդ Ֆաթիհը վերականգնում է վերահսկողությունը 1402 թ. Անկարայի ճակատամարտից հետո առանձնացած անատոլիական բեյլիկների նկատմամբ: 1475 թ. Օսմանյան կայսրությունից իր կախվածությունն ընդունում է Ղրիմի խանությունը:

Երբ օսմանյան բանակը հասնում է Վենետիկի մատույցներ, Վենետիկի դոժը ստիպված էր ճանաչել ծովային հանրապետության պարտությունը Օսմանյան կայսրության հետ տասնհինգամյա պատերազմում: Կ. Պոլսի 1479 թ. հունվարի 25-ի պայմանա-

գրով Օսմանյան կայսրությանն անցնում է Ադրիատիկ ծովի արևելյան ափը՝ ներառյալ ռազմավարական նշանակություն ունեցող Շկոդրա քաղաքը, ինչպես նաև Նեգրոպոնտե (Եվբեա) և Լեմնոս կղզիները:

Մեհմեդ II-ն ամրապնդում է իշխանությունը՝ կառավարման ոլորտում իրականացնելով մի շարք բարեփոխումներ: Եթե սուլթաններին կից խորհուրդը՝ Դիվանը, նախորդ գահակալների օրոք բաղկացած էր անվանի ընտանիքների ներկայացուցիչներից, որոնց շահերը հաճախ հակադրվում էին միապետի շահերին, ապա Մեհմեդ II-ի օրոք այն համալրվում է բացառապես սուլթանին հավատարիմ պաշտոնյաներով, որոնց ավելի մեծ իշխանություն է շնորհվում: Մեհմեդ Ֆաթիհը ձևավորում է կենտրոնացված բյուրոկրատիա, որը հիմնականում կազմված էր Դևշիրմե կոչվող հարկի՝ մանկահավաքի կիրառմամբ հավաքագրված և իսլամի դոգմաներով ու սուլթանին անձնապես հավատարիմ լինելու ոգով կրթված և ծագումով քրիստոնյա պաշտոնյաներից: Բացի այդ, իր իշխանության գաղափարական հիմքերն ամրացնելու նպատակով սուլթանն այդ բյուրոկրատիայի մաս է դարձնում մուսուլման աստվածաբաններին, որոնք հոգևոր ուսումնական հաստատություններում՝ մեդրեսեներում, դասավանդելու համար վարձատրվում էին պետական գանձարանից: Մեհմեդ II-ը հիմնում է միլլեթների համակարգը, որով սուլթանի գերագույն իշխանությունը ճանաչող կրոնական համայնքներին ինքնակառավարման հնարավորություն էր ընձեռվում: Այս կարգով սուլթանը 1454 թ. վերականգնում է Ուղղափառ պատրիարքությունը, մայրաքաղաքում հիմնվում է Հախամ Բաշիի՝ հրեաների մեծ ռաբիի ինստիտուտը, իսկ 1461 թվականին՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը, որը գլխավորում է Բուրսայի հայոց եպիսկոպոս Հովակիմը:

Այս բարեփոխումներն իրենց իրավաբանական կարգավորումն են ստանում 1477–1481 թթ. հրապարակված՝ Մեհմեդ II Ֆաթիհի օրենքների ժողովածուում՝«Կանուն նամե»-ում:

1481 թ.՝ Մեհմեդ Ֆաթիհի մահից հետո, սուլթանական գահի համար պայքար է սկսվում նրա երկու որդիների՝ Բայազիդի և Ջեմի միջև: Ենիչերիների աջակցությամբ, որոնք սպանում են Ջեմի կողմնակից մեծ վեզիրին, հաղթում է Բայազիդը (1481-1512): Գահի պարտված հավակնորդը սկզբում ապաստանում է Եգիպտոսի մամլուքների, ապա՝ Հռոդոսի հովհաննական ասպետների մոտ, որոնք նրան հանձնում են Հռոմի պապին: 1495 թ. գահի հավակնորդի մահով ի դերև են ելնում Ինոկենտիոս VIII (1484-1492) և Ալեքսանդր VI (1492-1503) պապերի՝ նոր խաչակրաց արշավանք ձեռնարկելու և Օսմանյան կայսրությունը մասնատելու համար իրենց տրամադրության տակ գտնվող Ջեմին օգտագործելու փորձերը, որին, ըստ որոշ աղբյուրների, թունավորել էին եղբոր հրամանով:

Բայազիդ II-ի օրոք Եվրոպայում օսմանները խոշոր նվաճումներ չեն ձեռնարկում՝ բավարարվելով Պելոպոնեսում Վենետիկի վերջին հենակետերի և Վալախիայի ու Մոլդովայի իշխանություններից նրանց մերձսևծովյան ափամերձ տարածքները նվաճելով, որով ցամաքային կապ են հաստատում Ղրիմի խանության հետ: Բայազիդ II-ի օրոք, սահմանային Կիլիկիային տիրելու համար, տեղի են ունենում առաջին ռազմական բախումները Եգիպտոսի մամլուքների և օսմանցիների միջև, բայց դրանք նոր նվաճումներ չեն բերում թուրքերին:

XVI դ. սկզբին սուլթանը ստիպված է լինում ուշադրությունը բևեռել Օսմանյան կայսրության արևելյան սահմաններին ի հայտ եկած Սեֆյան Իրանից եկող սպառնալիքի վրա: 1501-1510 թթ. Սեֆյան դինաստիայի հիմնադիր Իսմայիլ շահը (1501-1524) տիրանում է ողջ Իրանին, Ատրպատականին, Միջագետքին, Հայաստանին, վասալական կախման մեջ է գցում Քարթլիի և Կախեթի թագավորությունները: 1511 թ., պայմանավորված օսմանյան սուլթանների վարած կենտրոնացման քաղաքականությամբ և հարկային բեռի ծանրացմամբ, Իսմայիլն աջակցում է Անատոլիայում

Շահկուլուի գլխավորած շիա-սեֆյանամետ ապստամբությանը: Իսմայիլ շահի նվաճումները և հակաօսմանյան քաղաքականությունը խիստ սրում են Օսմանյան կայսրության ու Սեֆյան Պարսկաստանի հարաբերությունները և երկու պետություններին կանգնեցնում պատերազմի եզրին:

Երբ 1492 թ. Պիրենեյան թերակղզում մահմեդականների վերջին հենակետ Գրանադայի գրավմամբ ավարտվում է Ռեկոնկիստան[16], Բայազիդ II-ն արտոնում է Պիրենեյան թերակղզուց մահմեդական և հրեա բազմաթիվ գաղթականների հաստատվելը Օսմանյան կայսրության տարածքում:

Բայազիտ II-ի գահակալության վերջին տարիներին պայքար է ծավալվում հիվանդություններից թուլացած սուլթանի որդիների՝ Ահմեդի և Սելիմի միջև: Այս պայքարում կրկին վճռորոշ դեր է խաղում ենիչերիների դիրքորոշումը, որոնց աջակցությամբ 1512 թ. ապրիլի 25-ին Սելիմը հորը պարտադրում է հրաժարվել գահից: Բայազիդը որդու հրամանով թունավորվում և իր մահկանացուն կնքում է 1512 թ. մայիսի 26-ին՝ գահից հրաժարվելուց ընդամենը մեկ ամիս անց:

Գահի հիմքերն ամրապնդելու նպատակով Օսմանյան տոհմին պատկանող արական սեռի իր ազգականներին ոչնչացնելուց հետո Սելիմ I-ը (1512-1520) ուշադրությունը սևեռում է Սեֆյան Իրանից եկող վտանգի վրա:

Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև հակամարտությունն ուներ երկու խումբ պատճառներ, որոնցից մեկը տնտեսական ու ռազմավարական էր, մյուսը՝ կրոնաքաղաքական: Այս երկու պետությունները մրցում էին Չինաստանից և Հնդկաստանից դեպի արևմուտք գնացող առևտրական ուղիների նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար: Կռվերը պայքարում էին նաև Հայաստանում և Անատոլիայում առկա զենքի և զինա-

[16] Մահմեդական էմիրությունների նվաճումը քրիստոնեական Կաստիլիայի, Արագոնի և Պորտուգալիայի թագավորությունների կողմից:

մթերքի արտադրության մեջ որպես հումք ծառայող պղնձի և երկաթի հարուստ պաշարների համար: Միևնույն ժամանակ, Եվրոպայում հացահատիկի գների շարունակական աճը հանգեցրել էր նրանց միջև վիճարկվող Անատոլիայից հացահատիկի արտահանման թռիչքաձև աճին:

Ինչպես նշվեց, ռազմական բախման մյուս պատճառը կրոնաքաղաքական էր: Անատոլիայում թուրքմենական ցեղերի մեջ Իսմայիլ շահի քարոզիչները տարածում էին շիայականություն, ինչն ուղղակի խարխլում էր Օսմանյան կայսրության իշխանության հիմքերն այդ տարածաշրջանում: Օսմանյան վերնախավն իր սուննի հպատակների կրոնական մոլեռանդությունը բորբոքում էր նրանով, որ Սեֆյանների կողմից վերահսկվող տարածքներում, Իսմայիլ շահի թողտվությամբ, պղծվում էին սուննիների սրբավայրերը, սպանվում էին սուննի անվանի հոգևորականներ: Դրան ի պատասխան՝ դեպի արևելք արշավանքից առաջ Օսմանյան կայսրության տարածքում ապրող շուրջ 40 հազար շիաներ, որոնք նախօրոք ցուցակագրվել էին, սպանվում են սուլթանի հրամանով:

1514 թ. օգոստոսի 23-ին Չալդրանի ճակատամարտում օսմանյան բանակը, որը զինված էր հրազենով, հաղթանակ է տանում և Սելիմ I-ի գլխավորությամբ սեպտեմբերի 5-ին մտնում Սեֆյան Իրանի մայրաքաղաք Թավրիզ: Սակայն մատակարարման դժվարությունները և Իրանի այլադավան բնակչության ուժեղ դիմադրությունը ստիպում են Սելիմին վերադառնալ:

Այնուհետև սուլթան Սելիմը նվաճում է Եգիպտոսի մամլուքների պետությունը՝ ջախջախելով մամլուքների բանակը նախ Մարջ Դաբիքի (24 օգոստոսի 1516 թ.), ապա՝ Ռիդանիայի ճակատամարտերում (22 հունվարի 1517 թ.): Մամլուքների պետության ողջ տարածքը՝ Սիրիայից և Պաղեստինից մինչև Եգիպտոս ու Հեջազ, միացվում է Օսմանյան կայսրությանը: Այս նվաճումները Սելիմին հնարավորություն են ընձեռում վերահսկողություն հաստատելու համաիսլամական սրբավայրերի՝ Մեքքայի և Մեդինայի

նկատմամբ, որոնք մինչ այդ մամլուքների տիրապետության տակ էին: Աբբասյան վերջին խալիֆ Ալ-Մութավաքքիլ III-ը (1508-1516), որը մամլուքների խամաճիկն էր, աքսորվում է Ստամբուլ: XVIII դ. ի հայտ է գալիս մի լեգենդ, համաձայն որի՝ նա իր խալիֆայի տիտղոսը պաշտոնապես փոխանցում է Սելիմին:

Իր դաժան վարքի համար Յավուզ-ահեղ մականվանն արժանացած Սելիմ I-ի ութամյա կառավարման վերջում Օսմանյան կայսրության տարածքը 70 տոկոս աճ է գրանցում՝ հասնելով մեկուկես միլիոն քառակուսի կիլոմետրի:

Սելիմ I-ի որդու՝ Սուլեյման I-ի (1520-1566) օրոք Օսմանյան կայսրությունը հասնում է իր հզորության գագաթնակետին: Սուլեյման I-ը Եվրոպայում հայտնի է որպես Սուլեյման Հոյակապ, իսկ թուրքական պատմագրությունը նրան պատվում է *Սուլեյման Կանունի* (Օրենսդիր) անունով:

Սուլեյմանը հաջորդում է իր հորը՝ Սելիմ I-ին 1520 թ. սեպտեմբերի 30-ին և իր կառավարումը սկսում է դեպի Կենտրոնական Եվրոպա արշավանքներով: Նրա գլխավորությամբ օսմանյան բանակները 1521 թ. տիրում են Բելգրադին, իսկ 1523 թ.՝ հովհաննական ասպետների կողմից խիստ ամրացված Հռոդոս կղզուն: 1526 թ. օգոստոսի 29-ին Մոհաչի ճակատամարտում Սուլեյման I-ի հաղթանակը Օսմանյան կայսրության տիրապետության տակ է առնում հարավային և կենտրոնական Հունգարիան:

Եվրոպայում օսմանների առաջխաղացումը կասեցվում է 1529 թ.՝ Վիեննայի պատերի տակ նրանց պարտությամբ: Չնայած այդ պարտությանը՝ Սրբազան հռոմեական կայսրության գահակալ Կառլոս V-ը (1519-1556) և Ավստրիայի էրցհերցոգ Ֆերդինանդը (1521-1564) ստիպված են լինում ստորացուցիչ պայմանագիր կնքել Սուլեյման I-ի հետ, որտեղ Ֆերդինանդը Սուլեյմանին հայր և տիրակալ է անվանում և հրաժարվում Հունգարիայի թագավորության նկատմամբ իր հավակնություններից: Ավելին, նա ստիպված է լինում սուլթանին հարկ վճարել Ավստրիային

սահմանակից հունգարական այն հողերի համար, որոնք նա շարունակում էր վերահսկել: Խորհրդանշական է այն փաստը, որ այդ պայմանագրում Կառլոս V-ի անվան դիմաց նշվում է ոչ թե «կայսր», այլ «Իսպանիայի թագավոր»:

Սուլեյման I-ի օրոք օսմանյան բանակների՝ դեպի Իրան կատարած չորս արշավանքներին Սեֆյանների բանակը դիմագրավում է «վառված հողի» մարտավարություն բանեցնելով: Ռազմական գործողություններն ընթանում են հիմնականում Հայաստանի տարածքում, որի բնակավայրերը վերածվում են ավերակների, իսկ բնակչությունը կա՛մ ոչնչացվում է, կա՛մ ստրկության քշվում: Քանի որ ռազմական գործողությունները հակամարտ կողմերից և ոչ մեկին վճռական հաղթանակ չեն ապահովում, նրանք ստիպված են լինում 1555 թ. մայիսի 29-ին Ամասիայում կնքել հաշտության պայմանագիր, որով ավարտվում է թուրք-իրանական պատերազմների առաջին փուլը: Այդ պայմանագրով Հայաստանն ու Վրաստանը բաժանվում են կողմերի միջև: Այս երկրների արևմտյան մասն անցնում է Օսմանյան կայսրությանը, իսկ արևելյանը՝ Սեֆյան Իրանին: Իրաքի նկատմամբ վերահսկողությունն անցնում է թուրքերին, իսկ Ատրպատականը մնում է Սեֆյան Իրանի կազմում:

Միջերկրական ծովի հարավարևմտյան ափի համար Իսպանիայի և Օսմանյան կայսրության հակամարտության ընթացքում հաջողությունը հիմնականում ուղեկցում էր վերջինիս: Դրանում զգալի դեր ունեին օսմանյան նավատորմերը գլխավորող Բարբարոսա եղբայրները: Նրանք դեռ 1516 թ. իսպանացիներից գրավել են Ալժիրը, իսկ 1529 թ. Հայրէդին Բարբարոսան նվաճում է Ալժիրի դիմաց գտնվող ռազմավարական նշանակություն ունեցող Պենյոն կղզին և համանուն բերդը: 1534 թ. իսպանացիները կորցնում են Թունիսը, 1551 թ. Օսմանյան նավատորմը գրավում է Տրիպոլին: Սակայն Միջերկրական ծովի արևմտյան մասի նկատմամբ թուրքերին չի հաջողվում լիակատար վերահսկողություն

հաստատել, քանի որ 1565 թ. ձախողվում է Մալթա կղզին գրավելու փորձը:

Ղեկավարելով ընդարձակվող կայսրությունը՝ Սուլեյմանն իրականացնում է դատական լուրջ բարեփոխումներ: Դրանք ընդգրկում էին այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են քրեական իրավունքը, հարկային իրավունքը և հողի սեփականության կարգավորումը: Սուլեյման I-ի ընդունած օրենքները Օսմանյան կայսրությունում կիրառություն են ունենում ավելի քան երեք հարյուր տարի:

1566 թ. սեպտեմբերի 6-ը՝ Սուլեյման I-ի մահվան օրը, Օսմանյան կայսրության պատմության մեջ նշանավորվում է որպես ջրբաժան: Ժամանակակից պատմագրությունը հրաժարվում է Սուլեյման I-ից հետո Օսմանյան կայսրությունում տեղ գտած գործընթացները անկում անվանել և Օսմանների պետության XVI-XVII դդ. զարգացումները համարում է դանդաղ վերափոխումների ժամանակաշրջան:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ նշանակություն են ունենում 1444 թ. Վարնայի և 1446 թ. Կոսովոյի երկրորդ ճակատամարտերը:
2. Ի՞նչ դեր էին խաղում Բոսֆորի երկու ափերին կառուցված Անադոլուհիսար և Ռումելիհիսար ամրոցները:
3. Կ.Պոլսի պաշարման ժամանակ ե՞րբ է բեկում տեղի ունենում հօգուտ թուրքերի:
4. Սև ծովի հյուսիսային ափին ընկած ո՞ր պետական կազմավորումն է ճանաչում Օսմանյան պետությունից իր վասալային կախումը:
5. Կառավարման ոլորտում ի՞նչ բարեփոխումներ է իրականացնում Մեհմեդ II Ֆաթիհը:
6. Ի՞նչ էր միլլեթների համակարգը:
7. Գահի համար պայքարում ինչի՞ շնորհիվ է Բայազիդը հաղթանակ տանում Ջեմի նկատմամբ:

8. Որո՞նք էին Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև հակամարտության պատճառները:

9. Ինչո՞ւ է Սեֆյան Իրանի բանակը ջախջախելուց և Սեֆյանների մայրաքաղաք Թավրիզը գրավելուց հետո Սելիմ Յավուզ սուլթանը ստիպված լինում հրաժարվել հաղթանակի պտուղների մեծ մասից և վերադառնալ:

10. Ինչպե՞ս են օսմանյան սուլթանները Սելիմ Յավուզից հետո ձեռք բերում խալիֆի տիտղոսը:

11. 1529 թ. Վիեննայի պատերի տակ օսմանցիների պարտությունից հետո ինչպիսի հարաբերություններ են հաստատվում օսմանյան Սուլեյման I սուլթանի և նրա հակառակորդների՝ Սրբազան հռոմեական կայսրության գահակալ Կառլոս V-ի և Ավստրիայի էրցհերցոգ Ֆերդինանդի միջև:

12. 1555 թ. մայիսի 29-ի Ամասիայի հաշտության պայմանագրով ինչպե՞ս են սահմանաբաժանվում Օսմանյան Թուրքիան և Սեֆյան Իրանը:

ԹԵՄԱ II
Օսմանյան կայսրության կառավարման համակարգը

Օսմանյան պետության կառավարման համակարգը ձևավորվել է բյուզանդական, պարսկական, մոնղոլական պետական կառավարման ավանդույթների և իսլամական օրենքների հիման վրա: Այդ պետությունների օրինակով այս պետությունը հենվում էր միապետի բացարձակ իշխանության սկզբունքի վրա: Ըստ իսլամի կրոնաքաղաքական գաղափարախոսության՝ տիրակալի կամ սուլթանի հիմնական գործառույթը պետության տարածքում արդարության (արաբերեն և օսմաներեն՝ հադալաթ) ապահովումն էր: Ընդ որում, հադալաթը կամ արդարությունը թույլերի և անօգնականների պաշտպանությունն է ընչաքաղց և անազնիվ տեղական կառավարիչներից: Այս առումով արդարադատությունը ներառում է հասարակության ամենացածր խավերի պաշտպանությունը անարդար հարկումից, շորթիչ պաշտոնյաներից և անարդար դատարաններից: Օսմանյան իրավաքաղաքական տեսության մեջ արդարության ապահովումը սուլթանի գլխավոր խնդիրն էր, որի իրագործման համար տիրակալը պետք է ունենար բացարձակ իշխանություն: Այսպիսի իշխանության բացակայությունը ի ցույց կդներ պետության ղեկավարի կախվածությունը ուրիշներից, հետևաբար նաև՝ նրա անկարողությունը իրականացնելու վստահված գործառույթները: Այսպիսով, բացարձակ իշխանությունը ծառայում էր արդար կառավարման համակարգ ձևավորելուն և ոչ թե ղեկավարին օրենքից վեր դասելուն:

Սուլթանի անմիջական գործառույթներից մեկն էլ պաշտոնյաների նկատմամբ հսկողությունն էր: Երբեմն սուլթանը գաղտնի էր հետևում իրեն ենթակա խորհրդակցական մարմնի՝ Դիվանի, ինչպես նաև մուսուլման բարձրաստիճան հոգևորականների՝ *ուլեմների* ղեկավարած դատարանների աշխատանքին: Օսմանյան կայսրության անկման հիմնական պատճառներից մեկն էլ

այն էր, որ սուլթանները ավելի ու ավելի քիչ հետաքրքրություն էին ցուցաբերում իրենց կայսրությունում արդարության պահպանման հանդեպ:

Պետական պաշտոնյաների չարաշահումները կանխելու նպատակով սուլթանի հրամանագրերը՝ *ֆիրմանները*, հրապարակվում էին: Այսպիսով, կենտրոնական իշխանության գործունեության մասին տեղեկությունները միշտ հասու էին ժողովրդին:

Օսմանյան կայսրության կառավարման համակարգի թերևս ամենակարևոր դրական կողմը համընդհանուր հասանելիությունն էր: Իշխանական լիազորություններով օժտված անձինք, բացառությամբ սուլթանի, հասանելի էին կայսրության յուրաքանչյուր հպատակի: Օսմանյան հասարակության յուրաքանչյուր անդամ, անկախ դավանանքից, կարող էր խնդրագրով դիմել սուլթանական Դիվանին՝ բողոքելով տեղական պաշտոնյաների ոչ իրավաչափ գործունեությունից: Այդ խնդրագրերը կոչվում էին «արզ-ի մահդար», որոնք էլ Դիվանը պարտավոր էր քննարկել:

Օսմանյան պետությունում հասարակական կարծիքը դիտվում էր որպես միակ իրական հիմքը, որի վրա հենվում էր պետական իշխանությունը: Տիրապետող էր այն տեսակետը, որ եթե ժողովուրդը դադարի աջակցել իր ղեկավարներին, ապա նրանք կզրկվեն իշխանությունից: Միջնադարում օսմանյան իշխող վերնախավը միակն էր, որ ուշադրություն էր դարձնում հասարակական կարծիքին: Դրա մասին տեղեկանալու յուրօրինակ ձևը ուրբաթօրյա աղոթքն էր: Իսլամական երկրների մեծ մասում ուրբաթօրյա աղոթքի ժամանակ հնչող *«խութբա»*-ն կառավարչի բարօրության և կյանքի համար Ալլահին դիմելն է: Այն ուրբաթօրյա աղոթքի կամընտիր մաս է, ուստի դրան մասնակցելը սովորաբար նշանակում էր, որ աղոթքի մասնակիցը դրական վերաբերմունք ունի տիրակալի նկատմամբ, իսկ բացակայությունը՝ հակառակը: Օսմանյան վերնախավը մեծ ուշադրություն էր դարձնում ուրբաթօրյա աղոթքներին՝ ողջ կայսրությունում հասարակական տրամադրությունները վերահսկելու համար:

Օսմանյան սուլթանները կրում էին խալիֆի կամ իսլամի գերագույն հոգևոր առաջնորդի տիտղոս: Նրանք այս տիտղոսին հավակնում էին մի քանի պատճառով: Այն է՝ իսլամի երկու գլխավոր սրբավայրերը՝ Մեքքան և Մեդինան, կայսրության մաս էին կազմում, և օսմանյան կառավարության գործառույթներից մեկը ողջ աշխարհի սուննի մահմեդականների պաշտպանությունն էր: Առանձնապես կարևորվում էր դեպի Մեքքա ուխտագնացության՝ հաջի գնացած մահմեդականների անվտանգության ապահովումը: Իսլամի կանոններով՝ մուսուլման տիրակալը պարտավոր էր, ի հաշիվ իսլամ չդավանող երկրների *«դար ուլ-հարբ»*-ի (արաբերեն՝ պատերազմի աշխարհ), մեծացնել *«դար ուլ-իսլամ»*-ը (արաբերեն՝ իսլամի աշխարհ), ինչպես նաև արմատախիլ անել ոչ սուննիական հերետիկոսական իսլամական սովորույթներն ու համոզմունքները (մուսուլմանական տարածքներ ներխուժելու կամ բռնակցելու հիմնավորում):

Պետության կայունության կարևոր պայմաններից մեկը սուլթանության ինստիտուտի սերնդեսերունդ փոխանցվելն էր օսմանների տոհմում: Օսմանցիները չունեին իշխանության փոխանցման հատուկ համակարգ: Թյուրքերն ու մոնղոլները հավատում էին, որ թագը բաժին է ընկնում ամենաարժանավոր ժառանգին: Ժառանգորդների շարքում ներգրավված յուրաքանչյուր անձ, նախկին գահակալի եղբայրը լիներ թե որդին, թագի նկատմամբ հավասար իրավունք ուներ: Սա նշանակում էր, որ իշխանափոխությունը գրեթե միշտ լուրջ պայքար էր առաջացնում մրցակից խմբերի միջև: Նոր գահակալումն ուղեկցվում էր օսմանների տոհմի ներսում արյունալի հաշվեհարդարով: Պետության կայունության պահպանման նպատակով, Մեհմեդ II Ֆաթիհի սահմանած օրենքի համաձայն, նոր գահակալն իրավունք էր ստանում կյանքից զրկելու իր տոհմի արական սեռի բոլոր ներկայացուցիչներին՝ բնականաբար բացառելով իր զավակներին: Այս մահապատիժները բացառում էին հետագայում գահի հավակնորդների միջև

հնարավոր պատերազմները կամ ներքին կռիվները: XVII դարից օսմանյան սուլթաններն սկսում են հրաժարվել այս սկզբունքից և պալատի մի հատվածում, որը հայտնի էր *քաֆեզ*՝ վանդակ անունով, բանտարկում էին օսմանյան արքայազններին: Այս գործելաոճը համարվել է սուլթանության ինստիտուտի ձախողման պատճառներից մեկը: Իշխանությունը փոխանցվում էր արքայազների, որոնք իրենց կյանքի մի զգալի մասը արգելափակված անցկացնելու պատճառով հոգեկան խանգարում ունեին: Մինչդեռ սուլթանության հիմնարար պահանջը պետության այդ բարձրագույն աստիճանը զբաղեցնող անձի մտավոր և ֆիզիկական կարողությունն էր: Ըստ օսմանյան օրենքների՝ եթե սուլթանը այս կամ այն պատճառով ունակ չէր իրականացնելու իր գործառույթները, պետք է հեռացվեր իշխանությունից: Վերը նշվել է, որ Սելիմ I-ը սուլթան էր դարձել՝ գահընկեց անելով իր ծեր հորը՝ Բայազիդ II-ին, որն ի վիճակի չէր պատշաճ պատասխանելու ներքին և արտաքին սպառնալիքներին: Երբ Սուլեյման I-ը ծերանում է, նրա երկու որդիները՝ Բայազիդն ու Մուստաֆան, նրան տապալելու համար դավադրություն են կազմակերպում: Ծերացած Սուլեյմանը երկուսին էլ մահապատժի է ենթարկում, ինչը զրկում է նրան հոգեկան հավասարակշռությունից և կոտրում նրա ոգին:

Սուլթանը Օսմանյան կառավարման համակարգի իր վստահորդներին որոշ լիազորություններ էր տալիս: Գործադիր իշխանությամբ օժտված ամենաբարձր պաշտոնյան մեծ վեզիրն էր: Դատական բարձրագույն իշխանությունը տրվում էր մեծ ճանաչում ու հեղինակություն ունեցող իսլամական իրավունքի գիտակների (ուլեմների) ղեկավարին՝ *շեյխ-ու-իսլամին*, որը միաժամանակ մայրաքաղաքի հոգևոր առաջնորդն էր:

ՀԱՐՑԵՐ

1. Ըստ իսլամի կրոնաքաղաքական գաղափարախոսության՝ ո՞րն էր տիրակալի կամ սուլթանի հիմնական գործառույթը:

2. Ինչո՞ւ էին հրապարակվում սուլթանի հրամանագրերը՝ ֆիրմանները:

3. Ո՞րն էր օսմանյան կառավարման համակարգի կարևորագույն կողմը:

4. Ի՞նչ ճանապարհով էր օսմանյան կառավարությունը հասու դառնում հասարակական կարծիքին:

5. Ի՞նչ օրինականացված դաժան մեթոդ էին կիրառում օսմանները գահի կայունությունն ապահովելու համար:

6. Ո՞վ էր սուլթանից հետո գործադիր իշխանությամբ օժտված ամենաբարձր պաշտոնյան:

ԹԵՄԱ III
Օսմանյան կայսրության ճգնաժամը

XVI դարի վերջում, երբ Եվրոպայում սկսեցին ձևավորվել ուժեղ կենտրոնացված պետություններ, լայնածավալ ու բազմազգ Օսմանյան կայսրությունում ներքին քաղաքական և տնտեսական կապերը ոչ միայն չամրապնդվեցին, այլև հակառակը՝ սկսեցին թուլանալ: Ավատատիրական կարգերի դեմ գյուղացիների բողոքը, տեղաբնիկ ժողովուրդների ազատագրական պայքարը արտացոլում էին ներքին այն հակասությունները, որոնք սուլթանական իշխանությունը անզոր էր հաղթահարել: Կայսրության համախմբմանը խանգարում էր նաև այն հանգամանքը, որ դրա կենտրոնական երկրամասը՝ տնտեսական առումով հետամնաց Անատոլիան, այդպես էլ չդարձավ և չէր էլ կարող նվաճված ժողովուրդների համար տնտեսական և քաղաքական առումով ձգողական կենտրոն դառնալ:

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ՝ մեծանում է ավատատերերի շահագրգռությունը՝ ավելացնելու իրենց հողերի շահութաբերությունը: Պայմանական հողատիրության իրավունքով նրանք իրենց տրված հողակտորները՝ *թիմարները*, ինքնակամ վերածում էին անձնական սեփականության: Այդ ավատատերերը, խուսափելով սուլթանի համար զինված ջոկատներ կազմավորելուց և արշավանքներին մասնակցելուց, սկսում են յուրացնել զինվորական ծառայության դիմաց տրամադրված հողերի եկամուտները: Միաժամանակ, ավատատերերի առանձին խմբավորումների միջև պայքար է ծավալվում հողի տիրապետության և դրա կենտրոնացման համար: Դա հանգեցնում է նրան, որ հողի նկատմամբ պետական սեփականությունը սկսում է կորցնել իր նշանակությունը, իսկ ռազմալենային համակարգը[17]՝ քայքայվել:

---

[17] Հողի սեփականության հետ կապված պետական կառավարման համակարգ, որը տարածված էր միջնադարում: Սյուզերենը (գերագույն) հողակտորներ էր

XVI դ. վերջում ի հայտ են գալիս սուլթանական իշխանության թուլացման միտումներ: Սուլթանական պալատի շվայտությունն ահռելի գումարներ ծախսելու պատճառ էր դարձել: Անընդհատ մեծացող կենտրոնական ու տեղական ռազմավարչական և ֆինանսական բյուրոկրատիան մսխում էր պետական եկամուտների էական մասը: Միջոցների մի զգալի մասն էլ ծախսվում էր ենիչերիներին[18] պահելու համար, որոնց քանակը մեծանում էր ռազմալենային համակարգով համալրվող զորքի քանակի կրճատմանը զուգահեռ: Ենիչերիների զորամասերի քանակն աճում էր ևս մի պատճառով. դրանք անհրաժեշտ էին տեղաբնիկ ժողովուրդների ընդլայնվող ազատագրական պայքարը ճնշելու համար: XVII դ. սկզբին ենիչերիների զորաբանակի թվաքանակը գերազանցում էր 90 հազարը:

Կառավարությունը, ձգտելով ավելացնել գանձարանի եկամուտները, տարեցտարի բարձրացնում էր հին հարկերը և ավելացնում նորերը: Ոչ մուսուլմաններից գանձվող *ջիզիան*, որ XVI դ. սկզբում մեկ մարդուց 20-25 *ակչե* էր[19] կազմում, XVII դ. սկզբում հասել էր 140 ակչեի, իսկ իրենց իրավասությունները խիստ չարաշահող հարկահավաքները այն հասցնում էին 400-500 ակչեի: Միաժամանակ, իշխանությունները պետական հողերից գանձվող հարկերը կապալով էին տալիս, ինչն էլ պատճառ է դառնում հողատերերի նոր դասի՝ վարձակալ-կապալառուների հզորացման, որոնք փաստացի վերածվում էին առանձին գավառների ֆեոդալ սեփականատերերի: Հաճախ որպես կապալառու հանդես էին գալիս սուլթանական կառավարության բարձրաստիճան պաշտոնյաները:

բաժանում իր վասալներին, որոնք, հողի վարձավճարից բացի, պարտավոր էին պատերազմի ժամանակ հատուցել զինվորական ծառայությամբ:

[18] 1365 թ.-ից Օսմանյան բանակի հատուկ ստորաբաժանումներ, որոնց անձնակազմը ձևավորվում էր քրիստոնյա բնակչության 8-ից 15 տարեկանների պարբերական բռնի հավաքագրմամբ:

[19] Մեկ ակչեն պարունակում էր 1,15 գ. արծաթ:

Այս շահատակությունները հանգեցնում են *ջալալիների*[20] շարժմանը, որի սոցիալական կազմը շատ խայտաբղետ էր՝ գյուղացիներ, ընչազուրկ դարձած մանր ավատատերեր, դասալիքներ և այլն: 1598-1628 թթ. Անատոլիայում և Արևմտյան Հայաստանում ծավալված այս շարժումը կատարյալ պատուհաս էր դարձել հատկապես արևմտահայության համար:

Օսմանյան կայսրության անկման նախանշան էր նաև, այսպես կոչված, «Կանանց սուլթանությունը»: Այն մեծ ազդեցություն է ձեռք բերում կառավարման ոլորտում, երբ սուլթանները, հրաժարվելով արշավող բանակներն անձամբ գլխավորելուց, փակվում են հարեմներում և հայտնվում իրենց կանանց ու հարճերի ազդեցության տակ:

Քննարկվող ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը բախվում է լուրջ խոչընդոտների: Այդ քաղաքականությանը աճող դիմադրություն էին ցուցաբերում Ավստրիան, Լեհաստանը, Ռուսաստանը, իսկ միջերկրածովյան տարածաշրջանում՝ Իսպանիան: 1571 թ. հոկտեմբերի 7-ին Իսպանիայի և Վենետիկի գլխավորած Սրբազան լիգայի միացյալ նավատորմը Հունաստանի հարավ-արևմուտքում գտնվող Պատրասյան ծոցում՝ Լեպանտո (այժմ՝ Նավպակտոս) քաղաքի մոտ ջախջախիչ պարտության է մատնում թուրքական նավատորմին:

Այնուամենայնիվ, օսմանյան սուլթանները շարունակում են հյուծիչ պատերազմներ վարել և հաջողություններ գրանցել: Այսպես. 1573 թ. Կիպրոսն անցնում է թուրքերին, Սեֆյան Իրանի դեմ 1578-1590 թթ. պատերազմն ավարտվում է Այսրկովկասի և Ատրպատականի գրավմամբ, 1639 թ. վերստին նվաճվում է Իրաքը:

---

[20] Անատոլիայում և Արևմտյան Հայաստանում XVI-XVII դդ. ընչազուրկ դաձած մանր ավատատերերի և ապաղասակարգային խավերի ապստամբությունների շարք, ինչը պատուհաս էր դարձել նստակյաց բնակչության համար:

1656-1710 թթ. Օսմանյան կայսրության պատմության մեջ մտել են *Քյոփրյուլուների ժամանակաշրջան* անունով: Մեծ վեզիրի պաշտոնում միմյանց հաջորդող ծագումով ալբանացի Քյոփրյուլուների տոհմի ներկայացուցիչներին հաջողվում է կայունացնել դրությունը երկրում և մի շարք արտաքին քաղաքական հաջողություններ գրանցել: Տրանսիլվանիայի (ներկայիս արևմտյան Ռումինիան) մագնատները վերստին ճանաչում են իրենց կախումը սուլթաններից, օսմանցիները 1669 թ. նվաճում են Կրետեն, 1676 թ. հաղթելով Լեհաստանին՝ նրանք նվաճում են Պոդոլյեն Ուկրաինայի արևմուտքում, իսկ Ռուսաստանի դեմ պատերազմն ավարտվում է 1681 թ. Բախչիսարայի պայմանագրով, որով Ռուսասանը ստիպված է լինում հրաժարվել Արևմտյան Ուկրաինայից և Դնեպրը սահման ճանաչել: Քյոփրյուլուների հաջողություններն ավարտվում են 1683 թ. Վիեննայի մատույցներում և 1697 թ. Զենտայի ճակատամարտերում պարտությամբ: Դա ստիպում է թուրքերին 1699 թ. Կարլովիցում ստորագրել հաշտության պայմանագիր, որով ազդարարվում է Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական անկման սկիզբը: Թուրքերը հրաժարվում են Հունգարիայից, Տրանսիլվանիայից, Տիմեշվարից (ներկայիս հարավ-արևմտյան Ռումինիա), Դալմացիայից (ներկայիս Խորվաթիա), Մորեայից (Պելոպոնեսի թերակզին Հունաստանի հարավում) և Պոդոլյեից:

Ռազմական այս խոշոր պարտությունը ստիպում է սուլթանական կառավարությանը որոշակի բարեփոխումներ իրականացնել, այդ թվում՝ կրթական: Հիմնվում են եվրոպական տիպի բարձրագույն ուսումնական հաստատություններ. 1734 թ. ստեղծվում է հրետանային դպրոց՝ պատրաստելու եվրոպական չափորոշիչներին համապատասխան հրետանավոր սպաներ, իսկ 1773 թ. բացվում է Ստամբուլի տեխնիկական համալսարանը: 1729 թ., սուլթան Ահմեդ III-ից (1703-1730) թույլտվություն ստանալով, Իբրահիմ Մութեֆերիկան հրատարակում է օսմաներեն առաջին տպագիր գիրքը:

Թվարկված բարեփոխումները խիստ անբավարար էին կանգնեցնելու ռուսական նվաճողական նկրտումները: Մոսկովյան իշխանության շուրջ ռուսական հողերի միավորումից ի վեր Ռուսաստանը ձգտում էր նվաճել իրեն հարավից հարող տափաստանը, որը միաժամանակ և՛ վտանգի, և՛ թռիչքաձև զարգացման հնարավոր աղբյուր էր: Վտանգը գալիս էր տափաստանում միմյանց հերթագայող՝ արյան ու թալանի ծարավ քոչվորներից, իսկ զարգացման հնարավորությունը բխում էր այդ արգասաբեր տարածքների յուրացումից: Դրանց և Սև ծովի հյուսիսային ափամերձ տարածքների համար էր Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև հակամարտությունը, որը XVIII դ. երկրորդ կեսից Օսմանյան կայսրության համար գահավեժ անկման պատճառ դարձավ: Ռուս-թուրքական 1778-1774 և 1787-1791 թթ. պատերազմների հետևանքով ռուսներին է անցնում Դնեստրի և Կուբանի գետաբերանների միջև գտնվող Սև ծովի հյուսիսային ափը, այդ թվում՝ Ղրիմն ու հարակից տափաստանային տարածքները, Դնեպր և Բուգ գետերի միջև ընկած տարածքը, Ազով քաղաք-ամրոցը և Ազովի ու Սև ծովերը միացնող Կերչի նեղուցը վերահսկող համանուն ամրոցը, որը ռազմավարական կարևոր նշանակություն ուներ: Ղրիմի խանությունն ու դրան հարակից տափաստանային տարածքներն Օսմանյան կայսրությունից անկախ են ճանաչվում:

Օսմանյան կայսրության այս պարտությունները սպառնում էին խախտել եվրոպական խոշոր տերությունների ուժերի հավասարակշռությունը: Բոսֆորի և Դարդանելի նեղուցների նկատմամբ Ռուսաստանի վերահսկողությունը Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան ընկալում էին որպես ներխուժման սկիզբ դեպի իրենց համար կենսական նշանակություն ունեցող Միջերկրականի ավազան և Մերձավոր Արևելք:

Ռուսաստանն իր հերթին ֆրանկո-բրիտանական ներկայությունը Օսմանյան կայսրությունում սպառնալիք էր համարում իր

հարավային տարածքներին, քանի որ նեղուցների փակումը ֆրանսիացիների և բրիտանացիների կողմից սպառնում էր խցանել Ռուսաստանը հարավային Եվրոպային կապող առևտրային մայրուղին: Այս հակասություններն էլ ծնում են Արևելյան հարցը, որը եվրոպական մեծ տերությունների հետագա ռազմավարական մրցակցության թնջուկ էր XVIII դ. վերջից մինչև XX դ. սկզբի Օսմանյան կայսրության քաղաքական և տնտեսական անկայունության պայմաններում: Արևելյան հարցը ներառում էր բազմաթիվ փոխկապակցված տարրեր՝ Օսմանյան կայսրության ռազմական պարտությունները, նրա նահանգներում էթնոկրոնական ազգայնականության աճը և այլն: Քանի որ Օսմանյան կայսրության փլուզումը համարվում էր անխուսափելի, եվրոպական տերություններն ուժային պայքարի մեջ են մտնում օսմանյան տիրույթներում իրենց ռազմական, ռազմավարական և առևտրային շահերը պաշտպանելու համար:

Օսմանյան կայսրությունը տանուլ է տալիս նաև XIX դ. առաջին քսանամյակում Ռուսաստանի հետ երկու՝ 1806-1812 և 1828-1829 թթ. պատերազմները: Բուխարեստի 1812 թ. և Ադրիանապոլսի 1829 թ. պայմանագրերով Ռուսաստանին են անցնում Բեսարաբիան (ներկայիս Մոլդովայի Հանրապետության տարածքի մեծ մասը), Դանուբի գետաբերանը, Սև ծովի արևելյան ափի մեծ մասը: Բացի տարածքային ձեռքբերումներից, Ռուսաստանը ճանաչվում էր Օսմանյան կայսրության քրիստոնյա ազգաբնակչության հովանավոր և պաշտպան, ինչը հնարավորություն էր տալիս Ռուսաստանին միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին: Այս պատերազմները նաև Բալկանների հույն և սլավոն ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի պատճառ են դառնում, ինչի արդյունքում 1830 թ. Հունաստանն անկախանում է, իսկ Սերբիան ու Վալախիան (ներկայիս Ռումինիայի տարածքի արևելյան և հարավային մասը) դառնում են ինքնավար:

Նույն՝ 1830 թ. ֆրանսիացիները գրավում են դե յուրե Օսմանյան կայսրությանը պատկանող Ալժիրը: Սուլթանից ձևականորեն վասալական կախման մեջ գտնվող Եգիպտոսի վալի Մուհամադ-Ալին 1831-1833 թթ. ռազմական գործողություններ է սկսում իր սյուզերեն Մահմուդ II (1808-1839) սուլթանի դեմ: Կ. Պոլսի գրավումը և սուլթանի հնարավոր գահընկեցությունը տեղի չեն ունենում Մահմուդ II-ի օգտին ռուսների միջամտության շնորհիվ:

Խորացող ճգնաժամը հաղթահարելու համար կայսրությունում սկիզբ է առնում բարեփոխումների գործընթաց, որը հայտնի է *Թանզիմաթ* (օսմաներեն՝ վերափոխում) անունով: Օսմանյան կայսրությունում բարեփոխումների և պետության արդիականացման գործընթացը նշանավորվում է մի շարք հրամանագրերի հռչակմամբ: Դրանք սկսվում են Աբդուլ-Մեջիդ I (1839-1861) սուլթանի կողմից 1839 թ. նոյեմբերի 3-ին հաթթի–շերիֆի (օսմաներեն՝ բարձրագույն հրաման) հրապարակմամբ, որով սուլթանի բոլոր հպատակներին տրամադրվում էր անձի կյանքի և ունեցվածքի անվտանգություն: Դրանով ոչ մուսուլման *զիմմի* իրավազուրկ բնակչությունը իրավական առումով հավասարվում է մուսուլմաններին: Այդ բարեփոխումներին 1840 թ. հետևում են ֆինանսական համակարգի, ինչպես նաև քաղաքացիական և քրեական օրենսգրքերի վերափոխումները, 1843-1844 թթ. ընդունվում է բանակի զորակոչի և ծառայության ժամկետների մասին նոր կարգ:

1856 թ. փետրվարի 18-ին հրապարակվում է սուլթանական նոր հրամանագիր՝ *հաթթի-հումայունը*, որով վերացվում է Մեհմեդ Ֆաթիհի ներդրած միլլեթների կրոնական համայնքը, և պետությունն ընդունում է ազգային փոքրամասնությունների գոյության փաստը: Արտոնվում է ոչ մահմեդական հպատակների պետական կառավարական համակարգում պաշտոնավարելը: Ընդլայնվում են արդարադատության իրականացման գործում պատրիարքարանների լիազորությունները: Սակայն այս բարեփոխումները հետևողական չէին իրականացվում, քանի որ կենտրոնական և

տարածքային վարչական համակարգը անձեռնհաս և կոռումպացված էր: Թանզիմաթի հաջողությամբ ոչ շահագրգիռ եվրոպական խոշոր տերությունների միջամտությունը ևս նպաստում է բարեփոխումների տապալմանը:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ է հողի նկատմամբ պետական սեփականության հիմքի վրա գործող ռազմալենային համակարգը սկսում կորցնել իր նշանակությունը:
2. Ո՞րն էր XVI դ. վերջին-XVII դ. սկզբին ծավալված ջալալիների շարժման պատճառը:
3. Ի՞նչ իրադարձությամբ է ազդարարվում Օսմանյան կայսրության անկման սկիզբը:
4. XVIII դ. երկրորդ կեսին ի՞նչն է դառնում Օսմանյան կայսրության արագ անկման պատճառը:
5. Ո՞րն էր Արևելյան հարցի էությունը:
6. Ինչո՞ւ 1831-1833 թթ. պատերազմում օսմանյան բանակը գլխովին ջախջախած Եգիպտոսի վալի Մուհամադ-Ալիին չի հաջողվում գրավել Ստամբուլը:
7. Ի՞նչ էր 1639 թ. Օսմանյան կայսրությունում սկսված թանզիմաթը:

ԹԵՄԱ IV
Սեֆյան Իրան (1501-1736)

Արաբական տիրապետության հաստատումից մինչև XVI դ. Իրանի տարածքում ձևավորված պետությունները կարճակյաց էին և զուրկ ազգային դիմագծից: Սեֆյանների ստեղծած պետությունը, որն ընդգրկում էր ողջ Իրանի տարածքը, հաճախ ընկալվում է որպես իրանական ազգային պետականության վերածնունդ: Պետության հիմնադիրն էր Իսմայիլ I-ը (1501-1524)՝ Սաֆավիե շիա սուֆիական կրոնական միաբանության ղեկավարը: Իր նվիրյալ հետևորդների և թյուրքական յոթ ցեղերի[21] օժանդակությամբ նա ջախջախում է Ակկոյունլու Ալվանդի (1497-1504/5) բանակը, գրավում ակկոյունլուների մայրաքաղաք Թավրիզը և 1501 թ. իրեն հռչակելով շահ՝ իսլամի շիա հարանվանությունը հայտարարում է պետական կրոն: Հաջորդ տասը տարիների ընթացքում նրան հաջողվում է գրավել ողջ Իրանը և ծանր պարտության մատնել ուզբեկներին, որոնք հավակնում էին տիրել նորաստեղծ պետության արևելքում գտնվող Խորասան նահանգը: Իսմայիլի կողմից պետության ընդարձակումը կանգ է առնում 1514 թ., երբ Խոյ քաղաքից ոչ հեռու տեղի ունեցած Չալդրանի ճակատամարտում օսմանյան սուլթան Սելիմ I-ի զորքերը ջախջախում են ղզլբաշների բանակը: Այս ճակատամարտն ազդարարեց Մերձավոր Արևելքում գերշխանության համար շուրջ հարյուր հիսուն տարի տևած թուրք-իրանական պատերազմների սկիզբը: Իսմայիլի տասնամյա ժառանգորդ Թահմասպ I (1524-1576) շահի գահակալումն ուղեկցվում է ղզլբաշների միջև առաջնության համար միջցեղային արյունալի պատերազմով: Թահմասպ I-ին նախ հաջողվում է հնազանդեցնել ղզլբաշների ցեղային վերնախավին,

---

[21] Շիայական տասներկու իմամների պատվին այդ ցեղերի մարտիկները կրում էին տասներկու ծոպավոր փաթթոցով գլխարկներ և հայտնի էին *ղզլբաշ*-կարմրագլուխ անունով:

ապա կայունացնել ներքին քաղաքական վիճակը, ինչպես նաև, 1555 թ. Ամասիայի հաշտության պայմանագրով սահման անցկացնելով երկու պետությունների միջև Կովկասյան լեռներից մինչև Պարսից ծոց, կասեցնել օսմանցի թուրքերի ծավալապաշտական նկրտումները: Թահմասպ I-ի ժառանգներ մոլագար Իսմայիլ II-ի (1766-1667) և կիսակույր ու թուլակամ Մուհամմեդ Խուդաբանդայի (1667-1687) օրոք պետությունը հասնում է կործանման եզրին: Շահի ձևական կառավարման պայմաններում ղզլբաշների ցեղային առաջնորդ էմիրները փաստացի դառնում են անկախ, օսմանցի թուրքերը նվաճում են Այսրկովկասն ու Իրանական Ադրբեջանը, ուզբեկները տիրում են Խորասանին:

Սեֆյան պետության անխուսափելի թվացող կործանումից փրկողը Մուհամմեդ Խոդաբանդայի երրորդ որդի, Սեֆյան Պարսկաստանի հինգերորդ շահ Աբաս I-ն է (1571-1629): Նա համարվում է Իրանի պատմության և Սեֆյան դինաստիայի մեծագույն կառավարիչներից մեկը:

Աբաս I-ը գահ է բարձրանում երկրի համար ծանր ժամանակներում: Իրավիճակը կայունացնելու համար նա իրականացնում է մի շարք արդյունավետ բարեփոխումներ, որոնցից հրատապը պետության ռազմական և քաղաքացիական կառավարման ոլորտում *ղուլամների* համակարգի ներդրումն էր: Հազարավոր չերքեզ, վրացի և հայ ստրուկ զինվորներ, որոնք անվերապահ ենթարկվում էին շահին, պետական վարչակազմի և բանակի հրամանատարական կազմի մաս են կազմում: Եթե նախկինում Սեֆյանների քաղաքական հենարանը թյուրքալեզու ղզբլաշներն էին, որոնք հիմնականում բնակվում էին Իրանական Ադրբեջանում, ապա Շահ-Աբասի օրոք պետության վարչական և ռազմական կառավարման համակարգում սկսում է նվազել թյուրքական վերնախավի անդամների քանակը, և անկասելիորեն աճում է ղուլամների ու պարսիկների թիվը: 1598 թ. Աբաս I-ը մայրաքաղաքը գերազանցապես թյուրքերով բնակեցված Ղազվինից տեղափոխում է Սպա-

հան: Շահ-Աբասին հաջողվում է վերացնել ղզլբաշների ցեղային վերնախավի ազդեցությունը պետական կառավարման բոլոր ոլորտներում: Այս բարեփոխումները, ինչպես նաև բանակի զինումը հրազենով, հնարավորություն են ընձեռում օսմանցիներից և ուզբեկներից հետ գրավել Իրանի կորցրած տարածքները: 1603–1618 թթ. տեղի ունեցած ռազմական գործողությունների արդյունքում Շահ-Աբասը վերանվաճում է նախկինում կորցրած տարածքները Այսրկովկասում և Դաղստանում, ինչպես նաև Իրաքը՝ Բաղդադ քաղաքով: Բահրեյն, Ղեշմ և Հորմուզ կղզիների նվաճմամբ ու Բանդար-Աբաս քաղաքի հիմնադրմամբ շահը վերահսկողություն է հաստատում Պարսից ծոցով իրականացվող ծովային ուղիների նկատմամբ:

Հետևողականորեն իրականացվող այս քաղաքականության շնորհիվ հնարավոր է դառնում բարելավել երկրի տնտեսական վիճակը, զարգացնել առևտուրը և դիվանագիտական հարաբերություններ հաստատել եվրոպական երկրների ու Ռուսաստանի հետ: Աբաս I-ի օրոք Սեֆյան պետության արևմտյան սահմանը հասնում էր Տիգրիսին, արևելքում՝ ներկայիս Աֆղանստանի կենտրոնական տարածքներին, հյուսիսում սահմանն անցնում էր Կովկասյան լեռներով, իսկ հարավում՝ Բաղդադ և Բասրա քաղաքների միջև ընկած տարածքով:

Շահ-Աբասին հաջորդում է նրա թոռը՝ Սաֆի I-ը (1629-1642), որն իր պապի հակապատկերն էր. ինքնամփոփ և անգործունյա Սաֆին ի վիճակի չէր հաղթահարել պապի մահից հետո առաջացած կառավարման համակարգի ճգնաժամը: Վատ կառավարումը հեղինակազրկում է Սաֆի I-ի գլխավորած իշխանական վերնախավը և չդադարող ապստամբությունների պատճառ դառնում: Շահ-Աբասի մահից հետո Օսմանյան կայսրության հետ վերսկսված պատերազմն ավարտվում է Իրանի պարտությամբ և 1639 թ. Քասրե-Շիրինի պայմանագրով, որով Միջագետքում Իրանի նվաճումների մեծ մասը վերադարձվում է օսմանցիներին:

Սաֆի I-ին հաջորդած Աբաս II-ի (1642-1666) օրոք սկսվում է ֆինանսական ճգնաժամ, որը խորանալով շարունակվում է մինչև Սեֆյանների պետության կործանումը: Այդ ճգնաժամը մեկն էր այն պատճառներից, որ ստիպում էր Աբաս II-ին հարևան պետությունների հետ հարաբերություններում ընդհանուր առմամբ զերծ մնալ իր նախնիներին հատուկ ագրեսիվ քաղաքականությունից:

Աբաս II-ին հաջորդած Սուլեյմանի (1666-1694) և Սուլթան-Հուսեյնի (1694-1722) կառավարման տարիներին արձանագրվում է ռազմական ուժի թուլացում, գյուղատնտեսական արտադրության անկում և կոռումպացված վարչական համակարգ: Այս երկու գահակալները, ի տարբերություն իրենց նախորդների, փակվել էին հարեմներում՝ պետության կառավարումը թողնելով պալատական ներքինիներին, հարեմի կանանց և շիա բարձրաստիճան հոգևորականներին:

Բանը հասնում է նրան, որ 1722 թ. Ղիլզայ ցեղի աֆղանները, որոնք ապստամբել էին սեֆյան դաժան կառավարչի դեմ, առանց էական դիմադրության գրավում են կայսրության մայրաքաղաք Սպահանը և հայտարարում իրենց դինաստիայի ստեղծման մասին: Սակայն աֆղաններին չի հաջողվում ամուր հիմքերի վրա դնել իրենց տիրապետությունը Իրանում:

1729 թ. Նադիր խանը, որը հանդես էր գալիս Սուլթան-Հուսեյնի որդի Թահմասպ II-ի (1723-1732) իրավունքների պաշտպանի դերում, աֆղաններին վտարում է Իրանից, իսկ հետագայում, ասպարեզից հեռացնելով թե՛ Թահմասպ II-ին, թե՛ նրա որդի մանկահասակ Աբասին, 1736 թ. իրեն շահ է հռչակում:

Սեֆյանների պետությունը ռազմաավատատիրական բացարձակ միապետություն էր: Այն գլխավորում էր շահը: Միապետին կից գործում էր խորհուրդը, որտեղ ներկայացված էին յոթ խոշոր պաշտոնյաներ՝ Սեֆյան վարչակազմի ղեկավար և թագավորական կնիքի պահապան մեծ վազիրը, նրա տեղակալը, բարձրագույն դատական ատյանի ղեկավար շեյխուլիսլամը, գլխավոր

արարողապետը, ղուլամների, հրացանակիրների և հրետանու զորամասերի հրամանատարները:

Շահական արքունիքը ուռճացված կազմ ուներ: Այն ներառում էր որսապետերի, բազեպանների, հրուշակագործների, մատռվակների, աստղագուշակների, պալատական արհեստանոցների վարիչների և այլն:

Սեֆյան Իրանի տարածքը բաժանվում էր երկու անհավասար մասերի՝ Դիվան և Խասե: Դիվանապատկան տարածքները բաղկացած էին տասներեք միավորներից, որոնք հայտնի էին *էյալեթ* անվամբ: Էյալեթների ղեկավար *բեգլարբեգները*, որոնք իրականացնում էին թե՛ ռազմական, թե՛ քաղաքացիական կառավարումը, հիմնականում ղզլբաշական ավագանու ներկայացուցիչներ էին: Ավելի փոքր վարչական միավորները կոչվում էին *մահալներ* և ղեկավարվում *հաքիմների* կողմից:

Խասեի շրջանները, որոնք շահական ընտանիքի ուղղակի սեփականությունն էին, կառավարվում էին շահի կողմից նշանակված պաշտոնյաների՝ *ամիլների* կողմից: Շիա հոգևորականության ներկայացուցիչներ էին Դիվանի և Խասեի մեծ *սադրները*, որոնք բարձրագույն դատական պաշտոնյաներ էին և տնօրինում էին *վաքֆային* (մզկիթներին և մեդրեսեներին պատկանող) գույքը. նրանց էին ենթակա նաև *ուլեմները*՝ մահմեդական աստվածաբանները:

XVII դ. տեղի է ունենում հողային ֆոնդի վերաբաշխում ավատատիրական դասի տարբեր խմբերի միջև: Աբաս I-ի կենտրոնացման քաղաքականությունը հանգեցնում է պետական հողերի՝ դիվանի, առանձնապես շահի ընտանիքի սեփական հողերի՝ *խասեի* զգալի աճին: Խասեն ներառում էր ամբողջ շրջաններ և քաղաքներ, օրինակ՝ Սպահանը, Արդաբիլը և ողջ Գիլանը: Պետական հողերից եկամուտներն ուղղվում էին բանակի և վարչական ու հարկային ապարատի պահպանմանը, իսկ շահի տիրույթներից՝ արքունիքի և շահի ընտանիքի կարիքներին: Աճում են նաև

մահմեդական կրոնական հաստատություններին պատկանող ֆոնդերը՝ *վաքֆները*: Բացի մշակովի հողատարածքներից, վաքֆները ներառում էին քաղաքներում անշարժ գույքը՝ տներ, խանութներ, բաղնիքներ, քարավանատներ, շուկաներ, որոնցից ստացված եկամուտն ամբողջությամբ տրվում էր հարկային անձեռնմխելիության իրավունք ունեցող կրոնական հաստատություններին:

Ծառայության դիմաց տրվող հողերը զիջում էին դիվանի ու խասեի ֆոնդին պատկանող հողատարածքներին: Դրանցից ամենատարածվածը *թիուլներն* էին, որոնք տրվում էին ոչ միայն զինվորական, այլև քաղաքացիական ծառայության համար: Դրանք համարվում էին պայմանական սեփականություն և վերադարձվում էին, եթե *թիուլդարը* չէր կատարում իր ստանձնած պարտականությունները: Ցածր պաշտոնական դիրք ունեցողներին տրվող վարձատրությունը՝ *համեյն սալեն*, կանխիկ կամ բնամթերային վճարում էր, որ տրամադրվում էր վարչական որոշակի շրջանի գանձարանից՝ առանց այդ շրջանի բնակչության նկատմամբ ուղղակի կառավարման իրավունքի:

Բոլոր կարգի հողերի մշակումից գյուղացիներին բաժին էր հասնում բերքի 1/2-ից մինչև 1/8-ը: Բացի այդ, գյուղացին պարտավոր էր իր բաժին բերքից հարկեր վճարել պետությանը:

XVII դ. փոխվում է հարկերի դրույքաչափերը. եթե Աբաս I-ի օրոք Իրանի կենտրոնական շրջաններում որոշ հարկեր վերացվում են, իսկ մյուսները՝ կրճատվում, ապա նրա իրավահաջորդների օրոք հարկերը նորից սկսում են անշեղորեն աճել: Հիմնական հարկը *խարաջն էր*՝ հողագործությունից ստացվող բերքի 15-20 տոկոսի հարկումը հօգուտ պետության: Այգիների հարկը կազմում էր բերքի 10 տոկոսը, բամբակինը՝ 30 տոկոսը: Գյուղացիները պարտավոր էին կատարել բազմատեսակ պարհակներ, որոնցից առավել ծանր էին ռազմական կարիքների համար գանձվող արտակարգ պարհակներն ու հարկերը: Պետության տարբեր շրջան-

ներում գյուղացիների վիճակը տարբեր էր: Ամենաբարվոքը բուն Իրանի՝ ծագումով պարսիկ և թյուրք գյուղացիների դրությունն էր, ամենավատթարը սահմանային նահանգների (Վրաստան, Հայաստան, Դաղստան, Աֆղանստան) քրիստոնյա և սուննի բնակչության վիճակն էր:

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացումն ավելի է վատթարացնում Իրանի աշխատավոր խավերի վիճակը: Մի շարք հարկեր գանձվում են կանխիկ եղանակով, ինչը գյուղացիներին ստիպում է դիմել վաշխառուներին և հանգեցնում է վերջիններից կիսաստրկական կախման:

Իրանի սոցիալ-տնտեսական կյանքում առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում քոչվոր անասնապահները: Երկրի ընդհանուր բնակչության մեկ երրորդը կազմող քոչվորները շատ ավելի բարվոք վիճակում էին, քան նստակյաց գյուղացիները: Քոչվորներից գանձվող հարկերը ավելի թեթև էին: Նրանցից գանձվում էր անասնագլխաքանակի և բրդի ընդամենը 1/7-ը: Ցեղային կազմակերպությունը քոչվորներին որոշակի պաշտպանություն էր ապահովում: Ավատատիրական աշխարհազորում ծառայող քոչվորները ռազմական ավարից ստանում էին բաժնեմաս, իսկ զենք ունենալը նրանց պաշտպանում էր պետական պաշտոնյաների և ավատատերերի շահատակություններից, ինչից նստակյաց գյուղացիները լիովին անպաշտպան էին:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ւմ օժանդակությամբ են Սեֆյանները տիրում Իրանի գահին:

2. Ինչո՞ւ է 1512 թ. Իսմայիլ I-ը ստիպված լինում դադարեցնել տարածքային նվաճումները:

3. Ինչո՞ւ է Թահմասպ I և Աբաս I շահերի կառավարման միջև ընկած ժամանակահատվածում Իրանը հայտնվում խորը ճգնաժամում:

4. Ո՞րն էր Իրանում իրավիճակը կայունացնելու համար Աբաս I շահի իրականացրած բարեփոխումներից կարևորը:

5. 1639 թ. Քասրե-Շիրինի պայմանագրով ի՞նչ տարածքներ է կորցնում Սեֆյան Իրանը:

6. Ի՞նչն է ստիպում Աբաս II-ին հրաժարվել ծավալապաշտական քաղաքականությունից:

7. Ի՞նչ վարչական բաժանում ուներ Սեֆյան Իրանը:

8. Ինչպիսի՞ հողատիրության ձև էր թիուլը:

9. Ինչո՞ւ էր Իրանի բնակչության քոչվոր մասը նստակյացների համեմատ տնտեսապես ավելի բարվոք վիճակում:

ԹԵՄԱ V
Այսրկովկասի խանությունները XVIII դ.կեսից-XIX սկիզբ

1747 թ. Իրանի շահ հռչակվելուց հետո Նադիրը (1736-1747) խոշոր փոփոխություններ է կատարում պետության կառավարման և վարչական կառուցվածքում: Վերացվում են Սեֆյան պետության վարչատարածքային բաժանումները՝ *էյալեթ-բեյլարբեյությունները*: Այսրկովկասյան Շիրվանի, Ղարաբաղի և Չուխուրսադի (Երևանի) բեյլարբեյությունները միավորվում են մեկ փոխարքայության մեջ, որի կենտրոնը Թավրիզն էր: Փոխարքայության կառավարումը տրվում է Նադիրի եղբորը՝ Իբրահիմ խանին:

Նադիր-շահ Աֆշարի սպանությունից և իրանական միասնական պետության կազմալուծումից հետո Այսրկովկասում և հյուսիսային Իրանում հայտնի են թվով 20 կիսաինքնավար կարգավիճակ ունեցող պետական կազմավորումներ՝ *խանություններ* անունով: Սակայն և՛ Սեֆյան, և՛ Աֆշար իրանական իշխող դինաստիաների ժամանակաշրջանին վերաբերող պաշտոնական գրագրությունում *խանություն* բառը բացակայում է: Այդ կազմավորումները ղեկավարում էին հիմնականում ծագումով թյուրք ավատատերերը, որոնք նախկինում Իրանի Սեֆյան և Աֆշար գահակալների կողմից նշանակվում էին Այսրկովկասի *իրանական վիլայեթ, բեգլարբեգություն* կամ *օլքա* կոչվող վարչատարածքային միավորների կառավարիչների պաշտոնում: Այդ խանությունները չունեին տարածքային, կրոնական և էթնիկ-ազգային հստակ ինքնություն: Դրանցից Այսրկովկասի մասշտաբով նշանակալիցներն էին Երևանի, Ղարաբաղի, Գանձակի (Գյանջայի), Բաքվի, Ղուբայի խանությունները:

Խանությունները կառուցվածքով իրանական պետության մանրակերտն էին: Չնայած այն հանգամանքին, որ Այսրկովկասում մահմեդականների մեծ մասը խոսում էր թյուրքական բարբառներով, մինչև XVIII դ. վերջը պետական և գրական լեզուն պարսկերենն էր:

Երևանի խանությունը (շուրջ 19500 կմ^2), ընդգրկում էր ներկայիս Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի և ներկայիս Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Սադարակի ու Շարուրի շրջանների տարածքը: Նադիր-շահի մահից հետո Իրանի իշխանությունը Արաքս գետից հյուսիս ընկած տարածքների վրա խիստ թուլանում է: Երևանի խանը, չկարողանալով դիմագրավել հարավից Երևանի վրա հարձակումներին, ճանաչում է վրաց Հերակլ II թագավորի գերիշխանությունը՝ դառնալով վերջինիս հարկատուն: Վրաց թագավորը խանության հայերի գործուն օժանդակությամբ ձախողում է Մեհտի խանի և նրան հաջորդած Խալիլ, Հասան-Ալի, Հուսեյ-Ալի, Մոհամմադ խանների՝ իր գերիշխանությունը թոթափելու փորձերը:

1795 թ. Մոհամմադ-Խան Ղաջարի կողմից Մոհամմադ խանի ձերբակալությամբ վերջ է տրվում Երևանի խաների կիսանկախ կարգավիճակին: Հաջորդ երեք խաները անվերապահորեն ենթարկվում են Իրանի Ֆաթհ-Ալի շահին: Այս խաներից վերջինի՝ Հուսեյն Ղաջարի կառավարումն ավարտվում է ռուսական բանակի կողմից Երևանի գրավումով 1827 թ. հոկտեմբերի 1-ին: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Իրանը Երևանի խանությունը զիջում է Ռուսական կայսրությանը:

Ղարաբաղի խանության տարածքը (շուրջ 17 հազար կմ^2) ընդգրկում էր արևելքում Կուր գետի, հյուսիսում Մռավի, արևմուտքում Արևելյան Սևանի, Վարդենիսի և Զանգեզուրի լեռնաշղթաների, հարավում Արաքս գետի միջև ընկած տարածքը: 1747 թ. ջիվանշիրների թյուրքական ցեղախմբի սարուջալու ցեղի առաջնորդ Փանահ-Ալին, օգտվելով Նադիր շահի մահից հետո ծագած քաոսից, գրավում է Սեֆյանների օրոք ձևավորված Ղարաբաղի բեկլարբեկության դաշտային մասը և 1748 թ., իր հավատարմությունը հայտնելով Նադիր շահի իրավահաջորդ Ադիլ շահին (1747–1748), նրա կողմից Ղարաբաղի խանի հրովարտակ է ստանում: Իր դիր-

քերն ամրապնդելու նպատակով նորընծա խանը կառուցում է Բայաթի և Շահբուլաղի ամրոցները: Օգտվելով Վարանդայի մելիք Շահնազարի դավաճանությունից՝ Փանահը նույն մելիքի խորհրդով 1751-1752 թթ. կառուցում է Շուշիի բերդը: Իր կառավարման ամբողջ ընթացքում Փանահ խանն անընդմեջ պատերազմներ է վարում Ղարաբաղի մելիքների, Այսրկովկասի և հյուսիսային Իրանի տարբեր խաների ու Արևելավրացական թագավորության դեմ: 1763 թ.՝ Փանահի մահից հետո, Ղարաբաղի խան է դառնում նրա որդին՝ Իբրահիմ-Խալիլը: Վարելով նենգ ու հաշվենկատ քաղաքականություն՝ նա կարողանում է հաղթանակ տանել Ղարաբաղի հայ մելիքների նկատմամբ: Խուսանավելով Ղաջարական Իրանի, Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև՝ նա իր իշխանությունը պահում է մինչև 1806 թ., երբ Ռուսաստանից Ղարաբաղի խանության կախվածությունը հաստատող Քուրակչայի 1805 թ. պայմանագիրը խախտելու համար սպանվում է ռուսների կողմից: Ռուսները խանական իշխանությունը հանձնում են Իբրահիմի որդի Մեհտի-Ղուլիին: 1813 թ. ստորագրելով Գյուլիստանի պայմանագիրը՝ Իրանը ճանաչում է Արևելյան Վրաստանի ու այսրկովկասյան խանությունների (բացառությամբ Երևանի և Նախիջևանի) պատկանելությունը Ռուսաստանին: 1822 թ. Ղարաբաղի խանությունը վերացվում է, և Մեհտի-Ղուլի խանը ստիպված է լինում փախչել Իրան:

Գանձակի կամ Գյանջայի խանությունը զբաղեցնում էր Կուր գետից հարավ ընկած տարածքը և գտնվում էր Արևելավրացական թագավորության, Երևանի, Ղարաբաղի և Շաքիի խանությունների միջև:

Գանձակի Ուղուրլու խանը միակն էր, որ Մուղանի դաշտում տեղի ունեցած համաժողովում հավանություն չի տալիս Իրանի շահի տիտղոսին հավակնող Նադիրի թեկնածությանը: Ի պատասխան՝ Նադիրը Գանձակի բեկլարբեկության տարածքից անջատում է Սյունիքը, Լոռին, Տավուշը, իսկ Արցախի չորս հայա-

բնակ գավառներում ձևավորում Խամսա վարչական միավորը՝ Դիզակի մելիք Եգանին այդ նորակազմ միավորի ղեկավար կարգելով: Այսպիսով, Ղաջարների Զիադօղլու ճյուղին պատկանող խաներին մնում է միայն Գանձակն ու նրա շրջակայքը:

Ուղուրլու խանի մահից հետո Գանձակից վտարված նրա որդուն՝ Շահվերդիին, Թեյմուրազ II-ի և Հերակլ II-ի օգնությամբ հաջողվում է վերականգնել իր իշխանությունը Գանձակի խանությունում: Շահվերդի խանը ստիպված էր մանևրել իր խանության երկու հզոր հարևանների՝ Արևելավրացական թագավորության և Ղարաբաղի խանության միջև: Շահվերդի խանի մահից հետո, խանական աթոռի համար նրա որդիների միջև ծավալված պայքարից օգտվելով, այս հարևանները 1780 թ. Գանձակի խանության նկատմամբ կոնդոմինիմում-համատիրություն[22] են հաստատում:

1786 թ. Հերակլ II-ի և Իբրահիմ խանի գժտությունից օգտվելով՝ Շահվերդի խանի որդիներից Զավադին հաջողվում է վերականգնել խանության նախկին կարգավիճակը և նույնիսկ տիրել Տավուշին: Զավադ խանը այսրկովկասյան իշխողներից առաջիներից էր, որ ճանաչում է Աղա-Մոհամմադ խանի իշխանությունը, ապա, 1795 թ. միանում դեպի Վրաստան վերջինիս արշավանքին: Զավադ խանին հաջողվում է ինչպես զենքով, այնպես էլ ճարպիկ դիվանագիտության միջոցներ գործադրելով խուսանավել Գանձակին տիրելու ձգտող շատ ավելի հզոր հարևանների միջև և շուրջ մեկ տասնամյակ պահպանել իր խանության գոյությունը:

Կովկասում ռուսական կառավարչապետ Պավել Ցիցիանովը, գնահատելով Թիֆլիսից Իրան տանող ճանապարհին գտնվող Գանձակի խանության ռազմավարական նշանակությունը, Զավադ խանից պահանջում է հանձնել քաղաքը: Մերժում ստանալով՝ ռուսները մեկամսյա պաշարումից հետո 1804 թ. հունվարի

[22] Մի քանի պետությունների կողմից նույն տարածքի համատեղ կառավարում:

15-ին գրավում են Գանձակը: Ջավադ խանն ընկնում է մարտում: Մեկ տարի անց ռուսները պաշտոնապես վերացնում են խանությունը, իսկ Գանձակն Ալեքսանդր I-ին կայսեր (1801-1815) կնոջ՝ Ելիզավետայի պատվին վերանվանվում է Ելիզավետպոլ:

Նախիջևանի խանությունն ընդգրկում էր շուրջ չորսուկես հազար կմ^2 տարածք և գտնվում էր Վայքի ու Զանգեզուրի լեռների միջև: Դրա առաջին կառավարիչը քենգերլուների ցեղի առաջնորդն էր, որը Նադիր շահի սպանությունից հետո վտարում է վերջինիս կառավարչին և իրեն խան է հռչակում: Արևելավրացական թագավորությունից Նախիջևանի խանությունը կախման մեջ գցելու Հերակլ II-ի ջանքերն ի դերև հանելու համար Հեյդար-Ղուլին սերտ դաշնակցային հարաբերություններ է հաստատում Ղարադաղի և Ղարաբաղի խանությունների հետ: 1763 թ. Հեյդար-Ղուլի խանի մահից հետո Նախիջևանի խանությունում սկիզբ է առնում պայքարը խանական աթոռի համար, որը կարճ ընդհատումներով շարունակվում է մինչև 1787 թ. Քալբալի՝ Քենգերլուի խան հռչակվելը: Վերջինս, մանևրելով հարևան խանությունների, Արևելավրացական թագավորության, Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև, կարողանում է պահպանել իր իշխանությունը մինչև 1796 թ.:

1795 թ. ռուսների այսրկովկասյան արշավանքի ժամանակ Քալբալի խանը մտնում է Ռուսաստանի հովանավորության տակ: Վ. Զուբովի հրամանատարությամբ գործող ռուսական բանակի հեռանալուց հետո Աղա-Մուհամմադ շահի հրամանով Նախիջևանի խանին կուրացնում են: Ճիշտ է, 1797 թ. Աղա-Մուհամադ շահի սպանությունից հետո Քալբալի խանին հաջողվում է վերադառնալ Նախիջևան, սակայն նա ստիպված է լինում ընդունել Ֆաթալի շահի իշխանությունը:

1813 թ. Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանը ճանաչում է Նախիջևանի խանության պատկանելը Իրանին: Սակայն 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ռուսա-

կան զորքերը գրավում են Նախիջևանի խանությունը: Թուրքմանչայի պայմանագրով Նախիջևանի խանությունը դառնում է Ռուսական կայսրության մաս: Այն վերացվում է Նիկոլայ I կայսեր 1828 թ. մարտի 21-ի հրամանագրով և Երևանի խանության հետ մտնում է Հայկական մարզի կազմ:

Բաքվի խանությունն ընդգրկում էր շուրջ 3,500 կմ^2 տարածք և գտնվում էր Ապշերոնի թերակղզում: Նաղիր շահի մահից հետո Բաքվի տեղական ավատատերերից Միրզա Մուհամմադ աղան Բաքվից վտարում է շահի ներկայացուցչին և իրեն խան հռչակում:

Նրա որդու՝ Մալիք Մուհամմադ Խանի օրոք Բաքվի խանությունը կախյալ է դառնում հարևան Ղուբայի Ֆաթալի խանից: Վերջինիս մահից հետո (1789 թ.) Ղուբայի խանությունը կորցնում է վերահսկողությունը Բաքվի խանության նկատմամբ:

Հուսեյն-Ղուլի կառավարման օրոք Բաքվի խանության դրությունը խիստ բարդանում է՝ պայմանավորված այդ խանությունը իրենց ենթարկելու Ռուսաստանի ու Իրանի քաղաքականությամբ: Եկատերինա II կայսրուհու 1793 թ. ապրիլի 19-ի հրամանագրով Բաքվի խանությունը անցնում է Ռուսաստանի հովանավորության տակ: 1795 թվականին Աղա-Մուհամմադ շահի արշավանքի ժամանակ Այսրկովկասում Բաքվի խանության գրավումը նրա ծրագրերի կարևոր մասն էր կազմում: Հուսեյն-Ղուլի խանը, որ ընդունել էր Ռուսաստանի հովանավորությունը, 1796 թ. Եկատերինա II-ի (1762-1796) մահից և նրան հաջորդած Պավել I-ի (1796-1801) կողմից ռուսական զորքերի հետ կանչելուց հետո փորձում է պահպանել իր իշխանությունը՝ հպատակվելով Աղա-Մուհամմադ շահին, սակայն 1797 թ. Շուշիում վերջինիս սպանությունից հետո վերականգնում է Բաքվի խանության նկատմամբ իր բացարձակ իշխանությունը:

1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Ռուսաստանի առաջ ծառացած հիմնական խնդիրներից մեկը

Բաքվի խանության գրավումն էր: 1805 թ. օգոստոսի վերջին ռուսները գրավում են խանության բոլոր ռազմավարական նշանակություն ունեցող բնակավայրերը: 1806 թ. փետրվարի սկզբին Ցիցիանովի գլխավորած բանակը մոտնում է Բաքվին: Գեներալ Ցիցիանովը Հուսեյն-Ղուլի խանից պահանջում է հպատակվել Ռուսաստանին: Խանը պատասխանում է, որ ընդունում է այդ պահանջը և ցանկություն է հայտնում անձամբ հանձնելու Բաքվի բանալիները Ցիցիանովին: Փետրվարի 8-ին, այս հանդիպման ժամանակ, Ցիցիանովի սպանությունից հետո ռուսական բանակը հեռանում է Բաքվի խանությունից: Նույն՝ 1806 թ. սեպտեմբերին ռուսները պաշարում են Բաքուն: Խանը փախչում է Իրան, իսկ քաղաքը հոկտեմբերի 3-ին գրավում են ռուսները:

Ղուբայի խանությունը, որի հիմնադիրը Հուսեյն-Ալի խանն էր, Այսրկովկասի ազդեցիկ կիսանկախ խանություններից էր: Արևելքում այն սահմանակից էր Կասպից ծովին, հյուսիսում՝ Դերբենտի խանությանը, արևմուտքում՝ Շաքիի, իսկ հարավում՝ Բաքվի և Շիրվանի խանություններին: Ղուբայի խանությունը աշխարհագրական և ռազմավարական շատ շահեկան դիրք ուներ: Այն գտնվում էր լեռնային տարածքում, իսկ մեծաքանակ ամրոցները դյուրացնում էին խանության պաշտպանությունը: Առևտրային ուղիների վրա գտնվելը դրական ազդեցություն ուներ խանության տնտեսական զարգացման վրա: Այս բոլոր գործոնները նպաստում են Ղուբայի խանության կարճատև հզորացմանը:

Հուսեյն-Ալի խանից հետո իշխանության է գալիս նրա որդին՝ Ֆաթալի խանը, որը կառավարման սկզբից իրեն դրսևորում է որպես հմուտ դիվանագետ և տաղանդավոր հրամանատար: Նա որոշում է իրեն ենթարկել փոքր տարածք ու փոքրաքանակ բնակչություն ունեցող, ռազմական տեսանկյունից թույլ հարևան Դերբենտի խանությունը: Դերբենտի խանության նվաճմանը նպաստում է նաև տեղի բնակիչների դժգոհությունը խանից, որը չափազանց մեծ հարկեր էր սահմանել: Հարկային այս ճնշումից ազատ-

վելու համար տեղի բնակչությունը դիմում է Ղուբայի Ֆաթալի խանին՝ նրանից օգնություն խնդրելով: 1759 թ. Դերբենտը միացվում է Ղուբայի խանությանը:

1767 թ. Բաքուն միացվում է Ղուբայի խանությանը: Պաշտոնական փաստաթղթերում Ֆաթալի խանի տիտղոսը հնչում էր որպես «Ղուբայի, Դերբենտի, Բաքվի և Սալյանի տիրակալ»:

Դերբենտն ու Բաքուն միացնելուց հետո Ֆաթալի խանը ծրագրում էր իրեն ենթարկել Շամախին: Քանի որ Շամախին շահեկան աշխարհագրական դիրք ուներ, նա ցանկանում էր իր պետության մայրաքաղաքը տեղափոխել այնտեղ: Այս խանության միացումը Ղուբայի խանությանն ուներ նաև քաղաքական նշանակություն: Շամախու նվաճումը թույլ կտար հետագայում նվաճել Շաքիի և Արևելյան Հայաստանի խանությունները:

Համաձայնության գալով Շաքիի խանության հետ՝ 1767 թ. Շամախու խանությունը բաժանվում է Ղուբայի և Շաքիի խանությունների միջև: Մեկ տարի անց Ֆաթալի խանը Ղուբայի խանությանն է միացնում Շամախու խանության ողջ տարածքը:

1768 թ. Մուղանի դաշտավայրում գտնվող Ջավադի խանությունը կամավոր ընդունում է Ֆաթալի խանի իշխանությունը:

Ղուբայի խանության հզորացումն ու տարածքային ընդլայնումը հանգեցնում են Ֆաթալի խանի դեմ Արևելավրացական թագավորության, Ղարաբաղի ու Շաքիի խանությունների դաշինքին, որին հարում են նաև Դաղստանի զանազան իշխողներ:

1774 թ. դաղստանցիները ջախջախում են Ֆաթալի խանի բանակը, սակայն Դերբենտի հնամսյա պաշարումը հաջողություն չի բերում լեռնականներին:

Ֆաթալի խանի խնդրանքով ռուսական բանակը ջախջախում է դաղստանցիներին և գրավում Դերբենտը, բայց Օսմանյան կայսրության բողոքի նոտան ստիպում է ռուսներին հեռանալ Դերբենտից:

1789 թ. Ֆաթալի խանի մահից հետո Ղուբայի խանությունը թուլանում է: Նրա օրոք նվաճված խանությունները վերականգնում են իրենց անկախությունը, իսկ 1806 թ. այն մտնում է Ռուսական կայսրության կազմի մեջ:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս է ստուգաբանվում *Աղբրեջան* տեղանունը:
2. Ե՞րբ են Այսրկովկասում և Իրանում երևան գալիս խանությունները:
3. Ինչի՞ շնորհիվ է վրաց Հերակլ II արքան կարողանում կայուն վերահսկողություն հաստատել Երևանի խանությունում:
4. Ի՞նչն է վերջ տալիս Երևանի խանության կիսանկախ կարգավիճակին:
5. Ո՞ւմ օժանդակությամբ է Փանահ խանը հաստատվում Շուշիի բերդում:
6. Ի՞նչ պատճառով է սպանվում Ղարաբաղի Իբրահիմ խանը:
7. 1780-1786 թթ. ի՞նչ կառավարում ուներ Գանձակի խանությունը:
8. Ի՞նչ նպատակ էր հետապնդում Ղարադաղի և Ղարաբաղի խաների հետ Նախիջևանի Հեյդար-Ղուլի խանի դաշինքը:
9. Ինչո՞ւ 1806 թ. փետրվարին ռուսներին չի հաջողվում գրավել Բաքուն:
10. Ո՞ր գործոններն են նպաստել Ֆաթալի խանի օրոք Ղուբայի խանության հզորացմանը:

ԳԼՈՒԽ V
ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

ԹԵՄԱ I
Վրաստանը XVIII դ.

1453 թ. Կ. Պոլսի անկումով փակվեց այն ճանապարհը, որը Վրաստանը կապում էր Արևմուտքի հետ: Արդյունքում վրացական թագավորությունը տնտեսական և քաղաքական անկում է ապրում և մեկ տասնամյակ անց բաժանվում է երեք թագավորությունների (Քարթլի, Կախեթի և Իմերեթի) և հինգ իշխանությունների (Գուրիա, Սվանեթի, Մեսխեթի, Աբխազիա և Սամեգրելո):

Հարևան Օսմանյան կայսրությունն ու Սեֆյան Իրանն օգտվում են երկրի ներքին պառակտումներից և XVII դ. նվաճում Վրաստանի արևմտյան և արևելյան մասերը:

Այս երկու տերություններում XVII դ. վերջում և XVIII դ. սկզբում խորացած սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական ճգնաժամը Վրաստանում ազատագրական պայքարի նոր ալիքի սկիզբ է դնում: Պայքարի նշանավոր ներկայացուցիչներից մեկը Վախթանգ VI-ն էր: Նա, որպես Քարթլիի խնամակալ (*ջանիշին*), 1703-1712 թթ. կառավարել է աֆղանների դեմ կռվող պարսկական բանակների հրամանատարների՝ իր հորեղբայր Գեորգի XI-ի և եղբայր Քայխոսրոյի փոխարեն: Այս տարիներին, փորձելով ամրապնդել կենտրոնական թագավորական իշխանությունը, նա իրականացնում է խիստ անհրաժեշտ մի շարք բարեփոխումներ՝ աշխուժացնելով տնտեսությունն ու մշակույթը, վերակազմավորելով Քարթլիի կառավարման համակարգը: 1707–1709 թթ. Վախթանգ VI-ի հրամանով կազմվում է նոր օրենսգիրք (*դասպուրլամալի*): Այն անվանվել է նաև «Վախթանգի օրենսգիրք» և գործածվել մինչև Ռուսաստանի կողմից Արևելյան Վրաստանի անեքսիան: 1712 թ. Քարթլիի վալի-արքա կարգվելու համար Սուլթան-

Հուսեյն շահի հրամանով Սպահան մեկնած Վախթանգը հրաժարվում է իսլամ ընդունելուց և բանտարկվում է: Քարթլիի վալի է դառնում շահին անվերապահորեն հնազանդություն հայտնած Վախթանգի եղբայրը՝ Ալի-Ղուլի խանը, որը 1714 թվականից երկու տարի կառավարում է: Այս ընթացքում Քարթլին հայտնվում է միջավատատիրական կռիվների կիզակետում, ինչն էլ երկիրը դաղստանցի լեռնականների արշավանքների առջև անպաշտպան է դարձնում:

Գերությունից ազատվելու և Քարթլիում վերստին իշխանության գալու համար օժանդակություն ստանալու նպատակով Վախթանգ VI-ն իր դաստիարակ Սուլխան-Սաբա Օրբելիանիին ուղարկում է Եվրոպա: Սակայն այս ջանքերն ապարդյուն էին, և Վախթանգը 1716 թ. Հուսեյն-Ղուլի խան անունով առերես իսլամ է ընդունում: Մինչ Վրաստան վերադառնալը 1719 թ. Վախթանգի փոխարեն Քարթլիի կառավարիչը որդին էր՝ Բաքարը:

Քայքայման խորխորատում հայտնված Իրանի տարածքների նկատմամբ հավակնություններ ներկայացնող Օսմանյան կայսրությունն ու Ռուսաստանը իրենց օժանդակելու համար դիմում են Վախթանգ VI-ին: Պարսկական լծից վերջնական ազատագրման համար կովկասյան քրիստոնյաներին ռազմական աջակցություն ցուցաբերելու Պետրոս I-ի (1682-1725) խոստումները մեծ ոգևորություն են առաջացնում վրացիների և հայերի շրջանում: Սակայն Վախթանգ VI-ին բանակով Շամախի ներկայանալու հրահանգ տվող Պետրոս I-ին կայսրը, տեղի տալով թուրքերի սպառնալիքներին, դադարեցնում է իր նախաձեռնած Պարսկական արշավանքը և 1724 թ. Կ. Պոլսի պայմանագրով ճանաչում Օսմանյան կայսրության հավակնությունները Արևելյան Վրաստանի և Արևելյան Հայաստանի նկատմամբ: Օսմանյան Թուրքիայի, Իրանի և Այսրկովկասի մուսուլմանների կողմից ռուսական շահերի սպասարկու ճանաչված Վախթանգ VI-ն Այսրկովկաս օսմանյան բանակի ներխուժման պայմաններում ստիպ-

ված է լինում մերձավոր աջակիցների ուղեկցությամբ հեռանալ Ռուսաստան, որտեղ էլ 1736 թ. կնքում է իր մահկանացուն:

1735 թ. Նադիր-Շահի զորքերը օսմանցիներին վտարում են Արևելյան Վրաստանից: Նադիրն իսլամ ընդունելու պայմանով առաջարկում է Կախեթի կառավարիչ հաստատել Հերակլ I-ի (1688-1709) որդուն՝ Թեյմուրազին, սակայն վերջինս մերժում է կրոնափոխ լինելու առաջարկը և ձերբակալվում: Նադիր-Շահի վարած դաժան հարկային քաղաքականությունը Արևելյան Վրաստանում հզոր ապստամբության պատճառ է դառնում, ինչը ստիպում է նրան ազատ արձակել Թեյմուրազին: 1742 թ. ապստամբությունը ճնշելու համար շահը վերացնում է Կախեթին պարտադրված ծանր հարկը, ապա օգնում Թեյմուրազին հպատակեցնելու Արագվիի և Քսանիի իշխանությունները: 1744 թ. Նադիր-Շահը Թեյմուրազին հաստատում է Քարթլիի, իսկ նրա որդի Հերակլին՝ Կախեթի վալի (մեծ տարածքի կառավարիչ): Սրանով դրվում է վրացական այս թագավորությունների վերջնական վերամիավորման հիմքը:

Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ 1745 թ. հոկտեմբերի 1-ին Թեյմուրազ II-ն (1744-1762) ու Հերակլ II (Կախեթի թագավոր 1744-1762; միավորված Քարթլի-Կախեթի թագավոր 1762-1798) 1632 թվականից ի վեր առաջին անգամ թագադրվում են քրիստոնեական ծեսով Մցխեթի Սվետիցխովելի տաճարում:

Թեյմուրազ II-ն ու Հերակլ II-ն օգտվում են 1747 թ. Նադիր-Շահի սպանությունից հետո Իրանում ստեղծված քաղաքական անկայունությունից: Արևելյան Վրաստանի բոլոր ռազմավարական նշանակություն ունեցող կենտրոններից վտարելով պարսկական կայազորները՝ նրանք սկսում են վարել Իրանից անկախ քաղաքականություն: Փոխհամաձայնեցված գործելու շնորհիվ 1749-1750 թթ. նրանք կասեցնում են Այսրկովկասում տիրապետություն հաստատելու իրանական գահի հավակնորդների մի քանի փորձերը և իրենց գերակայությունն են պարտադրում Երևանի, Գանձակի և Նախիջևանի խաներին:

Այսրկովկաս պարսկական հնարավոր ներխուժումը կանխելու նպատակով Թեյմուրազ II-ը 1760 թ. մեկնում է Ռուսաստան: Սակայն այս առաքելությունը արդյունք չի տալիս, իսկ Թեյմուրազը երկու տարի անց մահանում է Սանկտ-Պետերբուրգում: Քարթլիի գահին հորը հաջորդած Հերակլը երեք դար ընդմիջումից հետո վերամիավորում է Արևելյան Վրաստանը: Հերակլ II-ը շարունակում է Վրաստան թուրք-պարսկական հնարավոր ներխուժման վտանգը Ռուսաստանի օժանդակությամբ կանխելու ավանդական քաղաքականությունը: 1768 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմի պայմաններում ռուսները 1769 թ. գեներալ Տոտլեբենի գլխավորությամբ հազար երկու հարյուրհոգիանոց զորաջոկատ են ուղարկում Վրաստան: Վրացիներին «անկիրթ արևելցիներ» անվանող Տոտլեբենը, արշավելով Ախալցխայի փաշայություն, ընդհարվում է Հերակլ II-ի հետ և վերադառնում Թիֆլիս՝ փորձելով Հերակլից դժգոհ վրաց ազնվականների միջոցով հեղաշրջում կատարել: Սակայն Ասպինձայի ճակատամարտում վրացիների հաղթանակը ի դերև է հանում իշխանությունը զավթելու այդ ծրագիրը: Իմերեթ հեռացած Տոտլեբենն ընդհարվում է նաև Իմերեթի Սողոմոն I (1752-1785) թագավորի հետ, ինչից հետո Այսրկովկասը պատերազմի երկրորդական թատերաբեմ համարող Եկատերինա II կայսրուհին ռուսական ուժերը 1772 թ. հետ է կանչում Ռուսաստան:

Այնուամենայնիվ, Հերակլ II-ը շարունակում էր ձգտել Ռուսաստանի հետ ավելի ամուր դաշինք հաստատելու, ինչի նպատակը Իրանի տարածքի մեծ մասին տիրացած Քերիմ խան Զենդի՝ Արևելյան Վրաստանում պարսկական գերիշխանության վերահաստատման ձգտումը խափանելն էր:

1783 թ. Ղրիմի միացումից հետո Այսրկովկասի նկատմամբ Ռուսաստանի հետաքրքրությունը կտրուկ մեծանում է: 1783 թ. Գեորգիևսկի պայմանագրով հրաժարվելով ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելուց՝ Հերակլ II-ը ճանաչում է

Արևելյան Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի պրոտեկտորատը, ինչի դիմաց ռուսները պարտավորվում են հարգել Արևելյան Վրաստանի ներքին ինքնուրույնությունը և այն պաշտպանել հնարավոր ներխուժումներից: Սակայն 1787–1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Թիֆլիսում տեղակայված ռուսական փոքրաթիվ ուժերը տարհանվում են Վրաստանից՝ թողնելով Հերակլ II-ին միայնակ Իրանից եկող նոր վտանգի առջև: 1790 թ. կնքված Իբերական պայմանագիրը, որով Իմերեթի թագավորը և Մեգրելիայի ու Գուրիայի իշխանները ճանաչում էին Քարթլի-Կախեթիի թագավոր Հերակլ II-ի առաջնորդությունը, ի զորու չի լինում հակազդելու Իրանում իշխանությունը զավթած Աղա-Մոհամմադ խանի սպառնալիքներին: Երբ Հերակլ II-ը մերժում է Աղա-Մոհամմադ խանին հնազանդվելու պահանջը, 1795 թ. սեպտեմբերին իրանական 35 հազարանոց բանակը ներխուժում է Վրաստան: Կրծանիսիի ճակատամարտում Հերակլի հինգհազարանոց փոքրաթիվ բանակը գրեթե ամբողջությամբ ոչնչացվում է, իսկ Թիֆլիսն ավերվում և թալանվում է: Քաղաքում մնացած բնակչության մի մասը կոտորվում է, մյուս մասը՝ գերեվարվում:

Չնայած Ռուսաստանը չի կատարում Գեորգիևսկի պայմանագրի պայմանները, այդուհանդերձ, վրացական վերնախավի ներկայացուցիչները հասկանում են, որ ուրիշ ոչ մի ուժի չեն կարող ապավինել: 1798 թ. հունվարին Հերակլ II-ի մահից հետո նրա զավակների միջև սուր պայքար է սկսվում Քարթլի-Կախեթիի գահի համար, և մրցակիցներից Գեորգի XII-ը (1798-1801) դիմում է Պավել I կայսերը՝ խնդրելով հօգուտ իրեն միջամտել՝ դրա դիմաց պատրաստակամություն ստանձնելով ճանաչել Ռուսաստանի լիակատար վերահսկողությունը Արևելյան Վրաստանի նկատմամբ: 1800 թ. Դեկտեմբերին՝ Գեորգի XII-ի մահից հետո, Պավել I-ը 1801 թ. հունվարի 8-ին ստորագրում է Արևելյան Վրաստանը Ռուսական կայսրության կազմի մեջ ներառելու մասին հրովարտակը, ինչը 1801 թ. սեպտեմբերի 12-ին հաստատում է Ալեք-

սանդր I (1801-1825) կայսրը: Նույն թվականի մայիսին գեներալ Կնորինգը իշխանական լիազորություններից զրկում է գահաժառանգ Դավիթ Բատոնիշվիլիին և կազմավորում կառավարություն՝ Լազարևի գլխավորությամբ:

Վրաց ազնվականության մի մասի դիմադրությունը խանձարուրում խեղդվում է, երբ 1802 թ. ապրիլին գեներալ Կնորինգի հրամանով ռուսական զինվորները Թիֆլիսի Սիոն տաճարում շրջապատում են հակընդդեմ դիրքորոշում ունեցողներին և ստիպում նրանց հավատարմության երդում տալ Ռուսաստանին:

Արևմտավրացական Իմերեթի թագավորությունը, որն Ամասիայի պայմանագրով անցել էր Օսմանյան կայսրությանը, միջավատատիրական անընդմեջ պատերազմների թատերաբեմի էր վերածվել և XVII դ. վերջում մասնատվել Իմերեթի թագավորից անվանական կախում ունեցող հարյուրից ավելի իշխանությունների: Ինչպես Քարթլիում և Կախեթում, Իմերեթում ևս Օսմանյան կայսրության թուլացումը թագավորական իշխանության ամրապնդման հնարավորություն է ընձեռում, ինչից օգտվում է Սողոմոն I-ը (1752 -1766; 1768-1784): Երիտասարդ թագավորի առաջին քայլերից մեկը իմերեթցի ավատատերերի շահույթի հիմնական աղբյուր դարձած մարդկանց վաճառքի արգելքն է լինում, որը հանգեցնում է թագավորի դեմ ապստամբության: Ի դեպ, դրան միացել էին Սողոմոնի մայրը, պապը և Իմերեթի կաթողիկոսը: Ապստամբությունը ճնշելուց հետո Սողոմոն I-ը սկսում է կենտրոնացման քաղաքականություն վարել՝ հենվելով մանր ավատատերերի և ազատ գյուղացիների վրա:

Խոշոր ավատատերերի զավթած եկեղեցապատկան հողերը վերադարձնելով և հոգևորականությանը հարկերից ազատելով՝ թագավորը, ի դեմս եկեղեցու, ձեռք է բերում հզոր և ազդեցիկ դաշնակից:

Թագավորի այս քաղաքականությունը տալիս է իր պտուղները: Սողոմոնի բանակը, որը համալրվել էր Իմերեթի ազգաբնակ-

չության տարբեր խավերի ներկայացուցիչներով, 1757 թ. դեկտեմբերին Խրեսիլիի ճակատամարտում պարտության է մատնում Արևմտյան Վրաստանի խոշոր ավատատերերի և օսմանցի թուրքերի միացյալ բանակը: 1758-1768 թթ. օսմանա-իմերեթական բախումներն ավարտվում են օսմանցիների պարտությամբ, ինչը ստիպում է սուլթանին ճանաչել Իմերեթի ինքնավար կարգավիճակը: 1774 թ. Քյուչուկ-Կայնարջիի ռուս-թուրքական հաշտության պայմանագրով Իմերեթը թեպետ ճանաչվում է Օսմանյան կայսրությունից կախյալ պետություն, սակայն օսմանցիները զրկվում են Իմերեթից հարկ ստանալու իրավունքից:

1784 թ. անզավակ Սողոմոն I-ի մահից հետո Իմերեթում բախումներ են սկսվում գահի երկու հավակնորդներին սատարող ուժերի միջև, ինչը վատթարացրնում է Իմերեթի թագավորության ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը: Դրանից օգտվում է Այսրկովկասը նվաճելու քաղաքականություն վարող Ռուսաստանը: Իրադրությունը դառնում է օրհասական Ռուսաստանի կողմից Արևելյան Վրաստանի անեքսիայից հետո: Օգտվելով այն հանգամանքից, որ Բալկաններում նապոլեոնյան Ֆրանսիայի ներխուժման սպառնալիքը Օսմանյան կայսրությանը ստիպում էր Ռուսաստանի հանդեպ վարել զգուշավոր քաղաքականություն, ինչի հետևանքով Բարձր դուռը հրաժարվել էր օժանդակել Իմերեթին, Ռուսական արքունիքը որոշում է իր ազդեցությունը մեծացնել Արևմտյան Վրաստանում: Կովկասում Ռուսաստանի կառավարչապետ Պավել Ցիցիանովի ճնշման տակ Իմերեթի վերջին թագավոր Սողոմոն II-ը (1789-1810) 1804 թ. ապրիլի 25-ին ճանաչում է Ռուսաստանի հովանավորությունը: 1810 թ. մարտի 4-ին Սողոմոն II-ը հեռացվում է իշխանությունից: 1811 թ. Իմերեթի թագավորությունը վերացվում է: Նրա տարածքը ներառվում է Ռուսական կայսրության Իմերեթի մարզի մեջ:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն էր XV դ. Վրաստանի անկման պատճառը:
2. Ինչո՞ւ է ձերբակալվում 1712 թ. թագադրվելու նպատակով Սպահան մեկնած Վախթանգ VI-ը:
3. Ո՞րն էր Սուլխան-Սաբա Օրբելիանիի Եվրոպա մեկնելու պատճառը:
4. Ինչո՞ւ է Վախթանգ VI-ը լքում Վրաստանը և ընդմիշտ հեռանում Ռուսաստան:
5. Ի՞նչն է նպաստում 1747 թ. Թեյմուրազ II և Հերակլ II թագավորների՝ Իրանից անկախ քաղաքականություն վարելուն:
6. Ի՞նչն է ի չիք է դարձնում ռուսական գեներալ Տոտլեբենի՝ Հերակլ II-ին գահազրկելու ծրագիրը:
7. Ի՞նչ էր նախատեսվում 1783 թ. Գեորգիևսկի պայմանագրով:
8. Ո՞րն էր Իմերեթում Սողոմոն I-ի կառավարման սկզբում ապստամբության պատճառը:
9. Իմերեթի վերաբերյալ ի՞նչ էր նախատեսում Քյուչուկ-Կայնարջիի պայմանագիրը:

ԹԵՄԱ II
Վրաստանը XIX դ.

Ռուսական, ցարական իշխանությունները գիտակցում էին, որ վրաց ժողովուրդը, որը նույնիսկ թուրք-իրանական դաժան տիրապետության ժամանակ թեպետ աղճատված ու մասնատված էր, սակայն պահպանել էր իր պետականությունը, չէր համակերպվելու դրա կորստի հետ: Որպեսզի բացառվեր վրացիների դիմադրությունը, Քարթլի-Կախեթի և Իմերեթի թագավորական դինաստիաների ներկայացուցիչների մեծ մասն աքսորվում է Ռուսաստան: Վրաստանում 1802 թ. մայիսից ռուսական ուղղակի կառավարում է մտցվում, ձևավորվում է Վրաստանի կառավարչապետությունը: Այն ղեկավարում էր գլխավոր կառավարչապետը, որը միաժամանակ օժտված էր և՛ ռազմական, և՛ քաղաքացիական իշխանության լիազորություններով: Վրաստանի կառավարչությունը բաղկացած էր չորս բաժանմունքներից կամ էքսպեդիցիաներից:

Արևելյան Վրաստանը և Իմերեթը բաժանվում են չորսական գավառների, որոնք գլխավորում էին կապիտան-իսպրավնիները: 1811 թ. վերացվում է Մցխեթի, իսկ 1814 թ.՝ Իմերեթի կաթողիկոսությունը: Մցխեթի կաթողիկոս Անտոն II-ն աքսորվում է Ռուսաստան, իսկ Իմերեթի կաթողիկոս Դոսիթեոս Քութաթելիին ռուսները 1820 թ. ծեծելով սպանում են: Վրաց հոգևոր հոտը հովվելու էր Ռուսական եկեղեցու կառավարող սինոդի կողմից նշանակված *էկզարքը*: Բացառությամբ առաջին էկզարքի, որն ազգությամբ վրացի էր, մինչև 1917 թ. Վրացական եկեղեցու *ավտոկեֆալիայի* (հուն.՝ ինքնուրույնություն) վերականգնումը էկզարքները ռուս էին:

Թագավորության ու եկեղեցու չեզոքացումից հետո ցարական իշխանության գաղութային քաղաքականության դեմ Վրաստանում ծավալվում է տարերային դիմադրություն, որի առաջին

դրսևորումը 1802 թ. Կախեթի ազնվականների հակառուսական ընդվզումն էր: 1804 թ. ապստամբում են Արագվիի կիրճի գյուղացիները, որոնք ռազմական նշանակություն ունեցող ճանապարհի շինարարության ժամանակ ենթարկվում էին դաժան շահագործման: Ապստամբությունը ճնշվում է կառավարչապետ Պավել Ցիցիանովի գլխավորած զորաջոկատի կողմից:

1812 թ. Կախեթում սկսված նոր ապստամբության պատճառը չափազանց ցածր գներով հացամթերումն էր: Ապստամբությունը սկսվում է Ախմետա գյուղից և տարածվում Կախեթում ու հարևան Անանուրում: Ապստամբներին հաջողվում է գրավել Թելավը, Սղնաղը, Դուշեթը և փակել Ռազմավիրական ճանապարհը: 1813 թվականի ամռանը ապստամբությունը ճնշվում է:

Իմերեթում 1819-1820 թթ. ապստամբությունը, որի պատճառը Իմերեթի կաթողիկոսության վերացումն էր, նույնպես դաժանորեն ճնշվում է:

1841 թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին Գուրիայում տեղի է ունենում ապստամբություն, որին մասնակցում են տարբեր խավերի ներկայացուցիչներ: Ապստամբության ճնշումից հետո նրա ղեկավար Աբեսա Բելքվաձեն առանց դատ ու դատաստանի գնդակահարվում է: Ցարական դատարանի որոշմամբ ապստամբության 50 ակտիվ մասնակիցների մի մասն աքսորվում է, մի մասի նկատմամբ էլ մահապատժի որոշում է կայացվում: Սակայն հնարավոր հուզումները կանխելու նպատակով Նիկոլայ I (1825-1855) կայսրը մահապատիժը փոխում է տաժանակրության:

Ցարիզմի գաղութային քաղաքականության դրսևորումներից մեկն էլ ռուսական իշխանությունների հանդեպ լոյալ ազգերի ներկայացուցիչների բնակեցումն էր Վրաստանում: 1804 թ. Երևանի խանությունից Վրաստան է տեղափոխվել և հիմնականում Թիֆլիսում բնակեցվել է 11 հազար հայ: 1818 թ. Վրաստանում բնակեցվում է 500 գերմանական ընտանիք: Բնակավայրեր են ստեղծվում ռուս պաշտոնաթող զինվորականների համար, և նրանց են

տրամադրվում բարձր բերքատվությամբ հողեր: Միաժամանակ տեղի է ունենում ռուս աղանդավորների բնակեցում Վրաստանի տարածքում:

Վրաստանում ծավալված հակացարական պայքարի նոր փուլ էր 1832 թ. դավադրությունը: Այն ծրագրել էին մի խումբ երիտասարդ ազնվականներ, որոնք ոգեշնչվել էին 1825 թ. դեկաբրիստների և 1830 թ. լեհական ապստամբություններից: Դավադիրների նպատակը Վրաստանում ցարական իշխանության տապալումն էր: Ծրագիրը նախատեսում էր Վրաստանում ցարական բարձրաստիճան պաշտոնյաների ֆիզիկական վերացում, անկախության հռչակում և Բագրատիոնների դինաստիայի վերականգնում: Դավադրությունը բացահայտվում է 1832 թ. դեկտեմբերի 10-ին դրա բոլոր մասնակիցները ձերբակալվում են և աքսորվում Ռուսաստանի հեռավոր շրջաններ:

Ստեղծված պայթունավտանգ իրավիճակը ստիպում է ցարիզմին հրաժարվել ուղղակի բռնարարքներից և կիրառել «փափուկ ուժի քաղաքականություն»: 1844 թ. վերացված Կովկասի կառավարչապետության փոխարեն ձևավորվում է Կովկասի փոխարքայություն: Առաջին փոխարքայի՝ իշխան Մ. Վորոնցովի լիազորությունները, ի տարբերություն ռուսական ներքին նահանգների կառավարիչների, շատ ավելի մեծ էին: Վորոնցովը հաշվետու էր անմիջապես կայսրին: Եթե ռուսական տիրապետության սկզբում վրաց ազնվականները պետք է դատարանում բազմաթիվ քաշքշուկներ հաղթահարելով ապացուցեին իրենց ազնվական ծագումը, ապա Վորոնցովի պաշտոնավարությունից հետո ազնվական ճանաչելու գործընթացը հեշտացվում և արագացվում է: Վրացի ազնվականներին արտոնվում է ռուս ազնվականության օրինակով կազմել ազնվականների ժողովներ՝ սաքրեբուլոներ: Վորոնցովի՝ նման գործելակերպի շնորհիվ վրաց ազնվականության որոշ շրջաններում ռուսամետ հայացքներ են ձևավորվում:

1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտին ռուսները վերացնում են Գուրիայի իշխանությունը: Սամեգրելոյում 1856-1857 թթ. տեղի է ունենում գյուղացիական ապստամբություն: Դրանից հետո վրացի ազնվականների շրջանում ձևավորվում է այն համոզմունքը, որ սեփական ուժերով անհնարին է զսպել ճորտ գյուղացիներին: Դա օգտագործում է ցարիզմը և 1857 թ. վերացնում Սամեգրելոյի, 1858 թ.՝ Սվանեթի, իսկ 1862 թ.՝ Աբխազիայի իշխանությունները:

Վրաստանում XIX դ. կեսերին ռոմանտիկ հայրենասիրությունը տեղը զիջում է ընդգծված քաղաքական երանգավորում ունեցող ազգայնական շարժմանը: Այդ շարժման հիմնադիրները Սանկտ-Պետերբուրգի համալսարանում կրթություն ստացած վրացի ուսանողների երիտասարդ սերնդի ներկայացուցիչներն էին, որոնք ստացել էին «Առաջին սերունդ» (վրաց.՝ «*Պիրվելի դասի*») անվանումը: Նրանք հայտնի են նաև «Վաքսունականներ» կամ «Թերեքից ջուր խմածներ» անունով: Ազգայնական շարժման ամենակարկառուն դեմքը գրող Իլյա Ճավճավաձեն էր, որը մինչև իր մահը (1907 թ.) ամենաազդեցիկ վրացի ազգայնականն էր: Վերջինս հակահայկական համոզմունքներ կրող էր, ինչի մասին է վկայում 1902 թ. հրատարակված՝ «Հայ գիտնականները և աղաղակող քարերը» հոդվածը: Նրա խմբագրած «Իվերիա» թերթում տպագրվում էին ընդգծված հակահայկական դիրքորոշում ունեցող ռուս սևհարյուրակային Վելիչկոյի հոդվածները:

Ճավճավաձեն ձգտում էր բարելավել վրացիների դիրքերը ցարիզմի ստեղծած մի համակարգում, որի նպատակն ավանդական վրացական միջավայրի ռուսականացումն էր, ռուսական կենցաղի և բարքերի պարտադրումը վրացիներին: Դրան հակադարձելու համար «Վաքսունականների» շարժման ներկայացուցիչները ուշադրությունը կենտրոնացնում են մշակութային խնդիրների, հատկապես լեզվական բարեփոխումների և բանահյուսության ուսումնասիրության վրա:

Ճավճավաձեն, ժամանակի հետ ավելի պահպանողական դառնալով, ջանում էր վրաց հասարակության մեջ ապահովել ազնվականության առաջնայնությունը, դեմ էր Վրաստանում կապիտալիստական կացութաձևի արմատավորմանը: Այդ հողի վրա XIX դ. 70-ական թթ. Ճավճավաձեի և նրա համախոհներ Գիորգի Ծերեթելիի ու Նիկո Նիկոլաձեի միջև առաջ են գալիս տարաձայնություններ, որոնք հանգեցնում են «Վաթսունականների» շարժման պառակտմանը: Այս վերջինների և Սերգեյ Մեսխիի գլխավորած վրացի ազգայնականների, այսպես կոչված, «Երկրորդ սերունդը» («*Մեորի դասի*») ավելի քիչ պահպանողական էր, քան Ճավճավաձեն: Այն կողմ էր Վրաստանի ինտեգրմանը համաշխարհային կապիտալիստական տնտեսական հարաբերություններին և փորձում էր տնտեսապես գերիշխող հայ կապիտալիստների դեմ պայքարում աջակցել խանձարուրում գտնվող վրացական կապիտալի մրցունակության աճին: 1883 թ.՝ Սերգեյ Մեսխիի մահից հետո, Գիորգի Ծերեթելիի և Նիկո Նիկոլաձեի միջև ի հայտ եկած տարաձայնությունների պատճառով այս շարժումը դադարում է գոյություն ունենալուց:

XIX դ. 70-ականներին պահպանողական և ազատական շարժումների կողքին Վրաստանում հայտնվում է երրորդ՝ ավելի արմատական քաղաքական ուժը, որի անդամները կենտրոնացած էին սոցիալական խնդիրների վրա և հակված էին մաս կազմել Ռուսաստանի հզոր սոցիալիստական շարժմանը: Այս շարժումը, որ հայտնի է «Երրորդ սերունդ» («*Մեսամի դասի*») անունով, մեծ թափ է հավաքում նույն դարի 90-ական թթ. Վրաստանի արդյունաբերականացման տեմպերի աճի պայմաններում: Շարժման նպատակը Վրաստանի նորաստեղծ բանվոր դասակարգին առաջնորդելն էր: Նոյ Ջորդանիայի և Ֆիլիպ Մախարաձեի առաջնորդած վրացի մտավորականների «Երրորդ սերնդի» այն ներկայացուցիչները, որոնք ավելի հաճախ իրենց սոցիալ-դեմոկրատ էին անվանում և գաղափարական հենք էին ընտրել մարքսիզմը, 1905 թ. դարձան վրացական իրականության մեջ

առաջատար քաղաքական ուժը: Նրանք կարծում էին, որ ցարական ինքնակալությունը պետք է տապալվի և փոխարինվի ժողովրդավարությամբ, որն ի վերջո կհանգեցնի սոցիալիստական հասարակության ձևավորմանը:

1881 թ. մարտի 1-ին Սանկտ Պետերբուրգում ռուս նարոդնիկների կողմից սպանվում է Ալեքսանդր II (1855-1881) կայսրը: Նրան հաջորդած Ալեքսանդր III-ը (1881-1894), շատ ավելի մեծիշխանական համոզմունքներ ունենալով, ընդգծված բացասական վերաբերմունք է ցուցաբերում իր ոչ ռուս հպատակների ազգային ինքնագիտակցության ցանկացած դրսևորման նկատմամբ: Փորձելով ավելի խիստ վերահսկողություն հաստատել կայսրության ազգային փոքրամասնություններով բնակեցված ծայրամասերի նկատմամբ՝ Ալեքսանդր III-ը 1883 թ. վերացնում է Կովկասի փոխարքայությունը՝ Այսրկովկասի կարգավիճակը իջեցնելով Ռուսաստանի ցանկացած այլ նահանգի կարգավիճակի: Վրացերենի ուսումնասիրությունը չէր խրախուսվում, իսկ «Վրաստան» տեղանունն արգելվում է տպագրել թերթերում: Ընդգծված հակավրացական դիրքորոշում ունեին Կովկասի կառավարչապետ Ա. Դոնդուկով-Կորսակովը, Վրաստանի էկզարք Պավելը, Վրաստանում հասարակական կրթության պետ Յանովսկին, Թիֆլիսի հոգևոր սեմինարիայի ռեկտոր Չուդեցկին: Վերջինս, որ վրացերենն անվանում էր շնային լեզու, 1886 թ. սպանվում է վրացի սեմինարիստի կողմից: Չուդեցկու հոգեհանգստի ժամանակ էկզարք Պավելը նզովում է մարդասպանին և այն ծնող հասարակությանը: Այդ ելույթն արժանանում է վրաց հասարակության բուռն զայրույթին և հասարակական հայտնի գործիչ Դիմիտրի Ղիփիանիի սուր քննադատությանը, ինչի համար նրան աքսորում են Ստավրոպոլ և սպանում չպարզված հանգամանքներում: Վրացիներից շատերը, որ կարծում էին, թե Ղիփիանիի մահը ցարական գործակալների ձեռքի գործն է, նրա հուղարկավորության ժամանակ հակառուսական հսկայական ցույց են կազմակերպում:

ՀԱՐՑԵՐ

1. Ռուսական ցարիզմի կողմից ինչպիսի՞ կառավարման համակարգ է մտցվում վերացված վրացական թագավորությունների տարածքում:

2. Ո՞րն էր 1832 թ. դավադրության նպատակը:

3. Ո՞րն էր Կովկասի փոխարքա Վորոնցովի «փափուկ ուժի» քաղաքականության հաջողության պատճառը:

4. Ինչո՞ւ են Սամեգրելոյի, Սվանեթի և Աբխազիայի ազնվականները համակերպվում իրենց իշխանությունների վերացման հետ:

5. Ինչպիսի՞ գնահատական կարելի է տալ Իլյա Ճավճավաձեի քաղաքական հայացքներին:

6. Ո՞րն էր «Վաքսունականների» շարժման պառակտման պատճառը:

7. Ի՞նչ քաղաքական հայացքներ ունեին «Երրորդ սերնդի» շարժման անդամները:

ԹԵՄԱ III
Իրանը Ղաջարների օրոք (1795-1925)

Իր բազմադարյան պատմության ընթացքում Իրանը բազմիցս նվաճվել է զավթիչների կողմից, սակայն ամեն անգամ ձուլել է նրանց՝ ներառելով իր քաղաքական, տնտեսական և մշակութային ուղեծրում: Զավթիչների վերջին ալիքը ներկայացնող աֆղանները 1722 թ. գրավում են Սպահանը և գերեվարում Սուլթան-Հուսեյն շահին: Այս իրադարձությունից հետո, մինչև XVIII դ. վերջին Ղաջարների իշխանության գալը Իրանը վերածվում է գահակալական պայքարի թատերաբեմի:

Ղաջարների դինաստիան սերում էր XI դ. Միջին Ասիայից Իրան ներթափանցած օղուզ թյուրքական համանուն ցեղից: Առաջին Սեֆյանների օրոք ղաջարները բնակվում էին Իրանական Ադրբեջանում և Այսրկովկասում:

Ղաջարների առաջնորդ Աղա-Մուհամմադ խանին հաջողվում է հաղթանակ տանել 1747 թ. Նադիր շահի մահից հետո սկսված գահակալական պայքարի նոր փուլում: 1779 թ. Քերիմ-խան Զենդի մահից հետո Աղա-Մուհամմադ խանը, տասնամյա քաղաքացիական պատերազմում հենակետ դարձնելով իր կողմից մայրաքաղաք հռչակված Թեհրանն ու Մազանդարանի և Գիլանի նահանգները, սկզբում վերահսկողություն է հաստատում Իրանի հյուսիսային նահանգների նկատմամբ, ապա, ոչնչացնելով Զենդերի տոհմի ներկայացուցիչներին, նվաճում է կենտրոնական Իրանը, իսկ Նադիր շահի թոռ Շահռուհին սպանելով, իրեն է ենթարկում Իրանի հյուսիսարևելյան Խորասանի նահանգը: Միայն 1795 թ. Այսրկովկաս ներխուժումից և Թիֆլիսն ավերելուց հետո Աղա-Մուհամմադն ընդունում է շահի տիտղոսը: Նորընծա շահին չի հաջողվում լիակատար վերահսկողություն հաստատել Այսրկովկասի նկատմամբ, այդ իսկ պատճառով կարճ ժամանակ անց՝ 1797 թ., նա ստիպված է լինում կրկնել դեպի Այսրկովկաս իր

արշավանքը: Սակայն Աղա-Մուհամմադ շահին վիճակված չէր այն ավարտել, քանի որ նույն թվականի հունիսի 18-ին Շուշիում սպանվում է իր ծառաների կողմից:

Աղա-Մուհամմադ շահին հաջորդած Ֆաթհ-Ալի շահի (1797-1834) օրոք Իրանը Այսրկովկասում բախվում է ռուսական ծավալապաշտական քաղաքականությանը: 1804-1813 և 1826-1828 թթ. պատերազմներում Իրանը պարտություն է կրում Ռուսաստանից: Վերջինս նպատակադրվել էր ընդլայնել իր սահմանները Կովկասյան լեռներից դեպի Արաքս: 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին են անցնում Արևելյան Վրաստանը, Արևելյան Հայաստանի մեծ մասը և ներկայիս Ադրբեջանն ու Դաղստանը, իսկ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով ճանաչվում է Ռուսաստանի ինքնիշխանությունը Արաքս գետից հյուսիս ընկած ողջ տարածքի նկատմամբ: Ընդհանուր առմամբ, այս երկու պայմանագրերով Իրանը Ռուսաստանին է զիջում շուրջ 250 հազար կմ^2 տարածք և հրաժարվում է Կասպից ծովում նավագնացության իրավունքից:

Ֆաթհ-Ալի շահի օրոք Արևմուտքի հետ դիվանագիտական շփումներն ավելանում են, և Իրանի շուրջ եվրոպական դիվանագիտական բուռն մրցակցություն է սկսվում: Իրենց աշխարհաքաղաքական շահերից ելնելով՝ ռուսներն ու անգլիացիներն առավել մեծ ուշադրություն էին դարձնում Իրանին: Ռուսների համար Իրանի նկատմամբ վերահսկողությունը դեպի տաք ծովեր ծավալվելու ճանապարհ էր բացում: Անգլիացիների համար Իրանը բրիտանական Հնդկաստանի դարպասն էր, որն անհրաժեշտ էր ամուր փակել մրցակիցների առջև: Այդ հանգամանքը Իրանը դարձնում էր այս երկու տերությունների մրցակցության թատերաբեմ: Ֆաթհ-Ալի շահին հաջորդում է նրա թոռը՝ Մուհամմադ-Շահը (1834-1848): Նա Ռուսաստանի հրահրմամբ 1837 թ. փորձում է գրավել Հերաթը, որը Սեֆյանների օրոք Իրանի մաս էր կազմել, բայց XVIII դ. կեսից դուրս էր եկել իրանական տիրապետությու-

նից: Սակայն շահը, տեղի տալով անգլիացիների սպառնալիքների առջև, ստիպված է լինում դադարեցնել Հերաթի պաշարումը և ձեռնունայն հետ դառնալ:

Մուհամմադ-Շահը ցանկանում էր վերջ տալ աշխարհիկ իշխանության համար վտանգավոր շիա հոգևորականության ազդեցությանը Իրանի հասարակական-քաղաքական կյանքում: Այդ պատճառով նա, ի հակակշիռ շիա ուլեմների, սկսում է հովանավորել սուֆիներին, որոնք ճգնակեցության և մաքրակենցաղ ապրելակերպի կողմնակիցներ էին: Այս շահի օրոք սկիզբ է առնում բաբիզմը, որի գաղափարախոսությունը հակադրվում էր իշխող շիայական իսլամի դոգմաներին:

Մուհամմադ-Շահի մահից հետո գահն անցնում է նրա որդուն՝ Նասեր էդ-Դինին (1848-1896): Իրանի անկախությունը պահպանելու համար այս շահը ջանում էր շահարկել Անգլիայի և Ռուսաստանի միջև առկա հակասությունները, սակայն այդ ջանքերն ի դերև են ելնում: Ավելին, նրա կառավարման տարիներին ավելանում են օտարերկրյա միջամտությունն ու Իրանի նկատմամբ տարածքային ոտնձգությունները: Նա չի կարողանում կանխել անգլիացիների և ռուսների ներթափանցումը հնուց Իրանի ազդեցության տակ գտնվող տարածքներ: 1856 թ. Հերաթը գրավելու հերթական փորձը հանգեցնում է անգլո-պարսկական պատերազմի, որն ավարտվում է Իրանի պարտությամբ: Քանի որ Իրանի չափազանց թուլացումից կարող էին օգտվել ռուսները, ինչը ձեռնտու չէր անգլիացիներին, 1857 թ. Փարիզում կնքված հաշտության պայմանագիրը իրանական կողմի համար մեղմ էր: Ի վերջո, Անգլիայի աջակցությամբ Հերաթն անցնում է Աֆղանստանին. այն պատնեշ էր հանդիսանալու բրիտանական Հնդկաստանի և դեպի Արևելք ընդարձակվող, 1881 թ. Միջին Ասիայի նվաճումն ավարտած Ռուսական կայսրության միջև: Դրանով իսկ Ռուսաստանը հյուսիս-արևելքից էլ սահմանակից է դառնում Իրանին՝ խզելով այս երկրի ավանդական կապերը Միջին Ասիայի հետ:

Նասր էդ-Դին շահի օրոք Իրան մուտք են գործում եվրոպական գիտական, տեխնիկական և կրթական նորամուծություններ, փորձ է արվում արդիականացնելու երկիրը, իրականացվում են մի շարք կարևոր բարեփոխումներ, որոնք կապված էին մեծ վեզիր Ամիր- Քաբիրի անվան հետ: Վերջինս ստիպված էր իր գործունեությունը սկսել սոցիալ-տնտեսական չափազանց բարդ պայմաններում. պետական գանձարանը դատարկ էր, կենտրոնական իշխանությունը՝ թույլ, իսկ նահանգները գրեթե անկախ էին: Իր պաշտոնավարման երկուսուկես տարվա ընթացքում Ամիր-Քաբիրը կարևոր բարեփոխումներ է նախաձեռնում գրեթե բոլոր ոլորտներում: Կրճատվում են պետական ծախսերը, և բյուջեն տարանջատվում է պալատականի ու պետականի: Ավելանում են կենտրոնական իշխանության գործառույթները: Փորձ է արվում սահմանափակելու արտաքին միջամտությունը Իրանի ներքին գործերին, խրախուսելու արտաքին առևտուրը: Սկսում է լույս տեսնել իրանական իրականության մեջ առաջին թերթը՝ «Վագաե-յե Էթթեֆաղիեն»: Ամիր-Քաբիրի մեծագույն ձեռքբերումներից էր «*Դար-օլ-Ֆունունի*» («Գիտելիքի աշխարհ») հիմնադրումը, որն Իրանի ժամանակակից առաջին կրթական հաստատությունն էր:

Մահմեդական ֆանատիկոսի կողմից 1896 թ. Նասեր էդ-Դին շահի սպանությունը շրջադարձային էր Իրանի քաղաքական մտքի զարգացման ընթացքում: Այն, ի վերջո, Մուզաֆար էդ-Դին շահի (1896-1907) կառավարման ժամանակ հանգեցնում է Իրանի սահմանադրական հեղափոխությանը, որը Մերձավոր Արևելքի առաջին խոշոր դեմոկրատական շարժումն էր: Մուզաֆար էդ-Դինը կամային հատկանիշներից զուրկ, թույլ գահակալ էր: Երկրի պետական գանձարանը դատարկ էր, որի պատճառը անարդյունավետ կառավարումն ու արքունիքի ցոփ ու շվայտ ապրելակերպն էր: Օրինակ՝ միայն Եվրոպա շահի ուղևորության վրա Ռուսաստանից ստացված երկու խոշոր վարկ մսխվեց: Շահի կողմից իր մերձավորներին և ապաշնորհ բարձրաստիճան պաշտոնյանե-

րին առատաձեռն վճարումների համար եվրոպացիներից բարձր տոկոսադրույքով վարկեր վերցնելը և դրանց մարումը հետաձգելու դիմաց միակողմանի զիջումներ կատարելը առաջացնում են հասարակական լայն խավերի զայրույթը:

Այդ ապաշնորհ կառավարման հետևանքով շահական կառավարությունը Իրանի տնտեսության տարբեր ճյուղերի վերահսկողությունը հանձնում է օտարերկրացիներին: Շահի բացարձակ իշխանության սահմանափակման և օրենքի գերակայության հաստատման պահանջով զանգվածային բողոքի տարբեր դրսևորումները, որոնք սկիզբ էին առել 1906 թ. հունվարին, ստիպում են շահին նույն թվականի սեպտեմբերին 9-ի հրամանագրով հայտարարել Սահմանադիր ժողովի հրավիրման մասին: Հոկտեմբերին տեղի ունեցած ընտրություններում ձևավորված Սահմանադիր ժողովը մշակում է սահմանադրության նախագիծ, որը նախատեսում էր շահական իշխանության սահմանափակում և կառավարություն կազմելու իրավասությամբ խորհրդարան կամ Մեջլիս: Մուզաֆար էդ-Դին շահը սահմանադրությունը հաստատում է սրտի կաթվածից վրա հասած մահից հինգ օր առաջ՝ 1906 թ. դեկտեմբերի 30-ին: Այդ սահմանադրությունը նախատեսում էր մամուլի, խոսքի և հասարակական միավորումներ ստեղծելու ազատություն, կյանքի և ունեցվածքի անվտանգություն: Սահմանադրական հեղափոխությունն Իրանում նշանավորում է միջնադարի ավարտը: Այդուհանդերձ, սահմանադրական կառավարման հետ կապված հույսերը չեն արդարանում:

Մուզաֆար էդ-Դինի որդին՝ Մոհամադ-Ալի շահը (1907-1909), փորձում է Ռուսաստանի օգնությամբ վերացնել սահմանադրությունը և խորհրդարանական կառավարումը: Մեջլիսի անդամների հետ մի շարք վեճերից հետո, 1908 թ. հունիսին ռուս սպաների հրամանատարության տակ գտնվող պարսկական կազակների բրիգադը հրետակոծում է Սիփահսալարի մզկիթը, որտեղ ապաստանել էին բազմաթիվ հեղափոխականներ: Հայտարարվում է

Մեջլիսը ցրելու շահի հրովարտակը, ձերբակալվում են բազմաթիվ պատգամավորներ, սակայն կառավարության այս քայլը բուռն դիմադրության է հանդիպում Թավրիզում, Սպահանում, Ռեշտում և այլ վայրերում: 1909 թ. հուլիսին Եփրեմ խան Դավթյանի* գլխավորած սահմանադրական ուժերը Ռեշթից և բախթիարների ցեղական աշխարհազորը Սպահանից շարժվում են դեպի Թեհրան, տապալում Մուհամմադ-Ալի շահին և վերականգնում սահմանադրական կարգը: Շահն ապաստանում է Ռուսաստանում, իսկ նոր շահ է հռչակվում տապալված Մուհամմադ-Ալիի տասնմեկամյա որդին՝ Սուլթան-Ահմադը (1909-1925):

Սահմանադրական ուժերը բախվում են լուրջ դժվարությունների. հեղափոխության և քաղաքացիական պատերազմի ցնցումները խարխլում են կայունությունն ու առևտուրը: Նորընտիր Մեջլիսի և նրա ձևավորած կառավարության գլխավոր խնդիր դարձած բյուջեի ճեղքվածքը փակելու համար ԱՄՆ-ից հրավիրված ֆինանսական խորհրդականները Մորգան Շուստերի գլխավորությամբ ոչ թե զբաղվում էին Իրանի ֆինանսական կացությունը բարելավելով, այլ ջանում էին, ի հաշիվ Ռուսաստանի և Անգլիայի, պայմաններ ստեղծել ամերիկյան տնտեսական ներթափանցման համար: Դա հանգեցնում է դժգոհության և բողոքի տարերային ալիքի: Այդ իրավիճակից օգտվելով՝ Մուհամմադ-Ալի շահը Ռուսաստանի աջակցությամբ 1911 թ. հուլիսին փորձում է վերականգնել իր գահը, սակայն ռեստավրացիան (նախկին իշխանության վերականգնում) ձախողվում է: Եփրեմ խան Դավթյանի գլխավորած հեղափոխական զորքերը ջախջախում են միապետության կողմնակիցների ուժերը:

Այդուհանդերձ, լայն զանգվածների հույսերը, թե հեղափոխությունը վերջ կտա խոշոր տերություններից կախվածությանը, ի

---

* Եփրեմ Դավթյանը Մեջլիսի կողմից նշանակվել է Իրանի ոստիկանության ղեկավար և այդ պաշտոնում ուժային կառույցների բարեփոխում է իրականացրել:

դերև են ելնում: 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրով Անգլիան և Ռուսաստանը Իրանը բաժանում են ազդեցության գոտիների: Ռուսները պետք է օգտվեին հյուսիսում իրենց շահերը հետապնդելու բացառիկ իրավունքից, իսկ հարավում և արևելքում նման իրավունք է վերապահվում անգլիացիներին: Երկրի կենտրոնը երկու տերությունների համար ազատ մրցակցության գոտի էր: Իրավիճակը հանգուցալուծվում է, երբ Մորգան Շուստերը, որին իրանական կառավարությունը վարձել էր որպես գլխավոր գանձապահ, փորձում է հարկեր գանձել Ռուսաստանի ազդեցության գործակալ հանդիսացող ազդեցիկ պաշտոնյաներից և ռուսական գոտի մտցնել իրեն ենթակա գանձապետական ժանդարմերիան ու հարկային վարչության ուժերը: Երբ 1911 թ. դեկտեմբերին Մեջլիսը միաձայն մերժում է միայն Ռուսաստանի ու Անգլիայի համաձայնությամբ օտարերկրացիներին ծառայության ընդունելու և Շուստերի հրաժարականը պահանջող ռուսական վերջնագիրը, Իրանական Ադրբեջանում գտնվող ռուսական զորքերը շարժվում են դեպի Թեհրան: Ռուսական զորքերի մուտքը մայրաքաղաք կանխելու համար դեկտեմբերի 20-ին բախթիար ցեղախմբի առաջնորդների զորքերը շրջափակում են Մեջլիսի շենքը, ստիպում ընդունել ռուսական վերջնագիրը և ցրում Մեջլիսը՝ հերթական անգամ կասեցնելով սահմանադրությունը:

1914–1918 թթ. Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Իրանի տարածքի օկուպացիան ռուսական, անգլիական և օսմանյան ուժերի կողմից ծանր հարված էր Ղաջարների դինաստիայի հեղինակությանը:

1921 թ. փետրվարին Ռեզա խանի (1925–1941 թթ. կառավարել է որպես Ռեզա Շահ Փահլավի) գլխավորած հեղաշրջման արդյունքում Սուլթան-Ահմադ շահը տապալվում է և վտարվում Ֆրանսիա, իսկ 1925 թ. հոկտեմբերին Մեջլիսը հռչակում է Իրանում նոր՝ Փահլավիների դինաստիայի հաստատումը:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ իրադարձությունից հետո է Աղա-Մուհամմադ խանն իրեն Իրանի շահ հռչակում:

2. Ո՞ր պայմանագրերով է Իրանն Այսրկովկասը զիջում Ռուսաստանին:

3. Ինչո՞վ էր պայմանավորված Իրանի նկատմամբ վերահսկողություն հաստատելու Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի պայքարը:

4. Շիա հոգևորականության ազդեցությունը սահմանափակելու համար ի՞նչ քայլեր է ձեռնարկում Մուհամմադ-Շահը:

5. 1856 թ. պատերազմում հաղթելուց հետո ինչո՞ւ է Մեծ Բրիտանիան բավարարվում Փարիզի հաշտությամբ Իրանին ներկայացված մեղմ պահանջներով:

6. Ո՞ւմ անվան հետ էին կապված Նասր էդ-Դին շահի օրոք Իրանի իրականացրած բարեփոխումները:

7. Ո՞ր իրադարձությունն է ազդարարում Իրանում միջնադարի ավարտը:

8. Ինչո՞ւ է կարճ տևում Մուհամմադ-Ալի շահի գահակալումը:

9. Ի՞նչ էր իրենից ներկայացնում 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագիրը:

10. Ինչի՞ց օգտվելով է տապալված Մուհամմադ-Ալի շահը 1911 թ. գահը վերադարձնելու անհաջող փորձ կատարում:

ԹԵՄԱ IV
Օսմանյան կայսրության անկումը

1853-1856 թթ. Ղրիմի պատերազմը շրջադարձային նշանակություն է ունենում Թանզիմաթի բարեփոխումների ընթացքի վրա: Պատերազմը քայքայում է Օսմանյան կայսրության թույլ տնտեսությունը: Օրավուր աճող ծախսերը 1854 թ. ստիպում են կառավարությանը կայսրության պատմության մեջ առաջին անգամ 5 միլիոն ֆունտ ստեռլինգի[23] օտարերկրյա վարկ վերցնել: 1875 թ. պետական պարտքը կազմում էր 200 միլիոն ֆունտ ստեռլինգ, ինչն ազգային եկամտի կեսից ավելին էր: 1873 թ. երաշտը և 1874 թ. ջրհեղեղը, ծանր հարված հասցնելով գյուղատնտեսությանը, սովի պատճառ են դառնում: 1875 թ. կառավարությունը ստիպված է լինում սնանկ հայտարարել Օսմանյան կայսրությունը: Պարտքի մարման նպատակով 1881 թ. ձևավորվում է Օսմանյան պետական պարտքի վարչություն, որի կազմում կային նաև եվրոպացիներ: Այդ մարմինը վերահսկում էր Օսմանյան կայսրության տնտեսության մի զգալի մասը և ապահովում եվրոպական կապիտալի դիրքերը կայսրության տնտեսությունում՝ հաճախ ի վնաս օսմանյան պետական շահերի:

Արտաքին պարտքի մարման բեռը իշխանությունները բարդում են բնակչության ուսերին՝ բազմապատկելով հարկերը: Դրանց հավաքումը հատկապես քրիստոնեաբնակ տարածքներում ուղեկցվում էր չարաշահումներով և ապօրինություններով, ինչն էլ շիկացնում է իրավիճակը: 1876 թ. ապստամբություն է բռնկվում Բոսնիա-Հերցեգովինայում և Բուլղարիայում: Նույն թվականին հեղաշրջման արդյունքում տապալվում է Աբդուլ-Ազիզ սուլթանը (1861-1876), 93-օրյա կառավարումից հետո գահընկեց է արվում հոգեկան հիվանդ Մուրադ V-ը: Նորընծա Աբդուլ-Համիդ

---

[23] 1816-1914 թթ. բրիտանական ֆունտը պարունակում էր 7,3 գ. մաքուր ոսկի:

II-ը (1876-1909) իր նախորդների ճակատագրին չարժանանալու համար ստիպված է լինում համակերպվել երկրի սահմանադրության ընդունման և նոր օսմանների շարժման պարագլուխ Միդհատ փաշային մեծ վեզիր նշանակելու իրողության հետ:

Բուլղար խաղաղ ազգաբնակչության նկատմամբ անլուր դաժանությունները, որին զոհ է գնում շուրջ 100 հազար մարդ, առիթ են ծառայում, որ Ռուսաստանը պատերազմ հայտարարի Օսմանյան կայսրությանը: Ռուս-թուրքական 1877–1878 թթ. տեղի ունեցած այդ պատերազմն ավարտվում է Ռուսաստանի հաղթանակով: Արդյունքում Եվրոպայում օսմանյան տիրապետության տակ գտնվող տարածքները կտրուկ կրճատվում են: Բուլղարիան Օսմանյան կայսրության կազմում ինքնավարություն է ստանում, իսկ Ռումինիան, Սերբիան ու Չեռնոգորիան անկախություն են ձեռք բերում: 1878 թ. Ավստրո-Հունգարիան միակողմանիորեն գրավում է օսմանյան նահանգներ հանդիսացող Բոսնիա-Հերցեգովինան և Նովի Պազարը: Եվրոպայում Ռուսաստանին է անցնում ներկայիս Ուկրաինայի հարավ-արևմուտքում գտնվող Բուջակը, իսկ Կովկասում՝ Արդահանը, Կարսն ու Բաթումը: Մեծ Բրիտանիան տիրում է Կիպրոս կղզուն, իսկ Ֆրանսիան 1881 թ. գրավում է Թունիսը: Սուեզի ջրանցքի և Կարմիր ծովի նկատմամբ վերահսկողություն հաստատելու նպատակով 1882 թ. Մեծ Բրիտանիան փաստացի իր պրոտեկտորատն է հաստատում մինչ այդ Օսմանյան կայսրությանը ձևականորեն ենթարկվող Եգիպտոսի նկատմամբ:

Օսմանյան կայսրությունը պարտավորվում է բարեփոխումներ անցկացնել Կրետեում և հայաբնակ վեց վիլայեթներում:

Երբ պարզ է դառնում, որ պատերազմը տանուլ է տրված, Աբդուլ-Համիդ II-ը, վախենալով, որ իր քաղաքական հակառակորդները սահմանադրությունը կօգտագործեն իրեն գահընկեց անելու համար, 1878 թ. փետրվարի 14-ին (նոր տոմարով) ցրում է խորհրդարանը: Սուլթանի այս ենթադրությունը հեռու չէր իրականանալուց. նույն թվականի մայիսի 20-ին հեղաշրջման փորձ է

կատարվում: Այս ձախողված փորձից հետո Աբդուլ-Համիդը դառնում է խիստ ինքնամփոփ, կասկածամիտ, մտագար: Սկսվում է տեռորի ժամանակաշրջանը, որը հայտնի է «աբդուլհամիդյան զուլում» անունով: XIX դ. վերջին տասնամյակում դրան զոհ է գնում շուրջ 300 հազար հայ:

Կրետե կղզու հույն ազգաբնակչության ապստամբությունը 1897 թ. հույն-թուրքական պատերազմի պատճառ է դառնում: Պատերազմում թուրքերի հաղթանակը եվրոպական տերությունների միջամտությունից հետո վերածվում է դիվանագիտական պարտության: Աթենքի պատերի տակ կանգնած թուրքերը ստիպված էին բավարարվել ընդամենը Թրակիայում 50 կմ^2 տարածքով: Կրետեն միայն ձևականորեն է մնում Օսմանյան կայսրության տիրապետության տակ. թուրքական զինված ուժերը Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ճնշման տակ դուրս են բերվում կղզուց:

Աբդուլ-Համիդ II-ի իշխանության օրոք Օսմանյան կայսրությունը կորցնում է մեկուկես միլիոն կմ^2, որը նրա պատմության ընթացքում ամենամեծ տարածքային կորուստն էր: Սուլթանը, վախենալով արաբ ժողովուրդների ազգային զարթոնքից, որպես գաղափարական զենք է սկսում գործածել պանիսլամիզմը: Այն միաժամանակ ուղղված էր եվրոպական այն տերությունների դեմ, որոնց տարածքներում մեծաքանակ մահմեդականներ էին բնակվում: Այս քաղաքականության շրջանակում սկսվում է Ստամբուլ-Մեդինա երկաթուղու կառուցումը, որը հեշտացնում է համաիսլամական սրբավայրերի հասանելիությունը և պետք է մեծացներ Աբդուլ-Համիդի հեղինակությունը իսլամական աշխարհում:

Պանիսլամիզմի գաղափախոսության առնչությամբ անհրաժեշտ է դիտարկել Օսմանյան կայսրության արտաքին պարտքի զգալի մասի՝ 150 միլիոն ֆունտ ստեռլինգի փոխհատուցման դիմաց հրեաների ներգաղթ Պաղեստին թույլատրելու սիոնիստների առաջարկի կտրուկ մերժումը սուլթանի կողմից: Աբդուլ-Համիդը

հայտարարում է. «Քանի դեռ ես կենդանի եմ, թույլ չեմ տա մասնատել իսլամական աշխարհի մարմինը: Սիոնիստները կարող են ծվատել միայն իմ դիակը»:

Անտանտի դաշնակիցներ Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի հակաթուրքական քաղաքականությունը դրդում է Աբդուլ-Համիդին մերձենալ Գերմանիայի հետ, որի զինվորական առաքելությունը գեներալ ֆոն դեր Գոլցի գլխավորությամբ ձեռնամուխ է լինում գերմանական ձևաչափով վերափոխելու թուրքական բանակը: Սակայն գերմանական օժանդակությունը բնավ էլ անշահախնդիր չէր. դրա դիմաց գերմանացիները ստանում են բազմաթիվ կոնցեսիաներ, որոնցից ամենակարևորը 1899 թ. Բեռլին-Բաղդադ երկաթուղու շինարարության թույլտվությունն էր:

1904-1908 թթ. Մակեդոնիայում տեղի ունեցած ապստամբության ժամանակ թուրքերի կատարած վայրագությունները կրկին հանգեցնում են Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջամտությանը: Վախենալով, որ այն հանգեցնելու է այդ երկրամասի կորստին, երիտթուրքերը Մակեդոնիայում կանգնած օսմանյան բանակի երիտթուրք սպաներ Նիյազիի և Էնվերի գլխավորությամբ ապստամբություն են բարձրացնում: Երբ այն ճնշելու նպատակով ուղարկված զորքերը միանում են ապստամբներին, սուլթանը տեղի է տալիս և 1908 թ. հուլիսի 24-ին վերականգնում է 1878 թ. կասեցված սահմանադրությունը, իսկ դեկտեմբերի 17-ին վերաբացում է խորհրդարանը:

1909 թ. մարտի 31-ին սուլթանը Ստամբուլում իրեն հավատարիմ զորամասերի օգնությամբ իր բացարձակ իշխանությունը վերականգնելու փորձ է կատարում: Սակայն այդ փորձը ճնշվում է երիտթուրքերի վերահսկողության տակ գտնվող զորքերի կողմից: Այս իրադարձություններն ուղեկցվում են կիլիկիահայության կոտորածով, որին զոհ է գնում մոտ 40 հազար մարդ: Աբդուլ-Համիդ II-ը գահընկեց է արվում, և սուլթան է հռչակվում կամազուրկ Մեհմեդ Ռեշադը (1909-1918), սակայն իրական իշխանությունը

հայտնվում է երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» («Իթթիհաթ վե թերաքը») կոմիտեի ղեկավարների ձեռքում: 1911 թ. թուրք-իտալական պատերազմում Օսմանյան կայսրության պարտության և Լիբիայի ու Դոդեկանեզյան կղզիների կորստի հետևանքով երիտթուրքերի շրջանում պառակտում է տեղի ունենում: «Միություն և առաջադիմություն» կոմիտեի պարագլուխներ Թալեաթին ու Ջավիդին մեղադրելով սիոնիզմի և մասոնականության մեջ և նրանց վրա բարդելով պարտության մեղքը՝ մի խումբ սպաներ ձևավորում են «Ազատություն և համաձայնություն» կուսակցությունը («Հյուրիեթ վե իթիլաֆ»): Իթթիհաթականները կեղծում են 1912 թ. ապրիլին կայացած ընտրությունները և ռազմական հեղաշրջման ճանապարհով գրավում իշխանությունը:

1912-1913 թթ. Բալկանյան առաջին պատերազմում ջախջախիչ պարտություն կրելուց և Եվրոպայում համարյա բոլոր տարածքները կորցնելուց հետո 1913 թ. հունվարին Ստամբուլում նոր հեղաշրջում է տեղի ունենում: Թալեաթի, Էնվերի և Ջեմալի գլխավորությամբ ձևավորվում է, այսպես կոչված, «Երեք փաշաների եռապետությունը», որն իր պանթուրքական, ռասիստական, արկածախնդիր քաղաքականության հետևանքով Օսմանյան կայսրությունը ներքաշում է Առաջին համաշխարհային պատերազմի մեջ՝ Քառյակ միության կազմում: Պատերազմական այս իրադրությունից օգտվելով՝ երիտթուրքերն իրականացնում են մարդկության պատմության մեջ ամենաքստմնելի ոճրագործություններից մեկը՝ Հայոց ցեղասպանությունը, որին զոհ է գնում մեկուկես միլիոն հայ:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարով Օսմանյան կայսրությունը ճանաչում է իր պարտությունը պատերազմում. 1918 թ. դեկտեմբերի 8-ին Ստամբուլը օկուպացվում է Անտանտի զորքերի կողմից: 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրի պայմանագրով Օսմանյան կայսրությունը մասնատվում է, նրա մինչպատերազմական 1 միլիոն 589 հազար 540 կմ^2 տարածքից սուլթա-

նական կառավարության վերահսկողության տակ է մնում 453 հազար կմ^2:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ լիազորություններ ուներ 1881 թ. ստեղծված Օսմանյան պետական պարտքի վարչությունը:
2. Ի՞նչ հետևանք է ունենում 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը:
3. Ինչո՞ւ է Աբդուլ-Համիդ II-ը 1878 թ. ցրում խորհրդարանը:
4. Ի՞նչ նպատակով է Աբդուլ-Համիդ II-ը կիրառում պանիսլամիզմի գաղափարախոսությունը:
5. Ո՞րն էր 1908 թ. հունիսին երիտթուրքերի ապստամբության շարժառիթը:
6. Ինչո՞ւ է գահազրկվում Աբդուլ-Համիդ II-ը:
7. Ի՞նչ ներքաղաքական փոփոխություններ են տեղի ունենում 1911 թ. Օսմանյան կայսրությունում երիտթուրք ուժերի պառակտումից հետո:

ԹԵՄԱ V
Արևելյան Այսրկովկասը Ռուսական կայսրության կազմում (XIX դ.)

Այսրկովկասի նվաճումից հետո ռուսական իշխանությունները ձեռնամուխ են լինում իրենց տիապետությանն անցած տարածաշրջանի վարչաքաղաքական վերափոխմանը. վերացվում են խանությունները, դրանց փոխարեն ստեղծվում են գավառներ ու շրջաններ, որոնք ղեկավարում էին ռուս պարետ սպաները: Այդ պարետների ձեռքում զգալի իշխանություն էր կենտրոնացած: Նրանք իրավասու էին որոշելու հարկերի և տուրքերի չափը, կարող էին սեփական հայեցողությամբ վարվել հողային ֆոնդի հետ: Պարետների կառավարման համակարգը համարյա չէր վերահսկվում կենտրոնական իշխանության կողմից, ինչն էլ կամայականությունների և համատարած կաշառակերության պատճառ էր դարձել:

Ռուսական իշխանությունները ոչ տեղաբնիկ էթնիկ հենարան ստեղծելու նպատակով մեծ թվով ռուս աղանդավորների և գերմանացիների վերաբնակեցնում են Այսրկովկասում: Առաջին ռուս աղանդավորների և նապոլեոնյան պատերազմների ժամանակ Լեհաստան ու Ռուսաստան փախած գերմանացիների բնակավայրերն այստեղ են հայտնվում XIX դ. 30-ական թվականներին: 1817-1818 թթ. ներկայիս Ադրբեջանի տարածքում ստեղծվում են երկու գերմանական գաղութներ՝ Հելենենդորֆը (ներկայիս Գոյգոլ քաղաքը) և Անենֆելդը (գաղութ, որը հետագայում միավորվում է Շամքոր քաղաքի հետ): Այնուհետև Արևելյան Այսրկովկասում ստեղծվում են ևս 6 գերմանական բնակավայրեր:

Այսրկովկասը դիտարկելով որպես գաղութ՝ ռուսական իշխանությունները շահագրգիռ չէին դրա սոցիալ-տնտեսական արագ զարգացմամբ: Այն Ռուսաստանի համար ծառայում էր միայն որպես հումքային բազա: Հիմնական զբաղմունքը շարունակում էր

մնալ երկրագործությունն ու անասնապահությունը: Այնուամենայնիվ, տնտեսության մեջ որոշ փոփոխություններ են տեղի ունենում: Շաքիում հիմք է դրվում մետաքսի արտադրությանը: 1829 թ. ներկայիս Ադրբեջանում առաջինը ստեղծվում է Նուխիի (Շաքի) գավառի Խանաբադի մանուֆակտուրան: 1848 թ. ռուս ճարտարագետ Սեմյոնովը Բիբի-Հեյբաթի նավթաբեր տարածքում հորատում է առաջին նավթահորը: 1855 թ. Գետաբակում Սիմենս եղբայրները պղնձաձուլարան են կառուցում:

Սոցիալ-տնտեսական նմանաբնույթ նորամուծությունները, անկասկած, առաջադիմական նշանակություն ունին: Աստիճանաբար ներդրվում է չափ ու կշռի, դրամական միասնական համակարգ: Վերացվում է *ռահդարի* (ներքին մաքսային սահմաններ) համակարգը, ինչը հանգեցնում է ներքին առևտրի զգալի աշխուժացման: Ռուսական իշխանությունների ձեռնարկած այս միջոցառումները նպաստում են ավատատիրական սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական հնացած համակարգերի վերացմանը:

XIX դ. 30-ական թթ. Ադրբեջանի տարածքում ռուսական գաղութային քաղաքականությունը հանգեցնում է մի շարք ապստամբությունների: Առաջին ապստամբության պատճառը 1830 թ. Զար-Բալական Զամաաթի (ներկայիս Ադրբեջանի Բալաքանի, Զաքաթալայի և Կախի շրջաններ) ինքնավարության լուծարումն էր: Հիմնականում լեռնական ավարներով բնակեցված այս տարածքում տեղի ունեցած ապստամբությունը ճնշվում է գեներալ Պ. Պասկևիչի կողմից: 1831 թ. ապստամբություն է բռնկվում թալիշաբնակ նախկին Լենքորանի խանությունում, որի պարետը առանց դատաստանի մահվան է դատապարտում 20 մարդու և իրականացրածը կոծկելու նպատակով դիակները ծովն է նետում: Ապստամբությունից փորձում է օգտվել նախկին խան Միր-Հասանը, որի զորաջոկատը պաշարում է Լենքորանը, սակայն այն գրավելու փորձը ձախողվում է: Ռուսների դեմ մի քանի անհաջող

մարտերից հետո ապստամբները սկսում են նահանջել: Միր-Հասան խանը կրկին փախչում է Իրան, իսկ ապստամբությունը ճնշվում է:

Ռուսական տիրապետության դեմ ամենահզորը 1837 թ. Ղուբայի գավառում տեղի ունեցած ապստամբությունն էր: Ժողովրդի դժգոհության աճին նպաստում են գավառի պարետ գնդապետ Գիմբուտի գլխավորած պաշտոնյաների կամայականությունները: Ապստամբության խթան է դառնում այն հանգամանքը, որ ռուսական իշխանությունները փորձում են տեղացիներին հավաքագրել մահմեդական հեծելազորային գնդում, որը պետք է մասնակցեր Լեհաստանում ծավալված ազգային-ազատագրական պայքարի ճնշմանը: 1837 թ. կեսերին ապստամբությունը մեծ ծավալներ է ընդունում. դրան մասնակցում է 12 հազար մարդ: Իմամ Շամիլի գլխավորած Կովկասի լեռնականների՝ ապստամբներին օժանդակելու փորձի ձախողումից հետո ապստամբությունը ճնշվում է: 1838 թ. ռուսական իշխանությունների դեմ հերթական ապստամբությունն է բռնկվում: Այս անգամ ոտքի էին ելել Շաքիի բնակիչները: Չնայած սկզբում ապստամբների որոշ հաջողություններին՝ ռուսական զորքերը այս ապստամբությունը նույնպես ճնշում են:

Ապստամբություններն ավարտվում են պարտությամբ, բայց դրանք ակնհայտ են դարձնում Այսրկովկասի կառավարման համակարգի անարդյունավետությունը և ստիպում են ցարական իշխանությանը հրաժարվել վարչատարածքային կառավարման հին համակարգից: 1840 թ. լուծարվում է Այսրկովկասում պարետային կառավարման համակարգը: Լուծարվում են նաև խանությունների ժամանակաշրջանից պահպանված մահալները և դրանց կառավարիչ նահիբների ինստիտուտը: Ստեղծվում են երկու խոշոր վարչական միավորներ՝ Վրաց-Իմերեթական նահանգը և Կասպիական երկրամասը: Ներկայիս Ադրբեջանի տարածքի մեծ մասը մտնում է Կասպիական երկրամասի մեջ:

Նույն թվականին դատական բարեփոխում է իրականացվում: Ստեղծվում են նահանգային, գավառական և շրջանային դատարաններ: Շարիաթի դատարանը նույնպես պահպանվում է, բայց այն կարգավորում էր միայն ընտանեկան հարաբերությունները:

Տեղացի նախկին պաշտոնյաները փոխարինվում են ռուս աստիճանավորներով: Ռուսական իշխանությունը հրաժարվում է ճանաչել բեկերի ու աղալարների հողային սեփականության իրավունքը: Սակայն իշխանությունը ակնհայտորեն թերագնահատում էր տեղի ավատատիրական վերնախավի ազդեցությունը բնակչության տրամադրության և կարծիքի վրա: Ներկայիս Ադրբեջանում և Այսրկովկասի մահմեդականներով բնակեցված այլ վայրերում նախկին հողատերերի և պաշտոնյաների կողմից հրահրված զանգվածային անկարգությունները վախեցնում են ռուսական իշխանությանը և ստիպում հրաժարվել պայթունավտանգ այդ նախաձեռնությունից: Երկարատև քննարկումներից հետո 1846-1847 թթ. ընդունված օրենքներով ցարիզմը մահմեդական ազնվականության նկատմամբ սկսում է վարել հովանավորչական քաղաքականություն, ինչի արդյունքում վերականգնվում է մահմեդական ավատատերերի սեփականության այն իրավունքը, որով սահմանվում էր գյուղացիների պարտավորությունները հողի սեփականատերերի հանդեպ: Այդ օրենքներով կալվածատերերն իրենց կալվածքներում ոստիկանական վերահսկողություն կիրառելու իրավունք են ձեռք բերում: Տեղական ազնվականության նկատմամբ կիրառվում է հովանավորչական քաղաքականություն: Նույնատիպ քաղաքականություն էր իրականացվում նաև մահմեդական հոգևորականության նկատմամբ: Ցարական վարչակազմը նույնիսկ շիաների համար շեյխ-ուլ-իսլամի, իսկ սուննիների համար՝ մուֆթիի հոգևոր աստիճան և պաշտոն է սահմանում:

1846 թ. Այսրկովկասի նոր վարչատարածքային բաժանմամբ ներկայիս Ադրբեջանի տարածքը բաժանվում է Շամախու, Դերբենտի նահանգների և Զար-Բայլականի շրջանի:

1861 թ. ճորտատիրության վերացումը Ռուսաստանում հզոր խթան է հանդիսանում ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում արդյունաբերության և նոր արտադրական հարաբերությունների զարգացման համար: Համառուսաստանյան միասնական շուկայի ձևավորումը անխուսափելիորեն հանգեցնում է Այսրկովկասի (ներառյալ ներկայիս Ադրբեջանի) ներգրավմանը ողջ Ռուսաստանին բնորոշ սոցիալ-տնտեսական նոր գործընթացների ուղեծրի մեջ: Բնական պաշարներով հարուստ Արևելյան Այսրկովկասը անմիջապես գրավում է ձեռներեց մարդկանց ուշադրությունը: Առավել մեծ չափով դա կապված էր Ապշերոնի նավթային հանքավայրերի շահագործման հնարավորության հետ: Նավթի արդյունահանման աննախադեպ աճը խթանում է նավթավերամշակման զարգացումը: 1859 թ. Բաքվում գործարկվում է կերոսինի առաջին գործարանը: Նավթային բիզնեսի զարգացումը հատկապես մեծ մասշտաբների է հասնում այն բանից հետո, երբ անհատ ձեռներեցներին թույլատրվում է զբաղվել նավթարդյունաբերությամբ: 1873 թ. Ապշերոնում գործում էին 12 նավթային ընկերություններ, իսկ 1899 թ.՝ արդեն 140: Բացի ռուս արդյունաբերողներից, Ապշերոնի նավթի շահագործմամբ զբաղվում էին եվրոպական շատ երկրների ներկայացուցիչներ, այդ թվում՝ շվեդ Նոբել եղբայրները: Նրանք 1879 թ. հիմնում են ընկերություն, որը երկար տարիներ առաջատար դիրք է զբաղեցնում նավթարդյունաբերության ոլորտում: Նավթարդյունաբերության մեջ ավելի ու ավելի մեծ տեղ էին զբաղեցնում հայ արդյունաբերողները՝ Մանթաշյանը, Արամյանցը, Լիանոզովը, Ղուկասովը և այլք:

XX դ. սկզբին Բաքուն նավթարդյունահանման ծավալով աշխարհում առաջին տեղում էր: Դա հանգեցնում է Բաքու քաղաքի տարածքային ընդլայնմանն ու բնակչության թվի ավելացմանը:

Եթե 1856 թ. Բաքվում ապրում էր 8,4 հազար մարդ, ապա 1897 թ. քաղաքն ուներ 112,3 հազար բնակիչ, որոնց 34 տոկոսը ռուսներ էին, 36 տոկոսը Կովկասի թուրքեր, 17 տոկոսը՝ հայեր:

XIX դ. երկրորդ կեսից, պայմանավորված Ռուսաստանում ճորտատիրության վերացմամբ, սկսում է բարելավվել նաև Այսրկովկասի գյուղացիության (այդ թվում՝ մահմեդական) վիճակը: 1865 թ. գյուղական համայնքների վերաբերյալ կառավարության որոշմամբ վերացվում են բեկերի վարչական և դատական իրավասությունները գյուղում: Գյուղական համայնքները իրավունք են ստանում ընտրելու *քեղխուդաներից* (գյուղական ավագներ) բաղկացած համայնքային ղեկավար խորհուրդ, տնօրինելու հանրային հողերը, բաշխելու պետական հարկերը: Նույն որոշմամբ գյուղական համայնքը պարտավոր էր ենթարկվել գավառական և նահանգային վարչակազմերին: Չնայած գյուղական համայնքների սահմանափակ հնարավորություններին՝ նրանց ստեղծումը, անկասկած, առաջընթաց քայլ էր տեղական ինքնակառավարման զարգացման ուղղությամբ: Այնուամենայնիվ, գյուղացիական բարեփոխումը չի վերացնում գյուղում կուտակված հակասությունները, որտեղ դրանք գոյություն են ունեցել դարերի ընթացքում: Ավելին, բարեփոխումը սրում է դրանք: Հետամնաց Կովկասի թուրքերի գյուղական համայնքներին ինքնավարության որոշակի տարրերի տրամադրումը հանգեցնում է հողի սեփականության և հարկային բեռի բաշխման հարցերում գյուղական համայնքների ղեկավարների զանգվածային չարաշահումների, ինչը սոցիալական դժգոհության աճի պատճառ է դառնում: Սակայն ցարական վարչակարգը խուսափում է Այսրկովկասի ազգաբնակչությանը այն մակարդակով ինքնավարություն տրամադրելուց, որը կիրառվել էր Ռուսաստանում: Դա ակնհայտ էր Այսրկովկասի թուրքերի, առանձնապես նրանց վերին դասի պարագայում, որոնց նկատմամբ ցարական իշխանությունները մեծ անվստահություն ունեին:

Համեմատաբար ավելի մեծ լծակներ ունեին քաղաքների տեղական ինքնակառավարման մարմինները: Ներկայիս Ադրբեջանի տարածքում ինքնակառավարման մարմին՝ դումա, առաջին անգամ սկսում է գործել 1878 թ. Բաքվում: Քաղաքային դուման իրավասու էր լուծելու միայն տնտեսական բնույթի հարցեր՝ շուկաներում առևտրի կազմակերպում, առողջապահական և կրթական խնդիրների լուծում: 1897-ին քաղաքային խորհուրդներ են ստեղծվում նաև Ելիզավետպոլում և Շուշիում:

Սոցիալ-տնտեսական այս գործընթացներն ազդում են նաև մշակութային զարգացումների վրա: 1875 թ. հուլիսի 22-ին Բաքվում հրատարակվում է առաջին թուրքերեն թերթը՝ «Էքինջի»-ն, որի խմբագիրը Հասան-բեկ Զարդաբին էր: Թերթի տպագրության համար նախատեսված սարքավորումները ներկրվել էին Ստամբուլից: Թերթն ուներ տիպիկ թուրքամետ ուղղվածություն և պանթուրքիզմի տարածման գործում մեծ ազդեցություն է ունենում Այսրկովկասի նորածին թուրք մտավորականության շրջանում: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի սկզբին Ռուսաստանի իշխանությունները փակում են թերթը՝ այն համարելով թշնամու քարոզչական լրատվամիջոց:

XIX դ. երկրորդ կեսին ներկայիս Ադրբեջանի վարչական կառավարման մեջ զգալի փոփոխություններ են տեղի ունենում, որոնք հետագայում առանձնահատուկ դեր են խաղում Այսրկովկասի երեք մեծաքանակ ժողովուրդների միջև տարածքային սահմանաբաժանման գործում. 1859 թ. ձևավորվում է Բաքվի նահանգը՝ բուն Բաքվի, Դերբենտի, Ղուբայի, Շամախու, Լենքորանի, Գյոքչայի, Զավաղի գավառներով: 1868 թ. կազմավորվում է Ելիզավետպոլի նահանգը, որը բաղկացած էր Ելիզավետպոլի, Շուշիի, Նուխու, Զանգեզուրի, Կարյագինոյի (այժմ՝ Զեբրայիլ) և Ջիվանշիրի գավառներից: Զար-Բալականի մարզը անվանափոխվում է Զաքաթալայի մարզի: 1883 թ. Կովկասի փոխարքայությունը վերացվում է, իսկ տարածաշրջանի կառավարումը փոխանցվում է Կովկասի կառավարչապետին:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ լիազորություններ ունեին պարետները Այսրկովկասում:

2. Ո՞րն էր ներկայիս Ադրբեջանի Բալաքանի, Զաքաթալայի և Կախի շրջաններում 1830 թ. ապստամբության պատճառը:

3. 1840 թ. ի՞նչ վարչատարածքային փոփոխություններ են կատարվում ներկայիս Ադրբեջանի մաս կազմող Արևելյան Այսրկովկասում:

4. Ի՞նչն է ստիպում ռուսական իշխանություններին վերստին ճանաչել Այսրկովկասի մահմեդական ազնվականության՝ հողի սեփականության իրավունքը:

5. Ի՞նչն է նպաստում նավթարդյունաբերության արագ աճին:

6. Ի՞նչ զարգացումներ են տեղի ունենում 1865 թ. գյուղական համայնքների վերաբերյալ կառավարության որոշման ընդունումից հետո:

7. Ինչո՞ւ են ռուսական իշխանությունները փակում Զարդաբիի խմբագրած «Իքինջի» թերթը:

ԳԼՈՒԽ VI
ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ

ԹԵՄԱ I
Վրաստանի Հանրապետությունը (1918-1921)

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից և Կովկասում ցարական վարչակազմի փլուզումից հետո Ռուսաստանում իշխանությունն անցնում է Ժամանակավոր կառավարությանը, որը Կովկասյան փոխարքայության փոխարեն 1917 մարտի 9-ին Այսրկովկասում ձևավորում է իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտե, որին, սակայն, չի հաջողվում լիարժեք վերահսկողություն հաստատել իր լիազորության տակ գտնվող տարածքների նկատմամբ: Հայերի, վրացիների և Այսրկովկասի թուրքերի առաջատար քաղաքական ուժերը ձեռնամուխ են լինում ինքնուրույն իշխանության մարմինների ստեղծմանը:

1917 թ. նոյեմբերի 20-ին ստեղծված Վրաստանի ազգային խորհուրդը, որտեղ մեծամասնություն էին կազմում վրաց մենշևիկները, փաստացի դառնում է վրացական տարածքները վերահսկող իշխանություն: Վրաստանի ազգային խորհուրդը չի ճանաչում 1917 թ. հոկտեմբերի 25-ին հեղաշրջման ճանապարհով Ռուսաստանում իշխանության եկած բոլշևիկների կառավարությունը: Բոլշևիկների ազդեցության տակ գտնվող նախկին Կովկասյան բանակի զինվորներից եկող սպառնալիքը, էթնիկ բախումները և տարածաշրջանում ստեղծված անիշխանությունը ստիպում են վրացի, հայ և ադրբեջանցի քաղաքական գործիչներին 1917 թ. նոյեմբերի 15-ին ստեղծել միասնական տարածաշրջանային իշխանություն՝ Անդրկովկասյան կոմիսարիատ անունով, իսկ ավելի ուշ՝ 1918 թ. փետրվարի 10-ին՝ օրենսդիր մարմին՝ Անդրկովկասյան սեյմ: 1918 թվականի ապրիլի 22-ին Անդրկովկասյան սեյմը,

որի նախագահն էր Նիկոլայ Չխեիձեն, Այսրկովկասն անկախ է հռչակում: Ստեղծվում է Անդրկովկասի Դեմոկրատական Դաշնային Հանրապետությունը, որի կառավարությունը գլխավորում է մենշևիկ Եվգենի Գեգեչկորին, ապա՝ Ակակի Չխենկելին:

Այսրկովկասյան ժողովուրդների հակընդդեմ շահերի, օրավուր աճող թուրքական ներխուժման սպառնալիքի ու ներքին լարվածության պայմաններում Անդրկովկասյան Դաշնությունը փլուզվում է: 1918 թվականի մայիսի 26-ին Վրաստանի ազգային խորհուրդը հռչակում է «Վրաստանի անկախության ակտը», որտեղ հակիրճ ուրվագծվում են երկրի զարգացման հիմնական ուղենիշները: Նույն նիստում ձևավորված առաջին կառավարությունը գլխավորում է Նոյ Ռամիշվիլին: 1918 թ. հոկտեմբերին Վրաստանի ազգային խորհուրդը վերանվանվում է Վրաստանի խորհրդարան, և հայտարարվում է նոր ընտրությունների անցկացման մասին: Դրանք տեղի են ունենում 1919 թ. փետրվարի 14-ին: Ձևավորվում է Վրաստանի հիմնադիր ժողովը, որտեղ մեծամանություն է կազմում Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (վրաց մենշևիկներ): 1919–1921 թթ. երկամյա ժամանակահատվածում Նիկոլայ Չխեիձեի նախագահությամբ Հիմնադիր ժողովն ընդունում է 126 օրենք: Դրանք ներառում էին քաղաքացիության, տեղական ընտրությունների, պաշտպանության, պետական լեզվի, գյուղատնտեսության, իրավական համակարգի, հանրային կրթության ազգային համակարգի, էթնիկ փոքրամասնությունների քաղաքական և վարչական մեխանիզմների մասին օրենքները (ներառյալ Աբխազիայի ժողովրդական խորհրդի մասին օրենքը): Ընդունվել են նաև հարկային և դրամավարկային քաղաքականության, երկաթուղու և արտադրաառևտրային հարաբերությունների կանոնակարգեր և մի շարք այլ օրենքներ:

1921 թ. փետրվարի 21-ին Հիմնադիր ժողովն ընդունում է երկրի պատմության մեջ առաջին ժամանակակից հիմնարար

օրենքը՝ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության Սահմանադրությունը, որով Վրաստանը ապակենտրոնացված ունիտար խորհրդարանական հանրապետություն էր: Երեք ապակենտրոնացված տարածաշրջանները ներառում էին Աբխազիան, Աջարիան և Զաքաթալայի շրջանը, որոնց տրվում է ինքնավարություն տեղական կառավարման հարցերում: Աջարիայում դա գործում է, մինչդեռ Աբխազիայում, պայմանավորված 1921 թ. փետրվարին Կարմիր բանակի ներխուժմամբ, չի գործում, իսկ Զաքաթալայի գավառը 1922 թ. մարտին կցվում է Խորհրդային Ադրբեջանին:

1919 թ. Վրաստանի կառավարությունն օրենք է ընդունում երդվյալ ատենակալների դատավարական համակարգ ձևավորելու մասին: Բարձրագույն դատական ատյանը Սենատն էր՝ ընտրված խորհրդարանի կողմից:

Մինչև XIX դ. վերջը Ռուսական կայսրության կազմում Վրաստանը հիմնականում գյուղատնտեսական երկիր էր, իսկ Ռուսաստանում սկիզբ առած արդյունաբերականացումը զգացնել է տալիս նաև Վրաստանում՝ բնական պաշարների արդյունահանմամբ: Վրաստանի տնտեսությունը՝ հումքի արտադրությունը, տրանսպորտային ենթակառուցվածքը, մասնագիտացված մշակաբույսերի արտադրությունը, փաստացի ծառայում էր մետրոպոլիայի կարիքներին: Գաղութային այս քաղաքականությունը նկատվում էր նաև էթնիկ առումով. Վրաստանում առևտրականների և ձեռնարկատերերի ճնշող մեծամասնությունը հայեր էին, իսկ պետական վարչակազմը գերազանցապես բաղկացած էր ռուսներից: Վրացիները հիմնականում զբաղվում էին գյուղատնտեսությամբ կամ քաղաքներում ցածր որակավորում պահանջող աշխատանքով: Անկախության հռչակումից հետո Վրաստանի իշխանությունները հօգուտ վրաց տնտեսվարողների սկսում են հակահայկական քաղաքականություն իրականացնել, ինչը 1918 թ. դեկտեմբերին տեղի ունեցած վրաց-հայկական պատերազմից

հետո առավել ակնհայտ բնույթ է ստանում: Այդ քաղաքականությունը էլ ավելի է խորացնում համաշխարհային պատերազմից հետո Վրաստանում սկիզբ առած տնտեսական ճգնաժամը:

Ազգային ինքնագիտակցության զարթոնքի պայմաններում 1917 թ. մարտի 25-ին վերականգնվում է Վրաց ուղղափառ եկեղեցու *ավտոկեֆալիան* (հուն.ինքնագլուխ): Վրաստանի Հանրապետության մշակութային կյանքում ամենակարևոր իրադարձությունը 1918 թ. հունվարի 26-ին Թիֆլիսում պետական համալսարանի բացումն էր: Անկախության տարիներին գործում էին Թիֆլիսի, Բաթումի, Քութայիսի, Օզուրգեթի, Փոթիի և Գորիի գիմնազիաները, Թիֆլիսի ռազմական ուսումնարանը և կանանց մանկավարժական սեմինարիան, Գորիի մանկավարժական սեմինարիան: Վրաստանի մշակութային կյանքում իրենց ուրույն տեղն ունեին Վրաստանի ազգային թանգարանը, Թիֆլիսի և Քութայիսի թատրոնները, Թիֆլիսի ազգային օպերային թատրոնը և Արվեստի ազգային ակադեմիան: Վրաստանի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում զգալի դերակատարում ունեին «Սաքարթվելոս ռեսպուբլիկա», «Սաքարթվելո», «Էրթոբա», «Սամշոբլո», «Սաքալխո սաքմե», «The Georgian Messenger» և «Georgian Post» (երկուսն էլ հրատարակվել են անգլերեն) թերթերը:

Անկախության հռչակումից հետո Վրաստանն անմիջապես ճանաչվում է Գերմանիայի և Օսմանյան կայսրության կողմից: Փոթիի 1918 թ. հունիսի 28-ի պայմանագրով Գերմանիան Վրաստանը դարձնում է *պրոտեկտորատ.* գեներալ Կրես ֆոն Կրեսսենշտեյնի հրամանատարությամբ շուրջ 30 հազար գերմանացի զինվորներ հաստատվում են Վրաստանում:

1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով Վրաստանի ազգային խորհրդի կողմից վրացական տարածք համարվող շրջանները (ներառյալ Բաթում, Արդահան, Արդվին, Ախալցխա և Ախալքալաք քաղաքները) անցնում են Օսմանյան կայսրությանը:

Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի պարտությունից հետո Վրաստան են ժամանում բրիտանական օկուպացիոն ուժերը: Բրիտանացիների և տեղի բնակչության հարաբերություններն ավելի լարված էին, քան գերմանացիների հետ: Մեծ Բրիտանիայի վերահսկողության տակ գտնվող Բաթումը մինչև 1920 թ. դուրս է մնում վրացական վերահսկողությունից:

Վրաստանի կառավարությունը բանակցում էր Անտանտի ավագ դաշնակիցների հետ՝ հույս ունենալով որևէ մեկից մանդատային տարածքի կարգավիճակ ստանալ: Սակայն 1919 թ. Անտանտի երկրները հրաժարվում են ճանաչել Վրաստանի և այսրկովկասյան մյուս երկու հանրապետությունների անկախությունը՝ ենթադրելով, որ գեներալ Դենիկինի բանակը, հաղթելով քաղաքացիական պատերազմում, կվերականգնի Այսրկովկասի նկատմամբ ռուսական վերահսկողությունը: Միայն 1920 թ. հունվարի 12-ին, երբ ակնհայտ է դառնում Դենիկինի պարտությունը, և Կարմիր բանակը մոտենում է Կովկասին, Անտանտի Գերագույն խորհուրդը (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և Իտալիա) ճանաչում են Վրաստանի և Ադրբեջանի, իսկ ավելի ուշ՝ Հայաստանի դե ֆակտո անկախությունը: Այդ երկրները Ռուսաստանի և Արևելքի երկրների միջև պետք է պատնեշի դեր կատարեին: Թեև Ազգերի լիգային անդամակցելու Վրաստանի դիմումը 1920 թ. դեկտեմբերին մերժվում է, սակայն մեկ տարի անց՝ 1921թ. հունվարի 26-ին, Անտանտի Գերագույն խորհուրդը դե յուրե ճանաչում է Վրաստանի անկախությունը:

1920 թ. ապրիլի 28-ին՝ Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումից հետո, վրացական իշխանությունները, վախենալով 11-րդ Կարմիր բանակի՝ Վրաստան հնարավոր ներխուժումից, զորահավաք և ռազմական դրություն են հայտարարում: Լեհաստանի հետ պատերազմը և Ղրիմում բարոն Վրանգելի բանակի առկայությունը ստիպում են բոլշևիկյան ղեկավարությանը ժամանակավորապես հրաժարվել Վրաստան ներխուժումից:

1920 թ. մայիսի 7-ին Մոսկվայում Խորհրդային Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքվում է պայմանագիր, որով Խորհրդային Ռուսաստանը դառնում է Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը դե յուրե ճանաչած առաջին խոշոր պետությունը՝ պարտավորվելով չմիջամտել նրա ներքին գործերին:

Հարևանների հետ Վրաստանի հարաբերությունները բարդ էին: Հյուսիսային Կովկասից սպառնում էր գեներալ Դենիկինի գլխավորած Կամավորական բանակը: Հայաստանի և Ադրբեջանի հետ Վրաստանն ուներ տարածքային վեճեր: Տարածաշրջանում բոլոր հակաբոլշևիկյան ուժերը համախմբելու նպատակով այս հակամարտություններում Մեծ Բրիտանիան հանդես է գալիս որպես միջնորդ: Կամավորական բանակի ներխուժումը Այսրկովկաս կանխելու նպատակով բրիտանական զինվորական առաքելությունը Կովկասյան գլխավոր լեռնաշղթայով սահմանազատում է անցկացնում Հյուսիսային Կովկասի և Այսրկովկասի միջև: Չնայած Զաքաթալայի (վրացական աղբյուրներում՝ Սաինգիլո) շրջանի համար Ադրբեջանի հետ առկա էր տարածքային վեճ, սակայն այն չի վերածվում զինված հակամարտության, քանի որ երկու հանրապետություններին միավորում էր Դենիկինի ներխուժման սպառնալիքը: Այն չեզոքացնելու նպատակով 1919 թ. հունիսի 16-ին Վրաստանի ու Ադրբեջանի միջև ստորագրվում է փոխադարձ պաշտպանական դաշինքի պայմանագիր:

Հայաբնակ Ջավախքի և Լոռու գավառների համար Հայաստանի և Վրաստանի միջև վեճը 1918 թ. դեկտեմբերին վերաճում է կարճատև պատերազմի: Ֆրանս-բրիտանական միջամտությունից հետո ռազմական գործողությունները դադարում են: Լոռիում ստեղծվում է «չեզոք գոտի», որը 1920 թ. նոյեմբերին Վրաստանը գրավում է՝ օգտվելով հայ-թուրքական պատերազմում հայկական կողմի պարտությունից:

Քաղաքացիական պատերազմում հաղթանակ տանելուց և Ադրբեջանն ու Հայաստանը խորհրդայնացնելուց հետո

Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները որոշում են վերջ տալ Վրաստանի անկախությանը: Օգտվելով Լոռու հայ բնակչության նկատմամբ վրացական զինվորական իշխանությունների չարաշահումներից և ապօրինություններից՝ 1921 թ. փետրվարի 12-ին Կարմիր բանակն առանց պատերազմ հայտարարելու երեք ուղղություններով ներխուժում է Վրաստան: Վրացական 27 հազարանոց բանակը թշնամու գերակշռող ուժերին չի կարողանում արդյունավետ դիմադրություն ցուցաբերել: Փետրվարի 25-ին 11-րդ Կարմիր բանակի ստորաբաժանումները մտնում են Թիֆլիս: Քաղաք է ժամանում վրաց բոլշևիկներից կազմված Վրաստանի հեղափոխական կոմիտեն: Վրաստանը հռչակվում է խորհրդային սոցիալիստական հանրապետություն: Հակամարտությանը միջամտում է նաև Թուրքիան: 1921 թ. մարտի 18-ին Քութայիսում Վրաստանի պաշտպանության նախարար Գրիգոլ Լորդկիպանիձեն և Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Աբել Ենուկիձեն զինադադարի համաձայնագիր են կնքում, որը Կարմիր բանակին թույլ է տալիս թուրքերին դուրս մղել Բաթումից: Նույն օրը վրացական կառավարությունը լքում է երկիրը, և Վրաստանում իշխանությունը փաստացի անցնում է բոլշևիկների ձեռքը:

Արտասահմանում Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության վտարանդի կառավարություն ձևավորելու փորձը ձախողվում է:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞ր քաղաքական ուժն էր մեծամասնություն կազմում Վրաստանի ազգային խորհրդում:

2. 1918 թ. մայիսի 26-ին ո՞ր մարմինն է հռչակում Վրաստանի անկախությունը:

3. Սահմանադրության համաձայն՝ ի՞նչ կառուցվածք և կառավարման ձև ուներ Վրաստանի Հանրապետությունը:

4. Ինչո՞վ էր պայմանավորված Վրաստանի կառավարության վարած հակահայկական քաղաքականությունը:

5. 1918 թ. հունիսի 28-ի Փոթիի պայմանագրով ինչպիսի՞ հարաբերություններ են հաստատվում Վրաստանի և Գերմանիայի միջև:

6. Ինչո՞ւ մինչև 1920 թ. հունվար Անտանտի ավագ դաշնակիցները չէին ճանաչում Վրաստանի անկախությունը:

7. Ո՞ր պետությունն է առաջինը դե յուրե ճանաչում Վրաստանի անկախությունը:

8. Ինչո՞ւ Վրաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճը չի վերածվում ռազմական հակամարտության:

9. Խորհրդային Ռուսաստանի համար ի՞նչն է Վրաստան ներխուժելու առիթ ծառայում:

ԹԵՄԱ II
Խորհրդային Վրաստանը (1921-1980)

11-րդ Կարմիր բանակ՝ Վրաստանը նվաճելուց հետո այն հռչակվում է խորհրդային հանրապետություն: Վրաստանում բարձրագույն իշխանության մարմինը 1921 թ. փետրվարի 26-ին ստեղծված Հեղափոխական կոմիտեն էր, որի նախագահն էր Ֆիլիպե Մախարաձեն: Չնայած Վրաստանի հեղափոխական կոմիտեն անկախ երկրի բարձրագույն իշխանությունն էր, սակայն իրականում Հեղափոխական կոմիտեն ինքնուրույն որոշումներ չէր կարող ընդունել, քանի որ Վրաստանում իրական իշխանություն ուներ Ռուսաստանի Բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական կոմիտեի կովկասյան բյուրոն ՝ Սերգո Օրջոնիկիձեի գլխավորությամբ:

1921 թ. վերջին Վրաստանում անցկացվում են խորհուրդների ընտրություններ, որտեղ սոցիալ-դեմոկրատական և ազգայնական քաղաքական ուժերի հետապնդման պայմաններում հաղթանակ է տանում Վրաստանի բոլշևիկյան կուսակցությունը: 1922 թ. փետրվարի 25-ին Թիֆլիսում բացվում է Վրաստանի խորհուրդների առաջին համագումարը, որն ընդունում է Խորհրդային Վրաստանի առաջին սահմանադրությունը: Այն, ըստ էության, Խորհրդային Ռուսաստանի սահմանադրության կրկնօրինակն էր: Խորհուրդների համագումարների միջև ընկած ժամանակահատվածում Վրաստանի բարձրագույն օրենսդիր իշխանության գործառույթները պետք է իրականացներ Կենտրոնական գործադիր կոմիտեն, որի առաջին նիստում ձևավորվում է կառավարություն՝ Վրաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը: Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Վրաստանում իրական իշխանությունը կենտրոնացած էր Բոլշևիկյան կուսակցության ձեռքում:

Այսպիսով, 1921-1922 թվականներին Վրաստանում Ռուսաստանի օրինակով ձևավորվում է կառավարման տոտալիտար հա-

մակարգ, որը պաշտոնապես կոչվում էր պրոլետարիատի դիկտատուրա, բայց, փաստորեն, այդ քողի տակ թաքնված էր բոլշևիկների կուսացության դիկտատուրան:

Վրաց ժամանակակից պատմագրությունը Խորհրդային Ռուսաստանին մեղադրում է Վրաստանի տարածքում Աբխազիայի, Աջարիայի, Հարավային Օսիայի ինքնավար պետական միավորների ձևավորման, Կարսի 1921 թ. պայմանագրով Տաո-Կլարջեթիի գավառը (հայկական անվանումը՝ Տայք-Կղարջք) Թուրքիային զիջելու, ինչպես նաև նախկին Ռուսական կայսրության Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի հարավային մասի (ներկայիս Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ) Խորհրդային Հայաստանին, իսկ Զաքաթալայի գավառը Խորհրդային Ադրբեջանին կցելու համար:

Բոլշևիկյան կուսակցությունը իր վերահսկողության տակ գտնվող նախկին Ռուսական կայսրության փլատակների վրա ձեռնամուխ է լինում նոր խորհրդային պետության ձևավորմանը: Այսրկովկասում դրա կենսագործման ուղղությամբ առաջին քայլը 1922 թ. դեկտեմբերին Բաքվում տեղի ունեցած Անդրկովկասի Խորհուրդների I համագումարում Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Դաշնային Հանրապետության (ԱԽՍԴՀ) ստեղծումն էր: Նույն ամսի 30-ին Մոսկվայում տեղի ունեցած Խորհուրդների համամիութենական I համագումարում հռչակվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ), որի կազմ, ի թիվս Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի, մտնում է նաև ԱԽՍԴՀ-ն:

Վրաց ժողովուրդը չի համակերպվում անկախության կորստի հետ: 1921 թ. ամռանը ապստամբություն է սկսվում Սվանեթիում: Վրաց կաթողիկոս Ամբրոսիոս Խելիավան 1922 թ. գարնանը տեղի ունեցած Ջենովայի կոնֆերանսին հուշագիր է ուղարկում՝ նկարագրելով Վրաստանում տիրող իրավիճակը Կարմիր բանակի ներխուժումից հետո: Կաթողիկոսի հուշագիրը վրաց ժողովրդի

անունից խորհրդային օկուպացիայի, բոլշևիկյան ռեժիմի վայրագությունների դեմ բողոք էր:

1922 թ. մարտին հակաբոլշևիկյան ընդհատակյա ուժերը ձևավորում են «Ռազմական կենտրոն», իսկ ապրիլ, մայիս ամիսներին՝ միջկուսակցական մարմին, որը պատմության մեջ է մտնում «Վրաստանի անկախության կոմիտե» անունով: Այս ուժերը 1924 թ. օգոստոսի 29-ին համընդհանուր ապստամբություն բարձրացրին: Զուրկ լինելով միասնական ղեկավարությունից՝ ապստամբությունը պարտություն է կրում, մասնակիցների զգալի մասն առանց քննության գնդակահարվում է, իսկ մնացած անդամների դատաքննությունն ավարտվում է սիբիրյան երկարաժամկետ աքսորով:

Խորհրդային վարչակարգի հաստատման և նրա վերափոխման շրջանում (XX դարի 20-ականների առաջին կես) նկատվում է տնտեսության անկում և սոցիալական հարաբերությունների վատթարացում: Այն շարունակվում է 20-ականների երկրորդ կեսին: Հասկանալի է, որ Վրաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության քաղաքական ղեկավարությունը չէր կարող ունենալ ճգնաժամային իրավիճակից դուրս գալու իր հայեցակարգը, քանի որ նրա տնտեսությունը Խորհրդային Միության տնտեսության կցորդն էր:

1925-1927 թթ. Խորհրդային Միության քաղաքական առաջնորդները Իոսիֆ Ստալինի գլխավորությամբ մշակում են երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման երկարաժամկետ ծրագիր: Այն պաշտոնապես կոչվում էր սոցիալիստական շինարարություն, իսկ դրա պլանը նախանշում էր երկու հիմնական խնդիրների լուծում: Առաջինը երկրում քաղաքական, տնտեսական և սոցիալական ճգնաժամի վերացումը և խորհրդային իշխանության պահպանումն էր: Երկրորդը՝ թշնամական միջազգային միջավայրում գտնվող երկրում քաղաքա-

կան, տնտեսական և սոցիալական նոր համակարգի ձևավորումն ու ամրապնդումը:

Գյուղում տիրող իրավիճակը վտանգ էր ներկայացնում խորհրդային իշխանության համար: Գյուղատնտեսական մթերքի մի մասը արտադրում էին հարուստ գյուղացիները՝ կուլակները, որոնք թշնամաբար էին տրամադրված խորհրդային կարգերի նկատմամբ և սնունդ էին ապահովում բանակի և քաղաքային բնակչության համար: Հացահատիկի արտահանումն այդ ժամանակ երկրի ոսկու պաշարների համալրման կարևոր աղբյուր էր:

Իոսիֆ Ստալինի կարծիքով, գյուղում խորհրդային իշխանությունն ամրապնդելու համար անհրաժեշտ էր ոչնչացնել մասնավոր սեփականությունը: ԽՍՀՄ ղեկավարությունը այդ խնդրի լուծման լավագույն ձևը համարում էր գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվ կառավարումը (կոլտնտեսություններ): Գյուղացիները պետք է միավորվեին կոլտնտեսություններում:

Այսպես, գյուղում մասնավոր սեփականությունը փոխարինվում է կոլեկտիվ սեփականությամբ, որն իրականում չէր պատկանում կոլեկտիվին: Կոլեկտիվ գյուղացիական աշխատանքով ձեռք բերված արտադրանքը փաստացի վերահսկվում էր պետության կողմից:

1930-ական թթ. սկզբից, կոլեկտիվ տնտեսության աճի հետ, գյուղատնտեսական արտադրության մեջ մասնավոր տնտեսությունների մասնաբաժինն աստիճանաբար նվազում է: Կոլեկտիվացման տարիներին շատ մարդիկ անարդարացիորեն բռնադատվում են: Կոլեկտիվացման հետևանքով մեծապես տուժում է գյուղատնտեսությունը, արտադրությունը նվազում է, գյուղացիությունը կորցնում է նյութական հետաքրքրությունն իր աշխատանքի նկատմամբ:

XX դ. 20-ականների կեսերին արդյունաբերական արտադրությունը ցածր մակարդակի վրա էր, ինչը չի փոխվում նաև հետագա տարիներին: Արդյունաբերության ազգայնացման հե-

տևանքը լինում է աշխատանքի արտադրողականության կտրուկ անկումը, արտադրանքի քանակի կրճատումը և որակի վատթարացումը:

Այսպիսով, Վրաստանում XX դ. 20-ականների վերջից մինչև 30-ականների վերջը մասնավոր սեփականության վրա հիմնված կապիտալիստական հարաբերությունները դադարում են, և ներդրվում է պետական սեփականության վրա հիմնված տնտեսական համակարգ:

1936 թ. Խորհրդային Միության Խորհուրդների VIII արտահերթ համագումարը հաստատում է նոր սահմանադրությունը: Երկրի քաղաքական ղեկավարությունը պաշտոնապես հայտարարում է, որ Խորհրդային Միությունում կառուցվել է սոցիալիստական հասարակություն: 1936 թ. Սահմանադրության ընդունումից հետո երկրի քաղաքական կյանքում պահպանվում է Կոմունիստական կուսակցության առաջատար դերը, ավելի ճիշտ՝ Կոմկուսի դիկտատուրան ի վերջո վերաճում է Իոսիֆ Ստալինի միանձնյա դիկտատուրայի:

1936 թ. Սահմանադրությամբ վերացվում է Անդրկովկասյան Հանրապետությունների Դաշնային Միությունը, իսկ Վրաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը, որպես առանձին միութենական հանրապետություններ, մտնում են Խորհրդային Միության կազմի մեջ:

XX դ. 30-ականների կեսին ակնհայտ է դառնում, որ սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունները ճգնաժամ են ապրում: Այդ իրավիճակում Իոսիֆ Ստալինը առաջ է քաշում երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման իր ծրագիրը, ըստ որի՝ թեև սոցիալիստական պետական համակարգը հակադրվում էր կապիտալիստական համակարգին, սակայն զգալիորեն տարբերվում էր սոցիալիզմի ավանդական ըմբռնումից: Ստալինի ծրագրային կուրսը բազմաթիվ հին բոլշևիկների, պրոֆեսիոնալ հեղափոխականների համար անընդունելի էր, իսկ քա-

ղաքական ղեկավարության մեջ նա ուներ ակնհայտ ու թաքնված հակառակորդներ:

Ակնհայտ էր, որ անհնար էր Ստալինի և նրա հակառակորդների միջև փոխզիջման հասնել: Խորհրդային Միությունը պետք է գնար կա՛մ արդեն կայացած, ավանդական սոցիալիստական զարգացման ճանապարհով, կա՛մ իրագործեր ստալինյան մոդելը: 1927 թ. սկսվում են ստալինյան քաղաքական բռնաճնշումները, և մինչև 1934 թ. բուռն պայքար էր գնում Ստալինի և նրա քաղաքական հակառակորդների միջև:

1934-1938 թթ. Ստալինը տարբեր պատճառներով իր բոլոր հայտնի քաղաքական հակառակորդներին կա՛մ ֆիզիկապես ոչնչացնում է, կա՛մ նետում զնդանները, կա՛մ աքսորում է: Բռնաճնշումների զոհ են դառնում Կոմկուսի բազմաթիվ առաջատար պաշտոնյաներ, բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունների ներկայացուցիչներ, ռազմական ղեկավարներ և այլք: Միութենական բոլոր հանրապետությունների վարչատարածքային միավորներում (գյուղ, շրջան, քաղաք) տեղի են ունենում դաժան հաշվեհարդարներ: Բռնաղատվում են նաև քաղաքականությունից հեռու մարդիկ: Առանձնապես տուժում է մտավորականությունը: Դրա մի զգալի մասը ոչնչացվում է, իսկ նրանք, ովքեր փրկվում են, հայտնվում են բարոյահոգեբանական ծանր վիճակում: Անվանի պատմաբան, արևելագետ Իվանե Ջավախիշվիլին ստիպված է լինում լքել իր հիմնադրած Թիֆլիսի համալսարանը:

Վրաստանում XX դ. 30-ականների բռնաճնշումներն ընդունված է վերագրել Լավրենտի Բերիային, որը 1932 թ. զբաղեցնում էր Համամիութենական կոմկուսի Անդրկովկասյան երկրամասային կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոնը՝ միաժամանակ պահպանելով Վրաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը:

1941 թ. հունիսի 22-ին Գերմանիայի հարձակմամբ ԽՍՀՄ-ը ներքաշվում է Երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ: Պա-

տերազմի հենց սկզբում Մոսկվայի հրահանգով Վրաստանում իրականացվում է բնակչության համընդհանուր զորահավաք: Պատերազմի առաջին շաբաթվա ընթացքում Վրաստանից ռազմաճակատ է ուղարկվում մոտավորապես 100 հազար մարդ, իսկ 1942 թ. գարնանը զորակոչվում է ևս 350 հազար մարդ: Պատերազմական իրավիճակում տնտեսության վերակազմավորումը Վրաստանի համար դժվարին գործընթաց էր: Ամբողջ ուշադրությունն ուղղված էր այն օգտակար հանածոների արդյունահանմանը, որոնք անհրաժեշտ էին ռազմական արդյունաբերության համար: Վրաստանի բնակչության ուսերին է ընկնում պաշտպանական կառույցներում աշխատելու ծանր բեռը: Անտանելի է դառնում գյուղացիների կյանքը. մթերատվության պահանջվող քանակը աստղաբաշխական չափերի է հասնում: Գյուղական բնակչությունը սովի էր մատնվել:

Խորհրդային ռազմաքաղաքական ղեկավարությունը որոշեց ստեղծել ազգային ռազմական միավորումներ: 1942 թ. կազմավորվում է վրացական երեք դիվիզիա, որոնք 1942-1943 թթ. ծանր մարտերի են մասնակցում Ղրիմում և Կովկասում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի խորհրդա-գերմանական ճակատներում շատ վրացիներ են կռվել գերմանական բանակում և հատուկ ռազմական կազմավորումներում:

1941 թ. վերջին Գերմանիայի ռազմական հետախուզությունը սկսում է վրացի գաղթականներից և ռազմագերիներից ձևավորել հատուկ ռազմական կազմավորումներ: Ստեղծվում է երկու գումարտակ՝ «Թամար I» և «Թամար II»: Գերմանական ռազմական հետախուզությունը նպատակահարմար է գտնում ստեղծել հատուկ ռազմական կազմավորում՝ Կովկասում ռազմական գործողությունների, իսկ Կովկասի օկուպացումից հետո՝ հատուկ ծառայության համար, և ստեղծվում է «Բերգման» կազմավորումը, որին էլ այնուհետև միացվում է «Թամար II-ը»: 1941 թ. վերջին և 1942 թ. սկզբին գերմանացիների կողմից օկուպացված Լեհաստանի

տարածքում ստեղծվում է «Վրացական Օստլեգիոն», որի հրամանատարը գեներալ Շալվա Մագլակելիձեն էր: Ընդհանուր առմամբ, ստեղծվում է յոթ վրացական գումարտակ: 1942-1943 թթ. գերմանական հրամանատարությունը Կովկասի համար մղվող մարտերում դրանք օգտագործում է «Բերգմանի» հետ: Պատերազմի վերջին փուլում վրացական մեկ գումարտակ գերմանացիները տեղափոխում են Հոլանդիայի Տեքսել կղզի:

Հետպատերազմյան հնգամյակի ընթացքում Վրաստանի արդյունաբերությունը թռիչքաձև զարգանում է: Գործարկվում են Ռուսթավի մետալուրգիական, Քութայիսի ավտոմոբիլաշինական, Թիֆլիսի էլեկտրաքարշերի գործարանները, Չիտաուրի մանգանի ֆաբրիկան: Սակայն արդյունաբերական այդ հսկաների շահագործումը քիչ էր կապված Վրաստանի տնտեսական շահի հետ և ծառայում էր ԽՍՀՄ ռազմարդյունաբերական համալիրի կարիքներին:

Պատերազմի ավարտը չի հանգեցնում բռնաճնշումների վերացմանը. 1948 թ. հակախորհրդային գործունեության մեղադրանքով ձերբակալվում են Թբիլիսիի պետական համալսարանի 11 ուսանող, որոնցից 9-ը դատապարտվում է առավելագույն՝ 25 տարվա ազատազրկման:

Խորհրդային իշխանությունները «անցանկալի մթնոլորտի» ձևավորման մեջ առանձնապես վտանգավոր էին համարում արտասահմանից վերադարձած նախկին ռազմագերիներին և ներգաղթյալներին, որոնք, իրազեկ լինելով Արևմուտքի կյանքի ավելի բարձր մակարդակին, կարող էին այդ տեղեկությունը տարածել: 1951 թ. վերջին այս մարդկանց Վրաստանից վտարելու գաղտնի ծրագիր է մշակվում, և մեկ գիշերվա ընթացքում՝ 1951 թ. դեկտեմբերի 25-ին, տեղահանվում է մոտ 20 հազար մարդ, այդ թվում՝ կանայք, ծերեր և երեխաներ: Հատուկ ձևավորված երկաթուղային շարժակազմերով նրանք աքսորվում են Միջին Ասիա և Ղազախստան: Նրանց մի զգալի մասը մահանում է, իսկ փրկված-

ները հայրենիք վերադառնալու իրավունք են ստանում միայն 1954 թ.:

1951 թ. վերջին Ստալինի նախաձեռնությամբ երևան է գալիս, այսպես կոչված, «Մեգրելական գործը»: Կյանքի վերջին տարիներին Ստալինը կասկածամտությամբ էր հետևում ծագումով մեգրել Բերիային: Ենթադրվում է, որ «Մեգրելական գործն» ուղղված էր Բերիայի և նրա մերձավորների դեմ: Մեգրել մի խումբ բարձրաստիճան պաշտոնյաների ներկայացվում են բազմաթիվ կեղծ մեղադրանքներ: Բացի «մեգրելական ազգայնականությունից», նրանք մեղադրվում էին նաև Վրաստանը Խորհրդային Միությունից անջատելու և Թուրքիային միացնելու փորձի, ինչպես նաև օտարերկրյա հետախուզական ծառայությունների հետ կապ ունենալու մեջ:

1956 թ. ԽՄԿԿ XX համագումարում ԽՍՀՄ ղեկավար Խրուշչովի զեկույցում դատապարտվում են Ստալինի անձի պաշտամունքը և վերջինիս կառավարման օրոք իրականացված զանգվածային բռնաճնշումները: Այդ ելույթի ժամանակ Խրուշչովը արհամարհանքով է արտահայտվում Ստալինի վրացական ծագման մասին, որը Վրաստանում համարվում է ազգային արժանապատվության վիրավորանք: Մարտի 3- 9-ը Վրաստանի ողջ տարածքում տեղի են ունենում բողոքի բազմահազարանոց ցույցեր, որի մասնակիցները պահանջում էին ԽՍՀՄ ղեկավարության հրաժարականը և Ստալինի անձի պաշտամունքը դատապարտող քարոզչության դադարեցում: Մարտի 9-ին Խորհրդային բանակի ստորաբաժանումները Թիֆլիսում ռազմական տեխնիկայի օգտագործմամբ անհամաչափ ուժ են կիրառում ցուցարարների նկատմամբ: Ավելի քան 150 մարդ է զոհվում, շատերը վիրավորվում են ու հաշմանդամ դառնում: Այս ողբերգությունը հանգեցնում է ազգային շարժման նոր վերելքի: Սկսում են ձևավորվել հակախորհրդային ընդհատակյա կազմակերպություններ: Զվիադ Գամսախուրդիայի նախաձեռնությամբ 1954 թ. ստեղծվում են

«Գորգասլիանի» և «Սղնախի երիտասարդական գվարդիա» գաղտնի կազմակերպությունները: Վերջինս կարողանում է հրապարակել «Սիմերի» (Լար) անլեգալ հանդեսի մի քանի համար:

XX դ. 60-70-ական թթ. Վրացական ԽՍՀ մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը այսրկովկասյան հանրապետություններից ամենացածրն էր: Վրաստանը այդ ցուցանիշով ԽՍՀՄ 15 հանրապետություններից 11-րդն էր: ԽՍՀՄ-ում սկիզբ առած սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում խորհրդային մի շարք հանրապետություններում, այդ թվում՝ Վրաստանում, առաջանում են այլախոհական շարժումներ: 1976 թ. Թիֆլիսում ստեղծվում է Մարդու իրավունքների պաշտպանության նախաձեռնող խումբը, որի հիմքի վրա նույն թվականին հիմնադրվում է Հելսինկյան խումբը (1989 թ. այն վերանվանվում է «Հելսինկյան միություն»), որի կազմում էին Զվիադ Գամսախուրդիան, Մերաբ Կոստավան և այլք: 1976 թ. Վրաստանի Հելսինկյան խումբը հրատարակում է Զվիադ Գամսախուրդիայի խմբագրած «Սաքարթվելոս մեռմբե» ամսագրի առաջին համարը: 1978 թ. Զվիադ Գամսախուրդիան և Մերաբ Կոստավան ձերբակալվում են:

«Վրաստանի հելսինկյան խումբը» երկրում առաջին օրինական ընդդիմադիր կազմակերպությունն էր: Չնայած փոքրաթիվ լինելուն՝ նրա գործունեությունը էական ազդեցություն է ունենում Վրաստանի հասարակական կյանքի վրա:

1978 թ. ապրիլին Թիֆլիսում սկիզբ են առնում բողոքի ցույցեր, որոնց դրդապատճառը Խորհրդային Վրաստանի նոր սահմանադրության նախագծում վրացերենին պետական կարգավիճակ չտալն էր: Վրաստանի կոմկուսի ղեկավար Է. Շևարդնաձեի հորդորից հետո ԽՍՀՄ ղեկավարությունը համաձայնում է Վրաստանի Սահմանադրությամբ, ռուսերենից բացի, պետական կարգավիճակ շնորհել նաև վրացերենին:

ՀԱՐՑԵՐ

1. Վրաստանի խորհրդային առաջին սահմանադրության համաձայն՝ ո՞ր մարմիններին էր վերապահված գործադիր և օրենսդիր բարձրագույն իշխանությունը:

2. Ի՞նչ բովանդակություն ուներ 1922 թ. Ջենովայի կոնֆերանսին ուղղված վրաց կաթողիկոսի հուշագիրը:

3. Ինչո՞ւ խորհրդային իշխանության հաստատման առաջին տասնամյակում Վրաստանի ղեկավարությունը չուներ տնտեսական ճգնաժամից դուրս գալու իր հայեցակարգը:

4. Ի՞նչ քաղաքական փոփոխություններ է կրում Վրաստանը 1936 թ. ԽՍՀՄ սահմանադրության ընդունումից հետո:

5. Վրաստանում ո՞ւմ անվան հետ են կապվում XX դ. 20-30-ական թվականների բռնաճնշումները:

6. Ինչո՞ւ է Ստալինը նախաձեռնում «Մեգրելական գործը»:

7. Ինչո՞ւ է ԽՄԿԿ XX համագումարում Խրուշչովի ճառը Վրաստանում բողոքի բազմահազարանոց ցույցերի պատճառ դառնում:

8. Ո՞րն էր 1978 թ. Զվիադ Գամսախուրդիայի և Մերաբ Կոստավայի ձերբակալման պատճառը:

ԹԵՄԱ III
Վրաստանի անկախության վերականգնումը

XX դ. 80-ականների կեսերից ԽՍՀՄ-ը բախվում է սոցիալ-տնտեսական և քաղաքական բարդ խնդիրների: Բարեփոխումներն արդյունք չեն տալիս: ԽՍՀՄ առանձին հանրապետություններում ծավալված ազգային շարժումներն ավելի արմատական բնույթ են ստանում: Կոմունիստական ռեժիմի ճգնաժամը համընդհանուր է դառնում: Արևելյան Եվրոպայի երկրներում սոցիալիստական համակարգի փլուզումը նպաստում է ԽՍՀՄ-ում կոմունիստական իշխանության վերացմանը և խորհրդային պետության փլուզմանը:

80-ականների երկրորդ կեսից Մերձբալթյան հանրապետություններում, Վրաստանում և Հայաստանում ազգային շարժման մեծ վերելք է տեղի ունենում: ԽՍՀՄ-ում իրականացվող «Վերակառուցման» քաղաքականությունը նպաստում է Վրաստանում քաղաքական խմբերի և կազմակերպությունների ձևավորմանը, որոնք տարբեր նպատակներ ու գործունեության ուղղություններ ունեին:

Խորհրդային Վրաստանի առաջին քաղաքական կազմակերպություններից էր 1987 թ. հիմնադրված «Իլյա Ճավճավաձեի ընկերությունը», որի նպատակն էր պայքարել Վրաստանի ազատագրման, ժողովրդավարության և շուկայական տնտեսավարման համար:

Վրաստանում համազգային շարժման հիմնական ուժը Թիֆլիսի պետական համալսարանի ուսանողական խորհուրդն էր և մամուլի ակումբը: 1988 թ. համալսարանի ուսանողները պահանջում են, որ խորհրդային հրետանու հրաձգարանը հեռացվի Դավիթ Գարեջիի վանական համալիրին հարակից տարածքից:

1988 թ. նոյեմբերին ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները քննարկման են դնում նոր սահմանադրության նախագիծը, որը

ներառում էր խորհրդային պետության փլուզումը կանխելուն կոչ-
ված հոդվածներ: Վրաց հասարակական-քաղաքական կազմա-
կերպությունների զգալի մասը պահանջում էր փոփոխել այդ հոդ-
վածները և վերականգնել հանրապետությունների՝ ԽՍՀՄ-ից ա-
զատորեն անջատվելու իրավունքը: 1988 թ. նոյեմբերին Թիֆլի-
սում՝ կառավարության շենքի դիմաց, մի խումբ վրացի երիտա-
սարդներ հացադուլ են հայտարարում: Իշխանությունը ստիպված
զիջումների է գնում: Վրաստանի Գերագույն խորհրդի նախագա-
հությունը պահանջում է միութենական հանրապետությունների
իրավունքները սահմանափակող փոփոխությունները հանել
ԽՍՀՄ Սահմանադրությունից: Մոսկվան բավարարում է այդ պա-
հանջը, ինչից հետո կառավարության շենքի դիմաց բողոքի ակ-
ցիան դադարում է:

1989 թ. գարնանը Լիխնի գյուղում տեղի է ունենում բազմա-
հազարանոց ցույց, որով սկիզբ է դրվում Վրաստանից անջատվե-
լուն և Ռուսաստանի կազմի մեջ մտնելուն միտված աբխազական
անջատողական շարժմանը: 1989 թ. ապրիլի 4-ից Թիֆլիսում՝ կա-
ռավարության շենքի դիմաց, բողոքի ցույցեր են սկսվում: Ցուցա-
րարները պահանջում են վերացնել Աբխազիայի ինքնավարու-
թյունը: Այս շարժմանը միանում են տարբեր քաղաքական կազ-
մակերպություններ: Սակայն Աբխազիայի ինքնավարության վե-
րացման պահանջը հետին պլան է մղվում, և ցուցարարներն
առաջ են քաշում Վրաստանի պետական անկախության վերա-
կանգնման պահանջը: Կառավարության շենքի դիմաց մի խումբ
երիտասարդներ հացադուլ են հայտարարում:

Քաղաքական արմատական պահանջները ծայրահեղ թե-
ժացնում են իրավիճակը երկրում, հանգեցնում ազգային շարժ-
ման և իշխող ուժի հետ սուր առճակատման: ԽՍՀՄ քաղաքական
ղեկավարությունը որոշում է վճռական միջոցներ ձեռնարկել ազ-
գային շարժումը ճնշելու համար:

1989 թ. ապրիլի 8-ին Վրաստանի կոմունիստական կուսակցության ակտիվիստների ժողովը պաշտպանում է ցուցարարների դեմ ուժ կիրառելու առաջարկը: 1989 թ. ապրիլի 9-ի առավոտից կառավարության շենքի դիմաց մարտական պատրաստության են բերվում Անդրկովկասյան ռազմական օկրուգի զորամասերը և Խորհրդային Միության ներքին զորքերի հատուկ նշանակության ջոկատը: Ցույցը ցրելու գործողությունն անձամբ ղեկավարում է Անդրկովկասյան ռազմական օկրուգի հրամանատար, գեներալ Իգոր Ռոդիոնովը:

1989 թ. ապրիլի 9-ի լուսադեմին պատժիչ ուժերը բոլոր կողմերից շրջապատում են ցուցարարներին: Զինվորները ներխուժում են կառավարության շենքի դիմացի հրապարակ և հարձակվում անպաշտպան ցուցարարների վրա՝ կիրառելով մահակներ, հատուկ սրած բահեր և արցունքաբեր գազ: Մի քանի րոպեում հարձակվող զինվորները հրապարակը ազատում են ցուցարարներից: Պատժիչ գործողության հետևանքով զոհվում է 19 մարդ, որոնցից 16-ը՝ կանայք: Թիֆլիսում արտակարգ դրություն է մտցվում: Ապրիլի 10-ին շրջափակվում է պետական համալսարանը, որտեղ կենտրոնացած էր երկրի ազգային-հայրենասիրական ուժերի զգալի մասը: Պրոֆեսորադասախոսական կազմի և մի խումբ ուսանողների ողջամիտ գործողությունների շնորհիվ հնարավոր է լինում կանխել սադրանքն ու արյունալի բախումը:

1989 թ. ապրիլի 9-ի ողբերգական իրադարձությունները շրջադարձային եղան Վրաստանի քաղաքական կյանքում: Դրանք Վրաստանում կոմունիստական ղեկավարության հեղինակության վերջնական անկման պատճառ դարձան:

Ընդդիմադիր քաղաքական կուսակցությունները նույն թվականի ապրիլին ստեղծում են Ազգային փրկության կոմիտե, որի կարևորագույն խնդիրներն էին Վրաստանի անջատումը ԽՍՀՄ-ից և անկախության վերականգնումը, որը պետք է իրականացվեր փուլերով:

Ազգային փրկության կոմիտեի մշակած պայքարի մարտավարությունը նախատեսում էր բողոքի խաղաղ ցույցերի միջոցով (հացադուլներ, հանրահավաքներ, գործադուլներ) խորհրդային իշխանության կառույցների աստիճանական վերացում:

1990 թ. մարտին Թիֆլիսում տեղի է ունենում Վրաստանի տարբեր քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների արտահերթ համաժողով: Համաժողովը ստեղծում է Ազգային ֆորում, որն ուղղորդելու էր ազգային շարժումը: Մի շարք պատճառներով այն շուտով մասնատվում է: Զվիադ Գամսախուրդիայի կողմնակիցները ստեղծում են նոր քաղաքական միավորում՝ «Կլոր սեղան-Ազատ Վրաստան» անվամբ դաշինքը: 1990 թ. մայիսին Ազգային ֆորումում մնացած քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները որոշում են Ազգային կոնգրեսի ընտրություններ անցկացնել:

1990 թ. մարտի 9-ին Վրաստանի Գերագույն խորհուրդն ընդունում է «Պետական ինքնիշխանության պաշտպանության երաշխիքների մասին» բանաձև, որով ապօրինի է ճանաչվում Վրաստանում 70 տարի գոյություն ունեցած խորհրդային իշխանությունը: Վերը նշվածը իրավական հիմք է հանդիսանում Վրաստանում նոր՝ բազմակուսակցական ընտրությունների անցկացման համար: Նոր ընտրական օրենքով Վրաստանում ընտրությունները պետք է լինեին ուղղակի, համընդհանուր, բազմակուսակցական սկզբունքով: 1990 թ. հոկտեմբերի 28-ին կայացած Վրաստանի Գերագույն խորհրդի ընտրություններում հաղթում է «Կլոր սեղան-Ազատ Վրաստան» դաշինքը: 1990 թ. նոյեմբերի 14-ին Վրաստանի Գերագույն խորհրդի նիստերի դահլիճում մեկնարկում է Վրաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին գումարման նստաշրջանը:

Զվիադ Գամսախուրդիան փակ գաղտնի քվեարկությամբ ընտրվում է Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահ: Հենց առաջին նստաշրջանում ընդունվում են «Վրաստանի Հանրապե-

տությունում անցումային շրջան հայտարարելու մասին», Վրաստանի Հանրապետության անվան փոփոխության, հանրապետության պետական զինանշանի, ինչպես նաև Վրաստանի Հանրապետության պետական դրոշի և օրհներգի մասին օրենքները:

Վրաստանի նոր Սահմանադրության նախագիծ կազմելու համար ստեղծվում է հանձնաժողով: Կասեցվում է Վրաստանում պարտադիր զինվորական ծառայության մասին խորհրդային օրենքը:

1990 թ. դեկտեմբերին Վրաստանի տարածքում դադարեցվում են խորհուրդների լիազորությունները, իսկ 1991 թ. նոյեմբերին լուծարվում է խորհուրդների տեղական համակարգը, և օրենք է ընդունվում տեղական ինքնակառավարման մարմինների՝ *սակրեբուլոների* ընտրությունների անցկացման վերաբերյալ:

Վրաստանի լիակատար անկախության վերականգնման ճանապարհին չափազանց կարևոր էր 1991 թ. մարտի 31-ին տեղի ունեցած հանրաքվեն, որով 1918 թ. մայիսի 26-ին ընդունված «Վրաստանի անկախության ակտի» հիման վրա վերականգնվում է Վրաստանի պետական անկախությունը: Հանրաքվեի արդյունքներով Վրաստանի Գերագույն խորհուրդը 1991 թ. ապրիլի 9-ին ընդունում է Վրաստանի պետական անկախության վերականգնման մասին ակտը:

1991 թ. ապրիլի 14-ին, Վրաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշմամբ, Զվիադ Գամսախուրդիան ընտրվում է Վրաստանի նախագահ, իսկ 1991 թ. մայիսի 26-ի՝ Վրաստանի Հանրապետության ղեկավարի համապետական ընտրություններում Զվիադ Գամսախուրդիան դառնում է Վրաստանի նախագահ:

ՀԱՐՑԵՐ

1. Ո՞րն էր Վրաստանի ազգային շարժման հիմնական ուժը XX դ. 80-ական թվականների վերջին:

2. Ի՞նչ էր պահանջում վրաց հասարակական-քաղաքական կազմակերպությունների զգալի մասը 1988 թ. նոյեմբերին:

3. Ի՞նչ իրադարձություններ են տեղի ունենում Թիֆլիսում 1988 թ. ապրիլի 9-ին:

4. Ո՞րն էր 1988 թ. ապրիլին ընդդիմադիր ուժերի ստեղծած Վրաստանի ազգային փրկության կոմիտեի խնդիրը:

5. Ի՞նչ ազդեցություն է ունենում Վրաստանի Գերագույն խորհրդի՝ 1990 թ. մարտի 9-ին ընդունած «Պետական ինքնիշխանության պաշտպանության երաշխիքների մասին» բանաձևը:

6. Ո՞վ էր Վրաստանի Հանրապետության առաջին նախագահը:

ԹԵՄԱ IV
Արևելյան Այսրկովկասը 1900-1918 թթ.

XX դ. սկզբին Ապշերոնի նավթարդյունաբերությունը հայտնվում է ճգնաժամի մեջ: Դրա հիմնական պատճառը նավթի մենաշնորհային արտադրությունն էր և կարճաժամկետ գերշահույթ ստանալու նպատակով նավթային պաշարների անխնա շահագործումը: Դարասկզբին Ապշերոնի թերակղզու նավթի 50 տոկոսից ավելին արտադրվել է երեք խոշոր ընկերությունների՝ Նոբել եղբայրներին պատկանող «Բարնոբել», Ռոթշիլդներին պատկանող «Ռոյալ դատչ շելլ» և հայ գործարարներ Լիանոզովի, Արամյանցի ու Մանթաշյանցի գործընկերությամբ ստեղծված «Ռուսական գլխավոր նավթային կորպորացիայի» կողմից:

XX դ. սկիզբը նշանավորվում է Ռուսաստանի խոշորագույն արդյունաբերական կենտրոններից մեկը հանդիսացող բազմազգ Բաքվում սոցիալական բողոքի հզոր շարժման տարածմամբ: Դա պայմանավորված էր նրանով, որ Բաքվի նավթաբեր շրջանում արտադրության բարձր շահութաբերություն ապահովելու համար կապիտալիստներն անխնա շահագործում էին բանվորական էժան աշխատուժը: Այդ սոցիալական բողոքը պարարտ հող էր տարաբնույթ գաղափարաքաղաքական հոսանքների տարածման համար, որոնցից սոցիալիստական գաղափարախոսությունն ու պանթուրքիզմը ձևավորելու էին Արևելյան Այսրկովկասի ապագա սոցիալ-քաղաքական լանդշաֆտը:

1901 թ. սկզբին Բաքվում գործող 15 սոցիալ-դեմոկրատական խմբակների հիմքի վրա ստեղծվում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (ՌՍԴԲԿ) Բաքվի կոմիտեն:

Այսրկովկասում սոցիալ-տնտեսական և քաղաքական այս զարգացումները թուրք-թաթարական ազգաբնակչության շրջանում հանգեցնում են ազգային ինքնագիտակցության ձևավոր-

ման: Իսլամի կրոնական միասնության փոխարեն տարածում է գտնում բոլոր թյուրքերի համախմբման, այլ ազգերի նկատմամբ նրանց ռասայական գերազանցության գաղափարախոսությունը՝ պանթուրքիզմը: Թյուրք-թաթարական բուրժուազիայի ներկայացուցիչներ Թաղիևի, Մուխթարովի, Աշուրբեկովի ֆինանսավորմամբ Ահմեդ-բեկ Աղաևի, Ալի-բեկ Հուսեյնզադեի, Ալիմարդան-բեկ Թոփչիբաշևի, Մամեդ Էմին Ռասուլզադեի կողմից հրատարակվող «Հայաթ», «Իրշադ», «Ֆիյուզաթ», «Աչըղ սեզ», «Շալալա», «Կասպի» թուրքամետ թերթերի էջերից ակտիվորեն քարոզվում են պանթուրքիստների ազգայնական գաղափարները:

1904 թ. վերջին հասունացող հեղափոխական ճգնաժամի պայմաններում Բաքվում ձևավորվում է մահմեդական առաջին սոցիալ-դեմոկրատական «Գումմեթ» կազմակերպությունը: 1905-1907 թթ. ռուսական հեղափոխությունը ներկայիս Ադրբեջանի տարածքում սոցիալ-քաղաքական բուռն զարգացումների կատալիզատորի դեր է խաղում:

1905 թ. օգոստոսին Նիժնի Նովգորոդում տեղի է ունենում Մահմեդականների համառուսաստանյան առաջին համագումարը: Համագումարում զեկուցումով հանդես է գալիս Թոփչիբաշևը: Զեկուցման հիմքում Ռուսաստանում ապրող թյուրք ժողովուրդներին պանթուրքիզմի գաղափարական հենքի վրա միավորելու գաղափարն էր: Համագումարում որոշվում է ստեղծել Համառուսաստանյան մահմեդական միություն՝ «Իթթիֆակի-Մուսլիմին»: Այս կազմակերպության՝ մեկ տարի անց տեղի ունեցած երրորդ համագումարում որոշում է կայացվում Բաքվում հիմնել պանթուրքիստական այս կառույցի՝ մշտական գործող ղեկավար կոմիտե: Այսրկովկասում պանթուրքիստական շարժման առաջնորդներն էին Ալի-բեկ Հուսեյնզադեն և Ահմեդ-բեկ Աղաևը: Նրանք են առաջին անգամ ձևակերպել այն դիրքորոշումը, որի համաձայն Այսրկովկասի թուրքերը մեկ թյուրքական էթնոսի մաս են կազմում:

1905-1906 թթ. հայ-թաթարական արյունալի բախումները Արևելյան Այսրկովկասում, Արցախում և Նախիջևանում խթան են հանդիսանում պանթուրքիստական տեղական կազմակերպությունների ձևավորման համար: Դրանցից ամենախոշորը Ահմեդբեկ Աղաևի գլխավորած «Դիֆայի» ահաբեկչական կազմակերպությունն էր, որը, բացի Բաքվից, մասնաճյուղեր ուներ Ելիզավետպոլում, Շուշիում, Աղդամում, Բարդայում, Նախիջևանում և այլ քաղաքներում:

Հայ-թաթարական բախումները պայմանավորված էին հեղափոխական շարժումներից հայերին և թաթարներին շեղելու, հայ գործարարներին շուկայում ունեցած առաջատար տեղերից դուրս մղելու՝ ցարական իշխանությունների և թաթարական ձևավորվող էլիտայի ցանկությամբ:

Հակամարտության հրահրման գործում որոշակի դեր են ունեցել նաև Ռուսաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված Անգլիան, Ճապոնիան և Օսմանյան կայսրությունը: Այդ երկրների նպատակը Ռուսաստանի տնտեսական հզորությունը խարխլելն էր, ինչն իրականացնելու համար նրանց հատուկ ծառայություններն օգտվում էին խիստ ցածր վարձատրվող, ծագումով իրանցի թյուրք բանվորների դժգոհությունից: Ազգամիջյան այս հակամարտությունը ծանր հարված է հասցնում նավթարդյունաբերությանը: Տեղի էին ունենում զանգվածային սպանություններ և նավթահանքերի հրկիզումներ: 1905 թ. օգոստոսյան բախումների ժամանակ Ապշերոնում գործող 3133 նավթային հարթակներից 1795-ը ոչնչացվում են, 68 նավթավերամշակման գործարաններից 24-ը դադարեցնում են իրենց գործունեությունը: Բնականաբար, նավթի արդյունահանումն ու վերամշակումը Ռուսաստանում կտրուկ նվազում են, և երկար տարիներ հնարավոր չի լինում վերականգնել մինչ հայ-թաթարական բախումները եղած մակարդակը:

Այսրկովկասի թաթարների քաղաքական կյանքում ուշագրավ իրադարձություն էր «Մուսափաթ» կուսակցության ստեղծումը 1911 թ.: Կուսակցության հիմնադիրների թվում էր 1918-1920 թթ. Ադրբեջանի Հանրապետության հիմնադիր Մամեդ Էմին Ռասուլզադեն: Ստեղծման պահից կուսակցությունը որդեգրում է օսմանամետ ուղղվածություն, ինչի պատճառով ռուսական իշխանությունները 1913-1915 թթ. դադարեցնում են Մուսափաթի գործունեությունը: 1915 թ. Ռասուլզադեի խմբագրությամբ լույս տեսնող մուսափաթական կուսակցության մամուլի օրգան «Աշղ սեզ» թերթի էջերում քարոզում էին թուրքալեզու ժողովուրդների քաղաքական միասնությունը: Խմբագրական հոդվածներից մեկում Ռասուլզադեն գրում էր. «Պանթուրքիզմ նշանակում է Մեքքայից շրջադարձ դեպի Ալթայ»[24]:

Առաջին համաշխարհային պատերազմի մեջ Օսմանյան կայսրության ներքաշվելուց հետո Այսրկովկասի թուրքական վերնախավի և բնակչության մի զգալի մասը, վտարանդի Հուսեյնզադեի և Աղաևի գլխավորությամբ, համակրանքով էին վերաբերվում Օսմանյան կայսրության ռազմամոլ ծրագրերին: Այսրկովկասի բազմաթիվ թուրքեր օսմանյան բանակի կազմում մասնակցում են պատերազմին որպես կամավորներ: Նշենք, որ Ռուսական կայսրությունում գործող օրենքի համաձայն՝ մուսուլման հպատակները, մասնավորապես Այսրկովկասի թուրքերը, որոնց նկատմամբ իշխանությունները վստահություն չէին տածում, չէին կարող զորակոչվել:

Պատերազմը Ռուսական կայսրությունում սրում է սոցիալ-տնտեսական, քաղաքական և ազգային խնդիրները: 1917 թ. սկզբին քաղաքական և տնտեսական ճգնաժամը հանգեցնում է Փետրվարյան հեղափոխության:

---

[24] Մեքքան իսլամի սրբազան կենտրոնն է, իսկ Ալթայը համարվում է թյուրքերի նախահայրենիքը:

Եթե մինչ 1917 թ. փետրվարը Այսրկովկասի թուրքերի հասարակական-քաղաքական գործիչները, լեզվամշակութային և կրոնական սահմանափակումները վերացնելուց բացի, ուրիշ ոչինչ չէին պահանջում, ապա 1917 թ. մարտին նրանք սկսում են հանդես գալ Ռուսաստանի կազմում ինքնավարության պահանջով: Փետրվարյան հեղափոխությունից հետո «Մուսափաթ» կուսակցությունը դուրս է գալիս ընդհատակից: Իր գործունեությունն է վերսկսում նաև «Գումեթ» կազմակերպությունը: Ելիզավետպոլում ձևավորվում է Ֆեդերալիստների թյուրքական կուսակցությունը:

Հասարակական-քաղաքական ուժերի համախմբման նպատակով 1917 թ. մարտի 29-ին ստեղծվում է համակարգող մարմին՝ Բաքվի ժամանակավոր կոմիտեն, որը ղեկավարում էր Հաջինսկին:

1917 թ. մայիսին Ռուսաստանի մահմեդականների համագումարում Ռասուլզադեն հայտարարում է, որ Այսրկովկասի թուրք ազգայնականները չեն ընդունում հավատի շուրջ համախմբման գաղափարը, այլ հանդես են գալիս թյուրքալեզու առանձին ժողովուրդների ազգային շահերի պաշտպանության գաղափարի օգտին: Հենց այս գաղափարի կենսագործմանն էր միտված 1917 թ. հունիսին մուսափաթականների և թյուրք ֆեդերալիստների կուսակցությունների միավորումը: Նոր կուսակցությունը ստանում է *Ֆեդերալիստների դեմոկրատական թյուրքական մուսափաթ կուսակցություն* անվանումը: 1917 թ. հոկտեմբերին Բաքվի խորհրդի ընտրություններում նորակազմ կուսակցությունը ստանում է ընտրողների ձայների շուրջ 40 տոկոսը:

1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո Բաքվում, ինչպես և ամբողջ Ռուսաստանում, առաջանում է երկիշխանություն՝ ի դեմս նավթարդյունաբերական բուրժուազիայի ու կալվածատերերի շահերը ներկայացնող Հասարակական անվտանգության կոմիտեի և Ստեփան Շահումյանի գլխավորած

Բանվորների և զինվորների խորհրդի: 1917 թ. հոկտեմբերի 25-ին Պետրոգրադում հեղաշրջումից հետո Բաքվի խորհրդի՝ նույն ամսի 31-ի նիստում բոլշևիկներին հաջողվում է ցրել Հասարակական անվտանգության կոմիտեն, ինչի արդյունքում իշխանությունն անցնում է Բաքվի բանվորների և զինվորների խորհրդին: Նոյեմբերի 2-ին Բաքվի խորհրդի նիստում աջ էսեռները, մենշևիկներն ու դաշնակցականները՝ 124 մարդ, հեռանում են խորհրդից: Իշխանությունն ամբողջովին անցնում է բոլշևիկներին:

1917 թ. նոյեմբերի 15-ին (28) Թիֆլիսում վրացի մենշևիկների, սոցիալիստ հեղափոխականների, դաշնակցականների և մուսաֆաքականների մասնակցությամբ ստեղծվում է Անդրկովկասյան կոմիսարիատը, որը փոխարինում է Անդրկովկասյան հատուկ կոմիտեին (ՕԶԱԿՈՄ): Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ Անդրկովկասյան կոմիսարիատը բացահայտ թշնամական դիրք է բռնում: Հենվելով ազգային զինված կազմավորումների վրա՝ Անդրկովկասյան կոմիսարիատն իր իշխանությունը տարածում է ողջ Այսրկովկասի վրա, բացառությամբ Բաքվի շրջանի, որտեղ հաստատված էր խորհրդային իշխանություն:

Անդրկովկասյան կոմիսարիատին կից ստեղծված Ազգամիջյան զինվորական խորհուրդը, որտեղ տոն էին տալիս մենշևիկներն ու մուսաֆաքականները, որոշում է առգրավել երկաթուղային կայարաններում տեղակայված ռուսական զորամասերի զենքն ու զինամթերքը: Այն գերազանցապես անցնում է մահմեդական զորամասերի և տեղացի թուրքերից բաղկացած ավազակախմբերի ձեռքը: Նույն զինվորական խորհրդի որոշմամբ Թիֆլիսից Շամքոր ուղարկված զրահագնացքի շտաբի վրացի պետը դիմում է տեղացի թուրք զինյալներին՝ առաջարկելով աջակցել Կովկասյան ճակատից Ռուսաստան հեռացող զինվորների զինաթափմանը, ինչն էլ պատճառ է դառնում 1918 թ. հունվարի 8-12-ին Ելիզավետպոլի և Շամխորի մոտ ռուս զինվորների սպանդի, որին զոհ է գնում ու վիրավորվում է մոտ 2000 զինվոր: Թուրքական զին-

ված կազմավորումների ձեռքն են անցնում 15.000 հրացան, 20 հրանոթ և 70 գնդացիր:

Այսրկովկասի իշխանական մարմիններում գերիշխող դիրք ունեցող վրաց մենշևիկների և Այսրկովկասի թուրքերի ձևավորվող դաշինքը ուղղակի գոյաբանական սպառնալիք էր հայերի համար, ինչն էլ ստիպում է դաշնակցությանը Բաքվի խորհրդում դաշինք կազմել բոլշևիկների հետ:

1918 թ. մարտի 2-ին Բաքվի խորհրդում ընդունվում է բանաձև՝ Անդրկովկասյան Սեյմը Ռուսաստանից անջատելու որոշման դեմ: Միաժամանակ հրավիրվելու էր Այսրկովկասի խորհուրդների համագումար, որը ձևավորելու էր խորհրդային Կարմիր բանակ: Բանաձևին կողմ են քվեարկում բոլշևիկները, ձախ էսէռներն ու դաշնակցականները, դեմ՝ գլխավորապես մենշևիկները, իսկ մուսափաթականները, ի նշան բողոքի, չեն մասնակցել քվեարկությանը:

Այսրկովկասում թուրքական նոր պետության հռչակումը Մուսափաթի ղեկավարությունը հնարավոր էր համարում միմիայն Թուրքիայի ու պանթուրքիզմի աջակցությամբ հայերի բնաջնջման ճանապարհով: Մուսափաթականների գլխավորած Անդրկովկասի մահմեդականների ազգային խորհուրդը Բաքվում փորձում էր կազմակերպել «Թուրքական գունդ», իսկ նրա ղեկավար Մամեդ Ռասուլզադեն Բաքվի խորհրդի գործադիր կոմիտեից պահանջում էր թուրքերին հանձնել Սալյանի գնդի զենք ու զինամթերքի մի մասը: Բաքվում բացվում է սպայական վարժարան տեղացի թուրքերի համար: Արևմտյան ռազմաճակատից վերադարձած «Վայրի դիվիզիայի» այսրկովկասյան թուրքերի կամավորական գունդը դառնում է Այսրկովկասի թուրքերի ապագա բանակի կորիզը: Այն տեղաբաշխվում է Բաքվում, Գանձակում և Լենքորանում: «Վայրի դիվիզիայի» ստորաբաժանումները 1918 թ. փետրվարի 24-ին Բաքվի արվարձաններից մեկում անցկացնում են ցուցադրական զորավարժություններ:

Մուսաֆաթականների ծրագրերի կենսագործմանը խոչընդոտում էր Բաքվի խորհրդի շրջանակներում ձևավորված բոլշևիկա-դաշնակցական դաշինքը:

Ռուսական բանակի քայքայման պայմաններում Ժամանակավոր կառավարությունը և բանակի հրամանատարությունը որոշում են ազգային զորամիավորումներ ձևավորել: Ժամանակավոր կառավարության ղեկավար Կերենսկու և Պետրոգրադի զորքերի շտաբի պետ գեներալ Հակոբ Բագրատունու հանդիպման ժամանակ որոշվում է Արևմտյան ռազմաճակատում կռվող հայ զինվորականներից ձևավորել Հայկական կորպուս: Հայրենիք վերադարձող հայ զինվորները երկաթուղու փակ լինելու պատճառով կուտակվել էին Բաքվում: Գեներալներ Հակոբ Բագրատունու, Գրիգոր Ղորղանյանի, կամավորական երրորդ ջոկատի հրամանատար Համազասպ Սրվանձտյանի ջանքերով ձևավորվում են Բաքվի խորհրդի զինված ուժերը, որոնց թվաքանակը 1918 թ. մարտին հասնում է 6 հազարի: Այսրկովկասի Մահմեդականների (թուրքերի) ազգային խորհուրդը փակում է հայկական զորամասերի ճանապարհը՝ մտադիր լինելով թույլ չտալ հայկական զինված ստորաբաժանումներին Կովկասյան ճակատ մեկնել՝ միաժամանակ ձգտելով տիրանալ այդ զորամասերի զենքին:

Այսրկովկասի թուրքերի ռազմական առաջնորդներից Զիադխանովը Անդրկովկասյան կոմիսարիատի թուրք անդամներից մեկին ուղղված հեռագրով հայտնում է, որ զենք ստանալու դեպքում պատրաստ է 5 հազարանոց զորակազմով շարժվել դեպի Բաքու:

Որպես պատրվակ օգտագործելով Բաքվի խորհրդի հրամանով «Էվելինա» շոգենավի վրա գտնվող թուրքական բանդայի զինաթափումը՝ Բաքվի թուրքերը մարտի 17-ին կրակ են բացում Բաքվի խորհրդի ուժերի վրա:

Բաքվի խորհուրդը իրեն աջակցող Դաշնակցության զինված կազմավորումների հետ մարտի 18-ին հարձակում է սկսում մահմեդական թաղամասերի վրա: «Վայրի դիվիզիայի» շտաբի շենքը

գրավելուց հետո թուրքերի կազմակերպված դիմադրությունը դադարում է: Մահմեդականների ազգային խորհուրդը, չկարողանալով դիմադրել, զինադադար է խնդրում և ստիպված է լինում ընդունել Բաքվի խորհրդի և նրա կողմից ստեղծված հեղափոխական պաշտպանության կոմիտեի վերջնագիրը, որով այդ խորհուրդը անվերապահորեն ճանաչվում է միակ իշխանություն: «Վայրի դիվիզիայի» զորամիավորումները դուրս են բերվում Բաքվի տարածքից, բացվում է երկաթուղային հաղորդակցությունը:

Բաքվի հայոց ազգային խորհրդի ջանքերով շուրջ 14 հազար մահմեդական փրկվում է կոտորածից: Ստեփան Շահումյանի տվյալներով, որի հետ համաձայն են եվրոպացի և ամերիկացի պատմաբանները, մարտյան այս արյունալի իրադարձություններին երկու կողմից զոհ է գնում 3000 մարդ: Ներկայիս ադրբեջանական պատմագրությունը սպանված թուրքերի քանակը հասցնում է 10-12 հազարի: Այս կապակցությամբ տեղին է հիշել թուրք ամենահայտնի նավթարդյունաբերողներից մեկի՝ Հաջի Զեյնալաբդին Թաղիևի՝ Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ Եվգենի Գեգեչկորիին և Այսրկովկասի ազգային խորհուրդներին ուղղված հեռագիրը: Թաղիևը գրում էր, որ «Բաքվի իրադարձությունները հայ-թաթարական բախումների բնույթ չեն կրել, կռիվների ամբողջ ընթացքում թուրքերը ձեռք չէին տալիս թուրքական թաղամասերում և տներում ապրող հայերին: Իսկ հայկական զորամասերը փրկեցին և ապաստան տվին ավելի քան 14 հազար մահմեդականների, որոնց հետ վերադարձրին պարսից հյուպատոսի միջոցով»:

ՀԱՐՑԵՐ

1. Արևելյան Այսրկովկասում XX դ. սկզբին ի՞նչ գաղափարախոսական հոսանքների ծագման պատճառ է դառնում սոցիալական բողոքը:

2. 1905-1906 թթ. ո՞ր իրադարձություններն են խթան հանդիսանում Արևելյան Այսրկովկասում տեղական պանթուրքական կազմակերպությունների ձևավորման համար:

3. Ի՞նչ իրադրություն է հաստատվում Բաքվում 1917 թ. Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո:

4. 1918 թ. սկզբին տեղի ունեցած ո՞ր իրադարձությունն է բոլշևիկների և դաշնակցականների դաշինքի պատճառ դառնում:

5. Ինչո՞ւ է Այսրկովկասի մահմեդականների խորհուրդը 1918 թ. մարտին արգելակում Բաքվում կենտրոնացած հայ զինվորների մեկնումը Կովկասյան ճակատ:

ԹԵՄԱ V
Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը (1918-1920)

«Ադրբեջան» տեղանվան ստուգաբանության երկու վարկած է տարածում գտել. կա՛մ այդ անվանումը կապվում է Ք.ա. IV դ. գործունեություն ծավալած պարսիկ սատրապ Ատրոպատի անվան հետ, կա՛մ ծագում է միջին պարսկերեն՝ աթուր, նոր պարսկերեն՝ ազար-կրակ բառից: Դրա հիմքի վրա առաջացել է Ադրբեջան՝ «Կրակի երկիր» տեղանունը, զրադաշտական այն տաճարների պատճառով, որոնցում չմարող կրակը սնվում էր նավթով:

XI դ. սելջուկների արշավանքներով սկսվում է օղուզ-թուրքերի վերաբնակեցումը Մերձավոր Արևելքում: Օղուզական բարբառները հյուսիսային Իրանում հետզհետե փոխարինում են թաթերենին, թալիշերենին, ազարիին և միջին պարսկերենին, իսկ Այսրկովկասում՝ կովկասյան լեզուներին, և ուշ միջնադարում՝ Ակկոյունլու ու Կարա-կոյունլու ցեղախմբերի տիրապետության օրոք, գերիշխող են դառնում: Թյուրքացման գործընթացը Հյուսիսային Իրանում և Այսրկովկասում իր գագաթակետին է հասնում Սեֆյանների տիրապետության օրոք՝ XVI-XVII դդ.:

Ժամանակակից Ադրբեջանի Հանրապետության տարածքում մինչև Ռուսական կայսրության վերացումը երբևիցէ առանձին, միասնական պետություն գոյություն չի ունեցել: Մինչ XX դ. սկիզբը «Ադրբեջան» անվանումը վերաբերում էր Արաքս գետից հարավ գտնվող տարածաշրջանին, որն այժմ գտնվում է Իրանի հյուսիս-արևմուտքում: Ժամանակակից Ադրբեջանի Հանրապետության տարածքի Կուր գետի ձախափնյակը հայտնի էր Աղվանք և Շիրվան անուններով: Աջ ափին ընկած էին հայկական Ուտիք և Արցախ նահանգները:

XIX դ. երկրորդ կեսին տարածում գտած պանթյուրքիզմի գաղափարական հենքի վրա Արևելյան Անդրկովկասի թյուրքալեզու

բնակչության շրջանում ի հայտ է գալիս մեկ առանձին էթնիկական հանրույթի պատկանելու գիտակցություն: Մինչև XX դ. այդ բնակչությունն իրեն ընկալում էր կա՛մ որպես մահմեդական ումմայի (համայնքի) անդամ, կա՛մ որպես Ռուսական կայսրության տարածքում ապրող թյուրքալեզու էթնիկական միավորի մաս: Անգամ 1917 թ. ապրիլի 29-ին Բաքվում հիմնադրված առաջին Հիմնադիր ժողովի անվանման մեջ «Ադրբեջան» եզրույթը բացակայում է: Այն կոչվում էր «Կովկասի մահմեդականների ընդհանուր ժողով»:

Միայն 1918 թ. է սկսում գործածվել «Ադրբեջան» էնդոնիմը: Ադրբեջանական ազգային ինքնությունը մեծ հաշվով ձևավորվել է խորհրդային իշխանության տարիներին: Ադրբեջանցի էթնոնիմն առաջացել է միայն 1936 թ. ԽՍՀՄ II սահմանադրությամբ, որով այն փոխարինել է «Կովկասի թուրքեր կամ թաթարներ» եզրույթին:

Ժամանակակից Ադրբեջանի Հանրապետության բազմաթիվ տեղանուններ ունեն պարսկական արմատներ. Բաքուն, Ափշերոնը, Գյանջան ընդամենը մի քանի օրինակ են: Ադրբեջանի Հանրապետության այս և բազմաթիվ այլ բնակավայրեր հիմնադրվել են նախքան թյուրքական ցեղերի Մերձավոր Արևելք ներթափանցելը: Բաքվի մասին առաջին հիշատակումը վերաբերում է 885 թ.՝ X-XI դդ. թյուրքական արշավանքներից առաջ:

1918 թ. մայիսի 26-ին՝ Անդրկովկասյան սեյմի ինքնալուծարումից մեկ օր անց՝ մայիսի 27-ին, Անդրկովկասի սեյմի մահմեդական խմբակցության անդամներն իրենց հռչակում են Ադրբեջանի Ազգային խորհուրդ, ընտրվում է խորհրդի նախագահություն և նախագահ՝ ի դեմս Մամեդ Էմին Ռասուլզադեի: Մայիսի 28-ին Ադրբեջանի Ազգային խորհուրդը, ստանձնելով խորհրդարանական գործառույթներ, «Անկախության հռչակագրով» ազդարարում է Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ստեղծումը: Ըստ հռչակագրի՝ մինչ Սահմանադիր ժողովի գումա-

րումը Ադրբեջանի ղեկավարումը ստանձնում են Ազգային խորհուրդն ու ժամանակավոր կառավարությունը: Վերջինս հաշվետու էր Ազգային խորհրդի առաջ: Նույն օրը ձևավորվում է 9 հոգուց բաղկացած կառավարություն, որի անդամներից 5-ը մուսաֆաթականներ էին, 2-ը՝ սոցիալ-դեմոկրատներ: Կառավարության երկու անդամ, այդ թվում՝ վարչապետ Ֆաթալի խան Խոյսկին, անկուսակցական էին:

1918 թ. հունիսի 4-ին Բաքումում Ադրբեջանի Հանրապետության պատվիրակությունը ստորագրում է Օսմանյան կայսրության հետ բարեկամության և համագործակցության պայմանագիր, որով Օսմանյան կայսրությունը ճանաչում է Ադրբեջանի Հանրապետության անկախությունը՝ պարտավորվելով ռազմական օգնություն ցուցաբերել Ադրբեջանի կառավարությանը:

Հունիսի 16-ին Ադրբեջանի կառավարությունը Թիֆլիսից տեղափոխվում է Գյանջա: Ադրբեջանի Ազգային խորհուրդը ռազմական օգնություն են խնդրում Օսմանյան կայսրությունից: Էնվեր փաշայի կրտսեր եղբայր Նուրի փաշայի հրամանատարությամբ ձևավորվում է Կովկասյան իսլամական բանակը, որը բաղկացած էր 5-րդ Կովկասյան և 15-րդ Չանակկալեի թուրքական դիվիզիաներից և Մահմեդական (ադրբեջանական) կորպուսից: Այս բանակի զինվորների թիվն անցնում էր 18 հազարը:

Ղարամարյամի մոտ թուրքերի պարտությունից հետո թուրքական գլխավոր շտաբը Միջագետքից ու Ատրպատականից լրացուցիչ 15 հազարի հասնող զորաբանակ է տեղափոխում և Գեոկչայի մոտ հունիսի 27-ից հուլիսի 1-ը տևած մարտերում ջախջախում է Բաքվի խորհրդի ուժերը և պաշարում Բաքուն: Այդ պարտությունը Բաքվի խորհրդում ճգնաժամի պատճառ է դառնում: Իշխանությունն անցնում է Ցենտրոկասպիի դիկտատուրային, որն օգնության խնդրանքով դիմում է Մեծ Բրիտանիային: Խորհրդի 26 բոլշևիկ անդամները հուլիսի 31-ին ձերբակալվում են: Իրանական Էնզելի քաղաքից Բաքու ժամանած բրիտանացի գե-

ներալ Դենսերվիլի հազար հոգանոց ջոկատը ի վիճակի չէր մարտերում բեկում մտցնել:

Օգոստոսի 26-ից սկսված մարտերում թուրքերը հաղթանակ են տանում: Սեպտեմբերի 15-ին Կովկասյան իսլամական բանակը մտնում է Բաքու: Հաջորդ երկու օրերի ընթացքում Բաքվում սպանվում է շուրջ 30 հազար հայ:

Դեռևս գտնվելով Գյանջայում՝ Ադրբեջանի ժամանակավոր կառավարությունն ընդունում է լեզվի մասին օրենք, որով թուրքերենը ճանաչվում է պետական լեզու:

Հինգ ամիս ընդմիջումից հետո վերսկսելով իր գործունեությունը՝ Ադրբեջանի Ազգային խորհուրդը 1918 թ.նոյեմբերի 19-ին ընդունած «Ադրբեջանի խորհրդարանի ձևավորման մասին» օրենքի հիման վրա ստեղծում է միապալատ խորհրդարան՝ բաղկացած 120 պատգամավորից: Պատգամավորական տեղերը բաշխվում են հետևյալ կերպ՝ 80 մահմեդական, 21 հայ, 10 ռուս, մեկական տեղ ունեին հրեական, գերմանական, լեհական և վրացական համայնքները: Բացի այդ, նախատեսվում է երեք տեղ հատկացնել Նավթային արդյունաբերողների միությանը և երկու տեղ՝ Առևտրաարդյունաբերական միությանը: 1918 թ. դեկտեմբերի 7-ին տեղի է ունենում խորհրդարանի առաջին նիստը: Խորհրդարանի նախագահ է ընտրվում Ալիմարդան բեկ Թոփչիբաշևը:

Նոր կառավարության ձևավորումը վստահվում է Ֆաթալի խան Խոյսկուն: Դեկտեմբերի 26-ին հայտնի է դառնում կառավարության կազմը, որը կոալիցիոն էր: Երեք նախարարական պաշտոն է տրվում ռուսական համայնքի ներկայացուցիչներին:

Ադրբեջանի Հանրապետության գոյության ամբողջ ընթացքում գործել է վեց կառավարական կաբինետ: 1918 թ. մայիսի 28-ից մինչև 1919 թ. մարտի 14-ն ընկած ժամանակահատվածում գործած առաջին երեքը գլխավորել է Ֆաթալի խան Խոյսկին, 1919 թ. մարտի 14-ից մինչև 1920 թ. ապրիլի 1-ը՝ Նասիֆ Յուսիֆ-

բեյլին: Վեցերորդ կաբինետը, որը պետք է գլխավորեր Մամեդ Հասան Հաջինսկին, Ադրբեջանի խորհրդայնացման պատճառով չի ձևավորվում: Բոլոր այս կառավարությունները կոալիցիոն էին, և դրանց հիմնական պորտֆելները պատկանում էին Մուսավաթին:

Ադրբեջանի Հանրապետության տնտեսությունը Այսրկովկասում և այդ պետության տարածքում տիրող խառնակ իրավիճակի և վատ վերահսկելիության պատճառով գտնվում էր խոր ճգնաժամում: Այս հանրապետության 1919 թ. բյուջեի եկամտային մասը գերազանցապես ստացվում էր բավականին բարձր՝ 30 տոկոս կազմող եկամտահարկից և նավթամթերքների վաճառքից: Ֆինանսների նախարարության 1919 թ. հուլիսի 20-ի որոշմամբ նույն թվականի դեկտեմբերին բացվում է Ադրբեջանի կենտրոնական բանկը: Այս պետության գոյության ամբողջ ընթացքում նրա բոլոր կառավարություններն աշխատանքային հարաբերությունները կարգավորելու, աշխատավարձերը բարձրացնելու և հողային հարցը լուծելու հայտարարություններից այն կողմ չեն անցնում: 1920 թ. սկզբին Ադրբեջանը բախվում է բնակչության նյութական բարեկեցության կտրուկ անկման խնդրին:

Ունենալով տարածքային վեճ Հայաստանի (Արցախի, Սյունիքի և Նախիջևանի համար), Վրաստանի (ներկայիս Ադրբեջանի Բալաքանի, Զաքաթալայի և Կախի շրջանների համար), Լեռնականների (Դերբենտ քաղաքի և շրջակայքի համար) հանրապետությունների հետ, լինելով Անտոն Դենիկինի գլխավորած՝ Ռուսաստանի հարավի զինված ուժերի ներխուժման սպառնալիքի տակ, Ադրբեջանի Հանրապետության ղեկավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում զինված ուժերին: 1919 թ. Ադրբեջանի բյուջեի մեկ քառորդից ավելին կազմում էին պաշտպանության ոլորտի ծախսերը:

1919 թ. հունիսի 16-ին Ադրբեջանը Վրաստանի հետ ռազմական դաշինք է կնքում: Այդ դաշինքի համաձայն՝ դաշնակիցներից

որևէ մի կողմի վրա գեներալ Դենիկինի բանակի հարձակման դեպքում այդ կողմը պետք է համակողմանի ռազմական օգնություն ստանար մյուսից: Վրաստանի հետ կնքվում է նաև գաղտնի պայմանագիր, որով նավթի ու նավթամթերքի դիմաց վրացական կողմը պարտավորվում էր զենք մատակարարել Ադրբեջանին, ադրբեջանական բանակ գործուղել վրացի սպաների, վրացական ռազմական ուսումնական հաստատություններում տեղեր հատկացնել ադրբեջանցի զինվորականների համար:

Բանակի կազմավորման գործընթացը հիմնականում ավարտվում է 1920 թ. հունվարին: Բանակի թվաքանակը հասնում է 40 հազարի, որից 30 հազարը ծառայում էր հետևակում, 10 հազարը՝ հեծելազորային ստորաբաժանումներում:

Ադրբեջանի Հանրապետությունն իր գոյության ողջ ընթացքում բանակի հիմնական մասը պահում էր Հայաստանի սահմանին, որտեղ պարբերաբար ռազմական գործողություններ էին ընթանում:

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունը և 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարի կնքումը ծանր էին ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ Ադրբեջանի համար: Զինադադարի համաձայն՝ թուրքական բանակը պետք է լքեր Այսրկովկասի տարածքը: Նոյեմբերի 10-ին թուրքական զորքերը լքում են Բաքուն: Մեկ շաբաթ անց՝ նոյեմբերի 17-ին, բրիտանացի 5 հազար զինվոր ժամանում են Բաքու գեներալ Ուիլյամ Թոմսոնի գլխավորությամբ, որն իրեն Բաքվի ռազմական նահանգապետ է հռչակում: Նրա հրամանով Բաքվում ռազմական դրություն է մտցվում:

Երբ դեռևս Էնզելիում Ադրբեջանի կառավարության պատվիրակությունը Թոմսոնին խնդրում է ճանաչել Ադրբեջանի անկախությունը, վերջինս կտրականապես հրաժարվում է՝ պատճառաբանելով, որ «Ադրբեջանի Հանրապետության անվան տակ մեզ հայտնի է միայն կառավարություն հորջորջվող մարդկանց մի

խումբ, որը ստեղծվել է թուրքերի շահատակությամբ, և բնակչության մեջ հենարան չունի»: Նույն Թոմսոնը, ցամաք իջնելով Բաքվում, հրամայում է իջեցնել Ադրբեջանի դրոշը և դադարեցնել պետական օրհներգի կատարումը:

Փարիզի խաղաղության կոնֆերանսին մասնակցելու նպատակով Ֆրանսիայի մայրաքաղաք ժամանած Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Թոփչիբաշևի գլխավորած պատվիրակությունը պահանջում է Ադրբեջանի մաս ճանաչել ոչ միայն ներկայիս Ադրբեջանի տարածքը, այլև այժմյան Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզը, Գեղարքունիքի մարզի Կարմիրի և Վարդենիսի ենթաշրջանները, Տավուշի մարզը (6978 կմ^2), ներկայիս Վրաստանի Հանրապետության Մառնեուլի, Գարդաբանի ենթաշրջանները (5138 կմ^2), ներկայիս Թուրքիայի կազմում գտնվող Կարսի, Իգդիրի, Արդահանի իլերը (18673 կմ^2), Դաղստանի Ինքնավար Հանրապետության հարավային 12 շրջանները (1036 կմ^2), ընդհանուր առմամբ՝ 127.425 կմ^2:

ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը հանդիպման ժամանակ հայտարարում է, որ Անտանտի առաջատար պետությունները չեն ցանկանում աշխարհը փոքր կտորների բաժանել: Նա ադրբեջանական պատվիրակությանը խորհուրդ է տալիս Այսրկովկասի երկու մյուս հանրապետությունների հետ ստեղծել համադաշնություն, որը կարող է Ազգերի լիգայի կողմից տրված մանդատի հիման վրա ստանալ Անտանտի առաջատար պետություններից մեկի հովանավորությունը: Եզրափակելով ԱՄՆ նախագահը հայտարարում է, որ Ադրբեջանական հարցը չի կարող քննարկվել մինչև ռուսական հարցի ընդհանուր լուծումը:

Մինչդեռ խորհրդային Կարմիր բանակից Դենիկինի զորքերի պարտությունից հետո՝ 1920 թ. հունվարի 12-ին, Անտանտի դաշնակիցների Գերագույն խորհուրդը փոխում է իր դիրքորոշումը և փաստացի ճանաչում է Ադրբեջանը, Վրաստանը, իսկ հունվարի 19-ին՝ Հայաստանը:

Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը չի հրաժարվում Այսրկովկասը, մանավանդ Բաքվի նավթային շրջանը խորհրդայնացման ճանապարհով իրեն ենթարկելու քաղաքականությունից: Որպես ապացույց նշենք 1919 թ. մարտ-մայիս ամիսներին գոյություն ունեցած Մուղանի Խորհրդային Հանրապետությունը, որը վերացվում է օգոստոսի 9-ին Ադրբեջանի ռազմական միջամտության արդյունքում:

Խորհրդային Ռուսաստանը, քաղաքացիական պատերազմում Ադրբեջանի չեզոքությունը համարելով թշնամական քայլ, մերժում է Ադրբեջանի կառավարության՝ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու բազմաթիվ առաջարկները:

1920 թ. փետրվար 20-ին Ադրբեջանում գործող բոլշևիկամետ ուժերի՝ Մահմեդական սոցիալ-դեմոկրատական, «Ահրար» և «Հումմեթ» կուսակցությունների միավորմամբ ստեղծվում է Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը, որն իրականում Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության բաժանմունքն էր:

Խորհրդային Ռուսաստանի կողմից Ադրբեջանի նվաճմանը միտված կարևորագույն քաղաքական քայլը Թուրքիայի քեմալական շարժման հետ փոխզիջումային համաձայնություն էր, որով Խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական և տնտեսական համապարփակ օժանդակության դիմաց քեմալականներն աջակցելու էին Ռուսաստանին Այսրկովկասի, մասնավորապես Ադրբեջանի խորհրդայնացման գործում:

Ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամի խորխորատում հայտնված Ադրբեջանի ղեկավարությունը, փրփուրներից կառչելով, Բաքվում ու Փարիզում սկսում է բանակցություններ վարել Ղաջարական Իրանի հետ: Արդյունքում Փարիզում ադրբեջանական պատվիրակության ղեկավար Թոփչիբաշևը և Իրանի արտաքին գործերի նախարար Ֆիրուզ Նոսրաթ

էդ-Դոուլեն պայմանագիր են կնքում Ադրբեջանա-իրանական համադաշնային պետության ձևավորման մասին:

1920 թ. ապրիլի վերջին Խորհրդային Ռուսաստանը ձեռնամուխ է լինում Ադրբեջանի խորհրդայնացմանը: Ապրիլի 26-ին 11-րդ Կարմիր բանակի ստորաբաժանումները զրահագնացքների ուղեկցությամբ հատում են Ադրբեջանի սահմանը և գրեթե առանց դիմադրության շարժվում դեպի Բաքու: Ապրիլի 27-ին Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը հայտարարում է Նարիման Նարիմանովի գլխավորությամբ ռազմահեղափոխական կոմիտեի ձևավորման և Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատման մասին: Ռազմահեղափոխական կոմիտեի զինված ջոկատներն առանց դիմադրության գրավում են Բաքվի ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտները՝ երկաթուղային կայարանը, նավահանգիստը, փոստը, ռադիոկայանը, ոստիկանության բաժանմունքները: Նույն օրը բոլշևիկներն Ադրբեջանի խորհրդարանին իշխանությունը հանձնելու վերջնագիր են ներկայացնում: Ապրիլի 28-ի ժամը երեքին խորհրդարանի արտակարգ նիստում որոշվում է հանձնել իշխանությունը՝ արյունահեղությունից խուսափելու նպատակով: Նույն որոշմամբ խորհրդարանը լուծարվում է, երկրում հաստատվում է խորհրդային իշխանություն:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս է ստուգաբանվում «Ադրբեջան» տեղանունը:

2. Ո՞ւմ կողմից է հռչակվում Ադրբեջանի Հանրապետության անկախությունը:

3. Ինչո՞ւ Ադրբեջանի առաջին կառավարությունն իր գոյության սկզբում գործում է Գյանջայում:

4. Հիմնականում ի՞նչ միջոցներից է գոյանում Ադրբեջանի բյուջեի եկամտային մասը:

5. 1919 թ. ի՞նչ հենքի վրա է ձևավորվում Ադրբեջանի և Վրաստանի հանրապետությունների ռազմական դաշինքը:

6. Փարիզի խաղաղության կոնֆերանսում ի՞նչ նկրտումներ ուներ Ադրբեջանի Հանրապետության պատվիրակությունը:

7. Ի՞նչ պատճառաբանությամբ է Խորհրդային Ռուսաստանը մերժում Ադրբեջանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու առաջարկները:

8. Ադրբեջանն առանց լուրջ դիմադրության խորհրդայնացման գործում ի՞նչ դիվանագիտական քայլեր է կատարում Խորհրդային Ռուսաստանը:

ԹԵՄԱ VI
Խորհրդային Ադրբեջանը 1920-1991 թթ.

Ադրբեջանը նվաճելուց հետո Խորհրդային Ռուսաստանը ամեն կերպ փորձում է աշխարհին ներկայանալ որպես ազգային-ազատագրական պայքարի ջերմեռանդ ջատագով: Պատահական չէ, որ Ադրբեջանում իրենց իշխանությունը հաստատելուց անմիջապես հետո բոլշևիկները 1920 թ. սեպտեմբերին Բաքվում մեծածավալ միջոցառում են իրականացնում՝ այն անվանելով Արևելքի ժողովուրդների առաջին համագումար: Համագումարի աշխատանքները ղեկավարում է Գրիգորի Զինովևը, որն այդ տարիներին Լենինի ամենամոտ գործակիցներից էր: Համագումարի անցկացումն ընդգծում էր այն կարևոր նշանակությունը, որ տալիս էին բոլշևիկները Արևելքի երկրներ հեղափոխությունը արտահանելուն և իրենց ազդեցությունն այդ տարածաշրջանում տարածելուն:

Կայսրության նախկին ազգային ծայրամասերի ճակատագիրը որոշելով՝ Մոսկվան ճկուն քաղաքականություն է կիրառում: Կարմիր բանակն Ադրբեջան մտցնելով և իշխանությունը տեղացի կոմունիստներին հանձնելով՝ Խորհրդային Ռուսաստանը ոչ միայն արտաքուստ չի հակադրվում ազգային անկախությանը, այլև ամեն կերպ փորձում է ներկայանալ որպես դրա երաշխավոր: Այս ծրագրի համաձայն՝ 1920 թ. ապրիլի 28-ին հայտարարվում է անկախ Ադրբեջանական Խորհրդային Հանրապետության ստեղծման մասին, որի օրենսդիր և գործադիր իշխանությունը վերապահվում է Նարիման Նարիմանովի գլխավորած Ժամանակավոր հեղափոխական կոմիտեին (հեղկոմ): Չնայած դրան՝ իրականում իշխանությունը հանրապետությունում գտնվում էր Ադրբեջանի կոմունիստական կուսակցության ձեռքում, որի ղեկավար մարմին Կենտրոնական կոմիտեն էր ուղղություն տալիս Ադրբեջանի քաղաքական կուրսին՝ հաստատելով Ադրբեջանի հեղկոմի որոշումները:

Ադրբեջանի կուսակցական ղեկավարության կազմում մեծ էր այլազգիների թիվը: Դա բացատրվում էր նրանով, որ այլազգիները նախահեղափոխական սոցիալիստական շարժման և Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատման գործընթացում ակտիվ մասնակցություն ունեին: Ուստի նրանց հաջողվել էր կուսակցական և պետական կառույցներում ղեկավար պաշտոններ զբաղեցնել և պահպանել դրանք:

Պետք է շեշտել, որ խորհրդային իշխանության առաջին տասնամյակում Ադրբեջանում Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոն գոյություն չուներ: Առաջին քարտուղարի գործառույթները վերապահվել են Մոսկվայից ուղարկված Գրիգորի Կամինսկիին, ապա՝ Սերգեյ Կիրովին: Այս նշանակումները Ռուսաստանի կուսակցական ղեկավարության, մասնավորապես՝ Այսրկոմկասի նկատմամբ Մոսկվայի վերահսկողությունն իրականացնող Սերգո Օրջոնիկիձեի որոշակի անվստահության արտահայտությունն էր տեղական ծագումով թյուրք կադրերի նկատմամբ: Պատահական չէ, որ այդ տարիներին մահմեդաբնակ երկրամասերում կուսակցական ղեկավարությունը, որպես կանոն, վստահում էին ռուսներին:

Խորհրդային իշխանության առաջին քայլերն ուղղված էին նոր քաղաքական և գաղափարական վարչակարգի հաստատմանը: Այդ նպատակով բոլշևիկները ձեռնամուխ են լինում այնպիսի վերափոխումների, որոնք մինչ այդ կիրառություն էին գտել Ռուսաստանում: Համաձայն 1920 թ. մայիսի 3-ի դեկրետի՝ տեղերում կազմավորվում են շրջանային, տեղամասային և գյուղական հեղափոխական կոմիտեներ, որոնք օժտված էին արտակարգ լիազորություններով: Միաժամանակ վերացվում են Ադրբեջանի Հանրապետության ժամանակաշրջանում գոյություն ունեցած պետական ինստիտուտները՝ գեներալ-նահանգապետությունները, Բաքվի քաղաքային իշխանությունը, ոստիկանությունը, դատական պալատը և այլն:

Քանի որ բոլշևիկները հայտարարում են, որ Ադրբեջանում նոր իշխանությունը բանվորներին և գյուղացիներին է պատկանում, ուստի սոցիալական այլ խմբերի ներկայացուցիչները դասվում են ստորին կարգի:

Արդյունաբերության ոլորտում նոր կառավարության առաջին քայլը 1920 թ. մայիսի 15-ին բանվորական վերահսկողության ներդրումն էր. 1920 թ. մայիսի 24-ի դեկրետով ազգայնացվում է նավթարդյունաբերությունը: Նավթի գրեթե 90 տոկոսը և Ադրբեջանում արտադրվող նավթամթերքների մեծ մասը սկսում են ուղարկել Ռուսաստան: 1920 թ. հունիսին ազգայնացվում են բանկերն ու ջրային տրանսպորտը:

Ընդունված որոշումներով հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում տեղի են ունենում հիմնարար փոփոխություններ, որոնք, ընդհանուր առմամբ, իրականացվում են կոշտ մեթոդներով, առանց հաշվի առնելու տեղական պայմանները, ինչն էլ հակախորհրդային, հակառուսական ընդվզումների ու բողոքի ցույցերի հիմնական պատճառ է դառնում:

Ադրբեջանում իրենց վարչակարգն ամրապնդելու համար բոլշևիկներն օգտագործում են պետական տեռորի մեթոդ, որն իրականացնում է Արտակարգ հանձնաժողովը (Վ�չԿ) և 11-րդ Կարմիր բանակի հատուկ վարչությունը: Առաջին հերթին ձերբակալվում են այլ կուսակցությունների ղեկավարներ, նախկին արտոնյալ խավերի ներկայացուցիչներ (բեկեր, աղալարներ, վաճառականներ): Զանգվածային մասշտաբների է հասնում բնակչության կողոպուտը:

Այդ ամենի պատճառով հասարակական լայն խավերի շրջանում կուտակված դժգոհությունը շատ դեպքերում արտահայտվում էր զինված դիմադրությամբ: Դրանցից ամենամեծը տեղի է ունեցել 1920 թ. մայիս-հունիս ամիսներին Ադրբեջանի արևմտյան շրջաններում, որտեղ կենտրոնացած էին նախկին ազգային բանակի հիմնական ուժերը: Մայիսի վերջին ապստամբում են Գան-

ձակում տեղակայված բանակի ստորաբաժանումները: Ապստամբներին է միանում քաղաքի և հարակից գյուղերի բնակչության մի մասը: Արդյունքում ապստամբների թիվը հասնում է 10 հազարի: Ապստամբությունը ղեկավարելու համար ստեղծվում է Ռազմական խորհուրդ: Անցյալի դառը փորձից դասեր քաղած հայ բնակչությունն անցնում է Կարմիր բանակի կողմը: Քաղաքում և շրջակա հայկական գյուղերում արագ սկսում են ստեղծվել հայկական զինված ջոկատներ, որոնք ակտիվ մասնակցություն են ունենում ապստամբության ճնշմանը: Դաժան մարտերը շարունակվում են մեկ շաբաթ: Կորցնելով մոտ հազար զինվոր՝ մայիսի 31-ին Կարմիր բանակը ճնշում է ապստամբությունը:

Գանձակի ապստամբությունից հետո ազգային զորամասերի հանդեպ իշխանությունների մեծացող անվստահության ֆոնին նախկին բանակի զորամասերի դիմադրության նոր օջախ է ձևավորվում Ղարաբաղում: Այստեղ Ադրբեջանի բոլշևիկյան իշխանությունները 11-րդ Կարմիր բանակի ստորաբաժանումները փոխարինում են Ադրբեջանի նախկին բանակի ստորաբաժանումներով, որի անձնակազմի թվաքանակը մոտ 6 հազար էր: Ապստամբությունը ղեկավարում է թուրք գեներալ Նուրի փաշան: Այստեղ, ինչպես և Գանձակում, դիմադրությունն արագ ճնշվում է:

Այնուհանդերձ, ողջ 1920 թ. ընթացքում հանրապետությունում գյուղացիների բողոքը չի ընդհատվում, որի պատճառը պարենային մասնատրումն էր: Այն իրականացվում էր գյուղատնտեսական մթերքների զանգվածային բռնագրավմամբ:

1920 թ. կեսերին գյուղացիական զինված խռովությունները տարածվում են Շամքորի, Լենքորանի, Ջիվանշիրի, Դուբայի գավառներում: Ստեղծված իրավիճակը ստիպում է Մոսկվային 1920 թ. նոյեմբերին Ադրբեջան ուղարկել լրացուցիչ յոթ դիվիզիա: Զինված խռովությունների տեղայնությունը, միասնական ղեկավարության բացակայությունը և ուժերի սակավությունը դրանց պարտության պատճառ են դառնում: Թեպետ հակախորհրդային խռո-

վությունները ճնշվում են, սակայն պարենային մասնատրման կիրառումը ոչ միայն չի լուծում պարենով ապահովելու հարցը, այլև Ադրբեջանի բնակչությանը կանգնեցնում է սովի սպառնալիքի առջև: Այն կանխելու նպատակով Ռուսաստանից պարենի խմբաքանակ է ուղարկվում Ադրբեջան: Իշխանությունները 1920 թ. վերջին ստիպված են լինում դադարեցնել պարենային մասնատրման կիրառումը:

Խորհրդային ղեկավարությունը, գիտակցելով, որ ուժային մեթոդների կիրառումը տնտեսությունը կենթարկի կոլապսի, ստիպված էր անցնել ՆԷՊ-ի (նոր տնտեսական քաղաքականություն): 1921 թ. մայիսի 17-ին Ադրբեջանի ռազմահեղափոխական կոմիտեի դեկրետով պարենային մասնատրումը փոխարինվում է «չանաղ» կոչվող կամավոր հարկով, ըստ որի՝ գյուղացին պետք է պետությանը տարեկան 8 կգ ցորեն հանձներ: 1922 թ. գարնանը «չանաղը» փոխարինվում է հաստատագրված պարենային հարկով:

Տնտեսական բարեփոխումներն ուղեկցվում են իրավաքաղաքական փոփոխություններով: 1921 թ. մայիսի 19-ին Ադրբեջանի խորհուրդների I համագումարում ընդունվում է Ադրբեջանական ԽՍՀ առաջին սահմանադրությունը: Ադրբեջանի ռազմահեղափոխական կոմիտեն լուծարվում է, ձևավորվում է Ադրբեջանական ԽՍՀ կառավարություն՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդ, որը գլխավորում էր Նարիման Նարիմանովը: Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում գերագույն օրենսդիր և վերահսկիչ մարմինը Ադրբեջանի կենտրոնական գործադիր կոմիտեն էր: Բացի կոմունիստական կուսակցությունից, օրենքից դուրս են դրվում և լուծարվում են բոլոր քաղաքական կուսակցությունները, որոնց ղեկավարները կա՛մ տարագրվում են, կա՛մ ենթարկվում են բռնաճնշումների:

Խորհրդային Ռուսաստանը օրակարգի հարց է դարձնում Այսրկովկասում միասնական պետական կազմավորման ստեղծ-

ման հարցը: Դրա հիմնական նպատակը Այսրկովկասի հանրապետությունների ստորադաս դիրքը խորացնելն էր և դրանց ազգային նկարագիրը հնարավորինս նսեմացնելը: 1922 թ. դեկտեմբերին Բաքվում տեղի է ունենում Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը, որտեղ հռչակվում է Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետությունը (Անդրֆեդերացիա): Դրա ստեղծմամբ Այսրկովկասյան հանրապետությունները իրավաբանորեն կորցնում են նույնիսկ ձևական անկախությունը: Մոսկվայի այս ձեռքբերումը վերջնականապես ամրապնդվում է ԽՍՀՄ ստեղծմամբ: 1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում տեղի ունեցած ԽՍՀՄ խորհուրդների առաջին համագումարն ընդունում է ԽՍՀՄ կազմավորման մասին հռչակագիր, որի հիման վրա չորս հանրապետությունները՝ ՌԽԴՍՀ-ն, Ուկրաինական ԽՍՀ-ն, Բելոռուսական ԽՍՀ-ն և Անդրֆեդերացիան «կամավոր» իրենց իրավունքների և լիազորությունների մեծ մասը փոխանցում են համամիութենական իշխանության մարմիններին:

ԽՍՀՄ ղեկավարությունը, հաշվի առնելով Սերգո Օրջոնիկիձեի կարծիքը և անվստահություն ունենալով տեղական մահմեդական կադրերի նկատմամբ, Ադրբեջանի կոմունիստական կուսակցության քարտուղարի պաշտոնը տրամադրում են այլազգիների: Մինչև 1933 թ. այդ պաշտոնը ստանձնել են հինգ հոգի, որոնցից երկուսը հայ էին՝ Լևոն Միրզոյանը՝ 1926-1929 թթ. և Ռուբեն Ռուբենովը (Մկրտչյան)՝ 1933 թ. փետրվար-դեկտեմբեր ամիսներին: 1931 թ. Բաքվի խորհրդի կազմի 45 տոկոսը ռուս էր, 17-ը՝ հայ, և միայն 16 տոկոսն էր ադրբեջանցի: XX դ. 30-ական թթ. սկզբին Այսրկովկասին վերաբերող հարցերում Օրջոնիկիձեի դերի նվազման պայմաններում Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարումը ստանձնում է Միր Ջաֆար Բաղիրովը: Այդ ընտրությունը պայմանավորված էր Ստալինի վստահությունը վայելող, 1932 թ. Անդրֆեդերացիայի կոմկուսի ղեկավար, իսկ 1938 թ. ԽՍՀՄ ներ-

քին գործերի ժողովրդական կոմիսար Լավրենտի Բերիայի հետ Բաղիրովի մտերմությամբ: Դեռևս 1930 թ.՝ Ադրբեջանի ներքին գործերի ժողկոմի պաշտոնը զբաղեցնելու ժամանակ, ենթադրելով, որ հակախորհրդային զինված խումբն ապաստանել է Չայ-Օբասի գյուղում, Բաղիրովը հրամայում է հրետակոծության ենթարկել այն: Արդյունքում զոհվում է 36 անմեղ գյուղացի: Բաղիրովի հրամանով Կարմիր բանակի պատժիչ ջոկատը 1930 թ. փետրվարի 19-ին Շահղալասի գյուղում գնդակահարում է 30 մարդու, որոնցից 14-ը 2-6 տարեկան երեխաներ էին: 1937 թ. ամառվա սկզբից մինչև 1938 թ. աշուն Ադրբեջանը գործնականում առանց կառավարման է մնում: Միայն 1937 թ. ձերբակալվում են շրջգործկոմների 29 նախագահ, 22 ժողկոմ, որոնցից 18-ը գնդակահարվել են, 49 շրջանային կոմիտեների քարտուղարներ, որոնք բոլորը գնդակահարվել են: Բռնադատվել է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ողջ ղեկավարությունը: Միայն 1937-1938 թթ. Ադրբեջանում բռնաճնշման ենթարկվածների թիվը հասնում էր 70-ից 120 հազարի:

1941 թ. հունիսի 22-ին Գերմանիան հարձակվում է Խորհրդային Միության վրա՝ վերջինիս ներքաշելով Երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ: Այն տեխնիկայի և շարժիչների պատերազմ էր: Պատերազմի ընթացքում Խորհրդային Միությունում արդյունահանած նավթի 75 տոկոսը ստացվում էր Բաքվի նավթային շրջանից: Գերմանիայի ղեկավարության մշակած «Օստ» պլանի համաձայն՝ Խորհրդային Միության վրա հարձակման նպատակներից մեկն էլ Բաքվի նավթային շրջանի նվաճումն էր: Հենց դրան էլ միտված էր 1942 թ. գերմանական բանակի ամառային հարձակումը: Նախատեսվում էր Ստալինգրադի մոտ դեպի Վոլգա դուրս գալով՝ փակել դեպի ռազմաճակատ նավթամթերքների մատակարարման ուղին, ապա գրավել Այսրկովկասը: Գերմանական ղեկավարությունը ձևավորել էր գերմանական պետական կառույց՝ «Մայրցամաքային նավթային

կոմիտե», որն էլ պետք է իրականացներ նավթի արդյունահանումը, վերամշակումն ու տեղափոխումը: Պատերազմի տարիներին Ադրբեջանական ԽՍՀ-ից ռազմաճակատ է զորակոչվում շուրջ 600 հազար մարդ, որոնցից 45 հազարը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից էին, ինչը կազմում էր Լեռնային Ղարաբաղի բնակչության մեկ երրորդը: Նրանցից 22 հազարը զոհվում է տարբեր ռազմաճակատներում: 1941-1942 թթ. Ադրբեջանական ԽՍՀ-ում ձևավորվում է հինգ դիվիզիա: Միայն ադրբեջանցիներով համալրված 400-րդ դիվիզիայի մարտունակությունը խիստ ցածր էր, քանի որ ադրբեջանցիներից շատերը հակված էին դասալքության և ինքնախեղման: Կերչի համար մղվող մարտերում այդ դիվիզիան ոչ միայն ծանր կորուստներ է կրում, այլև կորցնում է մարտական դրոշը: 1942 թ. մայիսին 400-րդ դիվիզիան կազմալուծվում է: Առավելապես ադրբեջանցիներից կազմված 402-րդ հրաձգային դիվիզիան Մոզդոկի ուղղությամբ մղված հենց առաջին մարտերում անփառունակ պարտություն է կրում և տեղափոխվում է բանակի ռեզերվ: Այլ մարտական ուղի է անցնում հիմնականում հայ մարտիկներով համալրված 416-րդ դիվիզիան, որն Ադրբեջանական ԽՍՀ տարածքում կազմավորված այն եզակի դիվիզիան էր, որը Հյուսիսային Կովկասից հասնում է Բեռլին: Պատերազմի տարիներին Ադրբեջանական ԽՍՀ-ից 128 մարտիկ արժանանում Խորհրդային Միության հերոսի կոչման: Այդ կոչման արժանացածներից 77-ը հայեր էին և միայն 43-ը՝ ադրբեջանցի:

1941 թ. վերջում Բեռլինում ձևավորվում է Ադրբեջանի ազգային կոմիտե՝ բաղկացած Ադրբեջանի 1918-1920 թթ. հանրապետության ղեկավարներից: 1943 թ. կոմիտեն լուծարվում է, քանի որ դրա անդամները Թուրքիայի հովանու ներքո գտնվող պետության վերականգնման կողմնակիցներ էին, իսկ գերմանացիները մտադիր չէին իրենց հաղթանակի պտուղները կիսել ո՛չ թուրքերի, ո՛չ էլ նրանց խամաճիկների հետ: Միայն 1945 թ. փետրվարին են

անխուսափելի պարտության եզրին գտնվող նացիստներն արտոնում Բեռլինում Ադրբեջանական ազգային համագումարի հրավիրումը, որտեղ ձևավորված վտարանդի խորհրդարանը և կառավարությունը ճանաչվում են Գերմանիայի կողմից: Գերմանական գերության մեջ հայտնված 50 հազար ադրբեջանցիներից 40 հազարը համալրել է գերմանական բանակի շարքերը: 1942 թ. գարնանը Հյուսիսային Կովկասի ուղղությամբ հարձակվող գերմանական բանակների կազմում կռվում էին ադրբեջանցի 7 հազար նախկին ռազմագերիներից ձևավորված «Ասլան», «Ղորխմազ», «Դյոնմազ», «Վաթան» գումարտակները: 1943 թ. ձևավորվում է Ադրբեջանական լեգեոնը, որը բաղկացած էր 35 հազար ադրբեջանցիներից: Այս լեգեոնի ստորաբաժանումները մասնակցում են Վարշավայի Վոլա կոչվող թաղամասի 40-ից 50 հազար լեհ խաղաղ բնակիչների զանգվածային սպանդին. 1944 թ. օգոստոսի 5-ին ադրբեջանցի զինվորները հարձակվում են Սուրբ Ղազար հիվանդանոցի վրա՝ սպանելով հարյուրավոր հիվանդների, բժիշկների և բուժքույրերի:

Պատերազմի ավարտից հետո՝ 1945 թ. նոյեմբերին, Արցախի հայությունը վերստին պահանջում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը միացնել Հայկական ԽՍՀ-ին: Այդ պահանջը ԽՍՀՄ կոմկուսի կենտրոնական կոմիտեի քննարկմանն է ներկայացնում Հայկական ԽՍՀ կոմկուսի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը: Հարցի կապակցությամբ կարծիք ստանալու նպատակով Մոսկվայից Հարությունյանի նամակը փոխանցվում է Միր Ջաֆար Բաղիրովին: Վերջինս խորամանկորեն պատասխանում է, որ համաձայն է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը առանց Շուշիի շրջանի փոխանակել Հայկական ԽՍՀ Ազիզբեկովի (ներկայիս Վայոց ձորի մարզի Վայքի ենթաշրջան), Վեդիի և Ղարաբաղլարի (ներկայիս Արարատի մարզի արևելյան հատվածը) շրջանների հետ:

1953 թ. Ստալինի մահից հետո Ադրբեջանական ԽՍՀ ղեկավար կազմը փոխվում է. Բաղիրովը հեռացվում է հանրապետության ղեկավարի պաշտոնից և 1954 թ. գնդակահարվում է՝ Ադրբեջանում բռնաճնշումներ իրականացնելու մեղադրանքով: 1959 թ. հունիսին Ադրբեջանական ԽՍՀ ղեկավար կազմը մեկ անգամ ևս փոխվում է այն բանից հետո, երբ միութենական իշխանությունները չեղարկում են հանրապետության կուսակցական մարմինների որոշումը, ըստ որի՝ բոլոր պետական ծառայողները պետք է սովորեին ադրբեջաներեն և այդ լեզվի տիրապետման մակարդակը ստուգող քննություն հանձնեին:

Հետպատերազմյան տարիներին Ադրբեջանի զարգացման վրա առանձնահատուկ ազդեցություն է ունենում բնակչության ազգային կազմի փոփոխությունը: Կտրուկ ավելանում է ադրբեջանցիների քանակը: Եթե մինչև պատերազմը նրանք բնակչության ընդհանուր թվի 58 տոկոսն էին կազմում, ապա 1950-ականների վերջին այդ թիվը հասնում է 67,5-ի: Ազգագրական այս փոփոխությունները պայմանավորված էին ինչպես Բաքվի նավթի դերի նվազմամբ, միութենական այլ հանրապետություններից դեպի Ադրբեջան միգրացիայի դադարեցմամբ, այնպես էլ առողջապահության զարգացմամբ՝ ադրբեջանցիների բնական աճի կտրուկ ավելացմամբ: Ուրբանիզացիայի ծավալների ավելացմանը զուգահեռ՝ ավելանում են գյուղից քաղաք ներքին միգրացիայի ծավալները: Նշված ժամանակահատվածում Ադրբեջանում քաղաքային բնակչության կեսից ավելին ադրբեջանցիներ էին: Սակայն նույնիսկ այս պայմաններում Բաքվի բնակչության միայն 40 տոկոսն էր ադրբեջանցի: Չնայած ադրբեջանցիների տեսակարար կշռի կտրուկ ավելացմանը՝ ադրբեջաներենի կիրառության մակարդակը հանրապետությունում ցածր էր: Մինչև 80-ականների վերջը քաղաքաբնակ ադրբեջանցիների զգալի մասը ռուսախոս էր և նույնիսկ կենցաղային մակարդակով չէր տիրապետում մայրենի լեզվին: Ադրբեջաներենին տիրապետելու գործնական

անհրաժեշտությունը փոքր էր: Միայն 1978 թ. Ադրբեջանական ԽՍՀ սահմանադրության մեջ տեղ է գտնում ադրբեջաներենին պետական կարգավիճակ շնորհելու վերաբերյալ հոդվածը (Այսրկովկասյան հարևան հանրապետություններում այդ նորմը ամրագրվել էր 1936 թ. սահմանադրություններում):

XX դ. 60-ական թթ. վերջին Ադրբեջանում կոռուպցայի մակարդակը այն աստիճանի էր, որ որոշակի սակագնով կարելի էր ձեռք բերել ցանկացած պաշտոն և կոչում՝ այդ թվում շրջկոմի քարտուղարի և ակադեմիկոսի: Բարձր պաշտոններ զբաղեցնող անձանցից բաղկացած կլանները փաստացի «սեփականաշնորհել էին» իշխանական համակարգը և տնտեսությունը, ինչը Մոսկվային ստիպում է 1969 թ. հեռացնել Վելի Ախունդովին և նրա փոխարեն Ադրբեջանի ղեկավարի պաշտոնում նշանակել ադրբեջանական Պետանվտանգության կոմիտեի ղեկավար Հեյդար Ալիևին: Սակայն դրական փոփոխություններ տեղի չեն ունենում: Կոռուպցիան էլ ավելի մեծ չափերի է հասնում: Իշխանական համակարգում սկսում են պաշտոններ զբաղեցնել Ալիևի հայրենակիցները՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունից ներգաղթածները: Դրանով Ալիևը Ադրբեջանում հաստատում է իր մերձավոր շրջապատի տիրապետությունը: Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարի պաշտոնում Ալիևի տասներեքամյա գործունեության ընթացքում հանրապետության տնտեսությունը զարգանում է էքստենսիվ, այն էլ՝ միութենական կենտրոնի ֆինանսական օժանդակությամբ: Այդ օժանդակությունն էլ պայմանավորված էր այն ջերմ ընդունելությամբ, որին Բաքվում արժանացել էր ԽՍՀՄ ղեկավար, ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լեոնիդ Բրեժնևը: Ադրբեջանական ԽՍՀ իր երեք այցելության ժամանակ էլ Բրեժնևը մեծարժեք նվերներ է ստացել: Իր այցերից մեկի ժամանակ Ալիևը Խորհրդային Միության զառամող ղեկավարին էր նվիրել աղամանդե մատանի, որի մեջտեղում գտնվող մեծ քարը շրջապատված էր խորհրդային հանրապետությունները

խորհրդանշող 15 փոքր քարերով: Մատանու արժեքը 226 հազար ռուբլի էր (համարժեք է այսօրվա մոտ կես միլիոն դոլարին):

Ադրբեջանական ԽՍՀ գոյության վերջին տարիների պատմությունը կապված է ղարաբաղյան հակամարտության հետ: 1921 թ. բոլշևիկյան կուսակցության Կովկասյան բյուրոյի անարդարացի որոշմամբ 1923 թ. հուլիսի 5-ին հայաբնակ Լեռնային Ղարաբաղը ինքնավար մարզի կարգավիճակով միացվում է Ադրբեջանական ԽՍՀ-ին: Այն շուրջ 70 տարի Ղարաբաղի հայության նկատմամբ ազգային խտրականության քաղաքականություն է վարում: Խորհրդային իշխանության գոյության ընթացքում Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցը բարձրացվել է 1945, 1963, 1977 և 1982 թթ.: Ընդ որում, 1960-ականներին ԼՂԻՄ-ում սոցիալ-տնտեսական լարվածությունը մի քանի անգամ վերաճում է զանգվածային անկարգությունների: Դա պայմանավորված էր նրանով, որ Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարությունը ԼՂԻՄ-ի նկատմամբ տնտեսական խտրականության, ինչպես նաև ինքնավար մարզի ժողովրդագրական կառուցվածքը փոխելու քաղաքականություն էր իրականացնում: Եթե 1939 թ. հայերը Ղարաբաղում կազմում էին բնակչության 91 տոկոսը, ապա 1970 թ. մարդահամարով նրանց թիվը պակասել էր 11 տոկոսով: 1987 թ. երկրորդ կեսին Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին միացնելու ստորագրահավաք է իրականացնում, որին մասնակցում են 75 հազար մարդ, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի գրեթե ողջ չափահաս հայ բնակչությունը: Աճող լարվածությունը թուլացնելու և Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության վրա ճնշում գործադրելու նպատակով Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարության մի մեծ խումբ 1988 թ. փետրվարի 11-ին մեկնում է Ստեփանակերտ: Փետրվարի 12-ին Բաքվից ժամանածների մասնակցությամբ կայացած տեղական ակտիվի ընդլայնված նիստում տեղի ավտոշարասյան ղեկավար Մաքսիմ Միրզոյանը սուր քննադատության է ենթարկում Լեռնային Ղարաբաղի մարզկոմի

քարտուղար Բորիս Կևորկովին՝ Ղարաբաղի ազգային առանձնահատկությունների անտեսման, «ժողովրդագրական այնպիսի քաղաքականության իրականացման համար, որը նպաստում է տարածաշրջանում հայ բնակչության տեսակարար կշռի նվազմանը»: Այս ելույթը հանգեցնում է նրան, որ հանդիպումը դուրս է գալիս կուսակցական ղեկավարների վերահսկողությունից, և նախագահության անդամները լքում են դահլիճը: Հաջորդ օրը Ստեփանակերտում զանգվածային ցույց է տեղի ունենում: Այն արտոնած Ստեփանակերտի գործադիր կոմիտեն նախանշել էր դրա նպատակը՝ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանին վերամիավորելու պահանջ»: Փետրվարի 20-ին գումարված ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ նիստը դիմում է Հայկական ԽՍՀ, Ադրբեջանական ԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝ պահանջելով քննարկել ԼՂԻՄ-ն Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանին միացնելու հարցը և դրական լուծում տալ դրան: Նիստին ներկա Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Քյամրան Բաղիրովին չի հաջողվում կասեցնել այս դիմումի ընդունումը:

Հայկական ԽՍՀ-ում և Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող խաղաղ հանրահավաքներին Ադրբեջանը պատասխանում է 1988 թ. փետրվարի 26-29 Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում կազմակերպված հայերի ջարդով: Զուտ պաշտոնական տվյալներով (շատ հեռու են ճշգրիտ լինելուց) 32 մարդ է զոհվում: Միութենական ղեկավարությունը երեք օր հետո է միայն զորք մտցնում Սումգայիթ: Սումգայիթյան ջարդին ԽՍՀՄ օրինապահ մարմինների վերաբերմունքը բացարձակ ծաղրական էր. քրեական պատասխանատվության է ենթարկվում միայն երկու մարդ, ինչը նպաստում է հետագայում Ադրբեջանի ամբողջ տարածքում հայկական նոր ջարդերի իրականացմանը: Համոզվելով, որ միութենական կենտրոնը մտադիր չէ պատասխանատվության ենթարկել զանգվածային կոտորածների կազմակերպիչներին, ադրբեջանա-

կան ղեկավարությունը 1988 թ. գարնանը հրահանգում է բուն Լեռնային Ղարաբաղի տարածքում՝ Ասկերանի շրջանի Խոջալու ավանում, գնդակահարել և Շուշի քաղաքից վտարել հայ ազգաբնակչությանը:

1988 թ. գարնանը սկիզբ են առնում հայերի՝ Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած զանգվածային տեղահանությունն ու բռնագաղթը, որոնք ուղեկցվում են թալանով և սպանություններով: Ադրբեջանական ԽՍՀ-ից Հայկական ԽՍՀ-ում ապաստանած բռնագաղթածների թիվը 1988-1990 թթ. հասնում էր 300 հազարի: Ժողովրդական լայն զանգվածների ճնշմամբ Հայկական ԽՍՀ իշխանությունները ստիպված են լինում Հայաստանի Գերագույն խորհրդի արտակարգ նիստ հրավիրել: 1988 թ. հունիսի 15-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը համաձայնություն է տալիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ի կազմում ներառելու հարցին և այն քննելու ու դրական լուծում տալու խնդրանքով դիմում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Վախենալով, որ հայ ժողովրդի արդարացի պահանջի բավարարումը նմանատիպ այլ հիմնահարցեր կառաջացնի բազմազգ երկրի այլ հանրապետություններում, միութենական իշխանությունները մերժում են այդ խնդրանքը: Այդուհանդերձ, ձգտելով մեղմել ազգամիջյան լարվածությունը և չկորցնել արագ զարգացող իրադարձությունների նկատմամբ վերահսկողությունը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հունվարի 12-ի որոշմամբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում հաստատվում է անմիջականորեն միութենական կենտրոնի կողմից ղեկավարվող Հատուկ կառավարման կոմիտե՝ Արկադի Վոլսկու գլխավորությամբ: Այսպիսով, Ադրբեջանի իշխանությունը փաստացի դադարում է գործել Լեռնային Ղարաբաղում:

1989 թ. փետրվարի 25-ին ստեղծված և իրեն ընդդիմադիր ուժ հռչակած Ադրբեջանի ժողովրդական ճակատը Ադրբեջանի կոմունիստական ղեկավարության դիրքերը սասանելու նպատակով

նույն թվականի դեկտեմբերին Նախիջևանում ոչնչացում է խորհրդա-իրանական սահմանի ինժեներական կառույցները: 1989 թ. աշնանը և 1990 թ. ձմռան սկզբին Ժողովրդական ճակատը Ադրբեջանի 27 շրջաններում բռնազավթում է իշխանությունը:

Ադրբեջանը միութենական կենտրոնի խուսանավումներին և հայ ժողովրդի երկու հատվածների վերամիավորման համար մղվող միահամուռ պայքարին 1989 թ. գարնանը պատասխանում է Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի շրջափակմամբ: Միութենական կենտրոնի թողտվության պայմաններում Ադրբեջանի իշխանությունները և Ժողովրդական ճակատը հունվարի 13-15-ը Բաքվում իրականացնում են հայերի ջարդ, ինչի հետևանքով Բաքվի բազմահազարանոց հայ բնակչությունը տեղահանվում է, հարյուրավոր մարդիկ սպանվում են կամ անհետ կորչում: Միութենական կենտրոնը միայն այն ժամանակ է զորք մտցնում Բաքու, երբ Ադրբեջանում կոմունիստական կուսակցության իշխանությունը տապալման վտանգի առջև է հայտնվում: Ադրբեջանի մայրաքաղաքում հունվարի 20-ից 25-ը 131 քաղաքացիական անձ է սպանվում:

Գորբաչովին նախագական լիազորություններից զրկելու և նոր միութենական պայմանագրի ստորագրումը թույլ չտալու նպատակով 1991 թ. օգոստոսի 18-21-ը Մոսկվայում կազմակերպված իշխանափոխության փորձի ձախողումից հետո 1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդն ընդունում է «Ադրբեջանի անկախության վերականգնման մասին» հռչակագիրը: 1991 թ. դեկտեմբերի 29-ին Ադրբեջանում հանրաքվե է անցկացվում, որի մասնակիցների 99 տոկոսը քվեարկում է անկախության օգտին:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ էր մեծ այլազգիների քանակը Ադրբեջանի ղեկավար կազմում խորհրդայնացումից անմիջապես հետո:

2. Ո՞րն էր 1918 թ. ամռանը Գանձակում և Ղարաբաղում տեղի ունեցած զինված ապստամբությունների պատճառը:

3. Ինչո՞ւ է պարենմասնատրումը փոխարինվում ՆԷՊ-ով:

4. Ի՞նչ իրավաքաղաքական փոփոխություններ են տեղի ունենում Ադրբեջանական ԽՍՀ առաջին սահմանադրության ընդունումից հետո:

5. Ինչի՞ց հետո են Այսրկովկասյան խորհրդային հանրապետությունները կորցնում իրենց ձևական անկախությունը:

6. Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ինչո՞ւ էր գերմանական հրամանատարությունը մեծ տեղ տալիս Ադրբեջանի նվաճմանը:

7. 1945 թ. նոյեմբերին ի՞նչ մոտեցում ուներ Ադրբեջանական ԽՍՀ ղեկավար Բաղիրովը Լեռային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին միացնելու առաջարկի նկատմամբ:

8. 1959 թ. հունիսին ինչո՞ւ է փոխվում Ադրբեջանական ԽՍՀ ղեկավար կազմը:

9. Ո՞րն էր 1969 թ. Հեյդար Ալիևին Ադրբեջանի ղեկավար նշանակելու պատճառը:

10. Ո՞րն էր XX դ. 60-ականներին Լեռնային Ղարաբաղում զանգվածային անկարգությունների պատճառը:

11. 1988 թ. փետրվարին ի՞նչ դիմումով է հանդես գալիս ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ նիստը:

12. Ինչի՞ է հանգեցնում Սումգայիթյան ջարդի կազմակերպիչների անպատիժ մնալը:

13. Ինչո՞ւ են միութենական իշխանությունները 1988 թ. հունիսի 15-ին մերժում ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին միացնելու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի խնդրանքը:

ԹԵՄԱ VII
Թուրքիայի Հանրապետությունը 1918-1988 թթ.

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին Անտանտի դաշնակիցների կողմից Ստամբուլի (1918 թ.) և Իզմիրի (1919 թ.) օկուպացիան թուրքական ազգային շարժման սկզբի պատճառ է դառնում: Պատերազմի ժամանակ աչքի ընկած զորավար Մուստաֆա Քեմալ փաշայի գլխավորությամբ սկսվում է Թուրքիայի անկախության պատերազմը (1919-1923), որի նպատակն էր չեղյալ համարել Սևրի պայմանագրի դրույթները:

Քեմալը 1919 թ. մայիսի 19-ին Սամսուն ժամանելուց հետո անմիջապես սկսում է իր շուրջը համախմբել սուլթանական կառավարության պարտվողական քաղաքականությունից դժգոհներին և գլխավորում է ընդդիմադիր շարժումը: Հուլիս-օգոստոս ամիսներին՝ Էրզրումում, ապա սեպտեմբերին Սեբաստիայում տեղի ունեցած համագումարներում ձևավորվում է Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության ասոցիացիան, ստեղծվում գործադիր կոմիտե՝ Մուստաֆա Քեմալի նախագահությամբ:

Սուլթանական կառավարությունը, տեղի տալով քեմալականների ճնշմանը, մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշայի գլխավորությամբ հրաժարական է տալիս: Քեմալականների հետ բանակցություններին հաջորդում են նոր խորհրդարանի ընտրությունները, որի առաջին նիստը բացվում է 1920 թ. հունվարին Ստամբուլում: Խորհրդարանի ճնշող մեծամասնությունը դեմ էր կառավարության պարտվողական քաղաքականությանը և հունվարի 28-ին ընդունում է Էրզրումում և Սեբաստիայում ձևակերպված Ազգային մեծ ուխտը, որը մարմնավորում էր ձևավորվող քեմալական շարժման քաղաքական նպատակները. օսմանյան պետության սահմաններն ընդգրկելու էին այն տարածքները, որոնք, Մուդրոսի զինադադարի համաձայն, մնում էին օսմանյան իրավասության

ներքո: Դրան ի պատասխան՝ դաշնակիցները 1920 թ. մարտի 16-ին ընդարձակում են Ստամբուլի և նրա շրջակայքի օկուպացված տարածքը, ապա ձերբակալում ու արտաքսում խորհրդարանի բազմաթիվ պատգամավորների:

Այս պատգամավորներն ու մի շարք այլ քաղաքական գործիչներ, ձեռնամուխ լինելով թուրքական պետության իրավական հիմքի ստեղծմանը, 1920 թ. ապրիլի 23-ին Անկարայում հրավիրում են խորհրդարանի՝ Ազգային մեծ ժողովի առաջին նիստը, որտեղ Անտանտի դեմ զինված պայքարի կոչ է արվում: Ազգային մեծ ժողովի կողմից 1921 թ. հունվարի 20-ին ընդունված սահմանադրությամբ հայտարարվում է, որ ինքնիշխանությունը պատկանում է ազգին, և որ ժողովը «ազգի իսկական և միակ ներկայացուցիչն է»: Պետությունը անվանվում է Թուրքիա, իսկ գործադիր իշխանությունը փոխանցվում է գործադիր խորհրդին՝ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ:

Մուստաֆա Քեմալի անմիջական հրամանատարության տակ գործող թուրքական բանակը 1921 թ. օգոստոսի 23-31-ը տեղի ունեցած Սաքարիայի ճակատամարտում վճռորոշ հաղթանակ է տանում հույների նկատմամբ, որոնք հասել էին Անկարայի մատույցներին: Հունական բանակի նահանջն ավարտվում է 1922 թ. սեպտեմբերի 9-ին՝ Իզմիրի գրավմամբ և քաղաքի հույն ու հայ բնակչության կոտորածով:

Քեմալականների այս հաղթանակը մեծապես պայմանավորված էր 1920 թ. ապրիլին բոլշևիկա-քեմալական ռազմաքաղաքական համագործակցության հաստատմամբ, որի արդյունքում Խորհրդային Ռուսաստանը քեմալականներին անհատույց փոխանցում է 8 տոննայից ավելի ոսկի և 1921-1922 թթ. ռազմական գործողությունների ընթացքում գործածված զենքի ու զինամթերքի կեսից ավելին, ինչպես նաև վառոդի երկու գործարանի սարքավորում, երկու ռազմանավ և ռազմական խորհրդականներ: Այս համագործակցության շրջանակում տեղի են ունենում Ադրբեջանի ու

Վրաստանի խորհրդայնացումը և Հայաստանի տարածքի բաժանումը Խորհրդային Ռուսաստանի ու քեմալական Թուրքիայի միջև: Աշխարհի պետությունների կողմից չճանաչված այս պետական կազմավորումների միջև համագործակցությունը իրավական տեսք է ստանում Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի խորհրդաթուրքական, ապա՝ նույն թվականի հոկտեմբերի 13-ի Կարսի այսրկովկասյան խորհրդային հանրապետությունների և Թուրքիայի միջև կնքված պայմանագրերով: Այդ պայմանագրով Բաթումի մարզը Սուպսա գետով բաժանվում է Թուրքիայի և Խորհրդային Վրաստանի միջև, Կարսի մարզը և Սուրմալուի գավառը, որոնք 1919-1920 թթ. մտնում էին Հայաստանի Հանրապետության կազմի մեջ, անցնում են Թուրքիայի տիրապետության տակ, իսկ Նախիջևանը, Թուրքիայի պնդմամբ, անցնում է Ադրբեջանին:

Հունական բանակի պարտությունից հետո Անտանտի երկրները համաձայնում են համապարփակ կարգավորման գնալ քեմալականների հետ: 1923 թ. հուլիսի 24-ին կնքված Լոզանի պայմանագրով Թուրքիայի հանրապետությունը ճանաչվում է Օսմանյան կայսրության իրավահաջորդ: Եվրոպայում Թուրքիային մնում է շուրջ 36 հազար կմ² տարածք: Կազմակերպվում է բնակչության բռնի փոխանակում, որի արդյունքում մոտ 1 300 000 հույներ լքում են Թուրքիան, իսկ 400 000 թուրք տեղափոխվում է Թուրքիա: Մոսուլ քաղաքի հարցը կողմերը թողնում են Ազգերի լիգայի քննարկմանը, որի որոշմամբ 1925 թ. այն մտնում է Իրաքի կազմի մեջ:

Խաղաղության հաստատումից հետո Մուստաֆա Քեմալն ու նրա մերձավոր աջակիցները ձեռնամուխ են լինում նոր քաղաքական համակարգի կառուցմանը: Դրա սկիզբը դրվում է 1922 թ. նոյեմբերի 1-ին սուլթան Մեհմեդ VI Վեհաղեղինի (1918-1922) գահընկեցությամբ: 1923 թ. հոկտեմբերի 23-ին մայրաքաղաք է հռչակվում Անկարան, իսկ վեց օր անց՝ հոկտեմբերի 29-ին, Ազ-

գային մեծ ժողովը Թուրքիան հռչակում է հանրապետություն և առաջին նախագահ է ընտրում Մուստաֆա Քեմալին: Խալիֆայությունը վերացվում է 1924 թ. մարտի 3-ին, Օսմանյան դինաստիայի բոլոր ներկայացուցիչները վտարվում են Թուրքիայից: Թուրքիայի երկրորդ սահմանադրությունն ընդունվում է 1924 թ. ապրիլի 20-ին: Խորհրդարանը Շվեյցարիայի քաղաքացիական օրենսգրքի հիմքի վրա 1926 թ. ընդունում է Թուրքիայի քաղաքացիական օրենսգիրքը: Իսլամի՝ որպես պետական կրոնի կարգավիճակը վերացվում է 1928 թ. ապրիլին, և Թուրքիան հռչակվում է աշխարհիկ հանրապետություն:

1923 թ. ապրիլին Քեմալը ցրում է խորհրդարանը, որտեղ նրա ընդդիմադիրները զգալի քանակ էին կազմում: Նորընտիր խորհրդարանը Մուստաֆա Քեմալի կամակատարն էր, այնտեղ ընդամենը երեք ընդդիմադիր կար: Քեմալի ստեղծած Ժողովրդահանրապետական կուսակցությունը մինչև 1950 թվականը խորհրդարանական բոլոր գումարումներում մեծամասնություն էր կազմում: Երկրում 1924 թ. օրենքով մտցվում է կրթական միասնական համակարգ, կրոնական դպրոցները՝ մեդրեսեները, պետք է ենթարկվեին կրթության նախարարությանը: 1928 թ. արաբատառ այբուբենը Թուրքիայում փոխարինվում է լատինատառով: Այբուբենի փոփոխությամբ փորձ էր արվում թուրքական հասարակությանը հեռացնել իսլամական կրոնական մշակութային ավանդույթից, ինչպես նաև մերձենալ Խորհրդային Միության թուրքալեզու ժողովուրդներին, որոնք մինչ այդ անցել էին լատինատառ այբուբենի: 1934 թ. օրենքով, մինչ այդ ազգանուն չունեցող մուսուլմանների համար պարտադիր դարձավ դրանց գործածումը: Հայերին, հույներին և սլավոնական ծագում ունեցողներին պարտադրվում է հրաժարվել իրենց ազգանուններից և ընդունել թուրքերենի լեզվական հիմքի վրա կազմված ազգանուններ: Օրենքի ընդունումից հինգ ամիս անց՝ 1934 թ. նոյեմբերին, թուրքական լեզվաբանական ասոցիացիայի գլխավոր քարտուղար Հակոբ Մարքայանի

(Դիլաչար) առաջարկով Մուստաֆա Քեմալին շնորհվում է Աթաթուրք ազգանունը:

Այնուամենայնիվ, չնայած եվրոպական արժեհամակարգ կիրառելուն և մարդու իրավունքներն ու բազմակարծությունը հարգելու բարձրագոչ հայտարարություններին, երկրում ձևավորվում է Մուստաֆա Քեմալի, իսկ նրա մահից հետո՝ Իսմեթ Ինենյուի անձնիշխանությունը:

Քեմալի դեմ 1926 թ. դավադրությունը նրան հնարավորություն է ընձեռում դաժան հաշվեհարդար տեսնելու իր հակառակորդների նկատմամբ:

1925 և 1930 թթ. տեղի ունեցած քրդական ապստամբությունները ճնշվում են: Այս ապստամբությունների հիմնական պատճառը իշխանությունների վարած բռնի թուրքացման քաղաքականությունն էր: Դերսիմի 1937-1938 թթ. ապստամբության համար առիթ է ծառայում տեղական զազա բնակչությանը հայրենի բնակավայրերից երկրի արևմտյան շրջաններ տեղափոխելու, երեխաներին Դերսիմի գավառից (Խարբերդի տարածաշրջան) դուրս կրթություն տալու անվան տակ ուծացնելու փորձը: Ապստամբությունը ճնշվում է 50 հազարանոց կանոնավոր բանակի և ռազմական ավիացիայի կիրառմամբ: Դերսիմում տեղի ունեցած կոտորածին զոհ է գնում շուրջ 40 հազար մարդ, այդ թվում՝ Հայոց ցեղասպանությունը վերապրած և Դերսիմում ծպտված բնակություն հաստատած բազմահազար հայեր:

1938 թ. Մուստաֆա Քեմալի մահից հետո նախագահի պաշտոնում նրան հաջորդում է Իսմեթ Ինենյուն: Վերջինս, ճարպկորեն օգտագործելով, մի կողմից, Անգլիայի և Ֆրանսիայի, մյուս կողմից, Գերմանիայի և Իտալիայի միջև եղած հակասությունները, 1939 թ. հուլիսի 7-ին Թուրքիային է միացնում ֆրանսիական մանդատի տակ գտնվող Ալեքսանդրետի գավառը, որի հայ բնակչությունը և արաբների մի զգալի մասը ստիպված էին արտագաղթել: Հայերի մի մասը հաստատվում է Հալեպում, մյուս մասը, տեղափոխվելով Լիբանան, հիմնում է Այնճար գյուղաքաղաքը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբից անմիջապես հետո Թուրքիան հայտարարում է իր չեզոքության մասին: Պատերազմի տարիներին ռազմական ծախսերը կազմում էին բյուջեի կեսից ավելին: 1942 թ. դեպի Ստալինգրադ և Կովկաս գերմանական հարձակման ժամանակ Թուրքիայում իրականացված զորահավաքի արդյունքում բանակի թվաքանակը հասնում է 1 միլիոնի, որից 750 հազարը՝ 4 բանակային կորպուս, 18 դիվիզիա և 1 մոտոհրաձգային բրիգադ կանգնած էր խորհրդա-թուրքական սահմանին: Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարության՝ Այսրկովկաս ներխուժելու և հայությանը վերջնականապես ոչնչացնելու ծրագրերն ի դերև են ելնում Ստալինգրադի ճակատամարտում գերմանական բանակի ջախջախումից հետո:

Թուրքական կառավարության ազգայնամոլական և ռասիստական կեցվածքի արտահայտությունն էր 1941 թ. մայիսին իրականացված այսպես կոչված «Քսան դասերի զորակոչը», որով 18-ից 65 տարեկան ոչ մուսուլման տղամարդկանց զորակոչում էին, սակայն նրանք չէին անցնում կանոնավոր զինվորական ծառայության, այլ տեղափոխվում էին ցրտաշունչ կլիմա ունեցող Աշքալեի «աշխատանքային ճամբար», որտեղ նրանց օգտագործում էին ծանր շինարարական աշխատանքներում: Թուրքական իշխանությունների նպատակը «հինգերորդ շարասյուն» համարվող այդ անձանց ֆիզիկական ոչնչացումն էր: Նույն մարդատյաց քաղաքականության շարունակությունն էր նաև 1942 թ. նոյեմբերին «Ունեցվածքի հարկ» («Վարլըք վերգեսը») կոչվող բացահայտ թալանչիական օրենքը, որի նպատակը Թուրքիայի ոչ մուսուլման բնակչության ունեզրկումն էր: Հարկվող բնակչության 87 տոկոսը ոչ մահմեդականներ էին, և դա այն դեպքում, երբ ոչ մահմեդականների քանակը չէր գերազանցում երկրի բնակչության 2 տոկոսը: Ցածր եկամուտ ունեցողները չէին ազատվում հարկումից: Վերջիններիս հարկը կազմում էր միջին ծառայողի տարեկան ամբողջ եկամուտը: Հարկը պետք է վճարվեր կես ամսում:

Այն անձինք, որոնք ի վիճակի չէին վճարել հարկը, աքսորվում էին Աշքալեի «աշխատանքային ճամբար»՝ իրենց ստրկական աշխատանքով մարելու պետության հանդեպ ունեցած «պարտավորությունները»: Փաստերը ցույց են տալիս, որ այդ ճամբարի կառուցումից առաջ թուրքական պաշտոնական պատվիրակությունը, Գերմանիայի հատուկ ծառայությունների ղեկավար Հիմլերի թույլտվությամբ, փորձի փոխանակման նպատակով այցելել է Զաքսհաուզենի համակենտրոնացման ճամբար: Այս օրենքի կիրառման արդյունքում թուրքական պետությունը բռնագանձում է ներկայիս 5 միլիարդ ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

Պատերազմի ավարտին Խորհրդային Միությունը Թուրքիայից պահանջում է փակել նեղուցները ոչ սևծովյան պետությունների ռազմական նավերի համար, դրանցում խորհրդային ռազմական բազաներ հիմնել և Սուրմալուի, Կարսի, Արդահանի և Բաթումի մարզի հարավային շրջանները վերադարձնել Հայկական ու Վրացական ԽՍՀ-ներին: Ատոմային զենքի մենաշնորհ ունեցող ԱՄՆ-ի ռազմական միջամտության սպառնալիքը՝ հօգուտ Թուրքիայի, ստիպում է Խորհրդային Միությանը հրաժարվել իր պահանջներից:

Հետպատերազմյան տարիներին Թուրքիայում ամենանկատելի փոփոխությունը քաղաքական կյանքի ազատականացումն էր: Մինչև 1945 թ. երկրում բարձրանում է գրագիտության մակարդակը՝ կազմելով չափահաս բնակչության մեկ երրորդը: Գրագետ այդ զանգվածը պահանջում էր ավելի մեծ ազատություն: Կառավարությունը ստիպված էր գնալ զիջումների՝ թույլ տալով նոր քաղաքական կուսակցությունների ստեղծում, համընդհանուր ընտրական իրավունք և ուղղակի ընտրություններ:

Կառավարող Ժողովրդա-հանրապետական կուսակցության ներսում տեղի ունեցած պառակտման արդյունքում 1946 թ. հիմնադրվում է Դեմոկրատական կուսակցությունը, որը լայն աջակցություն է ստանում հասարակական տարբեր շերտերի կողմից:

Չնայած կառավարության միջամտությանը՝ այս կուսակցությունը նույն թվականի համընդհանուր ընտրություններում ստանում է 61 մանդատ:

Քաղաքական ազատության այլ սահմանափակումները, ներառյալ մամուլի գրաքննությունը, մեղմվում են: Այս շրջանում ստեղծվում են առաջին զանգվածային անկախ թերթերը: Արհմիությունների ստեղծումը թույլատրվում է 1947 թ.:

1950 թ. ընտրություններում տարած հաղթանակը Դեմոկրատական կուսակցությանը հնարավորություն է ընձեռում գալ իշխանության: Ադնան Մենդերեսի գլխավորած դեմոկրատների կառավարությանը սկզբում հաջողվում է տնտեսական աճ ապահովել, որը պայմանավորված էր տնտեսության վրա պետության միջամտության նվազեցմամբ, առատ բերքով և 1950–1953 թթ. Կորեական պատերազմի հետևանքով թուրքական արտադրանքի պահանջարկի մեծացմամբ: Սակայն 1954 թ. երաշտը Թուրքիային ստիպում է ցորեն ներկրել: Տարեկան սղաճը գերազանցում է 15 տոկոսը: Կառավարությունն անհաջող փորձ է անում վերահսկելու գները, սակայն պետական ծախսերի անընդհատ աճը սրում է գնաճը: Մեծացող դժգոհությունը այլ հուն մղելու և պատասխանատվությունից խուսափելու նպատակով իշխանությունները 1955 թ. հրահրում են Ստամբուլի հույների կոտորած, որի հետևանքով Ստամբուլի 65 հազար հույն բնակչությունը կրճատվում է՝ հասնելով 49 հազարի:

Հետագա տնտեսական դժվարությունները հանգեցնում են իշխանությունների հասցեին քննադատության աճին, ինչին կառավարությունն արձագանքում է բռնաճնշումներով: 1953 թ. ժողովրդա-հանրապետական կուսակցության ունեցվածքի մեծ մասը բռնագրավվում է, այդ կուսակցությանը պատկանող լրատվամիջոցները փակվում են: 1954 թ. ընդունված օրենքները խիստ սահմանափակում են մամուլի իրավունքները: 1956 թ. արգելվում են հանրային հավաքները: 1960 թ. ապրիլին երկրում ռազմական

դրություն է մտցվում, ինչով բանակը քաղաքական գործընթացի ուղղակի մասնակից է դառնում: Մայիսին ցամաքային զորքերի շտաբի պետ գեներալ Գյուրսելի գլխավորությամբ տեղի է ունենում ռազմական հեղաշրջում, Դեմոկրատական կուսակցության գործունեությունն արգելվում է, վարչապետ Մենդերեսն ու երեք նախարարներ մահապատժի են ենթարկվում, իսկ 12 մարդու, այդ թվում՝ նախագահ Բայարի մահապատիժը փոխարինվում է ցմահ բանտարկությամբ:

XX դ. 60-70-ական թվականներն առանձնանում են Թուրքիայում ձախ և աջ ծայրահեղական խմբավորումների առճակատումով: Քաղաքական բռնության զոհերի տարեկան թիվը 1965 թ. 24-ից 1980 թ. հասնում է 1500-ի: Թուրքիայի կառավարող վերնախավը, իր իշխանությանը սպառնացող իրավիճակից ելք որոնելով, նախաձեռնում է 1974 թ. ներխուժումը Կիպրոս և զավթում է կղզու տարածքի 36 տոկոսը: Կղզու ընդհանուր բնակչության երեք քառորդից ավելին կազմող 150 հազար հույներ արտաքսվում են թուրքերի վերահսկողության տակ հայտնված տարածքից: Քաղաքական անկայունությունից և Թուրքիայի արևելյան շրջաններում քրդական հուզումներից անհանգստացած բանակի բարձրաստիճան սպաները գեներալ Քենան Էվրենի գլխավորությամբ 1980 թ. սեպտեմբերին հերթական ռազմական հեղաշրջումն են իրականացնում:

XX դ. 80-ական թվականներին Թուրքիայի արևելքում քրդական զինված շարժում է ծավալվում: Քրդական բազմաբնույթ խմբավորումներից առանձնանում էր Քրդստանի աշխատավորական կուսակցությունը՝ Աբդուլլահ Օջալանի գլխավորությամբ: Այն, ձգտելով ստեղծել անկախ քրդական պետություն, 1984 թ. զինված պայքար է սկսում թուրքական պետության դեմ: Դրան Թուրքիայի կառավարությունը պատասխանում է քրդաբնակ շրջաններում ռազմական դրություն մտցնելով: Մինչև 1993 թ. Թուրքիայի հարավ-արևելքում պատժիչ գործողություններում ներգրավված անվտանգության ուժերի ընդհանուր թիվը հասնում

է 200 հազարի: 1982-1995 թթ. սպանվում է շուրջ 15 հազար մարդ, որոնց ճնշող մեծամասնությունը քրդական ծագմամբ քաղաքացիական անձինք էին:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ էր 1920 թ. հունվարին օսմանյան խորհրդարանի ընդունած Ազգային ուխտը:
2. Թուրքիայի անկախության պատերազմում որտե՞ղ և ե՞րբ տեղի ունեցած ճակատամարտն է վճռորոշ նշանակություն ունենում:
3. Ի՞նչ էր նախատեսվում 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով:
4. Ի՞նչ էր նախատեսում 1923 թ. Լոզանի պայմանագիրը:
5. Նոր քաղաքական համակարգի ձևավորման ուղղությամբ ի՞նչ քայլեր են կատարվում Թուրքիայում 1922-1923 թթ.:
6. Ո՞րն էր Թուրքիայում լատինատառ այբուբենի անցնելու նպատակը:
7. Ո՞րն էր 1925 և 1930 թթ. քրդական ապստամբությունների հիմնական պատճառը:
8. Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ինչո՞ւ են թուրքերը հրաժարվում Այսրկովկաս ներխուժելու իրենց ծրագրից:
9. Ի՞նչ նպատակով է 1942 թ. նոյեմբերին մտցվում «Ունեցվածքի հարկը»:
10. Ինչո՞ւ է Խորհրդային Միությունը հրաժարվում Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից:
11. Ո՞րն էր 1955 թ. Ստամբուլի հույների կոտորածի պատճառը:
12. Ի՞նչ նպատակ ուներ XX դ. 80-ական թվականներին Քրդստանի աշխատավորական կուսակցության գլխավորությամբ ծավալված զինված շարժումը:

ԹԵՄԱ VIII
Իրանը Փահլավիների դինաստիայի օրոք (1925-1979)

Չնայած չեզոքություն հայտարարելուն՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Իրանը մարտադաշտի է վերածվում բրիտանական, ռուսական և թուրքական զորքերի կողմից:

1917 թ. Ռուսաստանում բոլշևիկյան հեղափոխությունից հետո խորհրդային նոր կառավարությունը միակողմանի չեղյալ է հայտարարում նախկինում կնքված՝ Իրանի շահերը ոտնահարող ռուս-իրանական պայմանագրերը: Իր պրոտեկտորատը Իրանում հաստատելու Անգլիայի փորձը ձախողվում է, և Մեջլիսը, չնայած արտաքին ճնշումներին, 1919 թ. մերժում է անգլիական ռազմական և ֆինանսական օգնության առաջարկը: Անգլիացիները ստիպված էին մինչև 1921 թ. Իրանի կառավարման համակարգից հեռացնել իրենց խորհրդականներին: Նույն տարում Անգլիայի գործուն աջակցությամբ Իրանի պարսկական կազակական բրիգադի հրամանատար Ռեզա խանը հեղաշրջում է կատարում՝ իր անմիջական վերահսկողության տակ վերցնելով Իրանի բանակը: 1921-1925 թթ. Ռեզա խանը, սկզբում որպես ռազմական նախարար, իսկ Ահմադ շահի օրոք՝ որպես վարչապետ, կարողանում է վերացնել երկրում տիրող քաոսը և ձևավորել իրեն ենթակա կառավարման համակարգ: ՌեզաԽանն ի սկզբանե ցանկանում էր Իրանը հռչակել հանրապետություն և Թուրքիայի աշխարհիկ ազգայնական ղեկավար Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի նման պաշտոնավարել որպես պետության նախագահ: Սակայն Ռեզա խանը, բախվելով լայն զանգվածների շրջանում մեծ ազդեցություն ունեցող շիա ուլեմաների ընդիմությանը, ստիպված է լինում հրաժարվել այդ մտադրությունից, փոխարենը, 1925 թ. տապալելով Ահմադ շահին, իրեն հռչակում է նոր՝ Փահլավիների դինաստիայի հիմնադիր:

Ինքնագլուխ ցեղերի հնազանդեցումը, տրանսիրանական երկաթուղու շինարարությունը թույլ են տալիս Ռեզա-Շահ Փահլավիին (1925-1943) կենտրոնական իշխանության լիարժեք վերահսկողություն հաստատել երկրում:

Ռեզա շահի օրոք իրականացվում են մի շարք բարեփոխումներ, որոնք աշխարհիկ պետականության հիմքն են դառնում: Այդ բարեփոխումներով իրավական կարգավորման բոլոր խնդիրների ու վեճերի լուծումը դուրս է բերվում շիա կրոնական դատարանների իրավասությունից և վերապահվում է աշխարհիկ դատարանների իրավազորությանը: Բարելավվում է կանանց կարգավիճակն ու իրավունքը. չադրա կրելը դառնում է ոչ պարտադիր, բարձրացվում է ամուսնության նվազագույն տարիքը, իսկ շարիաթի օրենքներով ամուսնալուծությունը կորցրնում է իրավական ուժը: Ավելի հասանելի է դառնում աշխարհիկ դպրոցներում կրթությունը, աճում է այդ դպրոցների քանակը: 1934 թ. հիմնվում է Թեհրանի համալսարանը: Այս բարեփոխումներով շիա հոգևորականները զրկվում են այդ ոլորտները վերահսկելու մենաշնորհից: Սակայն արգելվում են արհմիություններն ու քաղաքական կուսակցությունները, խիստ գրաքննություն է սահմանվում մամուլի նկատմամբ: Չի հաջողվում նաև ձերբազատվել Իրանի շահերը ոտնահարող նավթային կոնցեսիաներից, որոնցից առաջինը տրվել էր 1901 թ. Ղաջարների կառավարման օրոք:

Ռեզա շահի համար օրախնդիր դարձած առևտրային շրջանառությունն ընդլայնելու անհրաժեշտությունը, որին խանգարում էր դեպի Եվրոպա Իրանի ցամաքային ուղիների վերահսկողությունը Խորհրդային Միության կողմից, նրա երկյուղը՝ կապված Իրանում անգլիական շարունակվող ներկայության, ինչպես նաև Խորհրդային Միության ռազմաքաղաքական ներկայության հնարավոր վերականգման հետ, դրդում են շահին 1930-ականներին ընդլայնելու կապերը նացիստական Գերմանիայի հետ: Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Իրանի նկատմամբ պա-

տերազմող կողմերի հետաքրքրության աճը հարցականի տակ է դնում Իրանի ինքնիշխանությունը: Իրանական նավթահանքերը վերահսկելու, Իրանի տարածքով ԱՄՆ-ից ռազմական նշանակության բեռների փոխադրումը Խորհրդային Միություն անխափան իրականացնելու նպատակով անգլիական և խորհրդային զորքերը 1941 թ. օգոստոսին ներխուժում են Իրան: Անգլիայի և Խորհրդային Միության ճնշման տակ Ռեզա շահը հօգուտ որդու՝ Մոհամմադ Ռեզայի հրաժարվում է գահից:

Մոհամմադ Ռեզա շահը գահակալում է այնպիսի ժամանակ, երբ Իրանը օկուպացված էր օտարերկրյա բանակների կողմից, ինչը սպառնում էր պետության տարածքային ամբողջականությանը:

Նորընծա շահի իշխանության թուլության պայմաններում Իրանում նկատվում է սոցիալ-քաղաքական ակտիվություն, ինչը բացակայում էր նախորդ շահի բռնապետական ռեժիմի ժամանակ: Սկսում են ձևավորվել բազմաթիվ քաղաքական կուսակցություններ, այդ թվում՝ բրիտանամետ «Ազգային կամք» և Խորհրդային Միության կողմից սատարվող «Թուդե» կուսակցությունները: Դրանք նորաստեղծ արիմիութենական շարժման հետ վիճարկում են երիտասարդ շահի իշխանությունը: Միևնույն ժամանակ հզորանում են պահպանողական կղերական խմբավորումները, որոնք Իրանն աշխարհիկ ուղով զարգացնելու Փահլավիների դինաստիայի քաղաքականության անհաշտ հակառակորդներն էին:

Շահական ռեժիմին ընդդիմադիր այս քաղաքական ուժերը պատերազմի ավարտից հետո ձևավորում են քաղաքական միավորում, որը հայտնի է դառնում Ազգային ճակատ անունով: Վերջինիս առաջնորդ դեմոկրատական, ազատամիտ հայացքներ ունեցող Մոհամմադ Մոսադեղի գլխավորած կառավարությունը 1951 թ. ազգայնացնում է երկրի նավթարդյունաբերությունը: Կանգնելով իրանական նավթային ռեսուրսների շահագործումից ստացող գերշահույթներից զրկվելու սպառնալիքի առջև՝ Անգ-

լիան և Իրանում Խորհրդային Միության ազդեցության հնարավոր վերականգնումից անհանգստացած ԱՄՆ-ն 1953 թ. օգոստոսին պետական հեղաշրջում են կազմակերպում, ինչի արդյունքում Մոհամմադ Ռեզա շահը բացարձակ իշխանություն է ձեռք բերում և, որպես փոխհատուցում, վերականգնում է օտարերկրյա նավթարդյունահանող ընկերությունների արտոնությունները: Հեղաշրջումից հետո շահը սկսում է վարել ընդգծված արևմտամետ քաղաքականություն, որի դրսևորումն էր 1955 թ. Իրանի անդամակցությունը Բաղդադի պակտին:

Իր քաղաքական հակառակորդներին մեկուսացնելուց հետո Մոհամմադ Ռեզա շահը 1963 թ. ձեռնամուխ է լինում սոցիալական, քաղաքական և տնտեսական մեծածավալ բարեփոխումների ծրագրի իրականացմանը, որը պատմության մեջ մտնում է *Սպիտակ հեղափոխություն* անունով: Բարեփոխումները հանգեցնում են Իրանի ազգային հարստության զգալի վերաբաշխման, տնտեսական բուռն զարգացման, որն ուղեկցվում էր գրագիտության մակարդակի և ուրբանիզացիայի աճով: Կարևոր իրադարձություն էր նաև հողային բարեփոխումը: Ավատատերերին պատկանող հողերը գնվում էին կառավարության կողմից և վաճառվում գյուղացիներին շուկայական արժեքից 30 տոկոս ցածր գնով, իսկ հող ձեռք բերելու համար գյուղացիներին տրվող վարկը մարվելու էր 25 տարվա ընթացքում: Հողային բարեփոխումների արդյունքում հողի սեփականատեր են դառնում մինչ այդ ֆեոդալական կախվածության մեջ գտնվող 1,5 միլիոն գյուղացիական ընտանիքներ կամ մոտ 9 միլիոն մարդ՝ Իրանի այդ ժամանակվա բնակչության 40 տոկոսը:

Այնուամենայնիվ, հողային բարեփոխումները շուտով սպառնալիքի տակ են հայտնվում: Կառավարությունը չի կարողանում ստեղծել հողի մանր սեփականատերերի համապարփակ աջակցության համակարգ և ենթակառուցվածք, որը կփոխարիներ նախկին ավատատիրոջը, որը վարձակալներին տրամադրում էր

այն ամենը, ինչն անհրաժեշտ էր գյուղատնտեսության համար: Արդյունքում հողի նոր սեփականատերերի զգալի մասը, ընչազուրկ դառնալով, հեռանում էր խոշոր քաղաքներ, հատկապես Թեհրան, որտեղ, սակայն, աշխատանք գտնելու փոխարեն բախվում է կյանքի օրավուր ծանրացող պայմաններին:

Համաշխարհային ֆինանսական անկայունությունը և նավթի գների տատանումները, գնաճի բարձր տեմպերը լրջորեն սպառնում էին տնտեսությանը: Բնակչության գնողունակությունն ու կենսամակարդակն ընկնում էին: Ամենուրեք նկատվող գների բարձրացումը կասեցնելու նպատակով կառավարությունը 1975 թ. իրականացնում է առևտրականների և արտադրողների ձերբակալություններ, ինչն էլ ավելի է սրում իրավիճակը:

Շահի բարեփոխումները չէին առնչվում երկրի քաղաքական կյանքին: Իրանի խորհրդարանում՝ Մեջլիսում, գործում էին շահական ռեժիմի խամաճիկ երկու կուսակցություններ, որոնք բնավ չէին արտահայտում լայն զանգվածների շահերը: Ավանդական կուսակցություններն օրենքից դուրս էին և ստիպված էին գաղտնի գործել: Բողոքի ակցիաները շատ հաճախ ավարտվում էին երկուստեք բռնություններով: Այս իրավիճակը պարարտ հող էր ստեղծում լայն զանգվածների շրջանում այաթոլլահ Խոմեյնիի կողմից առաջնորդվող շիա հոգևորականության ազդեցության աճի համար:

Աքսորում հայտնված Խոմեյնին քարոզում էր շահական արատավոր ռեժիմի դեմ՝ մեղադրելով շահին անհավատության և օտար ուժերին ենթարկվելու մեջ: 1970-ականներին այաթոլլահի ելույթների հազարավոր ձայնագրություններ և տպագիր օրինակներ մաքսանենգ ճանապարհով մուտք էին գործում Իրան և նպաստում զանգվածների շրջանում կրոնական հռետորաբանության աճին:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ է Ռեզա խանը 1925 թ. իրեն շահ հռչակում՝ հրաժարվելով Իրանը հանրապետություն հռչակելու իր սկզբնական մտադրությունից:

2. Ինչպե՞ս է ՌեզաՇահ Փահլավիին հաջողվում վերահսկողություն հաստատել Իրանի ողջ տարածքի նկատմամբ:

3. Աշխարհիկ պետականության ստեղծմանը միտված ի՞նչ բարեփոխումներ է ձեռնարկում ՌեզաՇահ Փահլավին:

4. Ի՞նչ հանգամանքներ են դրդում Ռեզա շահին ընդլայնելու կապերը նացիստական Գերմանիայի հետ:

5. Ո՞րն էր 1941 թ. օգոստոսին խորհրդային և բրիտանական զորքերի՝ Իրան ներխուժելու պատճառը:

6. Ի՞նչ հետևանք է ունենում 1953 թ. օգոստոսին կազմակերպված պետական հեղաշրջումը:

7. Ի՞նչ էր իրենից ներկայացնում Մոհամմադ Ռեզա շահի նախաձեռնած Սպիտակ հեղափոխությունը:

8. Ո՞րն էր Մոհամմադ Ռեզա շահի օրոք շիա հոգևորականության հեղինակության բարձրացման պատճառը:

ԹԵՄԱ IX
Իսլամական հեղափոխությունն Իրանում և Իրան-իրաքյան պատերազմը

Սպիտակ հեղափոխության արդյունքում Իրանում տնտեսության թռիչքաձև աճը հակադրվում էր լայն զանգվածների հետամնացությանը, որոնք միջնադարյան ավանդույթների վրա հիմնված ապրելակերպն ու արժեհամակարգը պատրաստ չէին ընդամենը մեկ տասնամյակում փոխելու զարգացած Արևմտյան ապրելակերպի ու արժեհամակարգի հետ: Ահա սա էր Իրանում 1978-1979 թթ. տեղի ունեցած Իսլամական հեղափոխության գլխավոր պատճառներից մեկը:

1978 թ. հունվարին մեդրեսեների (կրոնական ուսումնական հաստատություններ) հազարավոր ուսանողներ, վրդովված Թեհրանում հրատարակվող «Էթթելաաթ» թերթում այաթոլլահ Ռուհոլլահ Խոմեյնիի հասցեին արված զրպարտչական հայտարարություններից, դուրս են գալիս փողոց: Նրանց են միանում գյուղական վայրերից մայրաքաղաք նոր տեղափոխված և հիմնականում գործազուրկ այլ երիտասարդներ, որոնք դեմ էին իշխանությունների վարած քաղաքականությանը: Մոհամմադ Ռեզա շահը, որը տառապում էր քաղցկեղից, իր դեմ ուղղված զանգվածային բողոքի ելույթներին բռնաճնշումներով է պատասխանում:

377-ից 470 մարդու կյանք խլած «Սինեմա Ռեքս» կինոթատրոնում օգոստոսին հրդեհ է տեղի ունենում, որը, չապացուցված տեղեկությունների համաձայն, կազմակերպված էր հատուկ ծառայությունների կողմից: Դա պատճառ է դառնում հակակառավարական զանգվածային բողոքների, որոնք կաթվածահար են անում ողջ երկիրը: Բողոքի այդ ելույթների ընթացքում իշխանությունների կողմից ուժի ոչ համաչափ կիրառման հետևանքով ցուցարարների շրջանում զոհեր եղան: Զոհերի ի հայտ գալը մի երկրում, որտեղ նահատակությունը կարևորագույն դեր ունի կրոնա-

կան ինքնարտահայտման մեջ, շիա հոգևորականությունն օգտագործեց շարժման ալիքի վրա բարձրանալու համար:

Վտարանդիության մեջ բողոքի ելույթներն ուղղորդող և համակարգող այաթոլլահ Խոմեյնին հանդես է գալիս շահի գահազրկման պահանջով: 1979 թ. հունվարին Մոհամմադ Ռեզա շահը ստիպված է լինում ընտանիքով հեռանալ Իրանից: Երկիրը կառավարելու համար ստեղծված ռեգենտական խորհուրդը, որը գլխավորում էր շահի հեռանալուց առաջ վերջինիս կողմից վարչապետ նշանակված Շահպուր Բախթիարը, չի կարողանում փոխզիջման հասնել ընդդիմության հետ: Թեհրանում մեկ միլիոնից ավելի ցուցարարներ վանկարկում են փետրվարի 1-ին Իրան վերադարձած Խոմեյնիի անունը: Փետրվարի 11-ին Իրանի զինված ուժերը հայտարարում են իրենց չեզոքության մասին, ինչը փաստացի ազդարարում էր շահական ռեժիմի տապալումը:

Անցկացված հանրաքվեով ճնշող աջակցություն ստանալուց հետո Խոմեյնին 1979 թ. ապրիլի 1-ին Իրանը հռչակում է իսլամական հանրապետություն: Հոգևորականությունը իր նախկին ձախ, ազգայնական և ինքնուրույն գործող մտավորական դաշնակիցներին զրկում է նոր ձևավորվող կառավարման համակարգում իշխանական ցանկացած լծակից և սկսում է պահպանողական սոցիալական արժեքներին վերադարձի գործընթաց: 1979 թ. անվավեր է ճանաչվում ընտանիքի պաշտպանության մասին օրենքը, որը լրացուցիչ երաշխիքներ և իրավունքներ է տրամադրում կանանց: 1979 թ. մայիսի 5-ին ստեղծված և իշխանության ղեկը ստանձնած Հեղափոխության խորհրդին ու իշխանական Հանրապետական կուսակցությանը ենթակա Հեղափոխության պահապանների գվարդիան պայքար է ծավալում Իսլամական հեղափոխության արտաքին և ներքին թշնամիների դեմ:

Նոր իշխանությունների՝ արևմտյան մշակութային ազդեցությունը ճնշելու քաղաքականության հետևանքով նախկին էլիտայի շատ անդամներ ստիպված էին լքել երկիրը: Այս հակաարևմտյան

տրամադրություններն ի վերջո դրսևորվում են 1979 թ. նոյեմբերին՝ ԱՄՆ դեսպանատան մի խումբ աշխատակիցների պատանդառությամբ:

1979 թ. դեկտեմբերի 2-ին և 3-ին անցկացված հանրաքվեի արդյունքում ընդունվում է Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրությունը, որով Իրանը արևմտամետ աշխարհիկ ավտորիտար միապետությունից վերածվում է իսլամական աստվածապետության: Սահմանադրությունը լայն լիազորություններ է ընձեռում ռահբարին կամ առաջնորդին, որին պետք է ընտրեր Փորձագետների խորհուրդը շիա բարձրագույն ղեկավարության անդամներից՝ ցմահ կառավարելու իրավունքով: Առաջին ռահբարը հենց ինքը՝ Խոմեյնին էր:

Հեղափոխության կողմնակիցները թե՛ Իրանի ներսում, թե՛ դրսում սկսում են տարածաշրջանում միապետությունները տապալելու և այդ երկրներում իսլամական հանրապետություններ ձևավորելու կոչ անել: Սա անհանգստացնում է Իրանի շատ հարևանների, հատկապես Քուվեյթին, Իրաքին և Սաուդյան Արաբիային, ինչպես նաև այն արևմտյան երկրներին, որոնք կախված էին մերձավորարևելյան նավթից:

1980 թ. սեպտեմբերին Իրաքն օգտվում է Իրանում ստեղծված խառնակ իրավիճակից և ներխուժում է Իրան: Ակտիվ ռազմական գործողությունները շարունակվում են 8 տարի՝ մինչև այդ երկու երկրների կողմից ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 598 բանաձևի ընդունումը: Իրանի վրա հարձակվելու Իրաքի հիմնավորումն այն էր, որ Խոմեյնին, որը ղեկավարել էր իրանական հեղափոխությունը, մտադիր էր իսլամական հեղափոխությունն արտահանել Իրաք: Սադամ Հուսեյնի գլխավորած իրաքյան ղեկավարությունը նաև մտավախություն ուներ, որ Իրանը, լինելով աստվածապետություն, կօգտագործեր իսլամի սուննի և շիա հարանվանությունների միջև լարվածությունը Իրաքում և Իրաքի շիա մեծամասնությանը կդրդեր կառավարության դեմ, որը պաշտոնա-

պես աշխարհիկ էր և պատկանում էր սուննի դավանանքին: Իրաքը մտադիր էր, օգտվելով իսլամական հեղափոխությունից հետո Իրանի ժամանակավոր թուլացումից, Պարսից ծոցում գերակա դիրք գրավել:

Իրան-իրաքյան պատերազմում Իրաքը ծրագրում էր հետ գրավել Շատ ալ-Արաբ գետի արևելյան ափը, որը զիջել էր Իրանին 1975 թ. Ալժիրի համաձայնագրով և բռնակցել արաբներով բնակեցված իրանական Խուզեստան նահանգը:

Իրաքի ղեկավարությունը հույս ուներ օգտվել Իրանում տիրող հետհեղափոխական քաոսից և վճռական հաղթանակ տանել: Սակայն Իրաքի բանակի ռազմական հաջողություններն ընդամենը երեք ամիս են տևում: 1980 թ. դեկտեմբերին իրաքյան հարձակումը կանգնեցվում է: 1982 թ. հունիսին անցնելով հակահարձակման՝ Իրանի բանակը հետ է գրավում բոլոր կորցրած տարածքները և ներխուժում է Իրաք: 1982 թ. հունիսին, երբ իրաքյան զորքերը գործնականում դուրս էին մղվել Իրանի տարածքից, Իրաքի կառավարությունն առաջարկում է զինադադար հաստատել: Խոմեյնին մերժում է այն և հայտարարում, թե խաղաղության միակ պայմանն այն է, որ «Բաղդադի ռեժիմը տապալվի և փոխարինվի իսլամական հանրապետությամբ»: Պատերազմում Իրանը 5 տարի պահպանում է նախաձեռնությունը: 1988 թ. կեսին Իրաքը նախաձեռնում է մի շարք խոշոր հակահարձակումներ, որոնք պատերազմը փակուղի են մտցնում: 1988 թ. հուլիսի 20-ին Խոմեյնին համաձայնում է դադարեցնել ռազմական գործողությունները և զինադադար հաստատել:

Ընդհանուր առմամբ, Իրանա-իրաքյան պատերազմում զոհվել է մոտ կես միլիոն մարդ: Ենթադրվում է, որ պատերազմող կողմերի կրած ֆինանսական վնասները գերազանցել են 1 տրիլիոն ԱՄՆ դոլարը:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչն է առիթ ծառայում 1978 թ. օգոստոսին Իրանում բոողքի զանգվածային ելույթների համար:

2. 1979 թ. փետրվարին ի՞նչ իրադարձության արդյունքում է տապալվում շահական ռեժիմը:

3. Ի՞նչ իրադարձությամբ է ակնհայտ դրսևորվում իշխանության եկած շիա հոգևորականության հակաարևմտյան դիրքորոշումը:

4. 1979 թ. սահմանադրությամբ ինչպե՞ս էր ընտրվելու երկրի ղեկավարը:

5. Որո՞նք էին 1980-1988 թթ. Իրան-իրաքյան պատերազմի պատճառները:

6. Ինչո՞ւ է պատերազմին վերջ տալու առաջարկները կտրականապես մերժող Խոմեյնին 1988 թ. հուլիսին համաձայնում զինադադար հաստատել:

ԳԼՈՒԽ VII
ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԹԵՄԱ I
Իրանի մշակույթը

Իրանի քաղաքակրթությունը յուրօրինակ է, այն առանձնանում է մշակութային բարձր մակարդակով: Համաշխարհային մշակույթի վրա առանձնահատուկ ազդեցություն են ունեցել հին իրանական կրոնի այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են զրադաշտականությունը (որում Աստվածաշնչից շատ առաջ խոսվում է մեսիայի գալստյան, վերջին դատաստանի, մեռյալների հարության մասին), մանիքեությունը, զրվանիզմն ու միթրաիզմը: Դրանք իրենց ներդրումն են ունեցել Հին աշխարհի փիլիսոփայական հայացքների, քրիստոնեության և իսլամի դավանաբանության վրա:

Հին իրանցիների աշխարհայացքը հիմնված էր զրադաշտականների սուրբ գրքի՝ Ավեստայի վրա: Այն սկսել են կազմել դեռևս Ք.ա. II հազարամյակում: Ավեստան բաղկացած է երկու մասից՝ *յաշթերից* (դիցաբանություն) և *գաթաներից* (Զրադաշտի հարցերին Ահուրամազդայի պատասխանների հիմքի վրա կառուցված կրոնական փիլիսոփայություն): Իրանական դիցաբանության կենտրոնում տիեզերական երկու հակադիր սկզբունքների՝ Բարու և Չարի պայքարի ուսմունքն է: Այս դիցաբանությունն ունի ընդգծված բարոյական և էթիկական բովանդակություն:

Ք.ա.VII դ. վերջում, VI դ. սկզբում ապրած Զրադաշտն իրականացնում է կրոնական բարեփոխում՝ քարոզելով միայն մեկ աստծո՝ Ահուրամազդայի գոյությունը: Մերժելով որոշ ցեղային աստվածների գոյությունը՝ մյուսներին բնորոշում է որպես Ահուրամազդայից շատ ցածր ոգիներ:

Գաթաների ամենահին մասը չափածո քարոզներն են, որոնց հեղինակն ինքը՝ Զրադաշտն է: Դրանք ստեղծվել են VI դ. վերջին:

Ահուրամազդան, ըստ Զրադաշտի ուսմունքի, կյանքի, լույսի և ճշմարտության խորհրդանիշն է: Ի սկզբանե նրա հետ միաժամանակ գոյություն ունի նաև Անգրա Մանյուն՝ Ահրիմանը, որն իր ենթակա ոգիների՝ դևերի հետ չարի անձնավորումն է:

Մարդն Ահուրամազդայի ստեղծածն է, սակայն, քանի որ օժտված է կամքի ազատությամբ, հասանելի է չարի ազդեցությունը. մարդն իր մտքերով, գործերով ու խոսքով պետք է պայքարի դրա դեմ:

Զրադաշտի մահից հետո այս կրոնը տարածում է գտնում Մարաստանում, Պարսկաստանում և իրանական աշխարհի այլ երկրներում: Մարաստանում Զրադաշտի աշակերտներն իրենց հավատի հետևորդ են դարձնում մոգերի մարական ցեղերին: Արդյունքում մոգ բառը դառնում է զրադաշտական հոգևորականի հոմանիշ:

Արաբների կողմից Սասանյան Իրանի կործանումից հետո Իրանի բնակչությանը պարտադրվում է իսլամ ընդունել: Ազգային ինքնությունը պահպանելու նպատակով իրանցիների մեծ մասը հարում է իսլամի ուղղափառ ուղղությանը՝ սունիզմին ընդդիմադիր շիիզմի ամենատարածված հարանվանությանը՝ իմամականությանը կամ իսնաշարիային, որի հետևորդները հավատում են, որ հոգևոր և աշխարհիկ իշխանությունը աստվածային նախախնամությամբ պատկանում է Մուհամմադ մարգարեի հորեղբոր որդի Ալիին և նրա ժառանգ իմամներին, որոնցից վերջինը՝ տասներկուերորդը, թաքնված է և, որպես փրկիչ-Մահդի, հայտնվելու է վերջին դատաստանի օրը:

Իրանական գրականությունը համարվում է համաշխարհային գրական մտքի կարևորագույն բաղկացուցիչներից մեկը, որի արմատները միջին պարսկերենով և հին պարսկերենով գրված ստեղծագործություններում են, որոնք պահպանվել են

մինչ օրս: Հին պարսկերեն ստեղծագործություններից ամենահինը համարվում է Ք.ա. 522-ով թվագրվող Բեհիսթունի արձանագրությունը՝ Աքեմենյան ժամանակաշրջանից պահպանված ամենավաղ արձանագրությունը: Մինչ օրս պահպանված իրանական գրական ստեղծագործությունների հիմնական մասը ստեղծվել է Իրանի իսլամական նվաճմանը հաջորդած ժամանակաշրջանում: Օմայանների և վաղ Աբասյանների օրոք ողջ Արևելքի գրական լեզուն դառնում է պարսկերենը: Հին Իրանի լեզվի և ավանդույթների վերածնունդը կապված է Ֆիրդուսիի, Ունսուրիի, Դաքիքիի, Ռուդաքիի անունների հետ:

Իրանական նոր գրականությունն առաջացել և ծաղկել է Խորասանում ու Միջին Ասիայում, քանի որ այստեղ են գոյություն ունեցել Թահիրյանների ու Սամանյանների իրանական դինաստիաների կողմից ստեղծված պետությունները:

Պարսիկ բանաստեղծներ Ֆիրդուսին, Սաադին, Հաֆեզ Շիրազին, Նիզամին, Ջամին, Ռումին և Օմար Խայամը հայտնի են ամբողջ աշխարհում: Նրանց ստեղծագործությունները ազդեցություն են ունեցել բազմաթիվ երկրների գրականության վրա:

Իրանում իսլամի և արաբական այբուբենի տարածումից հետո, որոնց հիման վրա ստեղծվել է պարսկական այբուբենը, մահմեդական Արևելքի մյուս երկրների նման գեղագրությունը միշտ եղել է արվեստի ամենաբարձր արժեքներից մեկը: Կային գեղագրության բազմաթիվ ոճեր և տեսակներ՝ *քուֆի, թալիկ* (պաշտոնական նամակագրություն), *սուլիս, շեքասթե* (բանաստեղծական ստեղծագործություններ), *նասխ* (գրքերի պատճենում), *նասթալիկ*: Վերջինս ստեղծվել XV դարում և ամենաշատն է օգտագործվել գեղագիրների կողմից: Գեղագրության այս ձևը, ժամանակի ընթացքում բազմաթիվ փոփոխությունների ենթարկվելով, մինչ օրս օգտագործվում է Իրանում, Կենտրոնական Ասիայում, Պակիստանում և Հնդկաստանում:

Իրանական ճարտարապետությունը երկար և հարուստ պատմություն ունի: Այն ներառում է նախաիսլամական և իսլա-

մական ժամանակաշրջանների ճարտարապետական ավանդույթները: Իրանի աքեմենյան, հելլենիստական և նախահելամական ժամանակաշրջանները թողել են ապշեցուցիչ գեղեցկության քարե ապացույցներ, ինչպիսիք են Չողա Զանբիլն ու Պերսեպոլիսը, որոնք ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հռչակվել են Համաշխարհային ժառանգության օբյեկտներ: Իսլամական ժամանակաշրջանից հատկապես ուշագրավ են սելջուկյան, իլխանական և Սեֆյան ճարտարապետական կոթողները: Այդ ժամանակաշրջանի իրանական քաղաքները՝ Նիշապուրը, Սպահանն ու Շիրազը, դասվում են իսլամական աշխարհի ամենամեծ քաղաքների թվին: Դրանց բազմաթիվ մզկիթները, մեդրեսեները, սրբավայրերն ու պալատները ձևավորում են Իրանի նոր ճարտարապետական ավանդույթը:

Ժամանակի ընթացքում իրանական ճարտարապետությունը կրոնական և մշակութային տարբեր ավանդույթների ազդեցությունն է կրում, ինչը հանգեցնում է եզակի ճարտարապետական ոճերի ձևավորմանը:

Սասանյան դինաստիայի օրոք իրանական ճարտարապետությանը բնորոշ էին այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են նրբագեղ և ոլորված կամարները, խճանկարային նախշերը: Այս շրջանի շինությունները, ինչպիսիք են պահպանված զրադաշտական տաճարները, մեծության և վեհության խորհրդանիշ են:

Իսլամը իրանական ճարտարապետության մեջ նոր տարրեր է մտցնում. ի հայտ են գալիս հարուստ բարձրաքանդակներ և քարե փորագրություններ: Այդ ճարտարապետության գլուխգործոցներից է Սամարղանդի Շահ-ի-Զինդա դամբարանային համալիրը, որն իրանական ճարտարապետության գեղեցկության և ներդաշնակության մարմնացում է:

Սեֆյանների օրոք իրանական ճարտարապետությունն ապրեց իր ոսկեդարը: Այս ոճի բնորոշ առանձնահատկությունն են վառ խճանկարներով գմբեթներն ու նրբագեղ մինարեթները: Այս ժամանակաշրջանի ճարտարապետությունն իր գագաթնակետին

է հասնում Աբաս I շահի օրոք, երբ վերջինս իր մայրաքաղաքը տեղափոխում է Սպահան և հին քաղաքի կողքին ձեռնարկում է նոր քաղաքի կառուցումը: Նախշ-ի Ջահան հրապարակի շուրջը վեր են հառնում ճարտարապետական այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են վեց հարկից բաղկացած Ալի-Քապու պալատը, Լյուֆթալլահի և Շահի մզկիթները: Սպահանի ճարտարապետական գոհարների մեջ առանձնանում է Աբաս II շահի կողմից 1647 թ. կառուցված Չեհել Սոթուն պալատը: Պալատի 20 սյուները, արտացոլվելով դիմացի լճակում, կրկնակի են երևում: Դրանով էլ բացատրվում է պալատի անվանումը՝ թարգմանաբար Քառասուն սյուների պալատ: Այդ պալատը եզակի է նաև իր որմնանկարներով, որոնցում, իսլամի կանոններին հակառակ, պատկերված են պատմական իրադարձություններ:

Ղաջարների դինաստիայի կառավարման ժամանակաշրջանում խորանում են Արևմուտքի հետ կապերը: Արևմտյան ազդեցությունը զգալի է դառնում նաև իրանական արվեստում: Հայտնի պալատական նկարիչ Աբու Ալ-Հասան Գաֆարին, վերապատրաստվելով Եվրոպայում, կարևոր դեր է խաղացել Արևելյան ճաշակի շրջանակներում եվրոպական ոճի վերաիմաստավորման գործընթացում: Նրա դիմանակարներում գործվածքների և ինտերիերի նուրբ զարդանախշերը վերաբերում են պարսկական մանրանկարչության ավանդույթին, իսկ տարազը և տարածության ու ստվերի հետ աշխատանքը հավաստում են նկարչի եվրոպական դպրոցի փայլուն իմացությունը: Գաֆարիների ընտանիքին է պատկանում պարսիկ ականավոր նկարիչ Քամալ-օլ-Մոլքը: Մեծ է նրա դերը XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբի իրանական արվեստում: Նրա ստեղծագործական գործունեությունը օրինակ է ծառայել նկարիչների մի քանի սերունդների համար, նպաստել իրանական ավանդական արվեստի զարգացմանը: Քամալ-օլ-Մոլքի լավագույն գործերը՝ «Երկու աղքատ աղջիկները», «Բաղդադի ոսկերիչները», «Գուշակները», համաշխարհային ռեալիստական արվեստի լավագույն ստեղծագործություններից են:

Ղաջարների ժամանակաշրջանում զինագործ վարպետների հմտության արտահայտությունն էին հարդարման բարձր որակն ու շքեղությունը:

Ղաջարական Իրանում զարմանալի գեղեցկությամբ փորագրություններ են արվել մետաղական իրերի վրա: Դրանք կենցաղային և բանահյուսական տեսարաններով կոմպոզիցիաներ են՝ սիրահար զույգերի, երաժիշտների, ակրոբատների և առասպելական կենդանիների պատկերներով:

XX դ. կեսի իրանահայ ականավոր նկարիչ Մարկոս Գրիգորյանը համարվում է իրանական ժամանակակից արվեստի հիմնադիրներից մեկը: Նրա «Հողային աշխատանքներ» շարքը կտավի վրա կավի և ծղոտի խառնուրդի օգտագործմամբ գեղանկարչական ստեղծագործություններ են, որոնք հայտնի են «քահգել» անունով:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչի՞ վրա էր հիմնված հին իրանական աշխարհայացքը:
2. Ինչպե՞ս էր ձևակերպված գաթաներում շարադրված Զրադաշտի ուսմունքը:
3. Ի՞նչ գաղափարախոսություն է դրված Իրանի բնակչության մեծ մասի «դավանած» իսլամական շիայականության հիմքում:
4. Ո՞րն է պարսկերեն ամենահին ստեղծագործությունը:
5. Ինչո՞ւ է պարսկական նոր գրականությունը ծաղկում ապրում ոչ թե Իրանի կենտրոնական տարածքներում, այլ Խորասանում և Միջին Ասիայում:
6. Ի՞նչ է բնորոշ Սեֆյան ժամանակաշրջանի իրանական ճարտարապետությանը:
7. Սպահանի Չեհել Սոթուն պալատի ճարտարապետական հորինվածքում իսլամի կանոններից ի՞նչ շեղումներ կային:

ԹԵՄԱ II
Վրաստանի մշակույթը

Քրիստոսի ծնունդից առաջ գոյություն ունեցող վրացական պետություններում՝ Քարթլիում և Կոլխիդայում, զարգացած էր գեղարվեստական մետաղագործությունը՝ տորևտիկան: Արևմտյան Վրաստանում՝ Ռիոն գետի միջին հոսանքում, Վանիի հնավայրի պեղումների ընթացքում հայտնաբերվել են բրոնզե մեծ տարայի մնացորդներ՝ այն զարդարող արծվի, հաղթանակի աստվածուհի Նիկայի արձանիկները և հունական գինու աստված Դիոնիսոսին ուղեկցող սատիրի, մենադաների և Արիադնայի հարթաքանդակները: Թիֆլիսից 40 կմ հյուսիս-արևմուտք ընկած Ձալիսի գյուղում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել է Ք.ա. IV դ. պալատի հատակի խճանկար, որի վրա պատկերված են Դիոնիսոսը, Արիադնան և նրանց ուղեկցող աստվածությունները:

IV դարում քրիստոնեության պետական կրոն հռչակմամբ վրացական նոր քրիստոնեական մշակույթի հիմքն է դրվում:

Վրաց գրականության առաջին հուշարձանը Յակոբ Խուցեսիի գրչին պատկանող վարքաբանական բնույթի «Սուրբ Շուշանիկ թագուհու նահատակությունը» երկն է, որը ստեղծվել է հավանաբար 476-483 թթ. ընթացքում: Վրաստանի տարածքում հայտնաբերված արձանագրություններից հնագույնը Բոլնիսի 493-494 թթ. Սիոնի տաճարի արձանագրությունն է:

VIII դ. ստեղծվում է Իոանե Սաբանիսձեի հեղինակած «Քրիստոնեության հետևորդ Սուրբ Հաբոյի նահատակությունը» երկը, որը վրաց վաղ միջնադարյան գրականության լավագույն հուշարձաններից է:

Վաղ միջնադարյան վրաց փիլիսոփայության կարկառուն դեմքերից է Պետրե Իբերը (V դ.): Նրա անվան հետ է կապված վրացական մենաստանների հիմնումը Պաղեստինում: Վրաց որոշ մասնագետներ ենթադրում են, որ Պետրե Իբերը և միջնադարյան

կրոնական աշխարհայացքի վրա մեծ ազդեցություն ունեցած Կեղծ Դիոնիսոս Արեոպագացին նույն անձն են: Վրաց միջնադարյան ամենակարկառուն փիլիսոփան Իոանե Պետրիծին է: Իոանե Պետրիծիի փիլիսոփայական գաղափարները զարգացել են նորպլատոնական դպրոցի առաջնորդ Պրոկղ Դիադոքոսի գաղափարական ազդեցության տակ, որը Պետրիծին փորձել է միավորել քրիստոնեական աշխարհայացքի հետ: Պետրիծիի երկերում նկատվում են նաև պանթեիզմի տարրեր: Նրան են պատկանում ոչ միայն Պրոկղի, այլև Արիստոտելի, Հովսեփիոս Փլավիոսի, Աստվածաշնչի առանձին գրքերի, վարքագրական երկերի վրացերեն մեկնաբանված թարգմանությունները: Պետրիծին զգալի ազդեցություն է ունեցել վրացական փիլիսոփայության և գրականության հետագա ընթացքի, մասնավորապես Շոթա Ռուսթավելիի հոգևոր զարգացման վրա: Վերջինիս «Ընձենավորը» էպիկական պոեմը վրաց գրականության գլուխգործոցներից է: Այն գրվել է 1189-1207 թթ. և նվիրված է Թամար թագուհուն և նրա ամուսին Դավիթ Սոսլանին: Պոեմում կարմիր թելի պես անցնում է հերոսության, ասպետության, ընկերոջ հանդեպ հավատարմության, անձնուրաց սիրո գաղափարը:

XI դ. աննախադեպ զարգացում ունեցավ վրաց պատմագրությունը: Այս դարում են գրվել Լեոնտի Մրովելու «Քարթլիս Ցխովրեբա»-ն («Թագավորների կյանքը»), որտեղ ներկայացված է վրացական պետության ձևավորումից մինչև V դ. վերջն ընկած իրադարձությունների պատմությունը, և IX-XI դդ. պատմական անցքերը նկարագրող անհայտ պատմիչի գրչին պատկանող «Քարթլիի մատյանը»:

Նոր ժամանակների Վրաստանի գրական ժառանգության և պատմագրության մեջ առավել նշանակալի ներդրում են ունեցել XVIII դ. ապրած Սուլխան-Սաբա Օրբելիանին, որը հեղինակն է վրացերեն բացատրական բառարանի, և Վախուշտի Բագրատիո-

նին՝ իր «Վրաստանի թագավորների պատմությունը» աշխատությամբ:

XIX դ. վերելք է արձանագրվում հասարակական գիտությունների բնագավառում: Իոանե Բագրատիոնը կազմում է վրացական առաջին գիտական եռահատոր հանրագիտարանը՝ «Կալմասոբան»: 1814 թ. Դավիթ Բատոնիշվիլին վրացերեն հրատարակում է «Վրաստանի պատմություն» պատմական աշխատությունը, որն ընդգրկում է մինչև 1744 թ. ընկած ժամանակահատվածը և ներկայացնում է Վախուշտի Բագրատիոնիի պատմության շարունակությունը: Ռուսերեն գրված նրա աշխատություններն ընդգրկում են Վրաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև XIX դ. սկիզբը: Մեծ նշանակություն է ունեցել Դավիթ Բատոնիշվիլիի գործունեությունն իրավունքի ոլորտում: 1800 թ. նա համակարգում է իրավունքի ոլորտը՝ կազմելով ժողովածու, որը հայտնի է «Դավիթ Բատոնիշվիլիի իրավունք» անվանումով:

XIX դարը հայտնի է վրաց գրական-հասարակական այնպիսի գործիչներով, ինչպիսիք են Իլյա Ճավճավաձեն, Ալեքսանդր Կազբեգին, Ակակի Ծերեթելին և Գալակտիոն Թաբիձեն:

XX դ. վրացի մեծ գրող Նոդար Դումբաձեի վեպերը պատմում են հասարակ և իմաստուն մարդկանց մասին: Այս ստեղծագործությունները հագեցած են ժողովրդական հումորով և ունեն խորը փիլիսոփայական իմաստ: Դումբաձեի «Ես, տատիկը, Իլիկոն և Իլարիոնը», «Սպիտակ դրոշներ», «Հավերժության օրենքը» ստեղծագործությունները հրատարակվել են աշխարհի 94 լեզուներով:

Վրաց նոր թատրոնի սկիզբ է համարվում 1852 թ. հունվարի 2-ը, երբ Թիֆլիսի գիմնազիայի շենքում բեմադրվում է Գեորգի Էրիսթավիի «Բաժանում» պիեսը:

XX դ. համարվում է վրացական կինոյի և օպերային արվեստի սկիզբ: 1912 թ. Վասիլ Ամաշուկելին նկարահանում է առաջին

վրացական ֆիլմը՝ «Ակակի Ծերեթելու ճանապարհորդությունը Լաճա-Լեճխումի» վավերագրական կինոնկարը, իսկ 1916 թ. ռեժիսոր Ծուծունավան նկարահանում է «Քրիստինա» գեղարվեստական կինոնկարը:

1918-ին Թիֆլիսի թատրոնի բեմում ցուցադրվում է Ռնազ Գոգնիաշվիլիի «Քրիստինե» օպերան, 1919-ին բեմադրվում են Զաքարիա Պալիաշվիլիի «Աբեսալոմ և Էթերի», Վիկտոր Դոլիձեի «Կետո և Կոտե» և Դիմիտրի Արաղիշվիլիի «Ասք Շոթա Ռուսթավելիի մասին» օպերաները:

Վրացական վաղ միջնադարյան եկեղեցական ճարտարապետությունում, ինչպես ողջ քրիստոնեական աշխարհում, տիրապետող է բազիլիկ ոճը: Այդ ոճի առաջին տաճարը Թելավից ոչ հեռու գտնվող Հին Շուամթա վանական համալիրի մաս կազմող V դ. կառուցված Կանաչ եկեղեցին է: Հետագայում Վրաստանում ի հայտ է գալիս բազիլիկ եկեղեցու նոր տիպ՝ եռաեկեղեցի բազիլիկը, որի օրինակն է Կախեթում գտնվող Նեկրեսիի վանական համալիրի մաս կազմող՝ VI դ. կառուցված Աստվածածնի վերափոխման եկեղեցին: VII դ. սկզբում հայկական ճարտարապետության ազդեցությամբ Վրաստանում կառուցվում են խաչաձև կենտրոնագմբեթ տաճարներ, որոնցից առաջինը միջնադարյան Վրաստանի խորհրդանիշ համարվող Մցխեթի Ջվարիի (Սբ. Խաչի) տաճարն է, որն Աթենիի Սիոնի տաճարի հետ կառուցել է հայ ճարտարապետ Թոդոսակը: IX դ. սկզբին կառուցվել է Կախեթի Գուրջաանի քաղաքում գտնվող Աստվածածնի վերափոխման տաճարը, որն իր երկգմբեթ կառուցվածքով եզակի է եկեղեցական ճարտարապետության մեջ:

X-XI դդ. Վրաստանում կառուցվում են, այսպես կոչված, «Չորս մեծագույն տաճարները»: XI դ. սկզբին Քութայիսում Բագրատ III-ը կառուցում է **Աստվածածնի վերափոխման տաճարը**: 1010-1029 թթ. Մցխեթում կառուցվում է Վրաստանի ուղղափառ եկեղեցու գլխավոր մայր տաճարը՝ **Սվետիցխովելին,** որը մինչ

2004 թ. Թիֆլիսի Սուրբ Երրորդության տաճարի կառուցումը համարվում էր Վրաստանի տարածքում ամենամեծը: Այստեղ էին տեղի ունենում վրաց թագավորների օծման և թաղման արարողությունները: XI դ. սկզբին Կախեթի Կյուրիկե III թագավորի կողմից կառուցվում է **Ալավերդու վանական համալիրը**, որի մաս կազմող Սուրբ Գևորգի տաճարն իր 50 մետրը գերազանցող գմբեթով, մինչ Թիֆլիսի Սուրբ Երրորդության տաճարի կառուցումը համարվում էր ամենաբարձր եկեղեցական շինությունը Վրաստանում: Այս չորս եկեղեցիներից առաջինը **Օշկավանքի** (գտնվում է Թուրքիայի Էրզրումի նահանգի արևելքում) **Սուրբ Հովհաննես եկեղեցին** է: Քանի որ վանական համալիրը 963-973 թթ. կառուցվել է Տայքի վրացադավան Բագրատ և Դավիթ կյուրապաղատների կողմից, Վրաստանում այն համարվում է վրացական ճարտարապետության պատկանող կառույց:

XII դ. վրաց ճարտարապետության բացառիկ հուշարձաններից մեկը Բորժոմի քաղաքից 100 կմ հարավ ընկած Վարձիա ժայռափոր մենաստանն է:

Վրացական մշակույթի զարգացման գործում առանձնահատուկ վաստակ ունի Հունաստանի տարածքում գտնվող Աթոս լեռան Իբերական վանքը, որը հիմնադրվել է X դ. վերջին՝ Մամիկոնյանների վրացադավան ճյուղի ներկայացուցիչ Թոռնիկի կողմից: Նրա մահից հետո վանքի վանահայր է դառնում որդին՝ եկեղեցական հայտնի գործիչ և թարգմանիչ Էքվտիմեոսը: Նա վրացերենից հունարեն է թարգմանել «Բալավարի իմաստությունը»[25]: Էքվտիմեոսը վրացերեն է թարգմանել Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու ստեղծագործությունները: Նրա բեղմնավոր գործունեությունը շարունակել է վրացի նշանավոր եկեղեցական գործիչ Գեորգի Մթածմինդելին, որն իրակա-

[25] Այն Բուդդայի մասին լեգենդի վրացական տարբերակն է: Դրա վրացերեն թարգմանության հեղինակն անհայտ է:

նացրել է Աստվածաշնչի վրացերեն թարգմանության վերջնական խմբագրումը: Նա վրացերեն է թարգմանել նաև բազմաթիվ վարքեր, մեկնություններ, պարականոն երկեր:

Զարգացած միջնադարում Վրաստանում բարձր մակարդակի է հասնում ոսկերչությունը, որի հիանալի նմուշ է Խախուի (գյուղ Տայքում) սրբապատկեր տրիպտիքը (եռապատկեր): Սրբապատկերի անվանումը կապված է Տայքի Խախու գյուղում Դավիթ կյուրապաղատի կառուցած վանքի հետ, որտեղ այն պահվել է: Սրբապատկերը, իր մոտ մեկ ու կես մետր բարձրությամբ և երկու մետրը գերազանցող լայնությամբ, արծնապակյա գեղանկարչության ամենախոշոր ստեղծագործություններից է: Հատուկ ուշադրության է արժանի սրբապատկերի վերին մասը եզրափակող արծնապակին, որի վրա պատկերված են բյուզանդական կայսր Միքայել VII Դուկասը (1071-1078) և նրա վրացի կին Մարիամը՝ Քարթլիի Բագրատ IV (1027-1072) թագավորի դուստրը:

ՀԱՐՑԵՐ

1. Հին վրացական պետություններում արվեստի ո՞ր ճյուղերն էին զարգացած:
2. Ո՞րն է վրաց գրական առաջին հուշարձանը:
3. Վրաց եկեղեցու պատմության մեջ ինչո՞վ է աչքի ընկել V դ. վրաց փիլիսոփա Պետրե Իբերը:
4. Ո՞ւմ է նվիրված Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» պոեմը:
5. Ի՞նչ բովանդակություն ունի Լեոնտի Մրովելու «Քարթլիս Ցխովրեբան» երկը:
6. Ո՞ր ստեղծագործության բեմականացումն է համարվում վրաց ժամանակակից թատրոնի սկիզբ:
7. Ո՞ր ճարտարապետական ոճն է գերիշխող վաղ միջնադարյան վրացական ճարտարապետությունում:
8. Ի՞նչ կապ գոյություն ունի հայկական և վրացական եկեղեցական ճարտարապետությունների միջև:

ԹԵՄԱ III
Թուրքական մշակույթը

Օսմանյան մշակույթը զարգացել է մի քանի դարերի ընթացքում, երբ թուրքերը կլանեցին, հարմարեցրին և փոխեցին նվաճված երկրների և դրանց բնիկ ժողովուրդների մշակույթները: Օսմանյան մշակույթի վրա շատ մեծ է իսլամի դավանաբանության ազդեցությունը:

Օսմանյան գրականությունը, առանձնապես պոեզիան, զարգացել է պարսկական դասական պոեզիայի հիմքի վրա: Օսմանցի բանաստեղծներն օգտագործել են պարսկական տաղաչափական ձևերը:

XIX դ. Թանզիմաթի բարեփոխումների ժամանակաշրջանում թուրքական պոեզիայի վրա սկսում է դրսևորվել թուրքական ժողովրդական բանավոր գրականության ազդեցությունը, ինչպես նաև մեծանում է եվրոպական գրականության ազդեցությունը: Այս երկու հոսանքների միաձուլումից ի հայտ է գալիս ժամանակակից թուրքական պոեզիան, որի հիմնադիրը Թևֆիկ Ֆիքրեթն է:

Մինչև XIX դ. օսմանյան արձակը զուտ գիտահանրամատչելի էր և զիջում էր պոեզիային գեղարվեստական որակով, քանի որ օսմանցի արձակագիրների մեծ մասը հետևում էր արաբական հանգավոր արձակի (սաջ) կանոններին: Այնուամենայնիվ, մի շարք ժանրեր՝ ճանապարհորդական պատմություններ, քաղաքական տրակտատներ և կենսագրություններ, ճանաչողական արժեք ունեն: XIX դ. սկսած՝ զգացվում է եվրոպական, հատկապես ֆրանսիական վիպական ժանրի աճող ազդեցությունը: Շեմսեդին Սամիի «Թալաաթի և Ֆիքնաթի սերը» երկը, որը լույս է տեսել 1872 թ., համարվում է առաջին թուրքական վեպը: Օսմանյան հայտնի արձակագիրներ են Ահմեդ Միթհաթը և Հալիթ Զիա Ուշաքլըգիլը:

Կրթության ոլորտի բարեփոխումները և XX դ. սկզբին լատինական այբուբենի հիման վրա նոր այբուբենի ստեղծումը հանգեցնում են երկրի բնակչության շրջանում գրագիտության տարածմանը և բարենպաստ ազդեցություն են ունենում թուրքական գրականության զարգացման վրա: Մի քանի թուրք գրողներ, այդ թվում՝ Սուլեյման Նազըմը, Նազըմ Հիքմեթը, Օրհան Քեմալը, Յաշար Քեմալը և Օրհան Փամուկը ճանաչում են ձեռք բերում ոչ միայն Թուրքիայում, այլև ամբողջ աշխարհում: XX դ. խոշոր թուրք բանաստեղծ է Հյուսնյու Դաղլարջան:

Օսմանյան, ինչպես և դրա հիմքում ընկած սելջուկյան ճարտարապետությունը ծագում է իրանական և բյուզանդական ճարտարապետության ավանդույթներից: Օսմանյան ճարտարապետությունը վառ դրսևորում ունեցավ խոշոր հասարակական շենքերում, ինչպիսիք են XVI դ. մզկիթներն ու քարավանատները: Այս դարի ճարտարապետության ամենանշանակալի դեմքը հայազգի Միմար Սինանն է, որը, դևշիրմեի արդյունքում բռնի կրոնափոխ լինելով, կրթություն է ստացել ենիչերական օժանդակ դպրոցում: Նրա հանճարին պատկանող ամենանշանակալի կառույցներն են Էդիրնեի Սելիմիե և Կ.Պոլսի Սուլեյմանիե մզկիթները: Սինանի աշակերտ Սեդեֆքար Մեհմեդ Աղան նախագծել է XVII դ. սկզբի Սուլթան Ահմեդի կամ Կապույտ մզկիթը, որը համարվում է դասական օսմանյան ճարտարապետության վերջին մեծ շինությունը:

Ժամանակակից թուրքական ճարտարապետության վրա հսկայական ազդեցություն է ունեցել Քեմալ Աթաթուրքի սկսած լաիցիզմի (աշխարհիկացում) քաղաքականությունը: Եթե նախկինում մզկիթներն ու մեդրեսեները ազգային ճարտարապետության հիմնական նմուշներն էին, ապա XX դ. 20-ականների կեսերից պետությունն այլևս չէր խրախուսում պաշտամունքային կառույցների կառուցումը: Կտրուկ աճում է ժամանակակից աշխարհիկ եվրոպական (հատկապես գերմանական) ճարտարապետության

ազդեցությունը: Դրանով է բացատրվում ժամանակակից թուրքական ճարտարապետության ոճի շարունակականության բացակայությունը: 1920-ականներից ի վեր ճարտարապետական ոճի հիմնական առանձնահատկությունն են դառնում ֆունկցիոնալությունը, պարզությունը և մոդեռնիզմը:

Օսմանյան դեկորատիվ արվեստի բարձր զարգացման հասած ճյուղերից է գեղագրությունը, որի ավանդույթները ձևավորվել են Բաղդադի Աբասյան խալիֆների գեղագիր Յակուտ ալ-Մուստասիմի աշխատանքների շնորհիվ: Օսմանյան գեղագրական ոճը՝ դիվանին, որն առաջինը կիրառել է Իբրահիմ Մունիֆը, մշակվել է XVI դ. վերջին ու XVII դ. սկզբին և ամենամեծ տարածումն է գտել Սուլեյման Կանունիի օրոք: Այդ դեկորատիվ տառատեսակն առանձնանում է գծերի բարդությամբ և բառերի ներսում տառերի սերտ դասավորությամբ:

Օսմանյան մանրանկարչության զարգացման վրա մեծ ազդեցություն են թողել իրանական և բյուզանդական մանրանկարչական դպրոցները: Զգալի է բյուզանդական մանրանկարչական տեխնիկայի տարրերի՝ իլյումինացիայի և ձեռագրի նկարազարդման կիրառումը օսմանյան մանրանկարչության մեջ: Նկարիչների հունական Նակկաշանե-ի-Ռումի դպրոցը հիմնադրվել է Թոփկապի պալատում XV դ., իսկ հաջորդ դարի սկզբին ստեղծվել է նմանատիպ իրանական ակադեմիա՝ Նակկաշանե-ի-Իրան:

Օսմանյան կայսրությունում զարգացած էր գորգագործության արվեստը: Գորգերը, որպես աշխարհիկ և կրոնական սիմվոլիզմով հարուստ դեկորատիվ արվեստի նմուշներ, մեծ նշանակություն են ունեցել: Բնակելի տարածքներում ընդունված էր կոշիկները հանել: Գորգերն օգտագործում էին ոչ միայն սենյակի հատակին, այլև կախում պատերին և դռներին, վերջին դեպքում դրանք լրացուցիչ մեկուսացում էին ապահովում: Մզկիթներում հաճախ կային գորգերի մեծ հավաքածուներ: Հատկապես բարձր կարգավիճակ ունեին Խերեկեի գորգերը, քանի որ դրանք պատ-

բաստված էին մետաքսից կամ մետաքսի և բամբակի համադրությունից և յուրօրինակ հանգույցներ ունեին: Խերեկեի առանձնապես թանկարժեք գորգերը ոսկեկար ու արծաթակար էին: Այլ նշանակալի նմուշների թվում են «Քյոշք», «Յուրյուկ», «Ուշաք» և «Միլաս» կամ «Թուրքմեն» գորգերը: «Յուրյուկ» և «Թուրքմեն» տիպի գորգերը ավելի ոճավորված գծանկարներ ունեն, մինչդեռ «Քյոշք»-ում գերակշռում են բնանկարային գծանկարները:

Օսմանյան կայսրությունը հայտնի էր ոսկերիչ վարպետներով: Զարդերն առանձնահատուկ նշանակություն ունեին, քանի որ դրանք սովորաբար նվիրաբերվում էին հարսանիքներին, որը միաժամանակ դիտվում էր նաև որպես խնայողության միջոց: Ոսկերչական միջնադարյան նմուշները հաճախ ցանցահյուսազարդ բարդ աշխատանքներ են և ներառում են պարսկական ու բյուզանդական մոտիվներ: Կ.Պոլսի ոսկերչական ոճը տարածվում է ամբողջ Օսմանյան կայսրությունում և արտացոլվում նույնիսկ Եգիպտոսի ու Հյուսիսային Աֆրիկայի ոսկերչության և մետաղագործության վրա: Կայսրության գյուղական վայրերում զարդերն ավելի պարզ էին և հաճախ ներառում էին ոսկե մետաղադրամներ: Ոսկերիչների մեծ մասը հայեր և հրեաներ էին: Օսմանյան վերնախավի հետաքրքրությունը ժամագործության նկատմամբ հանգեցնում է նրան, որ շատ եվրոպացի ոսկերիչներ, ժամագործներ և թանկարժեք քարերի վրա փորագրողներ տեղափոխվում են Կ.Պոլիս՝ աշխատելու Գալատա թաղամասում:

Օսմանյան կայսրությունում, դրա տարածքում ապրող ժողովուրդների ավանդույթներից զատ, զարգանում է պալատական երաժշտության հատուկ ոճը՝ Օսմանյան կայսրության դասական երաժշտությունը: Այն հիմնականում վոկալ էր՝ գործիքային նվագակցությամբ, որը կառուցված էր մաքամի (արաբ. մաքամ՝ դիրք, տեղ, աղրբեջաներեն տառադարձմամբ՝ մուղամ) մեղեդիական համակարգերի վրա: Օսմանյան երաժշտության մեկ այլ տարբերակիչ առանձնահատկությունը մեհթերանն էր՝ ենիչերիների ռազ-

մական նվագախումբը, որն օգտագործվում էր նաև բարձրաստիճան պաշտոնյաների շքախմբում: Այդ նվագախումբը ժամանակակից ռազմական նվագախմբերի, ինչպես նաև փողային համույթների նախատիպն է: Մեհթերանն ազդել է նաև եվրոպական դասական երաժշտության վրա: Յոզեֆ Հայդնը, Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտը և Լյուդվիգ վան Բեթհովենը գրել են ստեղծագործություններ, որոնք ոգեշնչված են մեհթերանների երաժշտությունից:

Օսմանյան կայսրությունում թատրոնի նախատիպ են հանդիսացել մեդդահն ու կարագյոզը: Մեդդահն այն պատմողն է, որը ելույթ է ունեցել հանդիսատեսի մի փոքր խմբի, օրինակ՝ սրճարանի հաճախորդների առջև: Ներկայացման այս ձևը հատկապես XVI դարից տարածված էր Օսմանյան կայսրությունում: Ներկայացումը հիմնականում կենտրոնացած էր մեկ թեմայի վրա, մինչդեռ մեդդահը խաղում էր տարբեր կերպարներ և, ընդհանուր առմամբ, հանդիսատեսի ուշադրությունը հրավիրում էր ներկայացվող սյուժեի բարոյական կողմի վրա: Մեդդահն օգտագործում էր այնպիսի պիտույքներ, ինչպիսիք են հովանոցը, թաշկինակը կամ տարբեր գլխարկներ: Դերի փոփոխությունը հասկացնելու համար նա հմտորեն փոխում էր իր ձայնի տոնայնությունը՝ կրկնօրինակելով տարբեր բարբառներով խոսող մարդկանց: Ներկայացման ժամանակը սահմանափակ չէր, արհեստավարժ մեդդահը գիտեր՝ ինչպես հարմարեցնել սյուժեն հանդիսատեսի ճաշակին:

Կարագյոզը XVI դ. տարածում գտած տիկնիկային թատրոն էր, որն այդպես էր կոչվում կերպարներից մեկի անունով: Գլխավոր կերպարը սև աչքերով շատախոս և կնամոլ խարդախն էր: Իր սիրո շնորհիվ նա անընդհատ ընկնում էր զավեշտական պատմությունների մեջ: Առանձնապես մեծ լսարան էր ապահովում «Կարագյոզն իր մաքուր բարոյականության զոհն է» զավեշտական ներկայացումը, որտեղ գլխավոր կերպար Կարագյոզի ընկեր Հաջիվաթը նրան հանձնարարում է խստորեն հոգ տանել իր կնոջ

մասին, սակայն կինը փորձում է գայթակղել հենց Կարագյոզին: Ներկայացման մեջ ներգրավված տիկնիկները պատրաստված էին գոմեշի կամ ուղտի կաշվից: Կտորները կապում էին իրար այնպես, որ նմանվեին ֆիգուրների, իսկ հետո ներկում էին հատուկ ներկերով:

Թուրքական ժամանակակից թատրոնի հիմնադիրը Հակոբ Վարդովյանն է: Նա թուրքերեն է թարգմանում «Կեսար Բորջիա» հայերեն պիեսը: Ներկայացումը բեմադրվում է 1868 թ. ապրիլի 16-ին և հաջողություն է ունենում: Մեծ վեզիր Ալի փաշայի աջակցությամբ, որը ցանկանում էր թուրքական ազգային թատրոն հիմնել, Վարդովյանը 1870 թ. սուլթանական կառավարությունից տասը տարի թուրքերեն ներկայացումներ բեմադրելու մենաշնորհ է ստանում: Թուրքերեն թարգմանված ներկայացումների շնորհիվ Վարդովյանը մեծապես նպաստում է թուրքական թատերական լեզվի զարգացմանը՝ բեմադրելով ժամանակակից թուրք հայտնի գրողների՝ Էբյուզիյա Թևֆիքի, Նամիք Քեմալի, Ահմեդ Միթհաթ էֆենդիի և թուրքական դրամատուրգիայի հիմնադիր Իբրահիմ Շինասիի ստեղծագործությունները: Նա գործունեության շնորհիվ բեմադրություններում ընդգրկվում են մահմեդական դերասաններ:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ գրական հոսանքների միավորումից է առաջացել ժամանակակից թուրքական պոեզիան:
2. Ինչո՞վ է առանձնանում Շեմսեդին Սամիի «Թալաաթի և Ֆիքնաթի սերը» ստեղծագործությունը:
3. XX դ. ի՞նչ գործընթացներ են բարենպաստ ազդեցություն ունենում թուրքական գրականության զարգացման վրա:
4. Ի՞նչ դեր ունի հայազգի Սիմար Սինանը թուրքական արվեստի զարգացման մեջ:

5. Ինչո՞վ է բացատրվում ժամանակակից թուրքական ճարտարապետության ոճի շարունակականության բացակայությունը:

6. Ո՞րն է օսմանյան գեղագրական ոճը:

7. Ի՞նչ գործնական նշանակություն ուներ գորգագործությունը Օսմանյան կայսրությունում:

8. Օսմանյան երաժշտարվեստի ո՞ր ոճն է որոշակի ազդեցություն թողել եվրոպական դասական երաժշտության վրա:

9. Օսմանյան կայսրության վաղ թատերարվեստի ի՞նչ ձևեր են տարածում գտել XVI դարում:

10. Ո՞վ է ժամանակակից թուրքական թատրոնի հիմնադիրը:

ԹԵՄԱ IV
Ադրբեջանի մշակույթը

XV-XVI դդ. ադրբեջանական թյուրքալեզու էթնոսի՝ Ադրբեջանում բնակվող հիմնական ժողովրդի ձևավորմանը հաջորդում է նաև նրա մշակույթի ստեղծումը, որն ի սկզբանե չուներ իր կայուն կենտրոնները: XV-XVIII դդ. ադրբեջանական մշակույթի երկու կենտրոններ են ձևավորվում Պարսկական Ադրբեջանում և Կուր գետի ստորին հոսանքում: Խոսելով ադրբեջանական մշակույթի առաջացման մասին՝ առաջին հերթին պետք է հիշատակել գրականությունը և մշակույթի այն ճյուղերը, որոնք պայմանավորված են լեզվով:

I դ. սկզբին ներկայիս Ադրբեջանի հյուսիսարևելյան մասում՝ Կուր գետի ձախ ափին, ձևավորվում է Աղվանից թագավորությունը՝ Կապաղակ մայրաքաղաքով: Այս պետության տարածքում բնակվում էին բազմաթիվ ժողովուրդներ, որոնց լեզուներն ազգակից էին ներկայիս Դաղստանի տեղաբնիկ ժողովուրդների լեզուներին: Հայտնի է, որ արդեն անտիկ ժամանակաշրջանի վերջում հայերենը Աղվանքի տարածքի զգալի մասի ժողովուրդների և ցեղերի համար ծառայում էր որպես հաղորդակցման լեզու (lingua franca), մինչդեռ մերձկասպյան շրջաններում հաղորդակցման լեզուն պարսկերենն էր: IV դ. սկզբին Աղվանքի բնակչությունը դառնում է քրիստոնյա: Քրիստոնեությունը Աղվանքում տարածում են հայերը: Հետագայում Աղվանքի ազնվականությունը հայալեզու է դառնում, իսկ Աղվանից կաթողիկոսությունը Հայ առաքելական եկեղեցու մաս է կազմում: Աղվանքն ուներ իր գիրը, որի այբուբենը, ըստ հայկական սկզբնաղբյուրների, ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Այդ գիրը հավանաբար Աղվանքի թագավորական դինաստիայի ժողովրդի՝ գարգարացիների լեզվի հիմքի վրա է ստեղծվել: Սակայն այդ լեզվով գրականություն չի պահպանվել: Ընդհանուր առմամբ, գրական աղվաներեն ընդհանրական լեզու այդպես էլ չի

ձևավորվում: VII դ. հետո աղվանական գիրը դուրս է գալիս գործածությունից, իսկ աղվանից եկեղեցու ժամերգության լեզուն դառնում է գրաբարը: Մինչև վերջերս գիտությանը հայտնի էր միայն XV դ. հայկական ձեռագրում պահպանված աղվանից այբուբենը, ինչպես նաև 7 կամ 8 աղվաներեն արձանագրություններ, որոնք բոլորն էլ ստեղծվել են մինչև VIII դ.: Սակայն XX դարի վերջին Սինայում հայտնաբերվում է աղվաներեն ձեռագիր, որը ստանում է «Սինայի պալիմփսեստ»[26] անվանումը: Տեքստի վերծանումը հաստատում է այն ենթադրությունը, որ աղվանական լեզուն շատ նման է ուդիների լեզվին, որն առ այսօր անգիր է: Դեռևս XX դ. սկզբին ուդիների գյուղերում գրավոր հաղորդակցման համար օգտագործվում էր հայերենը:

Թյուրքերեն առաջին գրական հուշարձանը համարվում է «Դեղե Քորկուդի գիրքը»՝ օղուզական ցեղերի էպոսը: Այն ծագել է Միջին Ասիայում, բայց վերջնականապես ձևավորվել է ներկայիս Ադրբեջանի տարածքում, որտեղ օղուզներն ավելի կոմպակտ էին ապրում: Ադրբեջանական բանահյուսության մեջ հիմնական տեղ են զբաղեցնում դաստանները[27] («Քյորօղլի», «Ասլի և Քյարամ», «Աշուղ Ղարիբ»): Շատ դաստաններում արտացոլված են իրականում տեղի ունեցած իրադարձություններ: Քնարական ժողովրդական պոեզիան բովանդակությամբ բազմակողմանի է և ներկայացված է այնպիսի ժանրերով, ինչպիսիք են բայաթին և գոշման: XVI-XVII դդ. սկսած՝ գրի են առնվել ժողովրդական երգիչ-աշուղների բանաստեղծությունները: Ադրբեջաներենով պոեզիայի հիմնադիրը և ադրբեջանական գրականության մեջ առաջին բանաստեղծը համարվում է XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին Խորասանում ապրած Հասանօղլու Իզեդդինը: XVI դ. Իրաքում ապրել և ստեղծագործել է բանաստեղծ Ֆիզուլին, որը գրել է ինչ-

---

[26] Պալիմփսեստ-ձեռագիր, որը գրված է այլ՝ ջնջված ավելի հին տեքստի վրա:
[27] Մերձավոր և Միջին Արևելքի բանահյուսության կամ գրականության մեջ էպիկական ստեղծագործություն:

պես իր մայրենիով՝ ադրբեջաներեն, այնպես էլ պարսկերեն և արաբերեն: Ադրբեջաներեն գրված «Լեյլի և Մեջնուն» պոեմը համարվում է բանաստեղծի ստեղծագործության գագաթնակետը: «Բանջ վե բադե» («Ափիոն և գինի») պոեմում Ֆիզուլին մարդկանց հորդորում է չարիքից ու անախորժություններից փախուստ տալու համար չդիմել գիտակցությունը բթացնող գինուն և ափիոնին: Նման կոչը համահունչ է Ֆրանսուա Ռաբլեի «Գարգանտյուան և Պանտագրյուելը» վեպի պաթոսին:

Ադրբեջանական գրականության մեջ ռեալիզմի հիմնադիրը Ղարաբաղի Իբրահիմ խանի վեզիր Մոլլա-Փանահ Վագիֆն էր: Նրա պոեզիայի հիմնական թեման մարդու սերն ու հոգևոր գեղեցկությունն է: Մեկ այլ բանաստեղծ՝ Մոլլա Վելի Վիդադին գովերգում էր ազնվությունը, քաջությունը, իմաստության և բանականության ուժը, ինչպես նաև քննադատում էր ներքին պատերազմներն ու ավատական խժդժությունները: Նրա հոռետեսական տրամադրություններն արտացոլվել են «Կռունկները», «Ուղերձներ բանաստեղծ Վագիֆին», «Լաց կլինես» բանաստեղծություններում: Վագիֆի և Վիդադիի ստեղծագործությունները դարձել են XVIII դարի ադրբեջանական պոեզիայի գագաթնակետը:

Ադրբեջանցիների թատերական արվեստի ակունքները կապված են ժողովրդական տոնակատարությունների և պարերի հետ: Թատերական գործողության տարրերը առկա են ադրբեջանական ժողովրդական արվեստի բազմաթիվ տեսակների մեջ՝ հարսանեկան ծեսեր, տոնակատարություններ: Թատերական ներկայացումների սկզբնական ձևերը ներառում են դերվիշների, «օձեր հմայողների» ներկայացումները: Ադրբեջանի ժողովրդական թատրոնի կայացման գործում կարևոր դեր են խաղացել ժողովրդի մեջ հայտնի թատերականացված այնպիսի ներկայացումներ, ինչպիսիք են «Քոսա-քոսան», «Գարավելին», «Շահ Սելիմը», «Քաչալ փահլևանը»: Ադրբեջանցիների շրջանում մեծ համարում ուներ «Քիլիմ-Արասի» (Գորգի հետևից) տիկնիկային թատրոնը,

որտեղ ներկայացումները տեղի էին ունենում գորգի վրա: Դրանք ծաղրում էին կենցաղի այլանդակ երևույթները, սոցիալական անհավասարությունը, անարդարությունը: XIX դ. կեսերին ի հայտ է գալիս ադրբեջանական դրամատուրգիան, որի նշանավոր ներկայացուցիչներից կարելի է առանձնացնել ադրբեջանական գրական քննադատության հիմնադիր Միրզա Ֆաթալի Ախունդովին (1850-1857 թթ. գրել է վեց կատակերգություն և մեկ վիպակ), ինչպես նաև Նաջաֆ-բեկ Վեզիրովին (1896 թ. ստեղծել է առաջին ադրբեջանական ողբերգությունը՝ «Ֆահրեդինի կսկիծը»):

Առաջին ադրբեջաներեն թատերական ներկայացումը ցուցադրվում է 1873 թ. մարտի 10-ին: Դա Բաքվի հասարակական ժողովի բեմում ներկայացված՝ Ախունդովի «Լենքորանի խանության վեզիրը» պիեսն է:

Ադրբեջանական կինեմատոգրաֆիայի սկիզբը դրվել է հայտնի դերասան-ողբերգակ Հուսեյն աղա Արաբլինսկու «Նավթի և միլիոնների թագավորությունում» ֆիլմով, որը ստեղծվել է 1916 թ.: Առաջին ադրբեջանական հնչյունային ֆիլմը 1937 թ. նկարահանված «Բաքվեցիներ» ֆիլմն է:

XX դ. սկզբին ստեղծագործական ասպարեզ են մտնում Մուհամեդ Հադին, որը դառնում է ադրբեջանական գրականության մեջ առաջադեմ ռոմանտիզմի հիմնադիրը, Հուսեյն Ջավիդը, Միկայիլ Մուշֆիգը, Աբբաս Սիթհաթը: Խորհրդային Ադրբեջանի նշանավոր գրական գործիչների թվում կարելի է նշել Ադրբեջանի առաջին ժողովրդական բանաստեղծ Սամեդ Վուրղունին:

Ժամանակակից երաժշտական արվեստի հիմնադիրը Ուզեյիր Հաջիբեկովն է, որը 1908 թ.գրում է առաջին ադրբեջանական օպերան՝ «Լեյլի և Մեջնունը», Ֆիզուլիի համանուն պոեմի հիման վրա: 1940 թ. կոմպոզիտոր Աֆրասիաբ Բադալբեյլին ստեղծում է առաջին ադրբեջանական բալետը՝ «Կույսի աշտարակը»:

Ադրբեջանի նյութական մշակույթը տեղի բնակչության թուրքացումից հետո մեծ փոփոխություններ չի կրում: Այն, դառնալով ինքնուրույն, սերտ կապեր է պահպանում իրանական և արաբական մշակույթների հետ, ինչը պայմանավորված էր ընդհանուր կրոնով և պատմամշակութային ավանդույթներով: Ժամանակակից Ադրբեջանի տարածքում XV դ. ստեղծված մանրանկարներից կարելի է հիշատակել գեղագիր Շարաֆ-ադ-Դին Հուսեյն Սուլթանի և Աբդ ալ-Բաքի Բաքուվիի մանրանկարները XV դ.:

Գեղարվեստական արհեստագործության նմուշների շարքում առանձնանում են զինագործ Մուհամմադ Մոմինի (XVI դ.) կռած զրահները:

Ադրբեջանում կերպարվեստը գրականության համեմատ ավելի դանդաղ էր զարգանում: XX դ. առաջին քսանամյակում ի հայտ են գալիս ռեալիստական ուղղությանը պատկանող նկարիչներ Բեհրուզ Քենգերլին՝ առաջին ադրբեջանցի մասնագիտական կրթություն ունեցող նկարիչը, և Ազիմ Ազիմզադեն: Ազիմզադեի ստեղծագործական ժառանգության մեջ հիմնական տեղը զբաղեցնում են ծաղրանկարները: Ադրբեջանում այս ժանրի զարգացումը սերտորեն կապված է մահմեդական Արևելքում առաջին երգիծական «Մոլլա Նասրեդդին» ամսագրի հետ: Այդ երկու նկարիչներն են Խորհրդային Ադրբեջանի կերպարվեստի հիմնադիրները:

Հնագիտական գտածոները և պահպանված նյութական հուշարձանները վկայում են Ադրբեջանի տարածքում բնակվող ժողովուրդների մշակութային զարգացման մասին ինչպես նախնադարյան և անտիկ ժամանակաշրջաններում, այնպես էլ միջնադարում: Միջնադարյան եկեղեցական ճարտարապետության օրինակ է Լեկիտ ցախուրաբնակ գյուղի տաճարը, որի հորինվածքի վրա զգալի է Զվարթնոցի տաճարի ազդեցությունը:

Իսլամի տարածմամբ դարերի ընթացքում զարգանում է մահմեդական մշակույթը, կառուցվում են մզկիթներ, մադրասներ,

դամբարաններ, զարգանում է հիմնականում դեկորատիվ արվեստը:

Տեղական ճարտարապետական դպրոցների ավանդույթները շարունակվում են XIV դ. մոնղոլական շրջանի Բարդայի և Կարաբաղլար գյուղի աշտարակային դամբարաններում, ճարտարապետ Շահենզի կողմից 1314 թ. Արցախի Խաչին-Դորբաթլի գյուղում կառուցված 12-մետրանոց վրանային դամբարանում: Վերջինս կրում է հայկական ճարտարապետության ազդեցությունը: Դրա վկայությունն են մուտքի ձևավորումը, սյունիկների մեկնաբանությունը, ինչպես նաև ստալակտիտների ձևը: Հարկ է նշել Ադրբեջանի տարածքի հուշարձանների զարդարանքում հազվադեպ հանդիպող կենդանի էակների պատկերները՝ եղջերուին հոշոտող գիշատչի, թևավոր գրիֆոնի, եղջերուների, այծյամների որմնաքանդակները: Հորինվածքով և կատարման ձևով դրանք հիշեցնում են Գեղարդի և Սաղմոսավանքի նմանատիպ հնարքները: Հետաքրքիր հորինվածք ունի 1402 թ. կառուցված Դիրի Բաբայի երկհարկանի գմբեթավոր դամբարանը Գոբուստան քաղաքում:

XIV-XVI դդ., քաղաքների աճին զուգահեռ, զարգանում է աղյուսե և քարե ճարտարապետությունը, որի նմուշներից մեկը Բաքվում գտնվող Շիրվանշահների պալատն է՝ կառուցված XV դ. կեսերին:

XVII-XVIII դդ. իրանա-թուրքական պատերազմների և խժդժությունների ժամանակ խոշոր կառույցների շինարարությունը զգալիորեն կրճատվում է. Գանձակում ավարտին է հասցվում Իմամզադե համալիրը, XVIII դ. երկրորդ կեսին Շաքիում կառուցվում է որմնանկարներով զարդարված խանական պալատը, որի պարսիկ ճարտարապետ Հաջի Զեյնալ Աբդին Շիրազիին հաջողվում է հատակի ցածր՝ ընդամենը 3,35 մ բարձրություն ունեցող հարկի համար դեկորատիվ միջոցներով ստեղծել բարձր առաստաղի պատրանք:

Ճարտարապետության մեջ ավանդույթները պահպանվել են XVIII դ. հարուստ քաղաքացիների տներում, որոնց պատերը ծածկված էին բուսական մոտիվներով, երբեմն թռչունների, կենդանիների, մարդկանց պատկերող որմնանկարներով: Նույն դարի մետաղագործությունը ներկայացված է նախշերով զարդարված պղնձե սպասքով և Լագիչ գյուղում կռված զենք ու զրահով: XIX դ. սկզբին Ռուսաստանի կազմի մեջ մտնելը թույլ է տալիս Ադրբեջանի տարածքում ապրող ժողովուրդներին հաղորդակցվել ռուսական մշակույթին, իսկ դրա միջոցով՝ նաև համաշխարհային մշակույթին:

Ադրբեջանի՝ Ռուսաստանին միանալուց հետո զգալի է դառնում ռուսական շինարարական մշակույթի ազդեցությունը: Բաքվում ռուսական և արևմտաեվրոպական կլասիցիզմի տարրերի հետ համատեղվում են պլանավորման և կոմպոզիցիայի ավանդական մեթոդները, արևելյան ճարտարապետական ձևերն ու դեկորի մոտիվները: Սկսում է տարածվել քաղաքային տան տեսակը ապակեպատ սրահներով՝ «շուշաբենդ»:

Բաքվի ժամանակակից տեսքի ձևավորման գործում ներդրում ունեցած ճարտարապետներից հարկ է հիշատակել 1911-1918 թթ. Բաքվի գլխավոր ճարտարապետ հայազի Նիկոլայ Գեորգիևիչ Բանին, որը ազգությամբ հայ Մայիլով եղբայրների պատվերով նախագծում է քաղաքի լավագույն շենքերից մեկը՝ 1910 թ. կառուցված, մոդեռն ոճի հիանալի օրինակ Մայիլովների թատրոնը: Նրա նախագծով 1926 թ. կառուցվում է Սաբունչիի կայարանը: Նույն տարիներին ճարտարապետ Գաբրիել Տեր-Միքայելովը կառուցում է Հասարակական հավաքների ակումբը (այժմ՝ Ֆիլհարմոնիա), Թիֆլիսի բանկի Բաքվի մասնաճյուղը (հետագայում՝ «Մանկական աշխարհ»), Առևտրային ուսումնարանը (այժմ՝ մանկավարժական ինստիտուտ) և շատ ուրիշ շինություններ:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է Սինայի պալիմփսեստը:
2. Ո՞րն է թյուրքերեն առաջին գրական հուշարձանը:
3. Ի՞նչ այուժե ունի Ֆիզուլիի «Բանջ բե վաղե» պոեմը:
4. Գրական ո՞ր ուղղության հիմնադիրն է Փանահ Վագիֆը:
5. Ժողովրդական արվեստի ի՞նչ ձև էր «Քիլիմ արասի»-ն:
6. Ադրբեջանական գրականության մեջ ինչո՞վ է առանձնանում Ֆաթալի Ախունդովը:
7. Ո՞վ է ադրբեջանական ժամանակակից երաժշտական արվեստի հիմնադիրը:
8. Ի՞նչ ոճային նմանություններ ունեն Խաչին Դորբաթլի գյուղի մահմեդական դամբարանը և Գեղարդի ու Սաղմոսավանքի տաճարները:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ

1. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, 651 էջ
2. Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, ԵՊՀ հրատ., Երևան, 1982, 540 էջ
3. Քսենոփոն, Անաբասիս, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970, 283 էջ
4. Քսենոփոն, Կյուրոպեդիա, Հայաստանի գրողների միության «Նոր դար» հրատ., Երևան, 2000, 412 էջ
5. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2024, 785 էջ
6. Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, ԵՊՀ հրատ, Երևան, 2011, 718 էջ
7. Թուրքիայի Հանրապետության պատմություն, Բուհական դասագիրք, խմբագիր՝ Սաֆրաստյան Ռ., Երևան, ԵՊՀ հրատ., 2014, 396 էջ
8. Վրաստանի պատմություն, VII-X դասարանի ձեռնարկ, Վ. Գուչուա, Շ. Մեսխիա; թարգմ.՝ Գ. Խաչատրյան; խմբ.՝ Ն. Ցագարեիշվիլի, «Գանաթլեբա» հրատ., Թբիլիս, 1979, 342 էջ
9. Картлис цховреба (История Грузии), изд. Артануджи, Тбилиси, 2008, 456 с.
10. Алиев С., История Ирана XX век, Издательство «Крафт+», Москва, 2004, 649 с.
11. Бартольд В., Работы по исторической географии и истории Ирана, Изд, «Восточная литература», Москва, 2003, 664 с.
12. Бартольд В., «Сочинения», т. V. Издательство «Наука», Главная редакция Восточной литературы, Москва, 1968, 634 с.
13. Дандамаев М. Политическая история Ахеменидской державы, изд. «Наука», Москва, 1985, 320 с.

14. История Ирана, отв. ред. М.С. Иванов. Издательство МГУ, Москва, 1977, 488 с.

15. Кононов А., Опыт анализа термина турк, Советская этнография. Москва, 1949. № 1. С. 40-47.

16. Лорд Кинросс, Расцвет и упадок Османской империи, изд. «Крон-пресс», Москва, 1999, 696 с.

17. МАМЕДОВ И., История Азербайджана (с древнейших времен до наших дней), изд. «Ляман Нашрият Полиграфия», Баку 2020, 684 с.

18. Очерки истории Грузии, т. 1, 1989, 508 с; т. 2, 1988, 580 с.; т. 3, 2002, 565 с., т. 4, 1973, 829 с.

19. Петросян Ю., Османская империя, Могущество и гибель, изд. «Наука», Москва, 1990, 280 с.

20. Рейфилд Д., Грузия. Перекресток империй. История длиной три тысячи лет. Изд. «КоЛибри», Москва, 2017, 608 с.

21. Axworthy M., A History of Iran: Empire of the Mind, published by Basic Books, 2010, 368p.

22. Constan. A., L'azerbaïdjan, Editeur Karthala, Paris, 2002, 420 p.

23. Hitzel F., Le dernier siècle de l'empire ottoman (1789-1923,), Editeur Print length,Marseille, 2017, 465 p.

24. Howard D., A History of the Ottoman Empire, published by Calvin College, Michigan, 2017, 412 p.

25. Mustafayev R., L'Azerbaïdjan entre les grandes puissances (1918-1920), Editeur **Presses Chatelet**, 2019, 466 p.

26. RAZOUX P. Histoire de la Géorgie la clé du Caucase, Editeur Perrin, Paris, 2009, 408 p.

27. Sanadze M., The issue of dating the reign of King Vakhtang Gorgasali, International Journal of Arts, Humanities and Social Sciences, Volume 05; Issue no 04:, 2024

28. Sauter J., Simonia I., Stephenson R., Orchiston W., The legendary fourth-century total solar eclipse in Georgia: Fact or fantasy? New insights from recent studies in historical astronomy, NY, 2014, pp. 25-4

29. Swietochowski T., Russian Azerbaijan, 1905-1920, The Shaping of National Identity in a Muslim Community. Cambridge, UK, Cambridge University Press, 2004, 272 p.

SUMMARY

Fundamental issues in the history of Armenia's neighboring countries

Lernik Mkrtumyan

In the 21st-century Near East, the conflict of values and ideologies is paramount, often overshadowing the clash of interests among major global powers. Consequently, history frequently becomes the arena for contemporary political disputes. Antagonistic geopolitical forces call upon historical arguments to defend their positions. Politics rooted in historical memory assumes a critical role in forming national self-consciousness within contemporary states on either side of the conflict.

No nation and no people can grow by keeping to itself. States, which are established to safeguard national interests, are in constant rivalry; various economic and military-political alliances are formed and subsequently dissolved. Our state, located in the northeast of the Armenian Highland, faces existential threats. To counter these threats and preserve our distinct national statehood and identity, we must have an intimate knowledge of the history of the countries neighbouring the Republic of Armenia. Therefore, there is a pressing need for specialists knowledgeable in the history and culture of neighbouring states and peoples. These experts can employ their expertise to advance political, economic, and cultural relations with those neighbouring countries, all in the service of our Homeland’s interests. The author contends that the present manual will make a small contribution to this endeavour.

The manual covers all the major events in the history and culture of the countries bordering the Republic of Armenia. Its goal is to provide an accurate assessment of these events, and it includes self-check questions at the end of each chapter. Studying this material will help develop a thorough understanding of Armenia's history.

The textbook is intended for a broad reading audience, particularly those with a passion for history.

РЕЗЮМЕ

Основные вопросы истории соседних с Армении

Лерник Мкртумян

В контексте столкновения интересов крупнейших мировых держав на Ближнем Востоке в XXI веке важнейшее место занимает противоборство ценностей и идеологий. Вследствие этого история часто становится полем современных политических споров. Противоборствующие геополитические силы используют исторические аргументы для защиты своих позиций. Политика, основанная на исторической памяти, занимает ключевое место в национальном самосознании, формируемом в современных государствах по обе стороны конфликта. Ни одна нация и ни один народ не могут развиваться изолированно.

Государства, созданные с целью защиты национальных интересов, находятся в постоянной конкуренции, формируются и распадаются различные экономические и военно-политические союзы. Наше государство, расположенное на северо-востоке Армянского нагорья, сталкивается с экзистенциальными угрозами, для противостояния которым и для сохранения самобытной национальной государственности и идентичности стало необходимым знание истории соседних с Республикой Армения стран. Поэтому необходимы специалисты, знающие историю и культуру соседних с нами государств и народов, которые будут использовать свои знания для развития политических, экономических и культурных связей с соседними странами в интересах нашей Родины. Данное учебное пособие, по мнению автора, внесет свою маленькую лепту в это дело.

Учебное пособие охватывает все основные события в истории и культуре стран, сопредельных с Республикой Армения. Пособие, преследуя цель сделать правильную оценку этих событий, снабжено вопросами для самопроверки, которые размещены в конце каждой темы. Усвоение материала пособия будет способствовать всестороннему пониманию истории Армении.

Пособие может быть полезно всем, кто интересуется историей.

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 3
ԳԼՈՒԽ I. ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ 5
ԹԵՄԱ I. Հին Իրան 5
ԹԵՄԱ II. Պարթևական տերություն 12
ԹԵՄԱ III. Կոլխիդայի և Քարթլիի (Իբերիայի) վաղ վրացական թագավորությունները 17
ԳԼՈՒԽ II. ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐ 24
ԹԵՄԱ I. Սասանյան Իրան 24
ԹԵՄԱ II. Սասանյան Իրանի վարչաքաղաքական համակարգը 31
ԹԵՄԱ III. Վիրքը IV-VII դարերում 37
ԳԼՈՒԽ III. ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐ 47
ԹԵՄԱ I. Վրաստանի հզորացումը 1089-1156 թթ. 47
ԹԵՄԱ II. Վրաստանը Գեորգի III-ի և Թամար թագուհու օրոք (1156-1213) 54
ԹԵՄԱ III. Օսմանյան պետության ձևավորումը 61
ԳԼՈՒԽ IV. ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐ 68
ԹԵՄԱ I. Օսմանյան կայսրությունը հզորության գագաթնակետին 68
ԹԵՄԱ II. Օսմանյան կայսրության կառավարման համակարգը 78
ԹԵՄԱ III. Օսմանյան կայսրության ճգնաժամը 83
ԹԵՄԱ IV. Սեֆյան Իրան (1501-1736) 91
ԹԵՄԱ V. Այսրկովկասի խանությունները XVIII դ. կեսից-XIX սկիզբ 99
ԳԼՈՒԽ V. ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ 108
ԹԵՄԱ I. Վրաստանը XVIII դ. 108
ԹԵՄԱ II. Վրաստանը XIX դ. 116
ԹԵՄԱ III. Իրանը Ղաջարների օրոք (1795-1925) 123

ԹԵՄԱ IV. Օսմանյան կայսրության անկումը..... 131
ԹԵՄԱ V. Արևելյան Այսրկովկասը Ռուսական կայսրության կազմում (XIX դ.)..... 137
ԳԼՈՒԽ VI. ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ 145
ԹԵՄԱ I. Վրաստանի Հանրապետությունը (1918-1921)..... 145
ԹԵՄԱ II. Խորհրդային Վրաստանը (1921-1980) 153
ԹԵՄԱ III. Վրաստանի անկախության վերականգնումը 164
ԹԵՄԱ IV. Արևելյան Այսրկովկասը 1900-1918 թթ. 170
ԹԵՄԱ V. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը (1918-1920) 180
ԹԵՄԱ VI. Խորհրդային Ադրբեջանը 1920-1991 թթ..... 190
ԹԵՄԱ VII. Թուրքիայի Հանրապետությունը 1918-1988 թթ. 206
ԹԵՄԱ VIII. Իրանը Փահլավիների դինաստիայի օրոք (1925-1979) 216
ԹԵՄԱ IX. Իսլամական հեղափոխությունն Իրանում և Իրան-իրաքյան պատերազմը 222
ԳԼՈՒԽ VII. ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ..... 227
ԹԵՄԱ I. Իրանի մշակույթը..... 227
ԹԵՄԱ II. Վրաստանի մշակույթը..... 233
ԹԵՄԱ III. Թուրքական մշակույթը..... 239
ԹԵՄԱ IV. Ադրբեջանի մշակույթը..... 246
Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ..... 254
SUMMARY 257
РЕЗЮМЕ 258

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵՌՆԻԿ ԱԼԲԵՐՏԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Ուսումնական ձեռնարկ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Ավետիսյանի
Սրբագրող՝ Ա. Ա. Սամվելյան, Գ. Գրիգորյան

Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Ստորագրված է տպագրության՝ 29.10.2025:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 16,375:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am

publishing.ysu.am